
ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿ



ԵՐԵՎԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
2022

ՀՏԴ 347.736(07)
ԳՄԴ 67.404g7
Ս 640

Երաշխավորվել է հրատարակության Արդարադատության ակադեմիայի գիտական խորհրդի կողմից

Ընդհանուր խմբագրությամբ՝

Տիգրան Արթուրի Մարկոսյանի – Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, Արդարադատության ակադեմիայի դասընթացավար, ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի իրավաբանական կլինիկայի դասախոս-կոորդինատոր, Սնանկության գործով կառավարիչների որակավորման հանձնաժողովի անդամ, ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամ

Ս 640 **Սնանկության վարույթը Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական ձեռնարկ)** / Գ.Կ. Ավագյան, Տ.Կ. Դադունց, Հ.Ա. Հովհաննիսյան, Տ.Ա. Մարկոսյան, Տ.Գ. Սահակյան, Փոլ Ջ. Օմար: Ընդհանուր խմբագրությամբ՝ Տ.Ա. Մարկոսյանի.- Եր., Արդարադատության ակադեմիա, 2022 - 464 էջ:

Ձեռնարկում տեսական աղբյուրների, միջազգային փորձի, Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների դատական ակտերի, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայի նյութերի վերլուծության հիման վրա ներկայացվել է սնանկության ինստիտուտի համակարգը, սնանկության ինստիտուտի նյութական և ընթացակարգային հարցերը՝ ըստ սնանկության վարույթի տարբեր փուլերի և կառուցակարգերի, ինչպես նաև վերլուծվել են սնանկության վարույթի տարբեր մասնակիցների և շահագրգիռ դերակատարների կարգավիճակին և առանձնահատկություններին վերաբերող հարցեր:

Ձեռնարկում ամփոփված են սնանկության ոլորտին առնչվող Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների որոշումների հակիրճ նկարագրությունները, ինչպես նաև հավելվածների տեսքով ներկայացված են կամավոր և հարկադրված սնանկության ստուգաթերթերը և կիրառելի փաստաթղթերի ձևանմուշները:

Ձեռնարկը մշակվել է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից իրականացվող «Սնանկության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի և ֆինանսական առողջացման ոլորտի ամրապնդման շրջանակային ծրագրի» շրջանակներում:

Ձեռնարկը կարող է օգտակար լինել սնանկության գործով կառավարիչների, փաստաբանների, դատավորների, ինչպես նաև իրավաբանական բուհերի և ֆակուլտետների դասախոսների, ասպիրանտների և սնանկության հիմնախնդիրներով հետաքրքրվող այլ անձանց համար:

ՀՏԴ 347.736(07)
ԳՄԴ 67.404g7

ISBN 978-9939-9240-6-9

© Հեղինակային խումբ, 2022

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՒՄԲ

Ավագյան Գ.Կ. – ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դասախոս, ՀՀ սնանկության դատարանի նախկին նախագահ, դատավոր	գլխ. 1 (§4), 5, 6, 7, 8 (§2), 15, 17 (§1)
Դադունց Տ.Կ. – ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դասախոս, Սնանկության գործով կառավարիչների որակավորման հանձնաժողովի անդամ, ՀՀ արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի տնօրեն	գլխ. 3, 5, 6, 12, 13, 14, 15, 16, 18 (§1-3, 5-7), 19, 20, 23, մաս XII
Հովհաննիսյան Հ.Ա. – Իրավաբանական գիտությունների թեկնածու, «ՀԱՊ» իրավաբանական գրասենյակի կառավարող գործընկեր, ՀՀ փաստաբանների պալատի անդամ, Բարձրագույն դատական խորհրդի նախկին անդամ	նախաբան, գլխ. 3, 18 (§4), 21, 24
Մարկոսյան Տ.Ա. – Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, Արդարադատության ակադեմիայի դասընթացավար, ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի իրավաբանական կլինիկայի դասախոս-կոորդինատոր, Սնանկության գործով կառավարիչների որակավորման հանձնաժողովի անդամ, ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամ	նախաբան, գլխ. 1, 2, 4, 7, 8, 9, 10, 11, 14, 18 (§1- 3, 5-7), 21, 22, 23, մաս XII
Սահակյան Տ.Գ. – Տնտեսագիտության թեկնածու, սնանկության գործով կառավարիչ, Սնանկության կառավարիչների կոլեգիա ինքնակարգավորվող կազմակերպության Դիտորդ խորհրդի անդամ	գլխ. 3, 8 (§1), 10, 15, 17 (§2), 20, 24, հավելված 1-3
Փոլ Ջ. Օմար – միջազգային փորձագետ, դոկտոր	գլխ. 25

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ

Շարունակական ուսուցումը և մասնագիտական զարգացումը անհրաժեշտություն են անընդհատ զարգացող աշխարհում: Սնանկության ոլորտը ևս բացառություն չէ: Աճում է դատական իշխանության և սնանկության գործով կառավարչի մասնագիտության շրջանակներում որակավորված և հմուտ մարդկանց անհրաժեշտության գիտակցումը: Այնպիսի նախաձեռնություն, ինչպիսին է օրինակ սնանկության մասին հայաստանյան օրենսդրության և պրակտիկայի վերաբերյալ այս ձեռնարկը, սնանկության ոլորտի մասնագիտական փորձի մշակման և զարգացման կարևոր մասն է:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ) Հայաստանում սնանկության մասին օրենսդրության բարեփոխումների ոլորտում 2018 թվականից աշխատում է Արդարադատության նախարարության հետ: Ուրախ ենք նշել, որ Արդարադատության նախարարության հետ միասին մասնակցել ենք այս ձեռնարկի աշխատանքներին, ինչպես նաև Արդարադատության նախարարության և Սնանկության գործերով կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության հետ ավելի վաղ աշխատել ենք սնանկության կառավարիչների համար առաջին առցանց համապարփակ կարողությունների զարգացման նպատակով անցկացված վերապատրաստման ծրագրի վրա:

Սույն ձեռնարկն ընդգրկում է Հայաստանում սնանկության գործընթացի ողջ ծավալը: Այն քննարկում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են մինչսնանկության գործիքները, պարտքի վերակազմավորումը և անօրինական սնանկությունը: Ավելին, ձեռնարկը վերաբերում է նաև ՀՀ Սնանկության դատարանի իրավասությանը և դատական նախադեպերին: Ձեռնարկը պարունակում է նաև օգտակար դիտարկումներ անդրսահմանային սնանկության վերաբերյալ:

Առաջադեմ, թափանցիկ և կանխատեսելի սնանկության համակարգը, որը զգուշորեն հավասարակշռում է պարտապանի և պարտատերերի շահերը, կարևոր է ներդրումների համար: Այն կազմում է առողջ և դինամիկ զարգացող ներդրումային միջավայրի հիմքը: Ինչպես վերջերս թարմացված ՎԶԵԲ-ի Արդյունավետ սնանկության համակարգի հիմնական սկզբունքները, այնպես էլ ՎԶԵԲ-ի Սնանկության գործերով կառավարիչների սկզբունքները ընդգծում են դատավորների և սնանկության գործերով կառավարիչների մասնագիտական զարգացման կարևորությունը սնանկության վարույթների արդյունավետ կառավարման և շահագրգիռ կողմերի վստահության բարձրացման համար: Սնանկության գործում ներգրավված բոլոր կողմերի և նրանց ներկայացուցիչների կարողությունների շարունակական զարգացումը կայուն և լավ գործող սնանկության համակարգի նախապայմանն է:

Հուսով ենք, որ ձեռնարկը օգտակար տեղեկատվության աղբյուր և հղման կետ կլինի Հայաստանում սնանկության գործընթացում ներգրավված բոլոր մասնագետների և շահագրգիռ կողմերի համար:

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում Արդարադատության նախարարությանը, ՀՀ Սնանկության գործերով կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությանը, Բարձրագույն դատական խորհրդին, ՀՀ Սնանկության դատարանին և փորձագետներ «ՀԱՊ» փաստաբանական գրասենյակի կառավարիչ գործընկեր Հայկ Հովհաննիսյանին, «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի տնօրեն Տիգրան Դադունցին, ՀՀ Սնանկության դատարանի նախկին նախագահ, դատավոր Գարիկ Ավագյանին, ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դասախոս Տիգրան Մարկոսյանին, սնանկության կառավարիչ, տնտեսագիտության թեկնածու, Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա ինքնակարգավորվող կազմակերպության Դիտորդ խորհրդի անդամ Տիգրան Սահակյանին և միջազգային փորձագետ դոկտոր Փոլ Ջ. Օմարին այս ձեռնարկի պատրաստման հարցում ցուցաբերած աջակցության համար:

Քեթրին Բրիջ Զոլեր

Ավագ խորհրդական

ՎԶԵԲ իրավական անցումային թիմ

15.08.2022 թ.

Սույն հրատարակությունը պատրաստվել է «ՀԱՊ» իրավաբանական ընկերության և փորձագետների կողմից, ՎԶԵԲ աջակցությամբ՝ շահագրգիռ կողմերին Հայաստանի սնանկության շրջանակների վերաբերյալ ընդհանուր մեկնաբանություն տրամադրելու նպատակով: ՎԶԵԲ-ը չի ծանոթացել ձեռնարկի բովանդակությանը և որևէ պատասխանատվություն չի կրում ձեռնարկում պարունակվող տեղեկատվության կամ դրանում որևէ անճշտության կամ բացթողման համար:

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկին՝ Հայաստանում սնանկության ոլորտի բարեփոխումներին նշանակալի և շարունակական աջակցության, այդ թվում՝ այս ձեռնարկի ստեղծման հարցում էական ներդրման համար:

Հեղինակային խումբը ցանկանում է նաև ընդգծել Բարձրագույն դատական խորհրդի նախկին անդամ, «ՀԱՊ» փաստաբանական ընկերության կառավարող գործընկեր Հայկ Հովհաննիսյանի կարևոր դերակատարումը ձեռնարկի պատրաստման և հրապարակման գաղափարի և դրա իրագործման հարցում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 17

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 20

ՄԱՍ I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 21

ԳԼՈՒԽ 1. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 21

§ 1. «Անվճարունակություն» և «սնանկություն» հասկացությունները 21

§ 2. Մնանկության ինստիտուտի նպատակները և սկզբունքները 23

§ 3. Մնանկության մասին օրենսդրությունը և դրա զարգացման պատմությունը 26

§ 4. «Մնանկության մասին» օրենքի կարգավորման առարկան և գործողության սահմանները 30

ԳԼՈՒԽ 2. ՈՉ ԻՐԱՎԱՉԱՓ ՍՆԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ 33

§ 1. Ոչ իրավաչափ սնանկության ընդհանուր բնութագիրը 33

§ 2. Կանխամտածված սնանկությունը 35

§ 3. Կեղծ սնանկությունը 38

ՄԱՍ II. ՆԱԽԱՍՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ 41

ԳԼՈՒԽ 3. ՍՆԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԽՈՂ ԱՐՏԱԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ ... 41

§ 1. Մնանկությունը կանխող գործիքակազմի ընդհանուր բնութագիրը 41

§ 2. Մնանկությունը կանխող արտադատական գործիքակազմը ՀՀ-ում .. 47

§ 3. Պարտքի վերակառուցումը՝ որպես սնանկության կանխման միջոց 50

ՄԱՍ III. ՍՆԱՆԿ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՈՒՄԸ 52

ԳԼՈՒԽ 4. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ..... 52

§ 1. Մնանկության գործերի ենթակայությունը և առանձին քաղաքացիական գործերի առարկայական ընդդատությունը 59

§ 2. Առանձին քաղաքացիական գործերի քննության առանձնահատկությունները 61

§ 3. Օրենքի փոփոխությունների ազդեցությունը ընթացիկ առանձին քաղաքացիական գործերի քննության վրա 61

ԳԼՈՒԽ 5. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ..... 65

§ 1. Մնանկության դիմումը՝ որպես սնանկության վարույթի հարուցման հիմք 65

§ 2. Մնանկության դիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները..... 71

§ 3. Մնանկության դիմումը վարույթ ընդունելու հարցի լուծումը..... 77

ԳԼՈՒԽ 6. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ..... 81

§ 1. Մնանկության դիմումի քննության ընթացակարգը 81

§ 2. Մնանկ ճանաչելու հիմքերը 84

§ 3. Մնանկ ճանաչելու հարցի լուծման հետևանքները 94

ՄԱՍ IV. ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ..... 98

ԳԼՈՒԽ 7. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ԿԱՅԱՑՎՈՂ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ..... 98

§ 1. Մնանկության գործով կայացվող դատական ակտերի տեսակները և բնույթը..... 98

§ 2. Մնանկության գործով կայացվող դատական ակտերի բողոքարկումը 105

§ 3. Մնանկության գործով կայացվող դատական ակտերի կատարումը 111

ՄԱՍ V. ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ 113

ԳԼՈՒԽ 8. ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ 113

§ 1. Պահանջների տեսակների ընդհանուր բնութագիրը 113

§ 2. Պահանջների հաստատումը 118

ԳԼՈՒԽ 9. ԱՊԱՀՈՎՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ 124

§ 1. Գրավով ապահովված պահանջները 124

§ 2. Ապահովված իրավունքի առարկայի սնանկության վարույթից դուրս իրացման թույլատրումը 129

§ 3. Երաշխավորությամբ և երաշխիքով ապահովված պահանջները 135

ՄԱՍ VI. ՊԱՐՏԱՊԱՆԻ ԳՈՒՅՔԸ, ՄՈՐԱՏՈՐԻՈՒՄԸ ԵՎ ՊԱՐՏԱՊԱՆԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ 139

ԳԼՈՒԽ 10. ՊԱՐՏԱՊԱՆԻ ԳՈՒՅՔԸ 139

§ 1. Պարտապանի գույքակազմը և դրա բացահայտումը 139

§ 2. Պարտապանի գույքի գույքագրումը 143

§ 3. Պարտապանի գույքի գնահատումը 145

ԳԼՈՒԽ 11. ՊԱՐՏԱՊԱՆԻ ԳՈՒՅՔԻ ՆՎԱԶԵՑՈՒՄԸ ԲԱՑԱՌՈՂ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ 147

§ 1. Մորատորիումի ընդհանուր բնութագիրը 147

§ 2. Մորատորիումի բովանդակությունը 150

§ 3. Մորատորիումի ընթացքում որոշակի գործողությունների թույլատրումը 156

§ 4. Մորատորիումի խախտմամբ գույքի տնօրինման հետևանքները 159

ԳԼՈՒԽ 12. ՊԱՐՏԱՊԱՆԻ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ 161

§ 1. Վիճարկելի գործարքների ընդհանուր բնութագիրը 161

§ 2. Վիճարկելի գործարքների արդյունքում նվազած պարտապանի գույքակազմի վերականգնման կարգը 167

ԳԼՈՒԽ 13. ՊԱՐՏԱՊԱՆԻ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ 169

§ 1. Պարտապանի համար կենսական նշանակություն ունեցող պայմանագրերը 169

§ 2. Պարտապանի ընթացիկ պայմանագրերից բխող պարտավորությունների դադարումը և դադարեցումը 172

ՄԱՍ VII. ՊԱՐՏԱՊԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԵՎ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ 177

ԳԼՈՒԽ 14. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ 177

§ 1. Ֆինանսական առողջացման վարույթի ընդհանուր բնութագիրը 177

§ 2. Ֆինանսական վիճակի վերլուծությունը՝ որպես պարտապանի ֆինանսական առողջացման հնարավորության գնահատման միջոց 180

§ 3. Ֆինանսական առողջացման ծրագիրը և դրա բովանդակությունը 187

§ 4. Ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացումը, քննարկումը, ընդունումը և հաստատումը 197

§ 5. Ֆինանսական առողջացման ծրագրի իրականացումը և փոփոխությունը 203

§ 6. Ֆինանսական առողջացման վարույթի ավարտը և դրա հետևանքները 207

ԳԼՈՒԽ 15. ԼՈՒԾԱՐՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ 214

§ 1. Լուծարման վարույթի մեկնարկը և պարտապանի գործունեությունը լուծարման վարույթի ընթացքում 214

§ 2. Պարտապանի գույքի վաճառքը լուծարման վարույթում 220

§ 3. Գույքի վաճառքից ստացված միջոցների բաշխումը և պարտատերերի պահանջների բավարարումը 229

§ 4. Սնանկության վերաբերյալ գործի ավարտը պարտապանի լուծարմամբ 233

ՄԱՍ VIII. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ 238

ԳԼՈՒԽ 16. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՍՆԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ 238

§ 1. Ֆիզիկական անձանց սնանկության վարույթի հարուցումը և գործի քննությունը 238

§ 2. Ֆիզիկական անձի ֆինանսական առողջացումը 242

§ 3. Ֆիզիկական անձի գույքը և դրա վաճառքը 244

§ 4. Ֆիզիկական անձի սնանկության հետևանքները 248

ԳԼՈՒԽ 17. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ 250

§ 1. Լուծարվող պարտապանի սնանկությունը 250

§ 2. Բացակայող պարտապանի սնանկությունը 253

ՄԱՍ IX. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐԻՉԸ 255

ԳԼՈՒԽ 18. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ 255

§ 1. Սնանկության կառավարչի կարգավիճակը 255

§ 2. Սնանկության կառավարչի որակավորումը 261

§ 3. Մնանկության կառավարչի հաշվառումը և հաշվառումից հանումը 266

§ 4. Մնանկության կառավարչի վարքագծի կանոնները 271

§ 5. Մնանկության կառավարչի վերապատրաստումը 277

§ 6. Մնանկության կառավարչի հաշվետվողականությունը 281

§ 7. Մնանկության կառավարչի գործունեության կասեցումը և որակավորման դադարեցումը 285

ԳԼՈՒԽ 19. ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ԵՎ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ 293

§ 1. Մնանկության կառավարչի նշանակումը 293

§ 2. Մնանկության կառավարչի փոխարինումը 302

ԳԼՈՒԽ 20. ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ 305

§ 1. Կառավարչի վարձատրության ընդհանուր պայմանները 310

§ 2. Կառավարչի վարձատրության հատուկ պայմանները 313

ԳԼՈՒԽ 21. ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ 313

§ 1. Մնանկության կառավարիչների մասնագիտական միավորման կարգավիճակը և կառավարման մարմինները 313

§ 2. Մնանկության կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության գործառույթները 316

§ 3. Մնանկության կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողությունը 319

ԳԼՈՒԽ 22. ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ 322

§ 1. Մնակության կառավարչի գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողության ընդհանուր բնութագիրը 322

§ 2. Մնանկության կառավարիչների գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների և վերահսկողության շրջանակը 325

ԳԼՈՒԽ 23. ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 329

§ 1. Մնանկության կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման դրական նախադրյալները 329

§ 2. Մնանկության կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման բացասական նախադրյալները 332

§ 3. Մնանկության կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցումը 335

§ 4. Մնանկության կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացումը 337

§ 5. Մնանկության կառավարչի նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառումը 339

ՄԱՍ X. ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹԻՆ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ 342

ԳԼՈՒԽ 24. ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ԺՈՂՈՎԸ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴԸ 342

§ 1. Պարտատերերի ժողովի և խորհրդի կարգավիճակը և իրավասությունները 342

§ 2. Պարտատերերի ժողովի հրավիրումը և խորհրդի ձևավորումը 346

§ 3. Պարտատերերի ժողովի և խորհրդի որոշումների ընդունումը 351

ՄԱՍ XI. ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 355

ԳԼՈՒԽ 25. ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ և ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ 355

§ 1. Ներպետական իրավունքի մոտեցումը 355

§ 2. Մոտեցումը միջազգային իրավունքում 358

§ 3. Այլ միջազգային չափանիշներ 374

ՄԱՍ XII. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ 376

ՀԱՎԵԼՎԱԾ 1. 399

ՀԱՎԵԼՎԱԾ 2. 405

ՀԱՎԵԼՎԱԾ 3. 410

ՆԱԽԱԲԱՆ

Սնանկության ինստիտուտը տնտեսական հարաբերությունների բնականոն ընթացքի ապահովմանն ուղղված պետության միջամտության առանձնահատուկ դրսևորում է, որը, մի կողմից՝ կոչված է առավելագույնս բավարարել պարտատերերի պահանջները՝ վարույթի շրջանակներում հավաքագրված միջոցներն արդար բաշխելով վերջիններիս միջև, մյուս կողմից՝ օրենսդրական կարգավորումների ներդրման միջոցով փրկել գոյատևման ընդունակ տնտեսվարող սուբյեկտներին[1]: Սնանկության վարույթը աչքի է ընկնում նրանով, որ այն հնարավորություն է ընձեռում բարեխիղճ և պարտաճանաչ պարտապանին վերականգնել իր բնականոն գործունեությունը, հաղթահարել ֆինանսական դժվարությունները, ինչպես նաև ապահովել անվճարունակ կազմակերպությունների վերակառուցումը և ֆինանսական վերակազմակերպումը, վերականգնել նրա կենսունակությունը և միևնույն ժամանակ ապահովել պարտատերերի շահերի պաշտպանությունը, և յուրաքանչյուր դեպքում սնանկության գործընթացում պետք է հաշվի առնվեն տարբեր շահագրգիռ կողմերի՝ ներառյալ պարտապանների շահերը[2]:

Սնանկության ինստիտուտը՝ որպես նյութական և դատավարական իրավահարաբերությունների մի յուրօրինակ համախումբ, իրավամբ կարելի է համարել ցանկացած իրավական համակարգի ամենաբարդ և, միևնույն ժամանակ, ամենակարևոր ինստիտուտներից մեկը: Սնանկության վարույթի բարդությունը դրսևորվում է սնանկության ինստիտուտի համալիր բնույթի, դրա կառուցվածքային տարրերի բազմազանության, սնանկության վարույթի մասնակիցների և նրանց շահերի բազմաթվության և հակադրության առումով:

---

1 Տե՛ս ՍԴ 14.09.2021թ. թիվ ՍԴՈ-1609 որոշումը:

2 Տե՛ս ՍԴ 26.05.2020թ. թիվ ՍԴՈ-1542, 26.01.2021թ. թիվ ՍԴՈ-1572 որոշումները:

Անվիճելի է, որ սնակության ինստիտուտի պատշաճ կարգավորումն ու կիրառումը հանդիսանում է յուրաքանչյուր պետության տնտեսության կայունության ապահովման երաշխիքներից մեկը և այն նպատակ ունի երաշխիքներ ստեղծել, մի կողմից՝ պարտատերերի պահանջները համամասնորեն բավարարելու, մյուս կողմից՝ հնարավոր դեպքերում պարտապանի գույքային դրությունը կայունացնելու (պարտապանի վճարունակության վերականգնումը) և նրա տնտեսական գործունեության շարունակականությունն ապահովելու համար:

Վերոնշյալ համատեքստում կարևորվում է սնանկության վարույթի, դրա իրավական կարգավորման և սնանկության մասին օրենսդրության կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ համապարփակ պատկերացում կազմելը՝ սկսած վարույթի հարուցումից մինչև դրա ավարտը, ինչպես նաև սնանկության վարույթի տարբեր կառուցակարգերի և վարույթի մասնակիցների կարգավիճակի համընդհանուր վերլուծությունը: Նշվածը հատկապես պայմանավորված է այն հանգամանքով, որ սնանկության մասին օրենսդրությունը տարբեր տարիներին ենթարկվել է տարաբնույթ փոփոխությունների, ներառյալ՝ 2019թ. կատարված էական փոփոխությունները, որոնք կարիք ունեն համապարփակ գիտագործնական վերլուծության և քննարկման՝ դրանով իսկ հնարավորություն տալով ոլորտի շահագրգիռ անձանց առավել ամբողջական պատկերացում կազմելու սնանկության վարույթի և ոլորտի իրավակիրառ պրակտիկայի մասին՝ հաշվի առնելով նաև ոլորտի վերաբերյալ ձևավորված նախադեպային իրավունքը: Ուստի սնանկության վարույթի կիրառման արդյունավետության տեսանկյունից կարևորվում է դրա կողմից ընձեռնվող հնարավորությունների վերաբերյալ ճանաչելիության ապահովումը, շահագրգիռ կողմերի մասնագիտական կարողությունների, տարբեր մեխանիզմների կիրառման հմտությունների զարգացումը և ինստիտուտի ուսուցման և վերապատրաստման դասընթացների կազմակերպումը:

Հիշյալը խիստ անհրաժեշտություն է դարձնում սնանկության վարույթի վերաբերյալ գիտագործնական աղբյուրների առկայությունը: Ընդ որում, նման անհրաժեշտությունը հատկապես ակներև է լինում սնանկության կառավարչի մասնագիտություն ձեռք բերելու ճանապարհին: Այնինչ, ներկա իրավակարգավորումներին և զարգացումներին համահունչ առկա չեն հայերեն լեզվով համապարփակ աղբյուրներ (մեկնաբանություններ, ուղեցույցներ, ձեռնարկներ և այլն), որոնք կանդրադառնան սնանկության վարույթի բոլոր ասպեկտներին և «Սնանկության մասին» օրենքի իրավակարգավորումներին[3]:

Այսպիսով, սնանկության կառավարիչների մասնագիտական ուսուցման, կառավարիչների վերապատրաստման և, ընդհանրապես, սնանկության վարույթին առնչվող և սնանկության ոլորտով հետաքրքրվող այլ անձանց տեսական և գործնական գիտելիքներով ապահովման տեսանկյունից սնանկության վարույթի համապարփակ վերլուծությանը նվիրված սույն գիտագործնական ձեռնարկի ստեղծումը առավել քան անհրաժեշտ և օգտակար քայլ կարող է լինել ոլորտի շարունակական զարգացումն ապահովելու տեսանկյունից:

[3] Տե՛ս «Սնանկության ոլորտի բարեփոխման ճանապարհային քարտեզ և գործողությունների ծրագիր», էջ 18 (հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.moj.am/storage/uploads/123Road_Map_with_Action_Plan_ARM.pdf:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

ԱԸԴ – Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան

ՎՔԴ – Վերաքննիչ քաղաքացիական դատարան

ՄնԴ – Մնանկության դատարան

ՍԿ – սնանկության կառավարիչ

ԺԿ – ժամանակավոր կառավարիչ

ԻԿԿ – Մնանկության կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպություն

ՍԴ – Սահմանադրական դատարան

ՎԴ – Վճռաբեկ դատարան

ԱՆ – Արդարադատության նախարարություն

Նախարար – Արդարադատության նախարար

Օրենք – «Մնանկության մասին» ՀՀ օրենք

ՔՕ – ՀՀ քաղաքացիական օրենսգիրք

ՔԴՕ – ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք

ՎԶԵԲ – Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ

Մոդելային օրենք – 1997թ. UNCITRAL «Անդրսահմանային սնանկության մասին» մոդելային օրենք

Մոդելային օրենք 2018 – 2018թ. UNCITRAL մոդելային օրենքը սնանկության հետ կապված վճիռների ճանաչման և կատարման մասին

ՄԱՍ I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

§ 1. «Անվճարունակություն» և «սնանկություն» հասկացությունները

Սնանկության ինստիտուտի հետ կապված հարցերի ուսումնասիրության շրջանակում առաջնահերթ նշանակություն ունի «անվճարունակություն» և «սնանկություն» հասկացությունների բովանդակության և դրանց հարաբերակցության բացահայտումը:

«Անվճարունակությունը», ըստ Միավորված ազգերի կազմակերպության Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (UNCITRAL) 2005թ. «Անվճարունակության մասին օրենսդրությա ն հարցերով օրենսդիր մարմինների ուղեցույց»-ի[4] (այսուհետ նաև՝ **Ուղեցույց**), մի վիճակ է, երբ պարտապանն ընդհանուր առմամբ անկարող է վճարելու իր պարտքերը՝ պարտավորությունները կատարելու համար նախատեսված ժամկետներում, կամ երբ պարտապանի պարտավորությունների ընդհանուր գումարը գերազանցում է նրա ակտիվների արժեքը: Ընդ որում, ինչպես բխում է շարադրվածից, առկա է անվճարունակության երկու ձև՝ փաստացի և հաշվեկշռային:

---

[4] Տե՛ս ЮНСИТРАЛ. Руководство для законодательных органов по вопросам законодательства о несостоятельности, ОРГАНИЗАЦИЯ ОБЪЕДИНЕННЫХ НАЦИЙ, Нью-Йорк:

Օրենքի[5] վերլուծությունը վկայում է, որ այն ևս տարբերակում է անվճարունակության երկու ձև՝ հաշվեկշռային (բացասական հաշվեկշռի դեպքում) և փաստացի, որը ենթադրում է այնպիսի վիճակ, երբ պարտապանն ի վիճակի չէ պարտատերերի օրինական պահանջներն ամբողջովին բավարարել: Մասնավորապես, օրենսդիրը որպես պարտապանի անվճարունակության հիմք սահմանում է պարտապանի պարտավորությունների՝ պարտապանի ակտիվները գերազանցելու հանգամանքը, ինչպես նաև այն, որ պարտապանն ի վիճակի չէ կատարելու իր ժամկետանց դրամական պարտավորությունները (փաստացի անվճարունակություն): Անվճարունակության այս երկու տարատեսակները միմյանցից տարանջատված են, և պարտապանին սնանկ ճանաչելու համար Օրենքը չի առաջադրում անվճարունակության այդ երկու տարատեսակների զուգահեռ, միաժամանակյա առկայության պահանջ:

Այսպիսով, անվճարունակությունը նշանակում է վճարելու կարողության բացակայություն: Ի տարբերություն անվճարունակության, սնանկությունը ունի ավելի լայն բովանդակություն: Խոսքն այն մասին է, որ անձի սնանկությունը ենթադրում է պետության իրավասու մարմնի՝ դատարանի կողմից անձի անվճարունակության փաստի ճանաչում: Այլ կերպ ասած՝ անձի անվճարունակությունը անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայման է նրա սնանկությունը ճանաչելու համար, և նա այդպիսին է դառնում միայն օրենքով սահմանված ընթացակարգի արդյունքում ընդունված դատական ակտի դեպքում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ պարզ է դառնում, որ «անվճարունակություն» և «սնանկություն» հասկացությունները ունեն ինքնուրույն բովանդակություն և հարաբերակցվում են ինչպես մասը և ամբողջը:

---

[5] Ընդունվել է 25.12.2006թ.: Ուժի մեջ է մտել 10.02.2007թ: Տե՛ս ՀՀՊՏ 2007.01.31/7(531) Հոդ. 139:

§2. Սնանկության ինստիտուտի նպատակները և սկզբունքները

Սնանկության ինստիտուտի էությունը բացահայտվում է դրա հետապնդած նպատակների միջոցով: Թեև օրենսդիրը սնանկության ինստիտուտի նպատակները ուղղակիորեն չի ամրագրել, սակայն Օրենքի համակարգային վերլուծությունից բխում է, որ սնանկության ինստիտուտի նպատակը նախ և առաջ անբարենպաստ ֆինանսական դրություն ունեցող ընկերության ֆինանսական առողջացումն է, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ընկերության լուծարումը և նրա գույքի հաշվին պարտատերերի պահանջների բավարարումը:

Հարկ է նկատել, որ սնանկության վարույթի և դրա կարևոր մասը կազմող սնանկ ճանաչելու նպատակների վերհանմանն անդրադարձել են ՍԴ-ն և ՎԴ-ն:

Այսպես, ըստ ՍԴ-ի, սնանկության ինստիտուտի նպատակն է հնարավորություն տալ բարեխիղճ և պարտաճանաչ պարտապանին վերականգնել իր բնականոն գործունեությունը, հաղթահարել ֆինանսական դժվարությունները, ինչպես նաև ապահովել անվճարունակ կազմակերպությունների վերակառուցումը և ֆինանսական վերակազմակերպումը, վերականգնել նրա կենսունակությունը և միևնույն ժամանակ ապահովել պարտատերերի, ինչպես նաև տարբեր շահագրգիռ կողմերի շահերի պաշտպանությունը[6]:

Քննարկվող հարցի առնչությամբ ՎԴ դիրքորոշումը հանգում է հետևյալին. «Անձին սնանկ ճանաչելու նպատակը քաղաքացիական շրջանառության կայունության ապահովումն է՝ այդ շրջանառության անվճարունակ մասնակիցներին ֆինանսապես առողջացնելու կամ նրանց քաղաքացիական շրջանառությունից դուրս մղելու

[6] Տե՛ս ՍԴ 25.02.2008թ. թիվ ՍԴՈ-725, 27.01.2015թ. թիվ ՍԴՈ-1189, 26.05.2020թ. թիվ ՍԴՈ-1542 և 26.01.2021թ. թիվ ՍԴՈ-1572 որոշումները:

նպատակով, որպեսզի վերջիններիս անվճարունակության հետևանքով չոտնահարվեն նաև քաղաքացիական շրջանառության մնացած մասնակիցների շահերը»[7]:

Օրենքը ոչ միայն ուղղակիորեն չի սահմանում սնանկության ինստիտուտի նպատակները, այլ նաև որևէ կարգավորում չի ամրագրում սնանկության սկզբունքների մասին: Այս առումով հարկ է նկատել, որ սնանկության ինստիտուտի սկզբունքները իրենց ամրագրումն են ստացել միջազգային փաստաթղթերում: Ըստ այդմ, կարելի է հիշատակել հետևյալները.

1. Շուկայում որոշակիության ապահովումը՝ խթանելով տնտեսական աճն ու կայունությունը,
2. Ակտիվների արժեքի առավելագույն աճը,
3. Լուծարման և ֆինանսական առողջացման հավասարակշռումը,
4. Միևնույն կարգավիճակում գտնվող պարտատերերի համար արդարացի ռեժիմի ապահովումը[8],
5. Սնանկության գործի ժամանակին, արդյունավետ և անկողմնակալ լուծումը ապահովող կարգի սահմանումը,
6. Պարտատերերի միջև միջոցների արդարացի բաշխում իրականացնելու նպատակով գույքային կազմի պահպանումը,
7. Թափանցիկ և կանխատեսելի օրենսդրության ապահովումը՝ խթանելով տեղեկատվության հավաքումը և տարածումը,

---

[7] Տե՛ս ՎԴ թիվ ԵՄԴ/0049/04/15 սնանկության գործով 07.04.2017թ. որոշումը:

[8] Առավել մանրամասն տե՛ս նաև Несостоятельность (банкротство): Учебный курс. В 2 т. / Под. ред. д.ю.н., проф. **С.А. Карелиной.** Т. 1. – М.: Статут, 2019, էջեր 297-298:

8. Պարտատերերի իրավունքների ճանաչումը և արտոնյալ պահանջների հաջորդականության սահմանումը,
9. Անդրազգային սնանկության կարգավորումը[9]:

[9] Տե՛ս ՅՈՒՆՍԻՏՐԱԼ. Руководство для законодательных органов по вопросам законодательства о несостоятельности, ОРГАНИЗАЦИЯ ОБЪЕДИНЕННЫХ НАЦИЙ, Нью-Йорк, 2005, էջեր 10-15:

§3. Սնանկության մասին օրենսդրությունը և դրա զարգացման պատմությունը

Սնանկության մասին օրենսդրությունը իրավական նորմերի բարդ համակարգ է, ինչը պայմանավորված է այս ոլորտում ծագող հարաբերությունների համալիր բնույթով: Այդ պատճառով սնանկության հարաբերությունները կարգավորող աղբյուրների շարքին են դասվում ինչպես Օրենքը, այնպես էլ մի շարք այլ նորմատիվ իրավական ակտեր[10]:

Դրանցից առաջին հերթին հիշատակման է արժանի ՔԴՕ-ն[11], որի միջոցով կարգավորվում են սնանկության վարույթում առաջացող դատավարական հարաբերություններն այն դեպքերում, երբ դրանք կարգավորված չեն Օրենքով:

Հաջորդ հիմնական աղբյուրը Օրենսգիրքն[12] է, որի միջոցով իրականացվում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների, այդ թվում՝ իրավաբանական անձանց իրավական վիճակի, սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ բացառիկ իրավունքների (մտավոր սեփականություն) ծագման հիմքերն ու իրականացման կարգի, պայմանագրային և այլ պարտավորությունների կարգավորումը, ինչպես նաև այլ գույքային, այդ թվում՝ գրավի, ու դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունների, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց միջև կամ նրանց մասնակցությամբ հարաբերությունների կարգավորումը:

---

[10] Տե՛ս **Ջ.Մարտին, Ս.Աթկինս, Ռ.Բրեթեգ, Տ.Մարկոսյան, Վ.Ասատրյան.** Հայաստանում սնանկության ոլորտի օրենսդրության զարգացում // ռազմավարական զեկույց, էջ 17:

[11] Ընդունվել է 09.02.2018թ.: Ուժի մեջ է մտել 09.04.2018թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2018.03.05/16 (1374) Հոդ. 208:

[12] Ընդունվել է 05.05.1998թ.: Ուժի մեջ է մտել 01.01.1999թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998.08.10/17 (50):

Բացի այդ, ՔՕ-ն որոշակի անդրադարձ է կատարում նաև սնանկությանը՝ դրա հետ կապված հարաբերությունների կարգավորումը վերապահելով առանձին օրենքներին:

Սնանկության հարաբերություններ կարգավորող դրույթներ են առկա նաև ՀՀ դատական օրենսգրքում, ՀՀ քրեական օրենսգրքում, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքում, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքում և այլ նորմատիվ իրավական ակտերում, որոնց շարքում հատկապես կարևորվում են Նախարարի հրամանները[13]:

Անդրադառնալով սնանկության ոլորտը կարգավորող օրենսդրության զարգացման պատմությանը՝ պետք է նշել, որ սնանկության ոլորտը համապարփակ կերպով կարգավորող առաջին նորմատիվ իրավական ակտը եղել է 1995թ. ընդունված «Ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների սնանկացման մասին» օրենքը, որը շուտով փոխարինվել է 1996թ. ընդունված «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների եվ անհատ ձեռներեցների անվճարունակության (սնանկացման) եվ ֆինանսական առողջացման մասին» օրենքով:

Սնանկության ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտում հաջորդ փոփոխությունը եղել է 2003թ., երբ ընդունվել է «Անվճարունակության (սնանկության) մասին» օրենքը: Այն, ի տարբերություն նախորդ երկու օրենքների, ստացել էր ավելի ծավալուն տեսք, որը պայմանավորված էր մի շարք նոր, այդ թվում՝ կեղծ և կանխամտածված սնանկության, սնանկության գործով կառավարչի գործունեության հետևանքով պատճառված վնասների հատուցման ինստիտուտների, պարզեցված ընթացակարգերի ներդրմամբ:

«Անվճարունակության (սնանկության) մասին» օրենքը 2006թ. փոխարինվել է Օրենքով, որի մշակման հիմք են հանդիսացել նաև

[13] Տե՛ս 20.03.2020թ. թիվ 10(678) գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիրը:

օտարերկրյա փորձը և միջազգային փաստաթղթերը, օրինակ՝ UNCITRAL-ի սնանկության ոլորտի վերաբերյալ ուղեցույցները: Այնուամենայնիվ, կարելի է ասել, որ գործող օրենքը չի հիմնվում որևէ կոնկրետ երկրի փորձի վրա և իր մեջ ներառում է տարբեր երկրների օրենսդրություններում առկա ինստիտուտներ:

Օրենքը գործում է առ այսօր և, չնայած իր գոյության համեմատաբար կարճ ժամանակահատվածին, ենթարկվել է բազմաթիվ փոփոխությունների: Այս առումով հատկապես հիշատակման է արժանի Օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 12.12.2019թ. օրենքը[14], որը միտված էր սնանկության ինստիտուտը առավել թափանցիկ, հաշվետու և արդյունավետ դարձնելուն: Ընդ որում, այս փոփոխությունների համար հիմք են հանդիսացել նաև Հայաստանի սնանկության ոլորտի ՎՋԵԲ հաշվետվությունը, Միացյալ Թագավորության կառավարության Լավ Կառավարման հիմնադրամի ֆինանսավորմամբ 2019թ. պատրաստված «Սնանկության ոլորտի հետազոտության հաշվետվությունը»[15] և «Սնանկության ոլորտի բարեփոխման ճանապարհային քարտեզ և գործողությունների ծրագիր»[16] փաստաթղթերը, ինչպես նաև Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» (Doing Business) մեթոդոլագիան և Հայաստանի վերաբերյալ միջազգային կազմակերպությունների տարբեր տարիների զեկույցները:

Ասվածի հետ մեկտեղ սնանկության ոլորտի շարունակական բարեփոխման հրամայականը շարունակում է մնալ Հայաստանի առաջնահերթությունների շարքում, որի մասին է վկայում Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների

---

[14] Ուժի մեջ է մտել 15.04.2020թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2019.12.26/100(1553) Հոդ.1242: Այսուհետ նաև՝ Օրենքի փոփոխություններ:

[15] Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://moj.am/legal/view/article/1242/:

[16] Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://moj.am/storage/uploads/123Road_Map_with_Action_Plan_ARM.pdf:

2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» թիվ 1441-Լ որոշմամբ, ի թիվս այլնի, Սնանկության մասին օրենսգրքի նախագծի մշակման միջոցառման նախատեսումը:

§4. «Սնանկության մասին» օրենքի կարգավորման առարկան և գործողության սահմանները

Սնանկության վարույթը, ի տարբերություն այլ դատական վարույթների, չի սահմանափակվում միայն պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիման վրա հարուցված վարույթով, և ներառում է այն բոլոր հարցերի լուծմանն ուղղված վարույթները, որոնք կարող են ծագել պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի քննության ընթացքում, կամ առնչվում են պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի բավարարման իրավական հետևանքներին:

Վերոգրյալով պայմանավորված՝ Օրենքը նախատեսում է ինքնուրույն, իրար հաջորդող կամ զուգահեռ ընթացող մի շարք ընթացակարգեր, որոնցից են.

- Պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի քննության վարույթը,
- Սնանկության վտանգի վարույթը,
- Պահանջների գրանցման վարույթը,
- Սնանկության վարույթից դուրս ապահովված իրավունքի առարկայի իրացումը թույլատրելու վարույթը,
- Պարտապանի ֆինանսական առողջացման վարույթը,
- Պարտապանի լուծարման վարույթը,
- Ֆիզիկական անձի սնանկության վարույթը,
- Պարզեցված ընթացակարգերը, որոնք իրականացվում են կամավոր լուծարման վիճակում գտնվող իրավաբանական անձի, բացակայող պարտապանի և սնանկության գործով կառավարչի գործը գույքի անբավարարության հիմքով

վաղաժամկետ ավարտելու միջնորդության դեպքում[17]:

Հարկ է նկատել, որ Օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է այն անձանց շրջանակը, որոնք կարող են լինել սնանկության վարույթի պարտապան: Դրանք են իրավաբանական և ֆիզիկական անձինք[18]: Ընդ որում, Օրենքի իմաստով պարտապան կարող են լինել ոչ միայն մասնավոր, այլև հանրային իրավական բնույթի հարաբերություններում դրամական պարտավորություն ունեցող անձինք:

Օրենքով նախատեսված են նաև այն սուբյեկտների շրջանակը, որոնք չեն կարող սնանկ ճանաչվել Օրենքով սահմանված կարգով: Դրանք են.

ա) Հայաստանի Հանրապետությունը,

բ) համայնքը,

գ) Կենտրոնական բանկը,

դ) բանկը,

ե) վարկային կազմակերպությունը,

զ) ներդրումային ընկերությունը,

է) ներդրումային ֆոնդի կառավարիչը,

ը) ապահովագրական ընկերությունը,

թ) «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքի հիման վրա ստեղծված հատուցման հիմնադրամը:

---

17 Առավել մանրամասն տե՛ս **Ջ.Մարտին, Ս.Աթկինս, Ռ.Բրեթեգ, Տ.Մարկոսյան, Վ.Ասատրյան**. Հայաստանում սնանկության ոլորտի օրենսդրության զարգացում // ռազմավարական զեկույց, էջեր 15-16:

18 Թեև որպես պարտապան օրենսդիրը նշել է միայն իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց, սակայն Օրենքի մյուս հոդվածները կարգավորում է նաև անհատ ձեռնարկատիրոջ սնանկության հետ կապված հարցերը, ինչը թույլ է տալիս որպես պարտապան դիտարկել նաև անհատ ձեռնարկատերերին:

Շարադրվածին համապատասխան, Օրենքը 14-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով սահմանել է, որ սնանկ ճանաչելու դիմումի ընդունումը ենթակա է մերժման, եթե այն բերվել այն անձի դեմ, որը Օրենքի համաձայն պարտապան չի կարող լինել:

Միաժամանակ, ելնելով վերը նշված սուբյեկտների առանձնահատկություններից, օրենսդիրն այդ սուբյեկտների սնանկության հետ կապված հարցերը կարգավորել է առանձին՝ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» օրենքով[19]:

Օրենքը կարգավորում է նաև որպես պարտապան օտարերկրյա տարրի մասնակցությամբ սնանկության վարույթի նկատմամբ կիրառելի իրավունքի հարցը: Մասնավորապես, Օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ որպես պարտապան՝ օտարերկրյա կամ քաղաքացիություն չունեցող անձի մասնակցությամբ անվճարունակության (սնանկության) հարաբերությունների նկատմամբ կիրառվում են Օրենքի դրույթները, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

Հիշատակվածի կապակցությամբ ուշադրության է արժանի ՎԴ դիրքորոշումը, ըստ որի՝ ՀՀ դատարանները կարող են քննել օտարերկրյա իրավաբանական անձանց մասնակցությամբ քաղաքացիական՝ այդ թվում սնանկության գործեր, եթե օտարերկրյա իրավաբանական անձի մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը գտնվում է ՀՀ տարածքում[20]:

---

[19] Ընդունվել է 06.11.2001թ.: Ուժի մեջ է մտել 15.12.2001թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2001.12.15/40(172) Հոդ.958:

[20] Տե՛ս ՎԴ թիվ ԵԿԴ/0287/04/15 սնանկության գործով 30.04.2020թ. որոշումը:

ԳԼՈՒԽ 2. ՈՉ ԻՐԱՎԱՉԱՓ ՍՆԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

§1. Ոչ իրավաչափ սնանկության ընդհանուր բնութագիրը

Ժամանակից պետության գործառույթներից է տնտեսական հարաբերությունների սուբյեկտների իրավունքները և օրինական շահերը երաշխավորող հուսալի պաշտպանվածության համակարգի ստեղծումն ու պահպանումը: Այդ համատեքստում իր ուրույն տեղն է զբաղեցնում սնանկության ինստիտուտը: Պետք է նշել, սակայն, որ որոշ դեպքերում սնանկության ինստիտուտն առանձին անբարեխիղճ սուբյեկտների կողմից օգտագործվում է ոչ թե հիմնական նպատակներով, այլ շահադիտական մղումներով ծառայեցվում է որպես պարտավորություններից ազատվելու միջոց՝ այն փաստացի վերածելով գործարարության առանձին տեսակի[21]: Այլ կերպ ասած՝ պարտապանի անվճարունակությունը երբեմն ծագում կամ ուղեկցվում է բնականոն տնտեսավարման հետ չկապված և ոչ իրավաչափ բնույթ կրող գործողություններով: Այդ պատճառով էլ իրավաբանական գրականության մեջ այդպիսի սնանկությունն առանձնացվում է չարամիտ, ոչ իրավաչափ կամ համարժեք այլ անվանմամբ[22]:

---

[21] Տե՛ս, օրինակ՝ **Ветров Д.М.** О некоторых вопросах преднамеренного банкротства юридического лица // Вестник Челябинкого государсвенного университета. Право. 2011, №35 (250), էջ 39, **Глушков Е.Л., Павличенко Н.В., Максименко А.В.** О некоторых проблемах применения ответственности за преступные деяния, связанные с банкротством предприятий и организаций // Вестник Воронежского института МВД России. Право. 2018, №4, էջ 140:

[22] Տե՛ս, օրինակ՝ **Добровлянина О.В., Кондратьева К.С., Патырбаева К.В.** Виды незаконных банкротств в Российской Федерации: некоторые проблемы правового регулирования // Право. Журнал Высшей школы экономики. 2017, էջ 37, **Середа И.М., Середа А.Г.** Анализ зарубежного законодательства, регламентирующего ответственность за преднамеренное банкротство // Журнал Высшей школы экономики. Право. 2018,

Ակնհայտ է, որ ոչ իրավաչափ սնանկության դեպքում ոչ միայն խարխլվում է սնանկության ինստիտուտի էությունը, այլև այս երևույթն ինքնին լրջագույն սպառնալիք է պարունակում պետության տնտեսական անվտանգության համար: Նման պայմաններում առաջնային խնդիր է դիտարկվում չարամիտ սնանկությունների դեմ պայքարի համար արդյունավետ կառուցակարգերի առկայությունը, որպիսիք են՝ կանխամտածված և կեղծ սնանկությունները:

№4(87), էջեր 66-67, **Шешукова Т.Г., Пащенко Т.В.** Методологичкие основы выявления неправомерного банкротсва: контрольно-аналитический аспект // Бухгалтер и закон. Право. 2007, №4 (100), էջ 7:

§2. Կանխամտածված սնանկությունը

Կանխամտածված սնանկության էությունը դրսևորվում է նրանում, որ շահագրգիռ անձը ձեռնարկում է ֆինանսապես առողջ պարտապանի սնանկության հատկանիշների առաջացմանն ուղղված միջոցառումներ՝նպատակ ունենալով ստեղծել պարտապանի գույքի հաշվին պարտատերերի պահանջների բավարարման անհնարինություն:

Կանխամտածված սնանկությանը հանգեցնող վարքագիծը կարող է դրսևորվել ինչպես գործողությամբ, այնպես էլ անգործությամբ, որոնց սպառիչ շրջանակը հասկանալի պատճառներով հնարավոր չէ սահմանել: Այնուամենայնիվ, գրականության մեջ առանձնացվում են կանխամտածված սնանկության հանգեցնող վարքագծի արտահայտման առավել տարածված հետևյալ ձևերը.

1. գույքի օտարում իջեցված գներով,
2. չհիմնավորված ծախսերի կատարում,
3. ակնհայտ ոչ շահեկան պայմաններով պարտավորությունների կուտակում,
4. գործունեության դադարեցում[23]:

Կանխամտածված սնանկության հատկանիշների բացահայտման հիմնական պարտականությունը ՀՀ օրենսդրությամբ դրված է սնանկության գործով կառավարչի վրա՝ հաշվի առնելով պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծություն իրականացնելու օրենքով սահմանված պարտականությունը: Միաժամանակ, էական է հաշվի առնել, որ կանխամտածված սնանկության հատկանիշների մասին կարելի է խոսել նաև այն դեպքում, երբ ֆինանսական

[23] Ibid., էջեր 39-40:

վիճակի վերլուծությամբ նման եզրահանգում չի արվել, սակայն այդ հանգամանքի վերաբերյալ առկա է աուդիտի կամ համապատասխան փորձաքննության եզրակացություն[24]:

ՀՀ օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ «կանխամտածված սնանկություն» հասկացությունը կիրառվում է երկու՝ քրեաիրավական և քաղաքացիաիրավական առումներով: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի[25] 193-րդ հոդվածով սահմանվում է. «Կանխամտածված սնանկությունը՝ պարտապանի հիմնադիրների (մասնակիցների) կամ նրան՝ կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող այլ անձանց, այդ թվում՝ պարտապանի ղեկավարի, հավասարապես՝ նաև ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից անվճարունակության հատկանիշների կանխամտածված ստեղծումը կամ դրանց չափի ավելացումը սեփական կամ այլ անձանց շահերից ելնելով, և եթե պարտապանին կամ պարտատերերին պատճառվել է խոշոր վնաս...», իսկ Օրենքի 8-րդ հոդվածի. «Եթե պարտապանը սնանկ է ճանաչվել պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայահավաք) կապիտալին տիրապետող կամ նրան կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող այլ անձանց, այդ թվում՝ պարտապանի ղեկավարի մեղքով (ուղղակի կամ անուղղակի գործողություններով պարտապանի գործունեությունն ուղղորդելը և այլն (կանխամտածված սնանկություն)...»:

Վկայակոչված կարգավորումների համեմատական վերլուծությունից բխում է, որ քաղաքացիաիրավական և քրեաիրավական առումներով «կանխամտածված սնանկություն» հասկացությունները,

---

[24] Տե՛ս **Сверчков В.В., Воронов С.С.** Преднамеренное банкротство юридического лица или предпринимателя: механизм преступного поведения и особенности квалификации // Вестник Нижегородской академии МВД России. Право. 2013, №21, էջ 159:

[25] Ընդունվել է 18.04.2003թ.: Ուժի մեջ է մտել 01.08.2003թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2003.05.02/25(260) Հոդ.407:

չնայած դրանց որոշ ընդհանրություններին, ունեն բովանդակային տարբերություններ: Մասնավորապես, եթե քաղաքացիաիրավական առումով կանխամտածված սնանկության փաստի հաստատման համար բավարար է օրենքում թվարկված անձանց մեղավոր վարքագծի արդյունքում պարտապանի սնանկ ճանաչումը, ապա քրեաիրավական առումով կանխամտածված սնանկության հանցակազմի մեջ են մտնում ոչ միայն պարտապանի անվճարունակության հատկանիշների կանխամտածված ստեղծումը, այլև դրանց չափի ավելացումը՝ ելնելով որոշակի շահերից և պայմանով, որ դա պարտապանին կամ պարտատիրոջը պատճառել է խոշոր վնաս, որը դրսևորվում է համապատասխան չափով պահանջի չբավարարմամբ: Այլ կերպ ասած՝ քաղաքացիաիրավական առումով կանխամտածված սնանկության փաստի հաստատման համար անհրաժեշտ է ավելի նեղ փաստակազմ, քան քրեաիրավական առումով կանխամտածված սնանկության դեպքում: Միաժամանակ, նույն փաստի առթիվ քրեական գործի առկայության դեպքում քաղաքացիաիրավական առումով կանխամտածված սնանկության հիմքով մեղավոր անձինք քաղաքացիաիրավական պատասխանատվություն կարող են կրել միայն քրեական դատավարության ավարտից հետո:

Կանխամտածված սնանկության հետևանքով վնաս կրած անձի պահանջների բավարարումը սնանկության վարույթի ավարտից հետո հնարավոր է քրեական դատավարությունում ներկայացված քաղաքացիական հայցի կամ քաղաքացիական դատավարության կարգով ներկայացված հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման հայցի հիման վրա: Ընդ որում, այստեղ կիրառելի չէ սնանկության վարույթի ավարտի հիմքով պարտավորություններից ազատելու ինստիտուտը[26]:

[26] Տե՛ս **Տ.Մարկոսյան.** Կանխամտածված սնանկության հիմքով քաղաքացիաիրավական պատասխանատվության կիրառման հիմնախնդիրները // «Գիտական Արցախ» պարբերական 3(6), 2020:

§3. Կեղծ սնանկությունը

Սնանկության հետ կապված հակաիրավական արարքների թվում առանձնակի նշանակություն ունի կեղծ սնանկությունը, որը արտահայտվում է շահագրգիռ անձի կողմից սնանկության մասին կեղծ հայտարարության տարածմամբ՝ պարտատերերին մոլորության մեջ գցելու և համապատասխան ակտիվներ քողարկելու նպատակով: Այն, ըստ էության, «սպիտակ օձիքով» հանցագործության հատուկ ենթաձև է[27], որը ազդեցություն ունի ոչ միայն պարտատերերի, այլև հասարակության ու ընդհանուր տնտեսական համակարգի վրա:

Կեղծ սնանկության հատկանիշների ձևավորումը դրսեվորվում է գործողությամբ, մասնավորապես՝ պարտատերերին վճարումներ կատարելու միջոցների ֆորմալ բացակայության իրավիճակի ստեղծմամբ, ինչը իր հերթին կարող է իրականացվել բազմաթիվ եղանակներով: Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են հիմնականում հետևյալ եղանակները.

1. Կատարման իրական հնարավորությունը գերազանցող պարտավորությունների կուտակում, որը կարող է դրսևորվել բանկերից բարձր տոկոսադրույքով վարկային միջոցների ստացմամբ, ընկերության նկատմամբ տույժերի ու տոկոսների տեսքով ֆինանսական բեռ առաջացնելու նպատակով պարտավորությունների միտումնավոր ուշ կատարում և այլն,
2. Վճարման ոչ դրամական ձևերի կիրառում, որը կարող է դրսևորվել ոչ իրացվելի ակտիվների նպատակաուղղված ներգրավմամբ, որոնք հաշվառվում են որպես ֆինանսական ներդրումներ և չեն ներկայացվում մարման,

[27] Տե՛ս **Box, M., Gratzer, K. & Lin, X.** The Asymmetric Effect of Bankruptcy Fraud in Sweden: A Long-Term Perspective. *J* Quant Criminol 35, 2019, էջեր 287–312:

3. Դեբիտորական պարտքերում միջոցների սառեցում, որը կարող է արտահայտվել անտոկոս փոխառությունների տրամադրմամբ, գնորդների կանխավճարների այլ անձանց հաշիվներին փոխանցմամբ, հաճախորդների հետ երրորդ կողմի բանկային հաշիվների միջոցով հաշվարկների իրականացմամբ և այլն[28]:

Կեղծ սնանկության հատկանիշների առկայության հարցը պարզելիս առաջնային է հաշվի առնել, որ վերջինիս կանխամտածված սնանկությունից տարբերակող էական հանգամանքը այն է, որ կանխամտածված սնանկության դեպքում՝ ընկերությունը իրապես չունի պարտավորությունների մարման հնարավորություն: Մինչդեռ կեղծ սնանկության դեպքում՝ ընկերությունը առանց սնանկ ճանաչվելու համար անհրաժեշտ իրավական պայմանների առկայության սնանկության դիմում է ներկայացնում դատարան:

ՀՀ օրենսդրությամբ կեղծ սնանկության համար նախատեսված է քրեաիրավական պատասխանատություն, ի տարբերություն, օրինակ՝ ՌԴ օրենսդրության, որը սահմանում է վարչական պատասխանատվություն իրավաբանական անձի ղեկավարի կամ հիմնադրի (մասնակցի) կողմից իրավաբանական անձի, անհատ ձեռնարկատիրոջ կամ քաղաքացու անվճարունակության մասին դիտավորությամբ կեղծ հրապարակային հայտարարության համար, եթե դա չի պարունակում քրեորեն պատժելի արարքի տարրեր: Այսպես, կեղծ սնանկության հանցակազմը սահմանված է ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածով, որից բխում է, որ կեղծ սնանկության հանցագործության սուբյեկտը հատուկ է, իսկ սուբյեկտիվ կողմը դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ, ինչի ապացուցումը էականորեն բարդ է:

---

[28] Տե՛ս **Гринько А.Г.** Преднамеренное и фиктивное банкротство: понятия, признаки, обстоятельства возникновения // Аграрная наука, творчество, рост. Сборник научных трудов по материалам V Международной научно-практической конференции. ФГБОУ ВПО СТАВРОПОЛЬСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ АГРАРНЫЙ УНИВЕРСИТЕТ. 2015, էջեր 86-90:

Հետաքրքրական է նաև կեղծ սնանկության համար պատասխանատվության հարցը, երբ հանցագործության սուբյեկտ հանդիսացող անձը գործել է առաջնորդվելով փաստաբանի խորհրդատվությամբ: Նման դեպքերում կիրառելի է այն մոտեցումը, որ փաստաբանի խորհրդով առաջնորդվելը պետք է հաշվի առնվի դիտավորությունը գնահատելիս, սակայն այն որևէ կերպ չի կարող լինել պատասխանատվությունից ազատման բավարար հիմք[29]: Միաժամանակ, խնդրահարույց է կեղծ սնանկության հանցակազմի շրջանակներում պարտատիրոջը կամ պարտապանին խոշոր վնաս պատճառված լինելու մասին պայմանի հաստատումն այն դեպքում, երբ հանցագործությունը համարվում է ավարտված սնանկության վերաբերյալ դիմում ներկայացնելու պահից:

Օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասը իր հերթին սահմանում է ՍԿ-ի կողմից կեղծ սնանկության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում քրեական հետապնդման մարմիններ անհապաղ հաղորդում ներկայացնելու պարտականությունը: Ընդ որում, նման եզրահանգման ՍԿ-ն կարող է գալ, եթե պարտապանը վճարունակ է, այսինքն՝ առանց էական ֆինանսական բարդությունների կամ գործունեության դադարեցման ունի հնարավորություն կատարելու իր պարտավորությունները:

29 Տե՛ս Linden v. United States, 254 F.2d 560, 568 (4th Cir. 1958):

ՄԱՍ II.
ՆԱԽԱՍՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 3. ՍՆԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԽՈՂ ԱՐՏԱԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

§1. Սնանկությունը կանխող գործիքակազմի ընդհանուր բնութագիրը

Սնանկությունը կանխող գործիքակազմի ներքո հարկ է նկատի ունենալ այն բոլոր միջոցները, որոնք ձեռնարկվում են մինչև սնանկության վարույթի հարուցումը և կոչված են կանխելու պարտապանի անվճարունակության հատկանիշների ի հայտ գալը կամ վերացնելու դրանք: Ըստ այդմ, հասկանալի է, որ նման միջոցների անհրաժեշտությունը ծագում է այն պահից, երբ պարտապանը հանդիպում է ֆինանսական դժվարությունների և առկա կամ կանխատեսելի են նրա անվճարունակության նախանշանները:

Ընդհանուր առմամբ միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սնանկությունը կանխելու համար կիրառվում են տարբեր մեխանիզմներ՝ սկսած ոչ ֆորմալ ընթացակարգերից, այդ թվում՝ պարտապանի և պարտատիրոջ միջև բանակցությունների իրականացումից մինչև բուն բիզնեսի նկատմամբ խիստ վերահսկողության իրականացումը:

Նման մեխանիզմներից մեկը, օրինակ, կանխիկ դրամական միջոցների հոսքի կանխատեսումն ու կառավարումն է և դրա արդյունքում պարտապանի վաղ առողջացումը[30]:

Իրականում բիզնեսները ձախողում են ոչ այնքան շահույթի նվազման հետևանքով, որքան կանխիկ դրամական միջոցների պակասի պատճառով, երբ վրա է հասնում դրամական պարտավորությունը կատարելու պահը: Արդյունքում անհնարին է դառնում մի շարք էական պարտավորությունների կատարումը, օրինակ՝ աշխատավարձերի վճարումը, կենսական ապրանքների մատակարարման դիմաց վճարումը, կոմունալ ծառայությունների դիմաց վճարումը և այլն:

Այդպիսի դեպքերում պարտապանի համար առաջնահերթ քայլ պետք է լինի կանխիկ դրամական միջոցների արդյունավետ կառավարումն ապահովելը և խնդիրների հայտնաբերման դեպքում համապատասխան քայլեր ձեռնարկելը:

Երբ համապատասխան ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում պարզ է դառնում, որ առկա են նշաններ, որոնք վկայում են ֆինանսական դժվարությունների մասին, ապա կարող են գործի դրվել տարբեր արտադատական գործիքներ: Նման գործիքներից մեկը մորատորիումի (սառեցման) համաձայնագիրն է (standstill agreement), որը լայնորեն կիրառվում է Անգլիայում, ԱՄՆ-ում[31]: Սա համաձայնություն է ընկերության և իր պարտատերերի միջև, որով պարտատերերը համաձայնում են վարկային պայմանագիրը չգործարկել որոշակի ժամկետով՝ տրամադրելով որոշակի ժամանակ պարտքի վերակառուցման համար: Պարտատերերը կարող են

---

30 Տե՛ս Insolvency Prediction With or Without Cash Flow Indicators: The case of Latvia (հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.researchgate.net/publication/339241478_Insolvency_Prediction_With_or_Without_Cash_Flow_Indicators_The_case_of_Latvia):

31 Տե՛ս World Bank Group. A Toolkit For Out-of-Court Workouts (հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://documents1.worldbank.org/curated/en/851561511964075432/pdf/121753-WP-PUBLIC-OCWToolkitFINALENGLISHWEB.pdf):

համաձայնել պահպանելու պայմանագրով մինչ այդ կատարվածը: Նման համաձայնություն կնքելու պահանջ պարտապանը ինքը կարող է ներկայացնել: Մորատորիումի ընթացքում տեղի է ունենում բիզնեսի անկախ գնահատում, կազմվում է նոր բիզնես ծրագիր, կատարվում է ծախսերի կրճատում կամ գույքի վաճառք, իրականացվում են նոր կապիտալ ներդրումներ, փոփոխություններ են կատարվում պարտապանի կառավարման մարմիններում և այլն:

Հատկանշական է նաև, որ Վերակազմավորման, անվճարունակության և սնանկությայն մասնագետների միջազգային ասոցիացիան (INSOL) մշակել է 10 սկզբունքներ, որոնք սահմանում են պարտապանի և պարտատերերի հարաբերությունների հիմնական սկզբունքները այն դեպքում, երբ պարտապանը հայտնում է ֆինանսական դժվարությունների առջև և կարիք ունի վերականգնվելու[32]:

Միջազգային պրակտիկայում կիրառվում է նաև Վերակազմակերպման գլխավոր կառավարչի կամ պատասխանատուի (Chief Restructuring Officer) ինստիտուտը: Սա հատուկ պաշտոնյա է, որին վարձում է պարտապան ընկերությունը, նրան օժտում է որոշակի լիազորություններով՝ վերահսկելու ընկերության գործունեությունը՝ փրկելու վաղահաս սնանկությունից: Կառավարչի հիմնական դերակատարությունն է՝ ստեղծել բիզնես ծրագիր, որ կապահովի միջին և երկարատև կենսունակություն, կազմակերպել մորատորիումի համաձայնագրերի կնքումը հիմնական պարտատերերի հետ, բանակցել պարտատերերի հետ՝ շարունակական ֆինանսական աջակցություն ստանալու հարցում, իրականացնել գույքի վաճառք, օժանդակել կառավարման մարմիններին շահույթի և կանխիկ դրամական միջոցների հոսքերի

---

[32] Առավել մանրամասն տե՛ս INSOL International. STATEMENT OF PRINCIPLES FOR A GLOBAL APPROACH TO MULTI-CREDITOR WORKOUTS II (հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.insol.org/_files/Publications/StatementOfPrinciples/Statement%20of%20Principles%20II%2018%20April%202017%20BML.pdf):

կառավարման հարցում, օժանդակել վեճի արտադատական լուծմանն ուղղված բանակցությունների վարմանը կամ անհրաժեշտության դեպքում նախապատրաստել սնանկության գործընթաց և օժանդակել դրան[33]:

Վերջին տասնամյակում միջազգային, հատկապես՝ եվրոպական պրակտիկան կենտրոնանում է նախաանվճարունակության և վաղ միջամտության համակարգերի (pre-insolvency and early intervention systems) վրա, որոնք ձգտում են փրկել բիզնեսը ֆինանսական դժվարություններից, երբ դեռ առկա չեն անվճարունակության հատկանիշներ[34]:

Եվրոպական տարբեր երկրներում էլ գործում են վաղ միջամտության տարբեր համակարգեր: Օրինակ՝ Իտալիայում ֆինանսական դժվարության մեջ գտնվող պարտապանը կարող է դիմել նախաանվճարունակության վարույթով, նույնիսկ այն դեպքում, երբ դեռ ճգնաժամային իրավիճակում է (stato di crisi) և ոչ թե անվճարունակ է: Իտալիայում գործում է նաև Պարտքի վերակառուցման համաձայնագրի գաղափարը (Debt Restructuring Agreement), որը թույլ է տալիս պարտապանին բանակցել իր պարտատերերի հետ (հիմնականում բանկային պարտատերերի), և պարտապանը կարող է դիմել իրավասու դատարան այդ բանակցային ժամանակահատվածում մորատորիում կիրառելու խնդրով: Խորվաթիայում կիրառվում է սնանկության վտանգի վարույթը (threat of bankruptcy):

---

[33] Սնանկությունը կանխարգելող արտադատական գործընթացների մասին տե՛ս նաև World Bank Study. Out-of-Court Debt Restructuring (հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://documents1.worldbank.org/curated/en/417551468159322109/pdf/662320PUB0EPI00turing09780821389836.pdf):

[34] Տե՛ս անվճարունակության վարույթների մասին ԵՄ խորհրդի (EC) 1346/2000 կանոնակարգը, որը ուժի մեջ է մտել 2002 թ. մայիսի 31-ին (այն վերանայվել է 2012-ին, որն ուժի մեջ է մտել 2017-ին):

Իսպանիայում, եթե պարտապանը դատարանին ծանուցում է, որ սկսել է բանակցել իր պարտատերերի հետ, դատարանը կիրառում է սահմանափակ մորատորիում՝ ակտիվների բռնագանձման արգելք 4 ամիս ժամկետով: Ֆրանսիայում մի քանի գործընթացներ են առկա. առաջինը հատուկ միջնորդությունն է (special mediation), որի կիրառումը կարող է պահանջել պարտապանը և որի արդյունքում նշանակվում է հաշտարար՝ ֆինանսական դժվարությունների առաջացումից հետո, բայց մինչ փաստացի անվճարունակությունը: Երկրորդը հաշտարարության գործընթաց է (conciliation proceeding), որը կարող է սկսվել մինչ պարտապանի փաստացի անվճարունակությունը կամ երբ առկա է փաստացի անվճարունակություն՝ 45 օրից ոչ ավելի: Երրորդ տարբերակը սահմանված է «Ընկերությունների պաշտպանության մասին» օրենքով, որը նախատեսում է դատարանի կողմից վերահսկվող վերակազմակերպման ընթացակարգ, ինչպես օրինակ ԱՄՆ-ի Սնանկության մասին օրենքի Գլուխ 11-ի վերակազմակերպման գործընթացն է[35]:

Խոսելով վերակազմակերպման մասին՝ որպես անվճարունակության (սնանկության) գործընթացի կարևոր բաղադրատարրի, պետք է նշել, որ այժմ իրավական համակարգերը զարգանում են կանխարգելիչ վերակազմակերպումների մեխանիզմների (preventive restructuring) ներդրման ճանապարհով:

Այս առումով կարևոր է Եվրոպական պառլամենտի և խորհրդի 2019 թվականի հունիսի 20-ի 2019/1023 դիրեկտիվը[36]: Այն ծավալուն քննարկումներ է անցել ԵՄ անդամ երկրներում և ԵՄ ինստիտուտներում,

---

35 Տարբեր երկրներում գործող այս և նման այլ մեթոդների մասին առավել մանրամասն տե՛ս World Bank Group. A Toolkit For Out-of-Court Workouts (հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://documents1.worldbank.org/curated/en/851561511964075432/pdf/121753-WP-PUBLIC-OCWToolkitFINALENGLISHWEB.pdf):

36 Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:32019L1023: Դիրեկտիվով սահմանված կարգավորումների վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ տե՛ս INSOL Europe Guidance Note on the Implementation of Preventive Restructuring Frameworks under EU Directive 2019/1023 (հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.insol-europe.org/download/documents/1918):

և այն անդամ երկրներից պահանջվում է ունենալ կանխարգելիչ վերակազմավորման մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան անվճարունակության ռիսկի ներքո գտնվող պարտապաններին՝ վերակազմավորելու և փրկելու բիզնեսը[37]:

[37] Առավել մանրամասն տե՛ս LAW IN TRANSITION JOURNAL 2019, MOVING "IN SYNC"? TOWARDS GREATER INSOLVENCY HARMONISATION (հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.ebrd.com/publications/law-in-transition-2019-moving-in-sync-towards-greater-insolvency-harmonisation.pdf%20):

§2. Մնանկությունը կանխող արտադատական գործիքակազմը ՀՀ-ում

Մնանկությունը կանխող արտադատական գործիքակազմի առնչությամբ գործող օրենսդրությունը ուղղակի կարգավորումներ չի նախատեսում: Այդուհանդերձ, հիմք ընդունելով կամքի ինքնավարության և պայմանագրի ազատության սկզբունքները, այդպիսին կարող է դիտարկվել պարտատիրոջ կամ պարտատերերի հետ բանակցությունների իրականացումը: Նման բանակցությունները կարող են ուղղված լինել տոկոսների վճարման համար արտոնյալ ժամակահատվածի տրամադրմանը (բանկային պրակտիկայում հայտնի է որպես «գրեյս պերիոդ»), պարտքի վերակառուցմանը, պարտքի վերաֆինանսավորմանը, պարտքի մի մասի զիջմանը՝ մյուս մասի ամբողջական մարման պայմանով և պարտապանի անվճարունակության հատկանիշների բացառմանը հանգեցնող այլ լուծումներին:

Հասկանալի է, որ այսպիսի բանակցությունները արդյունքի կարող են հասնել այն դեպքում, երբ դրանք առաջին հերթին ձեռնտու են պարտատիրոջը: Ընդ որում, ձեռնտու լինելու հարցը կարելի է գնահատել մի քանի հանգամանքներից ելնելով: Նախ պարտատերը դրանով խուսափում է սնանկության բարդ վարույթ ներքաշվելու բեռից: Սա իրենից ենթադրում է լրացուցիչ մարդկային ռեսուրսներ (փաստաբան, այլ ներկայացուցիչ), դատական ծախսեր, այդ թվում՝ ֆիզիկական անձ պարտապանի դեպքում 200 հազար, իսկ իրավաբանական անձ պարտապանի դեպքում մեկ միլիոն դրամի չափով պետական տուրք, կառավարչի վարձատրություն և, իհարկե, ժամանակատարություն:

Չնայած վերոնշյալ խնդիրներից խուսափելու «գայթակղությանը», ամեն դեպքում նման լուծումները կարող են և ընդունելի չլինել պարտատիրոջ համար՝ կախված նախ նրանից, թե ինչ պայմաններով են իրականացվում նման բանակցությունները, և, ի վերջո, ինչպիսին

է եղել պարտապանի վարքագիծը մինչ այդ: Եթե պարտապանը պարտավորությունների կատարման ընթացքում ժամանակացույցի պարբերական և տևական խախտումներ է թույլ տվել, ապա նման բանակցությունների հաջողությունը խիստ անհավանական կարող է լինել: Բանակցությունների հավանականությունը մեծանում է հսկվող[38] և ոչ ստանդարտ[39] դասակարգված պարտքերի դեպքում, և խիստ նվազում կասկածելի պարտքերի պարագայում[40]:

Բանակցությունները անիմաստ կարող են դառնալ այն դեպքերում, երբ պարտապանի պարտքը ճանաչվում է անհուսալի[41], չնայած պրակտիկայում կարող են հանդիպել դեպքեր, երբ կողմերը գալիս են համաձայնության պարտքի մի մասի, հիմնականում՝ կուտակված մեծ տոկոսների ներման շուրջ՝ պարտքի մյուս մասի (հիմնական գումարի) ամբողջական մարման պայմանով:

Հարկ է նաև նշել, որ բանակցությունները կարող են ձեռնտու չլինել նաև պարտապանին: Մասնավորապես, պարտապանը կարող է նախընտրել սնանկության վարույթը՝ օգտվելու մորատորիումի հնարավորություններից, փորձելու «շունչ քաշել» և օգտվել ֆինանսական առողջացման հնարավորություններից:

---

38 Հսկվող են դասակարգվում այն պարտքերը, որոնց հիմնական գումարի (կամ դրա մի մասի) մարումը կամ տոկոսների վճարումն ուշացել է սահմանված ժամկետից մինչև 90 օր:

39 Ոչ ստանդարտ են դասակարգվում այն պարտքերը, որոնց գծով պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում՝ կապված փոխառուի (պարտապանի) ֆինանսական վիճակից կամ նրա պարտքը մարելու ունակությունից: Պարտավորությունները չեն կատարվում 91-180 օր:

40 Կասկածելի պարտքերն ունեն ոչ ստանդարտ պարտքերի բոլոր հատկանիշները, սակայն առավել խնդրահարույց են, ինչի արդյունքում դրանց հավաքագրումը տվյալ պահին դառնում է չափազանց դժվար կամ անհնար: Պարտավորությունները չեն կատարվում 181-270 օր:

41 Անհուսալի պարտքերն անհավաքագրելի և ամբողջությամբ արժեզրկված ակտիվներն են, որոնց հաշվառումը հաշվեկշռում որպես ակտիվներ այլևս նպատակահարմար չէ: Պարտավորությունները չեն կատարվում 271 օր և ավելի:

Ամեն դեպքում, բանակցությունների հնարավորությունը, դրանց արդյունավետությունը և արդյունքները կախված են նրանից, թե որ փուլում են կողմերը որոշում գնալ այդ լուծումների, ինչպիսի ֆինանսական վիճակում է պարտապանը և նրա պարտքը, ինչ տրամադրվածություն ունի պարտատերը, ինչ պայմանների շուրջ են իրականացվում բանակցությունները և ինչ կարող է առաջարկել պարտապանը:

Միաժամանակ, պետք է նկատել, որ պարտապանի և պարտատիրոջ բանակցություններին որոշակի հաջողության հնարավորություն կարող է հաղորդել հաշտարարության ինստիտուտը, որը համեմատաբար նոր է Հայաստանում և ունի զարգացման լայն հեռանկարներ:

§ 3. Պարտքի վերակառուցումը՝ որպես սնանկության կանխման միջոց

Պարտապանի պարտավորության պայմանների փոփոխության վերաբերյալ կողմերի բանակցությունների բարեհաջող ընթանալու դեպքում անհրաժեշտություն է առաջանում սահմանված կարգով ամրագրել բանակցությունների արդյունքները:

Օրենսգիրքը նման դեպքերի համար նախատեսում է պարտավորության նորացման հնարավորություն (հոդված 430), որը երբեմն անվանվում է նաև «պարտքի վերակառուցում»:

Պարտավորության նորացում է համարվում կողմերի միջև ձեռք բերված համաձայնությունը, որով կողմերը միմյանց միջև գոյություն ունեցող սկզբնական պարտավորությունը փոխարինում են միմյանց միջև մեկ այլ պարտավորությամբ՝ նախատեսելով պարտավորության այլ առարկա կամ կատարման այլ եղանակ: Նման դեպքում օրենսդրությունը սահմանում է, որ նորացման պահից սկզբնական պարտավորությունը համարում է դադարած, փոխարենը գործում է կողմերի միջև ձեռք բերված՝ նորացված պարտավորությունը:

Պարտավորության նորացման եղանակի առումով օրենսդրությունը որևէ արգելք չի սահմանում. կողմերը այդ առումով ազատ են և կարող են փոփոխել ինչպես պարտավորության որևէ պայման (օրինակ՝ կատարման ժամկետը, պահանջի չափը, կատարման եղանակը և այլն), այնպես էլ դրանցից մի քանիսը, կամ ամբողջը: Առկա միակ սահմանափակումը կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման և ալիմենտի վճարման պարտավորությունների նկատմամբ նորացման արգելքն է:

Քանի որ պարտավորության առկայությունը հաստատվում է գրավոր փաստաթղթով (պայմանագիր, համաձայնագիր, արձանագրություն, դատական ակտ, և այլն), պարտավորության նորացման եղանակը պայմանագրային լուծումն է՝ կողմերի միջև

նոր փաստաթղթի ստորագրումը, որը կարող է լինել պայմանագրի, համաձայնագրի կամ օրենքով նախատեսված այլ փաստաթղթի տեսքով:

Եթե պարտավորությունը սահմանված է այնպիսի պայմանագրով, որի կազմման և կնքման վերաբերյալ օրենսդրությունը սահմանում է պարտադիր պայմաններ կամ ընթացակարգեր, ապա այդ պայմանագրի նորացումը՝ դրանում փոփոխություն կատարելու վերաբերյալ նոր փաստաթուղթը պետք է ստորագրվի նույն կարգի պահպանմամբ:

Գործնականում, բացի դասական իմաստով պարտավորության նորացումից, պարտքի վերակառուցումը կարող է ներառել նաև պարտքի ներման տարրեր: Մասնավորապես, Օրենսգրքի 431-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունը դադարում է պարտատիրոջ կողմից պարտապանին իր պարտականություններից ազատելով (պարտքը ներելով): Նման իրավիճակներ կարող են առկա լինել, երբ պարտատերը, վերակառուցելով պարտքը, օրինակ, տոկոսների վճարման մասով պարտավորությունը ներում է՝ պարտապանին ազատելով ժամկետանց տոկոսների վճարման պարտականությունից, իսկ հիմնական պարտավորության (մայր գումարի) մարման մասով նորացնում է պարտավորությունը՝ սահմանելով նոր ժամկետներ և պայմաններ:

ՄԱՍ III. ՍՆԱՆԿ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՈՒՄԸ

ԳԼՈՒԽ 4. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

§1. Սնանկության գործերի ենթակայությունը և առանձին քաղաքացիական գործերի առարկայական ընդդատությունը

Դատարանները, այդ թվում՝ ՍնԴ-ն, օժտված չեն համընդհանուր իրավասությամբ, ինչը ենթադրում է նրանցից յուրաքանչյուրի քննությանը և լուծմանը վերապահված հարցերի հստակեցում: Այս խնդիրը առաջին հերթին լուծվում է «ենթակայություն» ինստիտուտի միջոցով:

Առավել ընդհանուր բնորոշմամբ ենթակայությունը իրավաբանական գործերի այնպիսի հատկանիշ է, որի միջոցով պարզվում է տվյալ գործը քննելու և լուծելու իրավասություն ունեցող կոնկրետ սուբյեկտը: Ըստ այդմ, այն գործերը, որոնց քննությունն ու լուծումը օրենքով հանձնված է դատարանի իրավասությանը, համարվում են դատական ենթակայության գործեր:

ՍնԴ իրավասության հետ կապված հարցերի լուծմանը նվիրված է Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է ՍնԴ (այսուհետ

նաև՝ դատարան) դատավորի կողմից միանձնյա: Այլ կերպ ասած՝ սնանկության գործերի համար սահմանված է ՍՆԴ բացառիկ իրավասություն:

Սնանկութան գործերից բացի Օրենքը ՍՆԴ ենթակայությանն է վերապահել նաև որոշ քաղաքացիական գործեր: Այս առումով հարկ է նկատել, որ քաղաքացիաիրավական վեճերը, անկախ սնանկության վարույթի նկատմամբ ունեցած հնարավոր ազդեցությունից, մինչև ոչ վաղ անցյալը քննվում էին սնանկության վարույթից առանձին՝ որոշ դեպքերում խոչընդոտելով սնանկության վարույթի բնականոն ընթացքը:

Իրավիճակը փոխվեց, երբ 17.06.2016թ. փոփոխություններով[42] Օրենքի 4-րդ հոդվածը որոշակի քաղաքացիական գործերի քննության իրավասությունը վերապահեց սնանկության գործ քննող դատարանին: Մասնավորապես, Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվեց, որ սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում: Այսպիսով առաջին քայլը արվեց պարտապանի մասնակցությամբ որոշ քաղաքացիական գործեր սնանկության գործի շրջանակում կենտրոնացնելու ուղղությամբ:

Համեմատության համար պետք է նշել, որ սնանկության վարույթին առնչվող քաղաքացիական գործերի կենտրոնացման դրսևորումներ հանդիպում են արտասահմանյան որոշ երկրների օրենսդրություններում: Օրինակ՝ Իսպանիայում սնանկության վարույթին պետք է միացվեն նաև իրավաբանական անձի պահանջներով հայցերը՝ ընդդեմ տնօրենների, լուծարային կառավարիչների և աուդիտորների, որոնց քննությունը պետք է շարունակվի սնանկության

---

[42] Ուժի մեջ է մտել 23.07.2016թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2016.07.13/54(1234) Հոդ.650: Այսուհետ նաև՝ Օրենքի փոփոխություններ:

վարույթի շրջանակներում, իսկ քաղաքացիական և աշխատանքային դատարանները չեն կարող վարույթ ընդունել այնպիսի գործեր, որոնք պետք է քննվեն ՍՆԴ-ում, հատկապես այն գործերը, որոնք կապված են պարտապանի գույքի հետ: Եթե նման գործերը սխալմամբ ընդունվել են վարույթ, ապա դրանց քննությունը պետք է դադարեցվի և արդեն կատարված գործողությունները համարվեն անվավեր: Առևտրային դատարանները ևս չպետք է վարույթ ընդունեն և քննեն այնպիսի գործեր, որոնք կապված են սնանկության վարույթով պարտապանի հետ[43]:

Ֆրանսիայում ՍԿ-ն կարող է դիմել սնանկության գործը քննող դատարանին՝ պայմանագիրը լուծված համարելու պահանջով, եթե դա անհրաժեշտ է պարտապանի ֆինանսական առողջացման համար և եթե լուծումը էականորեն չի վնասի կոնտրագենտի շահերը: Այս գործերը քննվում են սնանկության վարույթի շրջանակներում, իսկ Գերմանիայում պարտապանի դեմ ներկայացվող պահանջները սնանկության վարույթը սկսելուց հետո պետք է ներկայացվեն միայն սնանկության վարույթում, եթե հայցը սնանկության վարույթին առնչվող գույքին է վերաբերում[44]: Պարտատիրոջ կամ ՍԿ-ի կողմից պահանջը սնանկության վարույթի շրջանակներում ներառելուն առարկելու դեպքում այն կարող է քննվել ընդհատված հայցի քննության շրջանակներում[45]:

Նման պայմաններում առանձին քաղաքացիական գործերի համար սնանկության գործը քննող դատարանի ենթակայության սահմանումը դրական լինելուն զուգահեռ ուներ մի շարք չկարգավորված հարցեր (օրինակ՝ ինչ կանոններով պետք է հարուցվեին, քննվեին և լուծվեին այդ գործերը, որ դատավորին պետք է հանձնվեին, արդյոք պետք է ունենային դատական գործի ինքնուրույն համար

---

43 Տե՛ս https://e-justice.europa.eu/content_insolvency-474-es-en.do?member=1:

44 Տե՛ս, օրինակ՝ Սնանկության մասին Գերմանիայի օրենքի 87-րդ հոդվածը: Introduction to German Insolvency Law, "International Company and Commercial Law Review" (publisher: Sweet & Maxwell, London), 2002, page 427, Dr. A. Remmert.

45 Տե՛ս Սնանկության մասին Գերմանիայի օրենքի հոդված 180(2):

և այլն)։ Եվ չնայած այս հարցերի պատասխանները տրվեցին դատական պրակտիկայում[46], քննարկվող ինստիտուտը զգում էր հետևողական զարգացման անհրաժեշտություն, քանի որ որոշ հարցեր, ներառյալ՝ մի շարք գործեր դուրս էր թողնում սնանկության գործի շրջանակներից։

Արդյունքում Օրենքի փոփոխություններով, ինչպես նաև Օրենքում իրականացված հետագա լրացումներով զգալի տեղ հատկացվեց այս ինստիտուտի բարեփոխմանը՝ ընդլայնելով նաև ներառվող գործերի շրջանակը։ Մասնավորապես, Օրենքի 4-րդ հոդված 3-րդ մասի համաձայն. «Սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և սնանկ ճանաչելու հարցի լուծման կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով կամ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի հիման վրա ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործեր (այսուհետ՝ առանձին քաղաքացիական գործեր)»։

[46] Տե՛ս ՎԴ թիվ ԵԿԴ/3928/02/16 քաղաքացիական գործով 04.11.2019թ. որոշումը։

Վկայակոչված նորմի վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիաիրավական վեճը ենթակա է որպես առանձին քաղաքացիական գործ ՍՆԴ քննությանը, եթե.

1. վեճը ծագել է.

1.1 սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի, ներառյալ՝ իրավունքների *կամ*

1.2 երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի *կամ*

1.3 պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների առնչությամբ *և*

2. վեճի լուծումը կարող է.

2.1 ազդել սնանկ ճանաչելու հարցի լուծման վրա *կամ*

2.2 ավելացնել կամ նվազեցնել պարտատերերի պահանջների բավարարման հավականականությունը:

Միաժամանակ, անկախ վերոթվարկյալ պայմանների առկայությունից, որպես առանձին քաղաքացիական գործ սնանկության վարույթում չեն կարող քննվել ՍԿ-ի կողմից

պարտապանի անունից հարուցվող հայցերը: Ընդ որում, նման մոտեցման հիմքում դրված են երկու հանգամանքներ.

1. Քաղաքացիաիրավական ընդդատությունը, քանի որ այդ դեպքում պատասխանողը ստիպված կլիներ ներկայանալ պարտապանի բնակության (գտնվելու) վայրի դատարան,
2. ՍԿ կողմից պարտապանի անունից հարուցվող հայցերի քանակը սնանկ ճանաչված խոշոր իրավաբանական անձանց դեպքում կարող է գերազանցել մի քանի հարյուրը, որը կարգելակեր սնանկության գործը վարող դատավորի բնականոն գործունեությունը:

Որպես առանձին քաղաքացիական գործ չի կարող քննվել նաև «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի[47] հիման վրա ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերը:

Միաժամանակ, պետք է նկատել, որ մինչև Օրենքի փոփոխությունները՝ ՎԴ-ն, վերլուծելով նաև առանձին քաղաքացիական գործերի ինստիտուտի էությունը, դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «Սնանկ ճանաչված պարտապանի մասնակցությամբ պարտավորությունները կենտրոնանում են սնանկության վարույթում: Սնանկության վարույթում սնանկ ճանաչված պարտապանի մասնակցությամբ պարտավորությունների կենտրոնացմամբ հնարավորություն է ստեղծվում ապահովելու վերջինիս ակտիվների հավաքագրումը և դրանց հիման վրա բոլոր պարտատերերի շահերի ապահովումը՝ օրենքով սահմանված առաջնահերթությամբ վերջիններիս պահանջների բավարարմամբ»[48]:

---

[47] Ընդունվել է 16.04.2020թ.: Ուժի մեջ է մտել 23.05.2020թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2020.05.13/50(1605) Հոդ.580:

[48] Տե՛ս, օրինակ՝ ՎԴ թիվ ԵԱՔԴ/0254/02/16 քաղաքացիական գործով 27.12.2017թ. որոշումը:

Մինչդեռ քննարկվող ինստիտուտի ներդրումը պայմանավորված է ոչ թե պարտապանի ակտիվների կենտրոնացված հավաքագրման անհրաժեշտությամբ, այլ հիմքում ունի առնվազն հետևյալ փաստարկները.

1. Սնանկության վարույթից դուրս, սակայն սնանկության վարույթի վրա ազդեցություն ունեցող քաղաքացիական գործերն ԱԸԴ կողմից քննվելու հնարավորությունը պրակտիկայում դատավարական իրավունքները չարաշահելու և տարբեր միջոցներով, այդ թվում հաճախ արհեստականորեն ստեղծված քաղաքացիական վեճի շրջանակներում՝ հայցի ապահովմամբ սնանկության վարույթի բնականոն ընթացքը խոչընդոտելու հիմքեր էր ստեղծում,
2. Սնանկության գործը վարող դատավորի կողմից առանձին քաղաքացիական գործի քննությունը թույլ կտա դատարանին առավել արագ, արդյունավետ և ճիշտ լուծել վեճը, քանի որ մի կողմից դատարանը կբացառի մորատորիումի շրջանցման փորձերը, մյուս կողմից, որպես կանոն, լիարժեք իրազեկ է այդ գործին նախորդող գործընթացներին:

§2. Առանձին քաղաքացիական գործերի քննության առանձնահատկությունները

Մինչև Օրենքի փոփոխությունները կարգավորված էր միայն ԱԸԴ կողմից գործը ՍՆԴ հանձնելու ընթացակարգը, սակայն բացակայում էր դրա ենթակայության հետ կապված վեճի, ինչպես նաև ՍՆԴ կողմից սխալմամբ որպես առանձին քաղաքացիական գործ վարույթ ընդունված գործը ԱԸԴ ուղարկելու հարաբերությունների կարգավորումները:

Օրենքի փոփոխությունների ընդունմամբ այս հարցերը ստացան ամբողջական կարգավորում: Այսպես, Օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանվեց, որ նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված կանոնների խախտմամբ դատարանի կողմից վարույթ ընդունված գործերը դատարանն իր որոշմամբ հանձնում է ԱԸԴ քննությանը, իսկ ՔԴՕ 26-րդ հոդվածը կարգավորում է գործը ստացած ԱԸԴ գործողություններ: Մասնավորապես, այդ դեպքում գործը ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործի ենթակայությունը որոշելու համար ՎԴ նախագահին ուղարկելու մասին: Նման դեպքում ՎԴ նախագահը որոշումը կայացնում է հնգօրյա ժամկետում՝ սահմանելով իրավասու դատարանը:

Ըստ էության, նույն լուծումն է տրված Օրենքի փոփոխություններով, որոնք արդեն վերաբերում է ԱԸԴ-ից ստացված գործի ենթակայության հետ կապված վեճին: Խոսքը վերաբերում է Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասին, որի համաձայն. «Ընդհանուր իրավասության դատարանից քաղաքացիական գործ ստանալու դեպքում դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը ՎԴ նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը: ՎԴ նախագահը հնգօրյա ժամկետում որոշում է գործի ենթակայությունը: ՎԴ նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան»:

Առանձին քաղաքացիական գործերը, իրենց բնույթին համապատասխան, ենթակա են քննության և լուծման քաղաքացիական դատավարության կանոններով: Այդ պատճառով էլ Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանվել է, որ առանձին քաղաքացիական գործերը հարուցվում, քննվում և լուծվում են ՔԴՕ-ով սահմանված կարգով: Ասվածի հետ մեկտեղ օրենսդիրը կարգավորել է սնանկության գործը վարող դատավորի կողմից առանձին քաղաքացիական գործի քննության անհնարինության դեպքում գործի հետագա քննության հարցը, քանի որ առանձին քաղաքացիական գործերի հայեցակարգը, որպես կանոն, ենթադրում է սնանկության գործը վարող դատավորի կողմից այդ գործերի քննություն:

Այսպես, Օրենքի 4-րդ հոդվածի 8-րդ և 10-րդ մասերը առանձին քաղաքացիական գործի քննությունը վերապահում են ՍնԴ այլ դատավորի, եթե առկա է սնանկության գործը վարող դատավորի ինքնաբացարկի հիմքեր կամ վերադաս դատական ատյանի կողմից բեկանվել է առանձին քաղաքացիական գործով կայացված եզրափակիչ դատական ակտը:

Հարկ է նկատել, որ անկախ սնանկության գործի հետ առանձին քաղաքացիական գործերի ունեցած կապից, դրանք շարունակում են պահպանել իրենց հարաբերականորեն ինքնուրույն կարգավիճակը և այդ առումով սնանկության գործի ավարտը ինքնին առանձին քաղաքացիական գործի վարույթը դադարեցնելու հիմք չէ, եթե առկա չէ այդ գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու հիմքեր: Այս լուծումը բխում է ոչ միայն առանձին քաղաքացիական գործերի հարաբերական ինքնուրույնությունից, այլև դատավարական խնայողության սկզբունքից, քանի որ սնանկության վարույթի ավարտի հիմքով դրանց դադարեցումը կամ հանձնումը այլ դատարանին կհանգեցներ պետության և դատավարության մասնակիցների ռեսուրսների անհարկի սպառման:

§3. Օրենքի փոփոխությունների ազդեցությունը ընթացիկ առանձին քաղաքացիական գործերի քննության վրա

ՍՆԴ քննությանը վերապահված առանձին քաղաքացիական գործերի շրջանակը, ինչպես նշվեց, Օրենքի փոփոխությունների և Օրենքում լրացումներ կատարելու արդյունքում զգալիորեն ընդլայնվել է: Այս հանգամանքը պահանջում էր մինչև այդ օրենքի ուժի մեջ մտնելը հարուցված գործերի ճակատագրի որոշակիացում այն առումով, թե արդյոք դրանք պետք է շարունակվեն քննվել այն դատարաններում, որոնց վարույթում են գտնվել, թե առանձին քաղաքացիական գործերի շրջանակի նոր ծավալի մեջ ներառվելու դեպքում փոխանցվեն ՍՆԴ:

Հիշատակված հարցի վերաբերյալ օրենսդրի մոտեցումը իր ամրագրումը ստացավ Օրենքի փոփոխությունների 72-րդ հոդվածի 10-րդ մասում, ըստ որի՝ ՀՀ ԱԸԴ-րում հարուցված՝ օրենքի 3-րդ հոդվածին համապատասխանող գործերը Օրենքի փոփոխությունները ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, փոխանցվում են Սնանկության դատարան:

Այսպիսով, օրենսդիրը որդեգրեց այն քաղաքականությունը, որ հարկ է առանձին քաղաքացիական գործերի նոր շրջանակին տալ «հետադարձ ուժ» և դրան համապատասխանող և ԸԻԴ վարույթում առկա գործերը ևս քննել ՍՆԴ-ում: Ընդ որում, այդ գործընթացը ապահովելու համար, ինչպես նշվեց, Օրենքի փոփոխություններում ամրագրվեց դրանց ուժի մեջ մտնելու մեկամսյա ժամկետ:

Այլ կերպ ասած՝ ըստ Օրենքի փոփոխությունների՝ մինչև 2020թ. մայիսի 15-ը առանձին քաղաքացիական գործերի նոր բնորոշմանը համապատասխանող և մինչև Օրենքի փոփոխությունները հարուցված բոլոր գործերը պետք է փոխանվեին ՍՆԴ:

ԸԻԴ կողմից հիշատակված դրույթի կատարման ընթացքում ՍՆԴ կողմից բարձրացվեց այն հարցը, թե արդյոք կարող են փոխանցվել նոր

բնորոշմամբ առանձին քաղաքացիական գործերը այն դեպքում, երբ Օրենքի փոփոխությունների 72-րդ հոդվածի 1-ին մասը ուղղակիորեն սահմանում է, որ Օրենքի փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2020 թվականի ապրիլի 15-ից և տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հարուցված սնանկության գործերի վրա:

Օրենքի փոփոխությունների 72-րդ հոդվածի 10-րդ մասի հիմքով փոխանցվող գործերի ենթակայությունը որոշելու նպատակով ՍնԴ-ն մի շարք գործերով դիմեց ՎԴ նախագահին, որի կողմից ձևակերպված դիրքորոշումը ընդհանուր ներկայացմամբ հանգում էր նրան, որ Օրենքի փոփոխությունների 72-րդ հոդվածի 10-րդ մասը մինչև Օրենքի փոփոխությունները ուժի մեջ մտնելը հարուցված քաղաքացիական գործերի նկատմամբ կիրառելը կհակասի նույն հոդվածի 1-ին մասի կարգավորմանը[49]:

Նման մեկնաբանությունը խնդրահարույց է թվում հետևյալ հանգամանքների լույսի ներքո.

1

«Անցումային դրույթներ» հասկացությունը, ի թիվս այլնի, կոչված է ապահովելու նորմատիվ իրավական ակտի հիմնական մասի դրույթների կիրառման որոշակի առանձնահատկություններ («Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք[50], հոդված 13):

[49] Տե՛ս, օրինակ՝ ՎԴ նախագահի թիվ ԳԴ/0253/02/17 քաղաքացիական գործով 13.07.2020թ. և թիվ ԵԴ/11015/02/18 քաղաքացիական գործով 26.08.2020թ. որոշումները:

[50] Ընդունվել է 21.03.2018թ.: Ուժի մեջ է մտել 07.04.2018թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2018.03.28/23(1381) Հոդ.373:

2

Տարբեր կարգավորման առարկա ունեցող դրույթների միջև հակասությունը հնարավոր չէ: Տվյալ դեպքում Օրենքի փոփոխությունների 72-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, թե որ սնանկության գործերի վարման վրա է տարածվում Օրենքի փոփոխությունները, իսկ Օրենքի փոփոխությունների 72-րդ հոդվածի 10-րդ մասը վերաբերում է առանձին քաղաքացիական գործերի փոխանցման հետ կապված հարաբերություններին: Ընդ որում, «սնանկության գործի վարում" արտահայտությունը որևէ կերպ չի ներառում դրան առնչվող առանձին քաղաքացիական գործի քննությունը:

3

Օրենքի փոփոխությունների 72-րդ հոդվածի 10-րդ մասում կիրառված է «դատարաններում հարուցված ... Օրենքի փոփոխությունները ուժի մեջ մտնելուց հետո...» արտահայտությունները, ինչից ուղղակիորեն բխում է, որ խոսքը մինչև Օրենքի փոփոխությունների ուժի մեջ մտնելը առկա քաղաքացիական գործերի մասին է:

4

Օրենքի փոփոխությունների միայն 2020թ. ապրիլի 15-ից հետո հարուցված սնանկության գործերի նկատմամբ կիրառելի լինելու պայմաններում պարզ չէ, թե որ նորմով է ՍնԴ-ն դիմել ՎԴ նախագահին, քանի որ ենթակայությունը որոշելու հարցով ՍնԴ կողմից դիմելու հնարավորությունը նախատեսվել է միայն Օրենքի փոփոխություններով:

Բացի իրավական ասպեկտից, հարկ է նկատի ունենալ, որ հիշատակված մեկնաբանությունը բացասական հետևանքներ է պարունակում դատարանների և կողմերի համար, քանի որ գործերի շրջապտույտը բերում է դատարանների անհարկի ծանրաբեռնվածության և գործերի քննության ժամկետների ձգձգման:

Այս համատեքստում խիստ ողջունելի է ՎՔԴ-ի կողմից ձևավորված կայուն մոտեցումը, ըստ որի՝ Օրենքի փոփոխությունների 72-րդ հոդվածի 10-րդ մասի նախկին գործերի նկատմամբ կիրառելիություն չի բացառվել[51]:

[51] Տե՛ս, օրինակ՝ ՎԴ թիվ ՍՆԴ/0102/02/20 քաղաքացիական գործով 21.07.2020թ. և թիվ ՍՆԴ/0112/02/20 քաղաքացիական գործով 14.10.2020թ. որոշումները:

ԳԼՈՒԽ 5. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ

§1. Սնանկության դիմումը՝ որպես սնանկության վարույթի հարուցման հիմք

Սնանկության վարույթի հարուցման համար անհրաժեշտ պայման է հանդիսանում համապատասխան սուբյեկտի կողմից ներկայացված սնանկության (սնանկ ճանաչելու մասին) դիմումը: Ընդ որում, կախված սնանկության տեսակից, սնանկության դիմումի ներկայացման և սնանկության վարույթի հարուցման առումով առկա են առանձնահատկություններ:

Այսպես, Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է սնանկության երկու տեսակ.

1. կամավոր, երբ անձը սնանկ է ճանաչվում սեփական նախաձեռնությամբ,
2. հարկադրված, երբ անձը սնանկ է ճանաչվում պարտապանի պահանջով:

Կախված սնանկության տեսակից՝ Օրենքը տարբերակում է սնանկության դիմում ներկայացնելու իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակը, ինչպես նաև նրանց իրավունքների և պարտականությունների ծավալը:

Այսպես, Օրենքով սահմանված է սնանկության դիմում ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց շրջանակը: Դրանք են.

պարտատերը	պարտապանը	լուծարման հանձնաժողովը (լուծարողը)

իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմինները	(պետական եկամուտների կոմիտեն, համայնքի ղեկավարը, այլ իրավասու պետական մարմինները, այդ թվում՝ դատախազությունը և այլն)

Ընդ որում, Օրենքի ընդհանուր վերլուծությունը թույլ է տալիս այդ սուբյեկտներին առանձնացնել ըստ հետևյալ չափանիշների.

- սուբյեկտներ, որոնց համար սնանկության դիմում ներկայացնելը պարտականություն է,
- սուբյեկտներ, որոնց համար սնանկության դիմում ներկայացնելը իրավունք է:

Այսինքն, սնանկության դիմում ներկայացնելը պարտապանի և պարտատիրոջ համար, կախված դեպքից, սահմանված է թե որպես իրավունք, և թե որպես պարտականություն:

Օրենքը սահմանում է կամավոր սնանկության դիմում ներկայացնելու պարտապանի պարտականությունը: Այսպես, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը սեփական սնանկության ճանաչման նպատակով պարտավոր է դիմել դատարան, եթե առկա են Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կամ 2.1-ին կետերով սահմանված հիմքերը, այսինքն՝ կամավոր սնանկության հիմքերը:

Սնանկության դիմում դատարան ներկայացնելու պարտականություն է սահմանված նաև պարտապան իրավաբանական անձի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) համար, եթե լուծարման ժամանակ պարզվում է, որ լուծարվող իրավաբանական անձի գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջներն ամբողջովին բավարարելու համար: Այսինքն՝ հնարավոր է իրավիճակ, երբ պարտապանի կառավարման բարձրագույն մարմնի կողմից իրավաբանական անձի լուծարման մասին որոշում կայացնելիս Օրենքով սահմանված

սնանկության հատկանիշներն առկա չլինեն, սակայն արդեն լուծարման գործընթացում պարտատերերի հայտնաբերման, դրանց պահանջների գրանցման և պարտապանի ակտիվների գնահատման արդյունքում պարզվի, որ լուծարվող իրավաբանական անձի գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջներն ամբողջովին բավարարելու համար: Ընդ որում, այդպիսի դեպքերում, սնանկության դիմումը դատարան պետք է ներկայացվի ոչ ուշ, քան համապատասխան հիմքերի հայտնաբերումից հետո՝ երկամսյա ժամկետում:

Օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է հարկադրված սնանկության դիմում ներկայացնելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասու պաշտոնատար անձանց պարտականությունը: Մասնավորապես, համապատասխան իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, երբ առկա են լինում հարկադրված սնանկության հատկանիշները, պարտավոր են պարտապանին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնել ՀՀ և համայնքի բյուջեների նկատմամբ դրամային պարտավորություններով.

- **պետական մարմինը**՝ հարկերի, տուրքերի, մաքսատուրքերի, այլ վճարների կամ վարչարարությունից ծագած տուգանքների գծով վճարումը պարտապանի կողմից ուշացնելու դեպքում,
- **համայնքի ղեկավարը**՝ տեղական տուրքերի կամ պարտադիր վճարումների, ինչպես նաև համայնքի այլ դրամային պահանջներով պարտավորությունների կատարումը պարտապանի կողմից ուշացնելու դեպքում:

Ընդ որում, պարտապանին սնանկ ճանաչելու մասին դիմումն իրավասու մարմինը պետք է ներկայացնի պարտավորության հայտնաբերման պահին հաջորդող 6 ամսվա ընթացքում, իսկ այդ ժամկետում համապատասխան մարմինների կողմից սնանկության դիմում չներկայացվելու դեպքում անձին սնանկ ճանաչելու դիմումը ներկայացնում է դատախազությունը:

Այս առումով հատկանշական է, որ ՎԴ գնահատմամբ՝ վերոնշյալ դեպքերում տնտեսվարող սուբյեկտին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելը ՀՀ կամ համայնքի գույքային շահերի պաշտպանության առաջնային միջոցն է[52]:

Ի տարբերություն վերը նշված մարմինների՝ օրենսդիրը հարկադիր կատորողի համար համապատասխան հիմքերի հայտնաբերման դեպքում սահմանել է ոչ թե դատարան դիմելու պարտականություն, այլ կատարողական վարույթը կասեցնելու և պարտապանին կամ պարտատիրոջը սնանկության դիմում ներկայացնելու առաջարկ անելու պարտականություն:

Մասնավորապես՝ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե գույքի բռնագանձման վերաբերյալ վճռի հարկադիր կատարման ընթացքում, պարտապանի ողջ գույքի վրա բռնագանձում տարածելու պարագայում, պարզվում է, որ այդ գույքն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի և ավելի չափով բավարար չէ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար կամ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության որևէ կատարողական վարույթով (վարույթներով) պարտատիրոջ (պահանջատիրոջ) պահանջը բավարարելու դեպքում գույքի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի և ավելի չափով անբավարարության դեպքում անհնարին կդառնա այդ կամ այլ կատարողական վարույթով (վարույթներով) որևէ այլ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումը, ապա հարկադիր կատարողը պարտավոր է անհապաղ կասեցնել կատարողական վարույթը (վարույթները) և առաջարկել պարտատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ ոչ պակաս, քան 90-օրյա ժամկետում սնանկության դիմում ներկայացնել դատարան: Եթե այդ ժամկետում պարտապանի կամ պարտատիրոջ կողմից սնանկության դիմում չի

---

52 Տե՛ս ՎԴ թիվ ՇԴ/0743/02/12 քաղաքացիական գործով 18.07.2014թ. որոշումը:

ներկայացվում դատարան կամ ի հայտ չեն գալիս նոր պարտատերեր, ապա հարկադիր կատարողը վերսկսում է կատարման վարույթը, իսկ եթե կատարողական վարույթը կասեցնելու որոշումը հրապարակելուց հետո ի հայտ են գալիս նոր պարտատերեր կամ արդեն հայտնի պարտատերը կամ պարտապանը դիմում են հարկադիր կատարողին կատարողական վարույթը չվերսկսելու դիմումով, ապա հարկադիր կատարողն առաջարկում է նրանց սնանկության դիմում ներկայացնել դատարան և կատարողական վարույթ չի վերսկսում:

Սահմանելով սնանկության դիմում ներկայացնելու պարտականությունը՝ Օրենքը նախատեսում է նման դիմում չներկայացնելու հետևանքները՝ կախված համապատասխան սուբյեկտներից:

Այսպես, Օրենքի 7-րդ հոդվածով պարտապանի և պարտապան իրավաբանական անձի լուծարման հանձնաժողովի համար Օրենքի 5-րդ հոդվածով սահմանված պարտականությունը չկատարելու համար սահմանված է սուբսիդար պատասխանատվություն պարտատերերի առջև այն պարտավորությունների համար, որոնք առաջացել են համապատասխան հիմքերի հայտնաբերումից հետո երկամսյա ժամկետը լրանալուց հետո: Նույն հոդվածի 2-րդ մասով էլ օրենսդիրը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասու պաշտոնատար անձանց համար է սահմանել անձնական գույքային պատասխանատվություն՝ համապատասխանաբար ՀՀ-ին և համայնքին պատճառված վնասի համար:

Այսպիսով օրենսդիրը, ըստ էության, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համար սահմանելով սնանկության դիմում ներկայացնելու ժամկետային սահմանափակում, միաժամանակ նախատեսել է նաև դրա խախտման հետևանքները՝ մի դեպքում՝ սնանկության դիմում ներկայացնելու իրավունքը վերապահելով այլ պետական մարմնին՝ դատախազությանը, մյուս դեպքում՝ սահմանելով համապատասխան պաշտոնատար անձանց գույքային պատասխանատվություն ժամկետի խախտման հետևանքով ՀՀ-ին և համայնքին պատճառված վնասի համար:

Բացի վերոնշյալ դեպքերից, համապատասխան հիմքերի դեպքում պարտապանի և պարտատիրոջ կողմից սնանկության դիմումի ներկայացումը դրսևորվում է բացառապես հայեցողության շրջանակում, այսինքն՝ ունի իրավունքի բնույթ: Ընդ որում, Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն՝ հարկադրված սնանկության դիմում կարող են ներկայացնել՝ մեկ կամ մի քանի պարտատերերը համատեղ: Դա նշանակում է, որ սնանկության դիմումը կարող է ներկայացվել ինչպես մեկ պարտատիրոջ, այնպես էլ մի քանի պարտատերերի կողմից, իսկ կամավոր սնանկության դիմում ներկայացնելու իրավունք ունեն.

1. իրավաբանական անձանց անունից՝ օրենքով կամ կանոնադրությամբ վերապահված լիազորությունների սահմաններում գործող նրանց մարմինները կամ ներկայացուցիչները,
2. ֆիզիկական անձի անունից՝ տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ներկայացուցիչը:

§2. Սնանկության դիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները

Օրենսդիրը սահմանել է, որ սնանկության դիմումը դատարան է ներկայացվում ՔԴՕ նախատեսված ձևով և բովանդակությամբ: Միևնույն ժամանակ, Օրենքի 11-րդ հոդվածը նախատեսել է դիմումին առաջադրվող հատուկ պահանջները, որոնք, ի լրումն ՔԴՕ նախատեսված պահանջների, պետք է պահպանվեն սնանկության մասին դիմումի մեջ: Մասնավորապես՝ դիմումում պետք է նշվեն.

ա. պարտատիրոջ դրամական պահանջի չափը, պարտքի, վնասների, տուժանքի (տուգանքի, տույժի) չափերը՝ համապատասխան հաշվարկներով,

բ. պարտավորության կամ դրա մասի (մասերի) կատարման ժամկետը,

գ. առաջարկ՝ ԺԿ թեկնածության կամ համաձայնություն՝ ընտրությունը դատարանին թողնելու վերաբերյալ:

Դիմումին կցվում են նաև.

1. իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող պարտապանին սնանկ ճանաչելու դիմումը ներկայացնելու օրվան նախորդող 30 օրից ոչ ավելի վաղեմություն ունեցող պետական գրանցման տվյալները,

2

հարկային մարմինների կողմից դիմումը ներկայացվելու դեպքում՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող պարտապանի ներկայացրած վերջին հարկային հաշվարկները,

3

դիմումում ԺԿ թեկնածության առաջարկ ներկայացնելու դեպքում՝ այդ թեկնածուի գրավոր համաձայնությունը՝ որպես ԺԿ թեկնածու հանդես գալու վերաբերյալ:

Հատկանշական է նաև, որ Օրենքը սահմանում է պարտականություն՝ դիմումին կից ներկայացվող փաստաթղթերը բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենի ձևով ներկայացնելու առումով, իսկ փաստաթղթերը բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենը ներկայացնելու անհնարինությունը պետք է հիմնավորվի դիմողի կողմից:

Այս առումով, ՎԴ գնահատմամբ, օրենսդիրը, սնանկության վարույթը դիտելով քաղաքացիական դատավարության կարգով իրականացվող առանձին վարույթ, իմպերատիվ ձևով ամրագրել է դիմումատուի պարտականությունը դիմումին կից ներկայացվող փաստաթղթերը ներկայացնել բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենի ձևով, ընդ որում, փաստաթղթերի բնօրինակը կամ պատշաճ վավերացված պատճենը ներկայացնելու անհնարինության ապացուցման պարտականությունն օրենսդրի կողմից դրվել է դիմողի վրա: Միաժամանակ դատարանին իրավունք է վերապահվել Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով վերադարձնել դիմումը, եթե վերը նշված պայմանը դիմողի կողմից չի պահպանվել, և դատավորը հիմնավոր չի համարել համապատասխան փաստաթղթերի ներկայացման անհնարինությունը[53]:

[53] Տե՛ս ՎԴ թիվ ԵՇԴ/0062/04/13 քաղաքացիական գործով 30.04.2015 թ. որոշումը:

Օրենքը սահմանում է առանձնահատկություններ նաև հարկադրված սնանկության դիմումի ներկայացման դեպքում: Այսպես, նախ պարտատիրոջ դիմումը կարող է հիմնվել տարբեր պարտավորություններով միավորված պահանջների վրա: Բացի այդ, մի քանի պարտատերեր կարող են միավորել իրենց պահանջները պարտապանի նկատմամբ և մեկ դիմում ներկայացնել դատարան, ընդ որում, նման դիմումը ստորագրում են պահանջները միավորած բոլոր պարտատերերը:

Օրենքի փոփոխություններով հարկադրված սնանկության դիմումի ներկայացման առումով մի շարք նորամուծություններ մտցվեցին: Նախ սահմանվեց դիմողի պարտականությունը՝ հարկադրված սնանկության դիմում ներկայացնելիս դիմումին կցելու նաև դիմումի օրինակը և դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի պատճենները՝ պարտապանների թվին համապատասխան, ինչը հնարավորություն կտա դատարանին առանց լրացուցիչ ծախսեր կատարելու ներկայացնել փաստաթղթերը պարտապաններին: Բացի այդ, ի տարբերություն ընդհանուր քաղաքացիադատավարական կարգի, ելնելով սնանկության վարույթի առանձնահատկություններից և պարտատերերի շահերի պաշտպանության նկատառումներից՝ սահմանվել է, որ մինչև հարկադրված սնանկության դիմում ներկայացնելը դիմումը և կից փաստաթղթերը դիմողը չի ուղարկում պարտապանին:

Մյուս նորամուծությունը վերաբերում է պարտատիրոջ դիմումը որպես պահանջ դիտարկելու կառուցակարգին: Այսպես, Օրենքի 11-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսվել է, որ հարկադրված սնանկության դիմում ներկայացնելիս պարտատերը կարող է միջնորդել դատարան՝ պարտապանին սնանկ ճանաչելուց հետո դիմումը դիտարկել նաև որպես պահանջ, եթե դիմումը համապատասխանում է նաև Օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջներին: Նման միջնորդություն ներկայացվելու դեպքում ներկայացվում է դիմումի և կից փաստաթղթերի ևս երկու օրինակ, իսկ այդ պահանջը չպահպանելու դեպքում միջնորդությունը չի քննարկվում, որի մասին

դիմումը ներկայացրած անձը տեղեկացվում է ոչ ուշ, քան հաջորդ օրը: Ընդ որում, միջնորդություն ներկայացնելը չի սահմանափակում դիմողի՝ Օրենքի 46-րդ հոդվածով սահմանված ընդհանուր կարգով պահանջ ներկայացնելու իրավունքը:

Վերոնշյալկարգավորումը,ըստէության,առավելդյուրինէդարձնում պարտատիրոջ կողմից պահանջ ներկայացնելու հնարավորությունը՝ հնարավորություն տալով խնայել ռեսուրսներ պարտատիրոջ դիմումի հիման վրա կրկին պահանջ ներկայացնելու անհրաժեշտությունը բացառելով և, միևնույն ժամանակ, հնարավորություն է տալիս խուսափել այն դեպքերից, երբ պարտատերը, որի դիմումի հիման վրա հարուցվել է վարույթը, հետագայում որոշակի հանգամանքների բերումով բաց է թողնում պահանջ ներկայացնելու ժամկետները:

Օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է դիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող առանձնահատուկ պահանջներ կամավոր սնանկության և սնանկության վտանգի դեպքում: Նման դեպքերումպարտապանիկողմիցդիմումներկայացնելուպարագայում դիմումին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

ա պարտապանին սեփականության իրավունքով պատկանող գույքի ցանկը՝ համաձայն վերջին գույքագրման արդյունքների (դրա առկայության դեպքում), ներառյալ՝ կապիտալ և ֆինանսական ներդրումները, հիմնական և շրջանառու միջոցները, ինչպես նաև ոչ նյութական ակտիվները և նշված կազմին չպատկանող այլ միջոցները,

բ պարտապանի պարտատերերի և պարտապանների (այդ թվում՝ այն քաղաքացիների, որոնց առջև պարտապանը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին և առողջությանը վնաս պատճառելու համար) ցուցակը, նրանց անունները (անվանումները), բնակության (գտնվելու) վայրը և առանձին պարտավորությունների, ներառյալ՝ արտահաշվեկշռային պարտավորությունների բնույթը և չափը: Նշված տեղեկությունները պետք է ներառեն նաև այն պարտավորությունները, որոնց ժամկետը չի լրացել, ինչպես նաև պարտապանի տված երաշխիքները և ստանձնած այլ պարտավորությունները,

գ պարտապանի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները,

դ եթե պարտապանը տնտեսական ընկերակցություն է, ապա մասնակիցների (լիակատար ընկերների) անունները (անվանումները), բնակության (գտնվելու) վայրը և պետական գրանցման տվյալները,

ե պարտապանի հայտարարությունը՝ ֆինանսական առողջացման մտադրության մասին,

զ տեղեկություններ (ապացույցներ) այլ գույքային իրավունքների մասին,

է կամավոր սնանկության կամ սնանկության վտանգի մասին դատարան ներկայացվող դիմումի և կից փաստաթղթերի պատճենները բոլոր պարտատերերին ուղարկելու մասին ապացույցները[54],

ը սնանկության վտանգի դիմումի դեպքում՝ օրենքի պահանջներին համապատասխան կազմված ֆինանսական առողջացման ծրագիրը:

Ընդ որում, եթե պարտապանը մտադիր է ֆինանսական առողջացման ենթարկվել, ապա նա կարող է դիմումին կից ներկայացնել նաև Օրենքի պահանջներին համապատասխան կազմված ֆինանսական առողջացման ծրագիրը:

[54] Հատկանշական է, որ մինչև 03.03.2021թ. կատարված օրենսդրական փոփոխությունները վերոնշյալ «է» կետով սահմանված էր նաև պարտականություն կամավոր սնանկության դեպքում դիմումի մեջ ներկայացնել առաջարկ ԺԿ թեկնածու վերաբերյալ այն դեպքում, երբ 11-րդ հոդվածը ԺԿ թեկնածու ներկայացնելու իրավունք էր վերապահում դիմողին, իսկ ԺԿ թեկնածու հնարավոր էր ներկայացնել միայն տվյալ անձի համաձայնությամբ: Նման հակասության արդյունքում դատական պրակտիկայում նաև հանդիպում էին դեպքեր, երբ պարտապանի կողմից ԺԿ թեկնածու ներկայացնելու անհնարինության դեպքում պարտապանի դիմումը վարույթ չէր ընդունվում:

Հարկ է նկատել նաև, որ նշված փաստաթղթերը ներկայացնելու անհնարինության դեպքում պարտապանը պարտավոր է դրա վերաբերյալ պատճառաբանված հիմնավորում ներկայացնել դատարան, իսկ փաստաթղթերը չներկայացնելու կամ թերի ներկայացնելու հետ կապված բոլոր ռիսկերը կրում է պարտապանը:

§ 3. Սնանկության դիմումը վարույթ ընդունելու հարցի լուծումը

Սնանկության վարույթի հարուցման, այսինքն՝ սնանկության դիմումի ընդունելության հարցի լուծման փուլում դատարանի կողմից գնահատման է ենթակա բացառապես այն, թե.

- պահպանված են արդյոք սնանկության դիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները և առկա չեն արդյոք դիմումը վերադարձնելու հիմքեր, այն է.

  ա չեն պահպանվել դիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները, այդ թվում՝ դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի մասով և դատավորը հիմնավոր չի համարել համապատասխան փաստաթղթերի ներկայացման անհնարինությունը,

  բ մեկ դիմումում միացված են մի քանի պարտապաններին սնանկ ճանաչելու վերաբերյալ պահանջներ, բացառությամբ եթե պարտապաններն ամուսիններ են և դիմողի նկատմամբ օրենքի ուժով համապարտ են,

  գ առկա չեն դիմումը վերադարձնելու՝ ՔԴՕ նախատեսված այլ դեպքեր, և

- առկա չեն արդյոք դիմումի վարույթ ընդունումը մերժելու հիմքեր, այն է.

  ա պարտապանի նկատմամբ առկա է սնանկ ճանաչելու մասին օրինական ուժի մեջ մտած վճիռ,

բ

սնանկ ճանաչելու պահանջի մասին դիմում է բերվել այն անձի դեմ, որը Օրենքի համաձայն պարտապան չի կարող լինել:

Ըստ այդմ՝ Օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումը դատավորն ընդունում է վարույթ՝ դիմումն ստանալու օրը՝ այդ մասին կայացնելով որոշում: Ընդ որում, եթե պարտապանի նկատմամբ սնանկության գործ կա դատարանում, ապա նոր դիմողի ներկայացրած սնանկության դիմումը քննվում է որպես առանձին վարույթ:

Սնանկության վարույթի հարուցման տեսանկյունից առկա միակ պարտադիր ծախսը պետական տուրքն է: Պարտապանին սնանկ ճանաչելու վերաբերյալ դիմումների ներկայացման համար օրենսդրությունը սահմանում է պետական տուրք վճարելու պարտադիր պայման, որը իրավաբանական անձ պարտապաններին սնանկ ճանաչելու դիմումների համար կազմում է մեկ միլիոն դրամ, իսկ անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ պարտապաններին սնանկ ճանաչելու մասին դիմումների համար կազմում է 200.000 դրամ:

Նշված կանոնը չի գործում օրենքով նախատեսված որոշ դեպքերում. օրինակ՝ պետական տուրք վճարելուց ազատվում են դատական ակտերի հարկադիր կատարողները՝ օրենքով սահմանված դեպքերում պարտապանին անվճարունակ (սնանկ) ճանաչելու վերաբերյալ դիմումների մասով, պարտապանը՝ սեփական անվճարունակությունը (սնանկությունը) ճանաչելու համար ներկայացվող դիմումների մասով՝ համաձայն «Պետական տուրքի մասին» օրենքի 9-րդ և 22-րդ հոդվածների:

Հարկ է նշել, որ սնանկության վարույթ հարուցելու համար վճարված պետական տուրքը համարվում է դատական ծախս, պահանջատիրոջ դիմումի հիման վրա գրանցվում է որպես պահանջ, ընդ որում,

պարտավորությունների որոշ տեսակների համեմատությամբ այն ունի բավարարման առաջնահերթություն:

Կարևոր է նաև սնանկության վարույթի հարուցման գործընթացի վերաբերյալ շահագրգիռ մարմինների տեղեկացման հարցը: Ըստ այդմ, ելնելով սնանկության գործընթացի առանձնահատկություններից օրենսդիրը սահմանել է նաև դատարանի կողմից որոշակի պետական մարմիններին սնանկության վարույթ հարուցելու վերաբերյալ ծանուցելու պարտականություն: Մասնավորապես, Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով դատարանը սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկում է.

ա. պարտապանի պետական գրանցումն իրականացնող պետական մարմնին՝ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը,

բ. գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնող պետական մարմիններին՝ Կադաստրի կոմիտե և Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն (որպես շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցումն իրականացնող մարմին), ինչպես նաև կենտրոնական դեպոզիտարիա,

գ. Պետական եկամուտների կոմիտե (որպես հարկային և մաքսային մարմին),

դ. Կենտրոնական բանկ,

ե. Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը,

զ. Հպարտապանին լիցենզիա տված պետական մարմնին (մարմիններին), եթե սնանկության մասին դիմումում առկա է տեղեկատվություն լիցենզիա ունենալու մասին,

է	աշխատանքի և սոցիալական հարցերով լիազոր պետական մարմին,
ը	Մրցակցության պաշտպանության հանձնաժողով,
թ	գլխավոր դատախազություն:

Օրենսդրի կողմից նման պահանջը սահմանելն ինքնանպատակ չէ, այլ նպատակ է հետապնդում ապահովելու պարտատերերի պահանջների բավարարման սառեցման կամ այլ կերպ ասած՝ մորատորիումի ինստիտուտի կիրառումը, ինչպես նաև համապատասխան տեղեկատվության հավաքումը:

Օրենսդիրը սահմանել է նաև սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալուց հետո պարտապանի պարտականությունը որոշակի փաստաթղթեր դատարան ներկայացնելու վերաբերյալ: Նշված պարտականությունը սահմանված է Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով, այն է՝ հարկադրված սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, պարտապանը պարտավոր է դատարան ներկայացնել Օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերը և կրում է դրանք չներկայացնելու պատճառով առաջացող իրավական հետևանքների ռիսկը:

ԳԼՈՒԽ 6. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

§1. Սնանկության դիմումի քննության ընթացակարգը

Սնանկության դիմումի քննության ընթացակարգը օրենսդիրը տարբերակել է՝ ելնելով այն հանգամանքից, թե որ սնանկության մասին է խոսքը: Այսպես, Օրենքի 16-րդ հոդվածը սահմանում է, որ պարտապանի կամավոր սնանկության դիմումը վարույթ ընդունելու օրվան հաջորդող եռօրյա ժամկետի ավարտից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում դատավորն առանց դատական նիստ հրավիրելու վճիռ է կայացնում պարտապանին սնանկ ճանաչելու մասին, եթե առկա են սնանկ ճանաչելու հիմքերը:

Ինչպես երևում է վկայակոչված դրույթից, տվյալ դեպքում դատարանը դիմումի քննությունը իրականացնում է գրավոր ընթացակարգով, այսինքն՝ առանց դատական նիստ հրավիրելու, քանի որ պարտապանը դիմումի ներկայացմամբ արդեն իսկ ընդունում է սնանկության հիմքերի առկայությունը, իսկ դատարանին մնում է միայն փաստաթղթերի հիման վրա ստուգել դրանք:

Հարկադրված սնանկության դիմումի քննության ընթացակարգը սահմանված է Օրենքի 17-րդ հոդվածով: Մասնավորապես, հարկադրված սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու հաջորդ օրը դատարանը պարտապանին է ուղարկում դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը՝ կցելով դիմումի և դիմումին կից ներկայացված փաստաթղթերի պատճենները: Եթե այդ որոշումն ստանալուն հաջորդող 15 օրվա ընթացքում պարտապանը գրավոր չի վիճարկում իր սնանկությունը, ապա մեկշաբաթյա ժամկետում դատավորն առանց դատական նիստ հրավիրելու վճիռ է կայացնում

պարտապանին սնանկ ճանաչելու մասին, եթե առկա են անձին սնանկ ճանաչելու հիմքերը: Եթե դատարանի որոշումն ստանալուն հաջորդող 15 օրվա ընթացքում պարտապանը վիճարկում է իր սնանկությունը՝ այդ մասին գրավոր առարկություններ ներկայացնելով դատարան, ապա դատավորն առարկությունները ստանալու պահից՝ 10 օրվա ընթացքում, հրավիրում է դատական նիստ, որի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով ծանուցվում են դիմում ներկայացրած անձը (անձինք) և պարտապանը: Ընդ որում, դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով տեղեկացված պարտապանի չներկայանալն արգելք չէ գործի քննության համար:

Դժվար չէ նկատել, որ հարկադրված սնանկության դեպքում օրենսդիրը կարևորել է պարտապանի՝ սնանկության դիմումի և այդ դիմումի հիման վրա հարուցված սնանկության գործի մասին պարտապանի տեղեկանալու իրավունքը և դատարանի տեղեկացնելու պարտականությունը: Սրանք ուղղակիորեն կապված են Սահմանադրությամբ երաշխավորված օրենքի առջև բոլորի հավասարության համընդհանուր սկզբունքի և դրանից բխող ու ՔԴՕ սահմանված մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքների հետ: Նշված սկզբունքներն ամբողջ ծավալով կարող են իրացվել միայն այն դեպքում, երբ պարտապանին ընձեռված է սնանկության դիմումի և այդ դիմումի հիման վրա հարուցված սնանկության գործի մասին իրազեկ լինելու, դրա վերաբերյալ առարկելու և իր դիրքորոշումն արտահայտելու հնարավորություն[55]:

Բացի դրանից, հարկադրված սնանկության դիմումի քննության ընթացակարգի առանձնահատկությունը դրսևորվում է նաև նրանում, որ պարտապանի կողմից առարակություն ներկայացվելու դեպքում գործի քննությունը իրականացվում է դատական նիստում՝ ապահովելով դրա բոլոր հանգամանքների, այդ թվում՝ վճարային պարտավորությունների անվիճելիության մասով նաև բանավոր լսումների լիարժեք հնարավորություն:

---

[55] Տե՛ս ՎԴ թիվ ԵԱՔԴ/0199/04/15 քաղաքացիական գործով 27.12.2017թ. որոշումը:

Անկախ սնանկության տեսակից՝ ակնհայտ է, որ դիմումի եզրափակվում է սնանկ ճանաչելու կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին վճռի կայացմամբ:

Միևնույն ժամանակ, շարադրվածը չի նշանակում է, որ բոլոր դեպքերում սնանկ ճանաչելու հարցի լուծման վարույթը պետք է ավարտվի հարցն ըստ էության լուծող դատական ակտի կայացմամբ: Այստեղ նկատի է առնվում այն հանգամանքը, որ սնանկության վարույթը կարող է եզրափակվել նաև գործի վարույթի կարճմամբ, որի առնչությամբ կիրառելի են ՔԴՕ գործի վարույթը կարճելու հիմքերը՝ հաշվի առնելով Օրենքով սահմանված երկու առանձնահատուկ կարգավորումները:

Այսպես, Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կամավոր սնանկության դիմումը կարող է հետ վերցվել դիմումը դատարան մուտքագրվելուց հետո՝ եռօրյա ժամկետում: Հարկադրված սնանկության դիմումը կարող է հետ վերցվել դիմումը դատարան մուտքագրվելուց հետո՝ 15-օրյա ժամկետում, իսկ դիմումի քննությունը դատական նիստում իրականացվելու դեպքում այն կարող է հետ վերցվել մինչև դատական նիստն սկսելը: Ընդ որում, այն դեպքում, երբ դիմում են ներկայացրել մեկից ավելի պարտատերեր, ապա նրանց համատեղ ներկայացրած դիմումը կարող է հետ վերցվել միայն բոլոր դիմած պարտատերերի գրավոր համաձայնությամբ:

Սնանկության գործի վարույթի կարճման հիմքերին առնչվող հաջորդ առանձնահատկությունը վերաբերում է հաշտության համաձայնության կնքմանը, որն օրենսդիրը թույլատրում է կնքել դիմումը հետ վերցնելու համար վերոնշյալ ժամկետում և կողմերի միջնորդությամբ դատարանի որոշմամբ կարող է երկարաձգվել մինչև երկշաբաթյա ժամկետով: Եվ եթե երկարաձգված ժամկետում հաշտության համաձայնություն չի կնքվում, ապա դատարանը սահմանված ժամկետի ավարտից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, առանց դատական նիստ հրավիրելու սնանկության դիմումի վերաբերյալ կայացնում է վճիռ:

§2. Սնանկ ճանաչելու հիմքերը

Սնանկ ճանաչելու հիմքերն այն իրավաբանական փաստերն են, որոնցից յուրաքանչյուրը անհրաժեշտ է, իսկ բոլորը միասին բավարար սնանկ ճանաչելու մասին վճիռ կայացնելու համար:

Հարկ է նկատել, որ օրենսդիրը յուրաքանչյուր սնանկության տեսակի համար նախատեսել է սնանկ ճանաչելու ինքնուրույն փաստակազմ: Ընդ որում, դրանք խարսխվում են այն տրամաբանության վրա, որ վկայեն անձի անվճարունակության մասին[56]:


Այսպես, Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը սահմանում է, որ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա պարտապանը դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել, եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է:

Հիշատակված բոլոր պայմանները ընդհանրացված կերպով ներառվում է «փաստացի անվճարունակություն» հասկացության մեջ, որին բնութագրական են հետևյալ հատկանիշները.

1

պարտապանի վճարային (դրամական) պարտավորության առկայությունը,

56 Տե՛ս ՍԴ 25.02.2008թ. թիվ ՍԴՈ-735 որոշումը:



Փաստացի անվճարունակության հատկանիշների բացահայտման համար առաջնային է հանդիսանում պարտավորության դրամական բնույթը: Դրամական (վճարային) պարտավորությունը քաղաքացիաիրավական պարտավորության տեսակ է, որի առարկան պարտապանի կողմից պարտատիրոջը որոշակի դրամական գումար հանձնելն է: Ընդ որում, դրամական պարտավորության ծագման հիմքերը կարող են լինել ինչպես պայմանագրային, այնպես էլ արտապայմանագրային: Առավել տարածված են պայմանագրային պարտավորությունները, երբ պարտավորության

մի կողմը պարտավորվում է պարտավորության կողմին տրամադրել գումար, մատակարարել ապրանք, մատուցել ծառայություն, կատարել աշխատանք, իսկ մյուս կողմը պարտավորվում է դրա դիմաց վճարել որոշակի դրամական գումար: Դրամական պարտավորություն կարող է առաջանալ նաև այլ հիմքերով, մասնավորապես անհիմն հարստացման հետևանքով:

Հարկ է նշել, որ, բացի քաղաքացիաիրավական պարտավորություններից, դրամական պարտավորությունների մեջ ներառվում են նաև հարկային, բյուջետային և արտաբյուջետային ֆոնդերին այլ պարտադիր վճարումներ կատարելու պարտավորությունները, այսինքն՝ պարտապանի հանրային իրավական կամ այլ վարչաիրավական հարաբերություններից ծագող պարտավորությունները:

Փաստացի անվճարունակության մյուս հատկանիշը պարտապանի պարտավորության նվազագույն չափն է: Մասնավորապես, պարտատերերի պահանջների նվազագույն չափի օրենսդրական ամրագրումը նշանակում է, որ պարտատերերի իրավունքները կարող են սնանկության ինստիտուտի միջոցով պաշտպանվել միայն պահանջների որոշակի չափի դեպքում, որպիսի չափի բացակայության դեպքում պաշտպանության նման կառուցակարգը չի գործում: Սակայն, սա ամենևին չի նշանակում, որ սնանկության վարույթի ընթացքում չեն կարող պաշտպանվել այն պարտատերերի շահերը, որոնց պահանջների չափն Օրենքով ամրագրված չափից պակաս է կազմում, քանի որ Օրենքով ամրագրված նվազագույն չափը վերաբերում է միայն սնանկության վերաբերյալ դիմում ներկայացնող պարտատիրոջ՝ տվյալ պահին առկա պահանջին, որի հիման վրա պարտապանը սնանկ է ճանաչվում, իսկ հետագայում մյուս պարտատերերը ներկայացնում են իրենց պահանջները՝ անկախ այդ սահմանված չափից: Ընդ որում, սնանկության դիմումը ներկայացնելիս Օրենքը չի արգելում մի քանի պարտատերերին միավորել իրենց պահանջները Օրենքով սահմանված պարտավորությունների նվազագույն շեմը հաղթահարելու համար:

Փաստացի անվճարունակության հաջորդ հատկանիշը պարտավորության կետանցն է: Այս հատկանիշը նույնպես պարտադիր պայման է հանդիսանում պարտապանին սնանկ ճանաչելու հարցի լուծման համար, հետևաբար պարտապանին սնանկ ճանաչելու համար անհրաժեշտ է, որ պարտապանի թույլ տված կետանցը լինի 90 օր կամ դրանից ավելի:

Փաստացի անվճարունակության առկայության հաստատման համար կարևոր է նաև պարտավորության կետանցի շարունակականության հատկանիշը, այն է՝ կետանցը պետք է շարունակվի նաև սնանկ ճանաչելու մասին վճիռ կայացնելու պահին:

Եվ, վերջապես, փաստացի անվճարունակության հատկանիշ է վճարային պարտավորության անվիճելիությունը: Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը իր հերթին բացահայտում է պարտավորության անվիճելիության դրսևորումները: Ըստ այդմ՝ վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե.

1

պարտապանը չի առարկում պարտավորության դեմ, կամ

2

առարկում է պարտավորության դեմ, սակայն.

ա

վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը *կամ*

բ

պարտավորությունը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պարտավորության դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը) *կամ*

գ

պարտավորությունը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պարտավորության դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը) *կամ*

դ

պարտավորության չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը:

Փաստորեն, օրենսդիրը վճարային պարտավորության անվիճելիության ընդհանուր պայման է նախատեսում պարտապանի կողմից պահանջի՝ պարտավորության դեմ չառարկելը: Ընդ որում, պահանջի դեմ չառարկելը, որպես կանոն, արտահայտվում է պարտապանի կողմից ոչ թե որևէ գործողության կատարմամբ, այլ սոսկ պարտապանի անգործությունը օրենսդիրը դիտում է որպես պարտատիրոջ պահանջն ընդունելու՝ պահանջի դեմ չառարկելու հանգամանք:

Հարկ է նաև նկատի ունենալ, որ «...պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր» ձևակերպումը ենթադրում է, որ խոսքը վերաբերում է ոչ թե պարտապանի պարտավորության կամ կետանցի բացակայության փաստն ապացուցող հիմքերին, այլ նյութահիրավական վեճի առկայությանը, այն է՝ պարտավորութ-

յան վիճելիությունը հավաստող հիմքերին: Դա բխում է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի տրամաբանությունից, որը սնանկ ճանաչելու հիմք է դիտարկում ոչ թե ընդհանրապես վճարային պարտավորությունը, այլ անվիճելի վճարային պարտավորությունը: Ընդ որում, վերոնշյալ «ա», «բ», «գ», «դ» կետերը վերաբերում են վճարային պարտավորության անվիճելիությանը, այլ ոչ թե սնանկության հիմքերին, և նպատակ չեն հետապնդում սնանկության գործը քննող դատարանին ներքաշելու նյութաիրավական վեճի լուծման գործընթացի մեջ[57]:

Ինչպես բխում է վերոշարադրյալից, վճարային պարտավորության անվիճելիության դրսևորումներից է նաև վճարային պարտավորությունն օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով հաստատված լինելու հանգամանքը: Տվյալ դեպքում խոսքը գնում է այն դեպքերի մասին, երբ դատարանը, մինչև սնանկության գործի հարուցումը, քննելով քաղաքացիական, վարչական կամ քրեական գործ, կայացրել է համապատասխան վճիռ (դատավճիռ), որն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դրանցով հաստատված փաստերը, այդ թվում՝ վճարային պարտավորության առկայության մասով, այլևս նախադատելի են համարվում և կրկնակի հաստատման կարիք չունեն:

Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ բոլոր այն դեպքերում, երբ սնանկության հիմքում դրված է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված վճարային պարտավորությունը, ապա պարտատերը սնանկության դիմումը դատարան պետք է ներկայացնի վճարային պարտավորություն սահմանող օրինական ուժի մեջ մտած դատական ակտն օրենքով սահմանված կարգով կատարման ներկայացնելու ժամկետի սահմաններում: Նման հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վճարային պարտավորություն սահմանող օրինական ուժի մեջ մտած դատական ակտն օրենքով սահմանված ժամկետում կատարման չներկայացնելու

[57] Առավել մանրամասն տե՛ս ՍԴ 25.02.2008թ. թիվ ՍԴՈ-735 որոշումը:

դեպքում տվյալ վճռից բխող իրավունքներն ու պարտականությունները ենթակա չեն իրականացման[58]:

Վճարային պարտավորության անվիճելիության հաջորդ դրսևորումը դրա գրավոր գործարքի վրա հիմնված լինելն է, եթե պարտապանը չի ապացուցում, որ դրա դեմ առարկելու բավարար հիմքեր ունի: Այսինքն, պահանջը պետք է նախ հիմնված լինի գրավոր գործարքի վրա, և երկրորդ՝ պարտապանը չպետք է կարողանա ապացուցել, որ գրավոր գործարքի հիմքում ընկած պահանջն անհիմն է: Օրենսգրքի 294-րդ հոդվածի համաձայն՝ գրավոր գործարքները կնքվում են հասարակ կամ նոտարական ձևով, հետևաբար, խոսքը վերաբերում է ինչպես նոտարական կարգով հաստատված, այնպես էլ հասարակ գրավոր գործարքներից ծագող պահանջներին: Գրավոր գործարքից բխող պահանջի դեմ ներկայացվող առարկությունները կարող են տարբեր լինել. պարտապանը կարող է իր առարկությունների հիմքում դնել պարտավորությունը կատարած լինելու, տվյալ պահանջով հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու, պահանջի իրավունքը պարտատիրոջը չպատկանելու և այլ հանգամանքներ: Ընդ որում, պահանջի դեմ առարկությունները հիմնավոր լինելու պարագայում վճարային պարտավորության՝ պարտքի չափը պետք է նվազի Օրենքով սահմանված՝ նվազագույն աշխատավարձի ֆիքսված չափից, որպեսզի բացառվի պարտապանի սնանկությունը[59]:

Ավելին, ՎԴ-ն իր որոշումներից մեկում նշել է, որ Օրենքի 3-րդ հոդվածով օրենսդիրը կարևորել է, որ վճարային պարտավորության անվիճելիությունը կասկածի տակ դնելու համար պարտապանը պետք է ներկայացնի բավարար ապացույցներ իր առարկության հիմնավորման համար: Նման ապացույցը պետք է լինի այնպիսին, որ առերևույթ կասկածի տակ դնի պարտատիրոջ պահանջի հիմնավորվածությունը, անվիճելիությունը: ՎԴ-ն ընդգծել է,

---

58 Տե՛ս ՎԴ թիվ ԿԴ2/0078/04/14 քաղաքացիական գործով 02.12.2016թ. որոշումը:

59 Տե՛ս ՎԴ թիվ ԵԱՔԴ/0125/04/17 սնանկության գործով 12.03.2020թ. որոշումը:

որ պահանջի դեմ առարկություն ներկայացնելը կարող է վերաբերել պարտավորության հիմքերին, պահանջն արդեն կատարված լինելուն, պահանջի չափին և այլն: Այդուհանդերձ, ՎԴ-ն արձանագրել է, որ նյութահիրավական վեճի առկայությունը, որը խոչընդոտ չի հանդիսանալու սնանկության վարույթում ներկայացված և Օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի համապատասխան չափը գերազանցող պահանջի բավարարմանը, այլ կերպ ասած՝ եթե ամեն դեպքում առկա է լինելու նվազագույն աշխատավարձի համապատասխան չափը գերազանցող պահանջ՝ անկախ նյութահիրավական վեճի ելքից, չի կարող արգելք հանդիսանալ պարտավորությունն անվիճելի դիտելու համար:

Այսպիսի հետևությունը պայմանավորված է նրանով, որ օրենսդրի կողմից պարտավորության անվիճելիությունն ինքնանպատակ չի սահմանվել, և ցանկացած նյութահիրավական վեճի առկայության դեպքում սնանկ ճանաչելու հնարավորությունը բացառելը կարժեզրկի նման նորմի նպատակը, այն է՝ բացառել անձին սնանկ ճանաչելը, մասնավորապես, այնպիսի պարտավորությունների վրա հիմնված պահանջով, որը հետագայում կարող է վերանալ մեկ այլ գործի շրջանակներում կայացված ակտի հիման վրա: Այսինքն՝ նյութահիրավական վեճը պետք է լինի այնպիսին, որ հնարավորություն ստեղծի պարտապանի կողմից ընդհանրապես չկատարել պարտատիրոջ պահանջը՝ անկախ նյութահիրավական վեճի հիմքից[60]:

Վճարային պարտավորության անվիճելիության պայմաններից մեկն էլ այն է, երբ պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտվորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է հարկային, մաքսային օրենսդրության և այլ հանրային իրավական իրավահարաբերություններից ծագող պարտավորություններին, որոնց դեմ պարտապանն առարկելու բավարար հիմքեր

60 Տե՛ս ՎԴ թիվ ԵԱՔԴ/0062/04/11 սնանկության գործով 21.12.2018թ. որոշումը:

չունի: Հակառակ պարագայում, երբ այդպիսի պահանջի հիմքում դրված է համապատասխան օրենքից չբխող հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունը, և ապացուցվում է, որ տվյալ պահանջի դեմ պարտապանն ունի առարկելու բավարար հիմքեր, ապա պարտավորությունը դառնում է վիճելի[61]:

Հատկանշական է նաև, որ ՎԴ-ն իր որոշումներից մեկով առանձնացրել է այն դեպքերը, երբ պարտապանին սնանկ ճանաչելու դիմումիհիմքումդրվածէպարտապանի՝օրենքովսահմանվածհարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունը, սակայն դրա վերաբերյալ առկա է չվճարված հարկի, տուրքի կամ պարտադիր այլ վճարի բռնագանձման վճիռ, որը չի կատարվել: Այս պարագայում, երբ արդեն իսկ առկա է նման վճիռ, այդ գումարը դադարում է պարզապես չվճարված հարկի, տուրքի կամ այլ վճարի գումար դիտարկվելուց, այն դառնում է համապատասխան պետական մարմնի օգտին բռնագանձման ենթակա գումար, որը չվճարելու դեպքում հարկ վճարողն արդեն խախտում է վճռի պարտադիրության և կատարելիության հատկանիշները: ՎԴ-ն գտել է, որ նման պայմաններում պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիմքում պետք է դրվի Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետը, այն է՝ վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով, քանի որ նման պայմաններում հարկ վճարողը ոչ թե պարզապես հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարները չի վճարում, այլ խախտում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով իր վրա դրված դրամական պարտավորությունը: Նշված մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ այս դեպքում այլևս չի քննարկվում տվյալ գումարի՝ որպես չկատարված դրամական պարտավորության ծագման հիմքը, այլ քննարկվում է միայն դատական ակտով հաստատված հստակ դրամական պարտավորությունը, որը չի կատարվել:

---

61 Տե՛ս ՎԴ թիվ ԵՄԴ/0013/04/17 սնանկության գործով 07.12.2018թ. որոշումը:

Վերոհիշյալ պայմաններից զատ օրենսդիրը նախատեսում է նաև պարտավորության անվիճելիության ևս մեկ պայման. այն է, երբ պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը: Այս կանոնը գործում է այն դեպքում, երբ պարտապանը վիճարկում է իրեն ներկայացված պահանջը, սակայն պահանջի այն մասը, որի դեմ չի առարկում, գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը:

Շարադրվածի համատեքստում ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ դատարանը չի կարող դուրս գալ հարկադրված սնանկության դիմումի հիմքերի շրջանակից: Այլ կերպ ասած, եթե սնանկության դիմումում նշված է կոնկրետ վճարային պարտավորություն, ապա դա կաշկանդում են դատարանին՝ քննելու միայն դիմումում նշված հանգամանքների՝ Օրենքի 3-րդ հոդվածին համապատասխանությունը[62]:

Ի տարբերություն հարկադրված սնանկության՝ կամավոր սնանկության հիմք է հաշվեկշռային անվճարունակությունը: Դրա առկայությունը փաստվում է, եթե պարտապանի պարտավորություններն, այդ թվում՝ հանրային իրավական դրամական պահանջներից բխող[63], օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի և ավելի չափով գերազանցում են պարտապանի ակտիվների արժեքը: Ընդ որում, պարտապանի ակտիվների արժեքը իրավաբանական անձի դեպքում գնահատվում է հաշվապահական հաշվառման կանոնների հիման վրա, ֆիզիկական անձի դեպքում՝ գնահատման ստանդարտների հիման վրա, իսկ ակտիվների արժեքի մեջ չի ներառվում այն ակտիվների արժեքը, որոնց վրա օրենքի համաձայն բռնագանձում չի կարող տարածվել:

---

62 Տե՛ս ՎԴ թիվ ԵՇԴ/0133/04/14 քաղաքացիական գործով 31.08.2018 թ. որոշումը:

63 Օրենքում առկա է վրիպակ, քանի որ հանրային իրավական դրամական պահանջների դեպքում օրենսդիրը չի նշել դրանց պարտապանի ակտիվները օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի և ավելի չափով գերազանցելու պայմանը:

§ 3. Սնանկ ճանաչելու հարցի լուծման հետևանքները

Օրենքի 20-րդ հոդվածը կարգավորում է պարտապանին սնանկ ճանաչելու հարցի լուծման, այսինքն՝ պարտապանին սնանկ ճանաչելու կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելու հետևանքները: Դրանք կարելի է դասակարգել ըստ տարբեր ուղղվածությունների, մասնավորապես.

ա. ԺԿ լիազորությունների դադարեցում և սնանկության գործով կառավարչի նշանակում,

բ. պարտատերերի առաջին ժողովի անցկացման ժամանակի և վայրի սահմանում,

գ. պարտապանին սնանկ ճանաչելու, դիմումը մերժելու կամ դիմումն առանց քննության թողնելու, ինչպես նաև գործի վարույթը կարճելու մասին տեղեկացում հետևյալ մարմիններին.

- պարտապանի պետական գրանցումն իրականացնող պետական մարմնին,
- անշարժ և պետական գրանցման ենթակա այլ գույքի (իրավունքների) պետական գրանցումն իրականացնող պետական մարմիններին,

Պետական եկամուտների կոմիտե (որպես հարկային և մաքսային մարմին),

Կենտրոնական բանկին՝ ՀՀ բանկերին և այլ վարկային կազմակերպություններին և Կենտրոնական դեպոզիտարիային, ՀՀ տարածքում գործող վարկային բյուրոներին ծանուցելու համար,

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը,

ՎԴ-ին՝ ՀՀ բոլոր դատարաններին ծանուցելու համար,

պարտապանին լիցենզիա կամ ընդերքօգտագործման իրավունք տրամադրած պետական մարմնին (մարմիններին), եթե դիմումում առկա է տեղեկատվություն լիցենզիա կամ ընդերք օգտագործման իրավունք ունենալու մասին,

աշխատանքի և սոցիալական հարցերով լիազոր պետական մարմնին,

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովին,

գլխավոր դատախազությանը:

Ընդ որում, պարտապանին սնանկ ճանաչելու դեպքում ծանուցված իրավասու մարմինները պարտավոր են տասնհինգօրյա ժամկետում դատարան ներկայացնել պարտապանի գույքի (այդ թվում՝ իրավաբանական անձանց բաժնեհավաք, փայահավաք կամ այլ կապիտալում մասնակցության), ինչպես նաև իրավունքների (այդ թվում՝ պարտապանի գրավառուի իրավունքների) գրանցման մասին, իսկ բանկերը և Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան՝ պարտապանի՝ բանկային հաշիվների և դրանց մնացորդների, ինչպես նաև արժեթղթերի նկատմամբ ունեցած իրավունքների մասին տեղեկություններ.

ա պարտապանին սնանկ ճանաչելու, կառավարիչ և պարտատերերի առաջին ժողով նշանակելու մասին տեղեկությունների հրապարակման մասին պահանջի ներկայացում կառավարչին,

բ պարտապանին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա արգելանքի կիրառում, բացառությամբ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերի,

գ հայտարարագիր ներկայացնելու պարտականության և դրա խախտման հետևանքների մասին գրավոր պարզաբանում պարտապանին,

դ պարտապանի մոտ ստուգում կամ ուսումնասիրություն իրականացնելու արգելք առանց դատարանի որոշման, բացառությամբ պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրի գործողության և լուծարման վարույթում գտնվող պարտապանի գործունեության վերսկսման ժամանակահատվածում, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում ստուգման կամ ուսումնասիրության իրականացման,

ե) պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայահավաք) կապիտալում մասնակցություն ունեցող անձանց՝ օրենքով և պարտապանի կանոնադրությամբ սահմանված գույքի կառավարման և տնօրինմանը վերաբերող այն լիազորությունների կասեցում, որոնք պայմանավորված են այդ մասնակցությամբ,

զ) պարտապանի (ղեկավարի) գործունեության համապատասխանեցում Օրենքի 47-րդ հոդվածի երկրորդ և երրորդ մասերով նախատեսված կարգին:

Օրենքը նաև սահմանում է, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռ կայացվելու դեպքում նույն պարտապանին սնանկ ճանաչելու պահանջով այլ դիմումներով դատարանի վարույթում առկա գործերի վարույթը կարճվում է վճռի բողոքարկման ժամկետը լրանալուց, իսկ վճռի բողոքարկված լինելու դեպքում՝ օրինական ուժի մեջ մնալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում:

ՄԱՍ IV. ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ

ԳԼՈՒԽ 7. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ԿԱՅԱՑՎՈՂ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ

§1. Մնանկության գործով կայացվող դատական ակտերի տեսակները և բնույթը

Ընդհանուր առմամբ, քաղաքացիական դատավարությունում դատարանի կողմից կայացվող ակտերին անդրադարձ է կատարվում ՔԴՕ 188-րդ հոդվածում, որը նախատեսում է, որ առաջին ատյանի դատարանը կայացնում է վճիռներ և որոշումներ, իսկ օրենսգրքով նախատեսված դեպքերում արձակում է վճարման կարգադրություններ:

ՔԴՕ 189-րդ հոդվածի 1-ին մասում ձևակերպված ընդհանուր կանոնի ուժով առաջին ատյանի դատարանը գործն ըստ էության լուծելու դեպքում կայացնում է վճիռ: Ընդ որում, վճռահատությամբ են ըստ էության լուծվում և՛ հայցային բնույթի գործերը, որոնցով դատական քննության առարկան իրավունքի մասին վեճն է, և՛ հատուկ վարույթի գործերը, որոնց շրջանակներում դատարանի խնդիրն է շահագրգիռ անձի դիմումով վերացնել փաստի վերաբերյալ առկա կամ հնարավոր վեճը: Հետևաբար, վճիռը կարող է բնորոշվել որպես

առաջին ատյանի դատարանի կողմից կայացվող դատական ակտ, որով ըստ էության լուծվում է գործը, այն է՝ հաստատվում են վիճելի իրավունքի, վիճելի պարտականության, վիճելի իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, հատուկ վարույթի գործերով՝ այլ իրավական հանգամանքները, ինչի հետևանքով այդ իրավահարաբերությունը և/կամ իրավական հանգամանքները վիճելիից դառնում են անվիճելի, իսկ դատական ակտով հաստատված սուբյեկտիվ պարտականությունները՝ ենթակա հարկադիր կատարման: Դատավարագիտության մեջ համընդհանուր ճանաչում գտած նման բնորոշումը թույլ է տալիս վճիռն այլ կերպ անվանել նաև «գործն (վեճը) ըստ էության լուծող դատական ակտ»[64]:

Գործն ըստ էության լուծող դատական ակտերից՝ վճիռներից բացի, գործը քննող դատարանը կայացնում է նաև որոշումներ, որոնք լուծում են ոչ թե իրավունքի պաշտպանությանն ուղղված վարույթի հիմնական հարցը՝ հայցվորի, պատասխանողի կամ դիմողի կողմից հայտարարված նյութաիրավական պահանջները, այլ դատական, արբիտրաժային, հաշտարարական կամ կատարողական վարույթի ընթացքում ծագող մասնավոր (ընթացիկ) հարցերը[65]:

Դատական ակտերի վերը հիշատակված տեսակների առարկան՝ դատավարական և նյութաիրավական հարցերի լուծումը, տարբեր են, որը և կանխորոշում է մնացած հատկանիշներով դրանց միջև եղած տարբերությունները: Տարբեր են դրանց բովանդակությունը, կայացման և բողոքարկման կարգը, օրինական ուժի մեջ մտնելու ժամկետները, իրավական հետևանքները և այլն[66]:

Քաղաքացիադատավարական օրենսդրությունը, միևնույն ժամանակ, ամրագրել է դատական ակտերի դասակարգման նոր

---

64 Տե՛ս **Մեղրյան Ս**. Առաջին ատյանի դատարանի դատական ակտերի իրավաբանական բնույթը և որակական կայունության ապահովման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում: Եր.: ԵՊՀ հրատ., 2020, էջ 12:

65 Տե՛ս նույն տեղում:

66 Տե՛ս նույն տեղում, էջ 13:

չափանիշ՝ ՔԴՕ 5-րդ հոդվածում առանձնացնելով եզրափակիչ և միջանկյալ դատական ակտերը և սահմանելով, որ եզրափակիչ դատական ակտեր են, ի թիվս այլնի, առաջին ատյանի դատարանի կայացրած վճիռը, գործի վարույթը կարճելու, հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու որոշումները, իսկ միջանկյալ դատական ակտերը՝ ՔԴՕ 5-րդ հոդվածի 2-րդ մասում չնշված որոշումները, որոնք կայացվում են առանձին ակտի ձևով կամ արձանագրային որոշմամբ:

Սնանկության վարույթի ընթացքում դատարանը կայացնում է որոշումներ և վճիռներ՝ կախված վարույթի փուլից և նրանից, թե որն է դատական ակտի առարկան, այսինքն՝ ինչ հարց է լուծում դատական ակտը:

Օրենքի ուսումնասիրությունից հետևում է, որ օրենսդիրն, ըստ էության, տարանջատել է սնանկության գործընթացի երկու հիմնական փուլ. խոսքը վերաբերում է պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիման վրա հարուցված վարույթին, որի ընթացքում դատարանը կայացնում է պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռ կամ պարտապանին սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին վճիռ և սնանկության գործն ավարտելու վերաբերյալ վարույթին: Այսպիսով, սնանկության վարույթի երկու հիմնական փուլերը՝ սկիզբն ու ավարտը, այսինքն՝ սնանկ ճանաչելու հարցի լուծումը և սնանկության վերաբերյալ գործի ավարտը կատարվում են համապատասխան վճիռներով: Սակայն, սնանկության վարույթում վճիռները միշտ չէ, որ հանդես են գալիս որպես դասական առումով եզրափակիչ ակտեր: Եթե եզրափակիչ դատական ակտերով դատարանը «վերջակետ» է դնում գործում, այն է՝ ըստ էության լուծում է հայտարարված պահանջների բավարարման կամ մերժման հարցը կամ ավարտում է վարույթն առանց գործն ըստ էության լուծելու[67], ապա սնանկության վարույթի դեպքում վճիռն իր եզրափակիչ էությունը դրսևորում է միայն սնանկ ճանաչելու մասին դիմումը մերժելիս կամ վարույթի ավարտելիս, այնինչ վարույթի սկզբում՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին

[67] Տե՛ս նույն տեղում, էջ 39:

վճիռ կայացնելիս դատարանը իր վճռով, կարծես, ազդարարում է սնանկության վարույթի սկիզբը, այլ ոչ թե եզրափակում վարույթը կամ լուծում գործն ըստ էության:

Չնայած դրան՝ Օրենքը, մինչև Օրենքի փոփոխությունները, կիրառում էր «սնանկության գործն ըստ էության լուծող դատական ակտեր» հասկացությունը՝ դրանց տակ դիտարկելով և՛ վճիռները, և՛ որոշումները: Ավելին, ՍԴ-ն, քննարկելով սնանկության վարույթում կայացվող ակտերի բնույթը, արձանագրել է, որ օրենսդիրը սնանկության գործի բաղադրատարր հանդիսացող առանձին վարույթներից առանձնացրել է երկուսը, և միայն այդ վարույթներով կայացված դատական ակտերն է դիտարկել որպես վեճն ըստ էության լուծող դատական ակտեր՝ նշելով, որ խոսքը վերաբերում է պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիման վրա հարուցված վարույթին, որի ընթացքում դատարանը կայացնում է պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռ կամ պարտապանին սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին վճիռ, և սնանկության գործն ավարտելու վերաբերյալ վարույթին[68]:

Ինչևէ, Օրենքի փոփոխությունների արդյունքում օրենսդիրը հրաժարվեց սնանկության վարույթում գործընն ըստ էության լուծող դատական ակտերի գաղափարից և զուտ տարանջատում մտցրեց վճիռների և որոշումների միջև՝ առանց կանխորոշելու դրանց բնույթը գործը լուծելու տեսանկյունից՝ հաշվի առնելով հենց սնանկության վարույթի առանձնահատկությունները:

Սնանկության վարույթում կայացվող վճիռների մեկ այլ առանձնահատկություն էլ կապված է դրանց ուժի մեջ մտնելու հանգամանքի հետ: Մասնավորապես, օրինակ, ի տարբերություն այլ քաղաքացիական գործերով կայացվող վճիռների, որոնք, ընդհանուր կանոնի համաձայն, ուժի մեջ են մտնում հրապարակման պահից՝ մեկ ամիս հետո, Օրենքի 17.1-ին հոդվածը նախատեսում է, որ դատարանի՝ սնանկության գործով կայացված վճիռներն

---

68 Տե՛ս ՍԴ 11.01.2011թ. թիվ ՍԴՈ-932 որոշումը:

ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Ընդ որում, օրենսդրի կողմից պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճռի օրինական ուժի մեջ մտնելու դրույթ նախատեսելն ինքնանպատակ չէ և ժամանակի գործոնի ազդեցությամբ պայմանավորված՝ ուղղված է պարտատերերի շահերի պաշտպանության ապահովմանը[69]:

Հատկանշական է, որ վերոնշյալ կանոնն ըստ էության վերաբերում է սնանկ ճանաչելու մասին կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին վճիռներին, քանի որ այս կանոնից բացառություն է սահմանվել սնանկության գործն ավարտելու մասին վճռի դեպքում, որն, ըստ օրենքի, ուժի մեջ է մտնում հրապարակման պահից 15 օր հետո: Ընդ որում, այս բացառությունը սահմանվել է Օրենքի փոփոխությունների արդյունքում՝ նպատակ ունենալով կանխել այն դեպքերը, երբ հրապարակման պահից օրինական ուժի մեջ մտած՝ սնանկության վարույթն ավարտելու մասին վճռի հիման վրա կարող էր արդեն սկսված լիներ պարտապանի լուծարումը գրանցելու գործընթաց այն դեպքում, երբ այդ վճիռը բողոքարկման փուլում է գտնվում:

Սնանկությանը վերաբերող մյուս վարութային հարցերի վերաբերյալ՝ օրինակ՝ պահանջների ցուցակի հաստատումը կամ մինչև լուծարման մասին որոշում կայացնելը, դատարանը կայացնում է որոշումներ: Սրանք, ըստ էության, միջանկյալ դատական ակտեր են: Ի տարբերություն եզրափակիչ դատական ակտերի՝ միջանկյալ են կոչվում այն դատական ակտերը, որոնք կայացվում են ոչ թե գործն ըստ էության լուծելու կամ գործով վարույթն ավարտելու, այլ քաղաքացիական գործի հարուցման, դատական քննության և վճիռների կատարման ընթացքում ծագող միջանկյալ դատավարական բնույթի հարցերով[70]:

Սնանկության վարույթում կայացվող որոշումների ուժի մեջ մտնելու կարգավորումների առումով ևս առկա են առանձնահատկություններ: Մասնավորապես, օրենսդիրը Օրենքի փոփոխությունների արդյուն-

---

69 Տե՛ս ՎԴ թիվ ԱՎԴ/0060/04/12 սնանկության գործով 08.05.2014թ. որոշումը:

70 Տե՛ս նույն տեղում, էջ 40:

քում նախատեսեց, որ դատարանի՝ սնանկության գործով առանձին ակտի ձևով կայացված որոշումներն ուժի մեջ են մտնում դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվելու պահից, դրանով իսկ սահմանելով սնանկության գործով առանձին ակտի ձևով կայացված որոշումների՝ դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակելու պահանջը՝ ակնկալելով ապահովել այդ ակտերը կայքում պարտադիր տեղադրելու պրակտիկայի ներդրումը:

Հարկ է նշել, որ օրենսդիրը սնանկության գործի բաղադրատարր հանդիսացող մի շարք առանձին վարույթների շարքում իրավաչափորեն առանցքային նշանակություն է վերապահել պարտապանին սնանկ ճանաչելու և սնանկության գործն ավարտելուն ուղղված փուլերին, որոնց վերաբերյալ օրենսդիրը սահմանել է դատարանի կողմից վճիռ կայացնելու ընթացակարգ:

Որպես սնանկության վարույթի կարևորագույն բաղադրատարրերից մեկի՝ պարտատերերի կողմից դատարան պահանջների ներկայացման և դրանք դատարանի կողմից հաստատվելու գործընթացի արդյունքի, հարկ է անդրադառնալ դատարան ներկայացրած պահանջների և դրանց դեմ բերված առարկությունների քննարկման արդյունքում դատարանի կողմից կայացվող՝ պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշմանը:

Նախկինում առկա իրավակիրառ պրակտիկայում սնանկության վարույթի ընթացքում դատարանի կողմից կայացված պահանջների վերջնական ցուցակը հաստատելու վերաբերյալ որոշմամբ հաստատված փաստական հանգամանքների՝ այլ գործերով նախադատելի հանդիսանալու հանգամանքի վերաբերյալ առկա էին տարբեր մոտեցումներ: Նշված տարակարծությունը բացառելու նպատակից և իրավական որոշակիության սկզբունքից՝ ելնելով ՎԴ-ն իր որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը չի կարող ունենալ օրինական ուժ ստացած վճռի կարգավիճակ և նախադատելի լինել այլ քաղաքացիական

գործ քննելիս: Այդուհանդերձ, պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը կարող է դիտվել որպես ինքնուրույն գրավոր ապացույց, որը կարող է պարունակել տեղեկություններ և գործում առկա այլ ապացույցների հետ համադրության արդյունքում հնարավորություն տալ դատարանին պարզելու գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը[71]:

Այսպիսով, պետք է փաստել, որ սնանկության վարույթում կայացվող դատական ակտերի նկատմամբ կիրառելի են դատական ակտերի վերաբերյալ քաղաքացիադատավարական կարգավորումները՝ հաշվի առնելով Օրենքի և սնանկության վարույթի առանձնահատկությունները:

[71] Տե՛ս ՎԴ թիվ ԿԴ1/1302/02/13 քաղաքացիական գործով 17.07.2015թ. որոշումը:

§2. Սնանկության գործով կայացվող դատական ակտերի բողոքարկումը

Սնանկության գործընթացում կայացվող դատական ակտերի բողոքարկման կարգը և ժամկետները կարգավորվում են Օրենքի 20-րդ հոդվածով: Մասնավորապես՝ նշված հոդվածի 1-ին մասով սահմանված է սնանկության գործով կայացվող վճիռների բողոքարկման կարգը և ժամկետը, այն է՝ դատարանի՝ սնանկության գործով վճիռները կարող են բողոքարկվել վերաքննության կարգով՝ վճռի հրապարակման օրվանից հետո՝ 15-օրյա ժամկետում: Ընդ որում, հրապարակման պահից օրինական ուժի մեջ մտած վճիռը բողոքարկելու օրենսդրի ընձեռած հնարավորությունը ուղղված է սնանկության վարույթում ներգրավված մասնակիցների, այդ թվում՝ պարտապանի դատավարական երաշխիքների ապահովմանը, սնանկության վարույթում ներգրավված մասնակիցների իրավունքների և շահերի համակողմանի և հավասարակշռված պաշտպանությանը[72]:

Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է, որ պարտապանին սնանկ ճանաչելու կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն պարտապանը, պարտատերը (պարտատերերը):

Օրենքի փոփոխությունների արդյունքում վերոնշյալ կարգավորումից բացառություն է սահմանվել սնանկության գործով ԺԿ-ի համար, ով պարտապանին սնանկ ճանաչելու կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք է ձեռք բերում այն դեպքում, երբ վճիռն ուղղակիորեն անդրադառնում է վերջինիս իրավունքներին և պարտականություններին, մասնավորապես՝ սնանկ ճանաչելու

---

72 Տե՛ս ՎԴ թիվ ԱՎԴ/0060/04/12 քաղաքացիական գործով 08.05.2014 թ. որոշումը:

դիմումը մերժելու կամ սնանկության գործի վարույթը կարճելու մասին դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունի նաև սնանկության ԺԿ (կառավարիչը)՝ իր վարձատրության մասով:

Օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասով օրենսդիրը սահմանել է սնանկության գործով կայացվող որոշումների բողոքարկման կարգը և ժամկետները, այն է՝ սնանկության գործի քննության ընթացքում կայացվող որոշումները կարող են բողոքարկվել վերաքննության կարգով՝ դրանք կայացվելուց հետո՝ 15-օրյա ժամկետում, բացառությամբ այն դեպքերի, երբ ՎՔԴ-ն ժամկետի բացթողումը համարում է հարգելի: Ընդ որում, Օրենքի փոփոխություններով այս առումով ՔԴՕ 370-րդ հոդվածի 5-րդ մասի համանմանությամբ սահմանվել է նորամուծություն, ըստ որի՝ որոշումների բողոքարկումը չի կասեցնում այդ որոշումներից բխող գործողությունների կատարումը, բացառությամբ այն դեպքերի, երբ պարտապանի, կառավարչի կամ պարտատիրոջ միջնորդությամբ ՎՔԴ-ն իր որոշմամբ կասեցնում է այդ գործողությունների կատարումը, եթե այդ միջնորդությամբ հիմնավորվում է, որ դա չանելն անխուսափելիորեն կառաջացնի ծանր հետևանքներ պարտապանի կամ պարտատիրոջ համար:

Սնանկության գործընթացում կայացվող դատական ակտերի բողոքարկման տեսանկյունից հարկ է անդրադառնալ պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշմանը: Այս առումով ՎԴ-ն իր որոշումներից մեկով արձանագրել է, որ պահանջների վերջնական ցուցակը սնանկության վարույթի շրջանակներում կարող է ենթարկվել որոշակի փոփոխությունների, ինչը վկայում է այն մասին, որ համապատասխան դատական ակտով հաստատված պարտատերերի ցուցակը և նրանց պահանջների չափն իրենց բնույթով չեն կարող միանշանակորեն համարվել վերջնական և անփոփոխելի հանգամանքներ[73]:

Վերոշարադրյալից հետևում է, որ սնանկության վարույթի ընթացքում կայացված և օրինական ուժի մեջ մտած պահանջների վերջնական ցուցակը սնանկության վարույթի շրջանակներում կարող

---

[73] Տե՛ս ՎԴ թիվ ԿԴ1/1302/02/13 քաղաքացիական գործով 17.07.2015թ. որոշումը:

է ենթարկվել որոշակի փոփոխությունների, որպիսի գործողությունն ինքնին հանդիսանում է դատարանի կողմից նախկինում կայացրած և օրինական ուժի մեջ մտած որոշման վերանայում՝ փոփոխման եղանակով: Ընդ որում, պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշման բողոքարկումը իրականացվում է հետևյալ առանձնահատկությունների հաշվառմամբ.

- պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը, ինչպես նաև առանձին պահանջները հաստատելու մասին դատարանի որոշումը կարող են բողոքարկվել ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ առանձին պահանջների կամ դրանց մի մասով,

- որոշումը մասնակիորեն բողոքարկվելու դեպքում պահանջների վերջնական ցուցակը, ինչպես նաև առանձին պահանջները հաստատելու մասին դատարանի որոշումը՝ չբողոքարկված պահանջների կամ առանձին պահանջի չբողոքարկված մասով, մնում է ուժի մեջ,

- որոշման դեմ բերված բողոքը ՎՔԴ-ն քննում և որոշում է կայացնում կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով, վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում,

- որոշման դեմ բերված բողոքի քննության արդյունքով ՎՔԴ կայացրած որոշումն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:

Ինչ վերաբերում է սնանկության վարույթում վճիռ չհանդիսացող մյուս դատական ակտերի բողոքարկմանը, ապա այդ առումով Օրենքի 20-րդ հոդվածի 8-րդ մասը միայն սահմանում է, որ սնանկության գործի ընթացքում կայացվող որոշման դեմ բերված բողոքը քննվում և որոշում է կայացվում միջանկյալ դատական ակտերի դեմ բերված բողոքի քննության համար ՔԴՕ սահմանված կանոններով,

իսկ բողոքարկման ենթակա ակտերի շրջանակը օրենսդիրը չի հստակեցրել:

Այս տեսանկյունից հիշատակման է արժանի ՍԴ դիրքորոշումը, ըստ որի. «Օրենսդիրը, ելնելով սնանկության գործի մաս կազմող առանձին վարույթների բնույթից, առանձնահատկություններից, սնանկության գործի ընթացքի վրա դրանց ազդեցության աստիճանից, սնանկության գործում ներառվող առանձին վարույթներով կայացվող միջանկյալ դատական ակտերի մի մասի համար է սահմանել բողոքարկման հնարավորություն: Այդ ակտերն իրենց բնույթով այնպիսին են, որ կարող են կասեցնել կամ խոչընդոտել պարտապանին սնանկ ճանաչելու պահանջով դատարանի մատչելիության իրավունքի իրացման ընթացքը, սնանկության գործի քննության հնարավորությունը, այն է՝ դիմումի ընդունումը մերժելու, դիմումը վերադարձնելու, պարտապանի մոտ ստուգման կամ ուսումնասիրության իրականացումը թույլատրելու, պահանջների վերջնական ցուցակը հաստատելու, պահանջի, պահանջի փոփոխության դեմ առարկությունները քննարկելու արդյունքում պահանջի չափը, օրինականությունը, առաջնահերթությունը և ապահովվածությունը որոշելու, սնանկ ճանաչված անձի գույքն օտարելու թույլտվություն տալու, պահանջը սահմանված ժամկետում չներկայացնելու պատճառների հարգելիությունը որոշելու մասին որոշումները»[74]:

ՎԴ-ն, նոր ՔԴՕ լույսի ներքո անդրադառնալով հիշատակված դիրքորոշմանը, արձանագրել է. «Գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կարգավորումներն էականորեն տարբերվում են նախորդ օրենսգրքի կարգավորումներից, որպիսի պայմաններում ՍԴ վերոգրյալ որոշումը՝ դատական ակտերի դասակարգմամբ պայմանավորված իրավական հետևանքների առաջացման մասով, ամբողջությամբ կիրառելն արդարացված չի կարող համարվել՝ նկատի ունենալով, որ այն վերաբերել է գործն ըստ

74 Տե՛ս ՎԴ թիվ ԱՎԴ/0060/04/12 սնանկության գործով 08.05.2014թ. որոշումը:

էության լուծող և գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի բողոքարկմանը, մինչդեռ գործող քաղաքացիական դատավարության օրենսդրությունն օգտագործում է եզրափակիչ և միջանկյալ դատական ակտ եզրույթները: Ընդ որում, ինչպես արդեն նշվեց, Օրենքը չի տարանջատում սնանկության վարույթում կայացվող դատական ակտերի տեսակները:»

Վերոգրյալի հիման վրա ՀՀ ՎԴ-ն գտել է, որ սնանկության վարույթի առանձնահատկությունների հաշվառմամբ անհրաժեշտ է սնանկության վարույթում կայացվող դատական ակտերը տարանջատելիս և դրանց բողոքարկման հնարավորությունը որոշելիս հիմք ընդունել ՔԴՕ սահմանված դատական ակտերի տեսակները՝ բացառելու համար երկու փոխկապակցված իրավական ակտերի միջև եզրութաբանության օտարացվածությունը:

Հիմք ընդունելով արդեն իսկ 09.04.2018 թվականից գործող քաղաքացիական դատավարության նոր օրենսդրության եզրութաբանությունը՝ ՀՀ ՎԴ-ն գտել է, որ սնանկության վարույթում կայացվող դատական ակտերը ևս պետք է տարանջատել եզրափակիչ և միջանկյալ դատական ակտերի»[75]:

Պետք է անդրադառնալ նաև Օրենքում սահմանված բողոքարկման ժամկետի հաշվարկի առանձնահատկությանը, քանի որ քաղաքացիադատավարական օրենսդրությունը օրերով հաշվարկվող ժամկետում չի ներառում ոչ աշխատանքային օրերը: Այս հարցը հստակեցվել է ՎԴ կողմից, ըստ որի՝ եթե Օրենքում որևէ ժամկետ սահմանված է առանց «աշխատանքային օր» գրառման, ապա այն պետք է հասկանալ և հաշվարկել ոչ աշխատանքային օրերը ներառելով, իսկ այն դեպքում, երբ ժամկետի հաշվարկի վերաբերյալ կարգավորումն ուղղակիորեն պարունակում է «աշխատանքային օր» գրառումը, ապա ժամկետի հաշվարկի մեջ չպետք է ներառել ոչ աշխատանքային օրերը[76]:

---

75 Տե՛ս ՎԴ թիվ **ՏԴ**1/0012/04/17 սնանկության գործով 27.05.2021թ. որոշումը:

76 Տե՛ս ՎԴ թիվ **ՍնԴ/0104/04/19** սնանկության գործով 15.05.2021թ. որոշումը:

Վերոգրյալի համատեքստում ակնհայտ է, որ սնանկության վարույթում թե վճիռների, թե այլ դատական ակտերի բողոքարկման համար սահմանված 15-օրյա ժամկետը ենթակա է հաշվարկման օրացուցային օրերով:

§ 3. Մնանկության գործով կայացվող դատական ակտերի կատարումը

Ընդհանուր կանոնի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, ինչպես նաև դատարանի պահանջները կատարման համար պարտադիր են դրանց հասցեատերերի համար և ենթակա են կատարման ՀՀ ամբողջ տարածքում:

Հիշյալ կանոնը ունի որոշակի առանձնահատկություններ սնանկության վարույթում, քանի որ, ի տարբերություն քաղաքացիական դատավարության, այստեղ կայացված դատական ակտերի կատարումը երաշխավորված է դրանց հասցեատերերի օրենքով կանխորոշված վարքագծով՝ առանց հարկադրանքի միջոցների կիրառման: Այդուհանդերձ, օրենսդիրը սահմանել է այն որոշումների ցանկը, որոնք ենթակա են կատարման անհապաղ՝ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով: Մասնավորապես՝ Օրենքի 56-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գույքագրման նպատակով կառավարիչն իրավունք ունի մուտք գործելու պարտապանին պատկանող բնակարան կամ այլ անշարժ գույքի տարածք պարտապանի համաձայնությամբ, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ դատարանի որոշմամբ: Այլ անձանց պատկանող բնակարան կամ այլ անշարժ գույք կառավարիչը կարող է մուտք գործել այդ բնակարանի կամ այլ անշարժ գույքի սեփականատիրոջ (ժամանակավոր տիրապետողի) համաձայնությամբ, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ դատարանի որոշմամբ, որի հիման վրա կազմված կատարողական թերթն անհապաղ ուղարկվում է հարկադիր կատարման: Նույն կերպ Օրենքի 77.1-րդ հոդվածը սահմանում է պարտապանին պատկանող անշարժ գույքը, ինչպես նաև երրորդ անձանց պատկանող՝ անշարժ գույք հանդիսացող ապահովված իրավունքի առարկան վաճառելուց առաջ կամ հետո այնտեղ առանց օրինական հիմքով անձանց վտարելու մասին կատարողական թերթը հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ուղարկելու պահանջ:

Օրենսդիրը սահմանել է նաև այն դեպքերը, երբ դատարանը կատարողական թերթը Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն է ուղարկում համապատասխան դիմումի հիման վրա: Մասնավորապես՝ Օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ սնանկության դիմումը մերժվելու կամ գործի վարույթը կարճվելու դեպքում ԺԿ (կառավարչի) դիմումի հիման վրա ԺԿ (կառավարչի) վարձատրության մասով կազմված կատարողական թերթն ուղարկվում է հարկադիր կատարման:

Ամփոփելով վերոշարադրյալը կարելի է եզրահանգել, որ օրենսդիրը տարանջատել է սնանկության վարույթի ընթացքում կայացվելիք դատական ակտերի կատարման մի քանի եղանակ, որոնցում գերակայում է առանց հարկադիր կատարման դրանց բովանդակության կենսագործումը, իսկ առանձին դեպքերում որոշ դատական ակտերի կատարումը երաշխավորվում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով:

ՄԱՍ V. ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 8. ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

§1. Պահանջների տեսակների ընդհանուր բնութագիրը

Սնանկության ինստիտուտի միջոցով իրավունքի պաշտպանությանը բնութագրական է սնանկության վարույթին մասնակցող անձանց բազմաթվությունը, քանի որ այն ուղղված է ոչ թե առանձին, այլ քաղաքացիական շրջանառության մասնակցի անվճարունակության հետևանքով ծագող բոլոր վեճերի կարգավորմանը և քաղաքացիական շրջանառության կայունության ապահովմանը[77]: Ընդ որում, սնանկության վարույթի մասնակիցների բազմաթվությունը ենթադրում է նրանց միջև հակադիր շահերի առկայություն, որը դրսևորվում է ոչ միայն պարտապանի և պարտատիրոջ, այլև պարտատերերի միջև հարաբերություններում, քանի որ պարտապանի ֆինանսական վիճակը, որպես կանոն, բացառում է նրանց բոլոր պահանջների ամբողջությամբ բավարարումը: Այլ կերպ ասած՝

[77] Տե՛ս **Кулахметов Б.Р.**, Несостоятельность юридических лиц: особенности правового регулирования и правоприменительной практики // Модели, системы, сети в экономике, технике, природе и обществе, 2012, էջ 182:

սնանկության վարույթում գործում է «պատերազմ՝ բոլորը բոլորի դեմ» լատիներեն՝ bellum omnium contra omnes. սկզբունքը[78]: Միևնույն ժամանակ հարկ է նկատի ունենալ, որ սնանկության վարույթում պարտատերերի պահանջները կարող են շոշափել տարատեսակ շահեր[79]: Հետևաբար, դրանց պաշտպանության նկատմամբ միասնական մոտեցման ցուցաբերումը կարող է խնդրահարույց լինել[80]:

Հիշյալ համատեքստում Օրենքը պահանջները սնանկության վարույթում դասակարգել է որոշակի տեսակների: Մասնավորապես, Օրենքի համակարգային վերլուծությունից հետևում է, որ առկա են պահանջների հետևյալ տեսակները.

1. Ապահովված պահանջներ,
2. Չապահովված պահանջներ:

Առաջին խումբ պահանջների շարքին օրենսդիրը դասել է գրավով, երաշխավորությամբ և երաշխիքով ապահովված պահանջները: Այսինքն՝ այն պահանջները, որոնք ապահովված են քաղաքացիական իրավունքի ապահովման թվարկված միջոցներից առնվազն մեկով:

Ի տարբերություն ապահովված պահանջների՝ չապահովված պահանջների ցանկը բավականին լայն է, որի մեջ օրենսդիրը տարբերակում է չապահովված պահանջների երկու ենթատեսակ՝ չապահովված և ստորադաս չապահովված պահանջներ:

Այսպես, Օրենքի 82-րդ հոդվածի վերլուծության հիման վրա կարելի է առանձնացնել չապահովված պահանջների առաջին

---

78 Տե՛ս **Фролов И.В.**, Банкротство как административно-правовой механизм регулирования экономических конфликтов: Монография. Новосибирск, 2010, էջ 79:

79 Տե՛ս ЮНСИТРАЛ. Руководство для законодательных органов по вопросам законодательства о несостоятельности, ОРГАНИЗАЦИЯ ОБЪЕДИНЕННЫХ НАЦИЙ, Нью-Йорк, 2005, էջեր 313-314:

80 Տե՛ս **Տ.Մարկոսյան, Տ.Դադունց.** Աշխատողների պահանջների բավարարման երաշխիքները սնանկության վարույթում // «Դատական իշխանություն» 3-4 (249-250), 2020, էջեր 90-91:

ենթատեսակում ներառվող հետևյալ պահանջները.

1. այն քաղաքացիների պահանջները, որոնց առջև պարտապանը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար՝ համապատասխան պարբերական վճարումների կապիտալացման հաշվարկի միջոցով, ինչպես նաև պարտապան քաղաքացու նկատմամբ ալիմենտների գծով պահանջները (երեխա, անաշխատունակ ծնող, անաշխատունակ ամուսին),
2. աշխատանքային պայմանագրերից բխող պահանջները (ներառյալ՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից մինչև լուծարումն առաջացած), բայց ոչ ավելի, քան պարտապանին սնանկ ճանաչելու պահին նախորդող 6 ամիսը, հեղինակային պայմանագրերով վարձատրությունների վճարումները և սույն հերթի պահանջների բավարարումից առաջացած եկամտային հարկի և պարտադիր սոցիալական վճարների գումարները,
3. դատական ծախսերը,
4. պարտապանին սնանկ ճանաչելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո պարտապանի գույքի իրացումից ծագող հարկային պարտավորությունները,
5. չապահովված պահանջները, որոնք առաջացել են պարտապանի կողմից սույն օրենքի 40-րդ հոդվածի 3.1-ին մասով սահմանված դեպքում ստանձնած պարտավորությունների նկատմամբ,
6. չապահովված պահանջները, որոնք առաջացել են պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ սույն օրենքով սահմանված կարգով իրականացված գործառնությունների (այդ թվում՝ գործունեության վերսկսման) հետևանքով,
7. չապահովված պարտատերերի պահանջները, ներառյալ՝ պարտադիր սոցիալական վճարները և ՀՀ պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ առաջացած՝ հարկերի և (կամ) վճարների, վարչարարությունից ծագած տուգանքների գծով պարտավորությունները, բացառությամբ ստորադաս չապահովված պարտատերերի պահանջների:

Օրենքի 82-րդ և 83-րդ հոդվածների համադրումից կարելի է առանձնացնել արդեն ստորադաս չապահովված պահանջների շրջանակը, որը հանգում է հետևյալին.

1. իրավաբանական անձ պարտապանին իր հիմնադիրների (մասնակիցների, բաժնետերերի, անդամների կամ գործընկերների) կողմից տրամադրված վարկերից, փոխառություններից կամ այլ ներդրումներից առաջացած չապահովված պահանջները, եթե այդ վարկերը, փոխառությունները տրամադրվել, կամ այլ ներդրումները կատարվել են դրանք տրամադրելու կամ կատարելու պահին իրավաբանական անձ պարտապանի հիմնադիր (մասնակից, բաժնետեր, անդամ կամ գործընկեր) հանդիսացող անձի կողմից,
2. պարտապանի կողմից տեղաբաշխված տասը տարի և ավելի ժամկետ ունեցող պարտատոմսերով, ինչպես նաև արտոնյալ արժեթղթերով ներկայացված պահանջները,
3. ստորադաս փոխառություններից բխող պահանջները,
4. աշխատավարձի գծով այլ պահանջները,
6. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված իրավասու մարմնի պահանջները,
7. վերևում չթվարկված այլ պահանջներ,
8. պարտապանի հիմնադիրների (մասնակիցների, բաժնետերերի, անդամների կամ գործընկերների) պահանջները:

Միաժամանակ հարկ է նկատել, որ չապահովված պահանջները իրենց խմբի ներսում ունեն որոշակի առաջնահերթություն, որը որոշված է համաձայն վերևում ներկայացված հաջորդականության:

Պահանջների տեսակների և ենթատեսակների բաժանումը ուղղակիորեն ազդում է դրանց բավարարման հնարավորության վրա, որը իրականացվում է հետևյալ կանոնների հիման վրա.

- պահանջները բավարարվում են ըստ առաջնահերթության՝ յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո,
- պարտապանի դրամական միջոցներն անբավարար լինելու դեպքում համապատասխան հերթի պարտատերերի միջև դրանք բաշխվում են բավարարման ենթակա պահանջների գումարներին համամասնորեն՝ տվյալ հերթի պահանջների հանրագումարի մեջ յուրաքանչյուր պահանջի տեսակարար կշռին համապատասխան՝ բացառությամբ աշխատողների աշխատավարձերի հետ կապված պահանջների, որոնք կարող են բավարարվել նաև հիմք ընդունելով աշխատավարձի չափի մեծությունը՝ փոքրից դեպի ավելի մեծ առաջնահերթությամբ[81]:

Այսպիսով, սնանկության վարույթում պահանջների դասակարգումը ունի ոչ միայն բավարարման հաջորդականության տեսանկյունից կարևորություն, այլև որոշակիորեն կանխորոշում է համապատասխան պահանջի տիրոջ կարգավիճակի բովանդակությունը՝ կանխորոշելով յուրաքանչյուր տեսակի համար իրավունքների և պարտականությունների որոշակի շրջանակ:

[81] Աշխատողների պահանջների հետ կապված հիմնախնդիրների հետ կապված առավել մանրամասն տես **Տ.Մարկոսյան, Տ.Դադունց:** Աշխատողների պահանջների բավարարման երաշխիքները սնանկության վարույթում // «Դատական իշխանություն» 3-4 (249-250), 2020:

§ 2. Պահանջների հաստատումը

Սնանկության վարույթը դասվում է պարտավորությունների կատարման և քաղաքացիական շրջանառությունում գույքային պատասխանատվության ապահովման հարկադրական ձևերի շարքը, որի շրջանակներում իրականացվում է պարտատերերի պահանջների բավարարումը, իսկ սնանկության վարույթի ավարտի վերաբերյալ դատական ակտով առաջանում են կոնկրետ քաղաքացիաիրավական հետևանքներ ինչպես վարույթի մասնակիցների, այնպես էլ՝ սնանկության վարույթում պահանջ չներկայացրած, հետևաբար մասնակից չդարձած անձանց համար: Ըստ այդմ, պարտատերերի կողմից պահանջների ներկայացումը և դրա հիման վրա պահանջների վերջնական ցուցակում ընդգրկումը սնանկության վարույթի առանցքային փուլերից է, քանի որ միայն դրա հիման վրա կատարվում է պարտատերերի գրանցված պահանջների բավարարումը:

Պահանջների հաստատման հետ կապված հարաբերությունների հիմնական կարգավորումները ներկայացված են Օրենքի 46-րդ հոդվածում, որի 1-ին մասի համաձայն՝ պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են դատարան սնանկության մասին հայտարարությունից հետո՝ մեկամսյա ժամկետում, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

Այլ կերպ ասած՝ ընդհանուր կանոնն այն է, որ սնանկության մասին հայտարարությունից հետո պարտատերերը պետք է մեկամսյա ժամկետում դատարան ներկայացնեն իրենց պահանջները: Ընդ որում, պարտատիրոջ պահանջում պետք է նշվեն պահանջը ներկայացնող պարտատիրոջ անվանումը և գտնվելու վայրը (իրավաբանական անձի դեպքում), անուն և բնակության վայրը (ֆիզիկական անձի դեպքում), պարտավորությունը, որից բխում է պահանջը, պահանջի չափը՝ առանձին նշելով հիմնական պարտքի, վնասների, տուժանքի (տուգանքի, տույժի) չափերը՝ համապատասխան հաշվարկներով և

կատարման ժամկետը, ինչպես նաև պահանջի բովանդակությունը կազմող պայմանները հիմնավորող հանգամանքները:

Պահանջը և դրան կից փաստաթղթերը ներկայացվում են 3 օրինակից: Միաժամանակ Օրենքը սահմանում է, որ պահանջը հիմնավորող փաստաթղթեր կարող են ներկայացվել միայն պահանջ ներկայացնելու համար սահմանված ժամկետում, իսկ դրանից հետո միայն այն դեպքում, երբ դրանք ներկայացնողը հիմնավորում է սահմանված ժամկետում նման փաստաթուղթ ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:

Հարկ է նկատել նաև, որ պահանջի ձևին և բովանդակությանը ներկայացվող օրենսդրության պահանջների խախտման դեպքում համարվում է, որ այն չի ներկայացվել: Մասնավորապես, Օրենքի 46-րդ հոդվածի 2.1-րդ մասի ուժով դատարան ներկայացված այդպիսի փաստաթղթերը չեն դիտարկվում, որի մասին պարտատերը տեղեկացվում է ոչ ուշ, քան հաջորդ օրը: Այսինքն՝ օրենսդիրը նման սեղմ ժամկետի նախատեսմամբ փորձել է պարտատիրոջը տալ թերությունները շտկելու և իր պահանջը կրկին ներկայացնելու հնարավորություն:

Եթե պահանջը ներկայացվում է սահմանված պահանջների պահպանմամբ, ապա այն գրանցվում է դատարանում[82] և գրանցումից ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում դատարանը պահանջի և նրան կից փաստաթղթերի օրինակներն ուղարկում է կառավարչին՝ դրա մեկ օրինակը պարտապանին հանձնելու համար:

Սահմանված ժամկետում ներկայացրած բոլոր պահանջները կառավարիչն ընդգրկում է պարտատերերի պահանջների նախնական ցուցակում՝ Օրենքի 82-րդ հոդվածով սահմանված պահանջների բավարարման հերթականությանը համապատասխան, իսկ

---

[82] Պահանջի գրանցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Նախարարի 12.03.2020թ. «Սնանկության գործով պարտատերերի պահանջների գրանցամատյանի վավերապայմանները եվ գրանցամատյանի վարման կարգը սահմանելու մասին» թիվ 101-Ն հրամանով:

պահանջների ներկայացման համար սահմանված ժամկետից հետո՝ եռօրյա ժամկետում, պահանջների նախնական ցուցակը կառավարիչը ներկայացնում է դատարան, պարտապանին, առավել մեծ պահանջներ ունեցող 5 պարտատերերին և հրապարակում է իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում:

Առանձնացնելով պարտապանին և 5 խոշոր պարտատերերին՝ օրենսդիրը նպատակ է հետապնդել սնանկության վարույթի ընթացքում այս սուբյեկտների համար սահմանելու առանձին կարգավիճակ՝ հաշվի առնելով սնանկության վարույթի հետագա ընթացքի վրա վերոհիշյալ սուբյեկտների հնարավոր ազդեցությունը, մասնավորապես՝ պահանջների դեմ պարտապանի կողմից հնարավորինս հիմնավորված առարկություններ ներկայացնելու հնարավորության ապահովումը: Հետևաբար կառավարչի պարտականությունն է ոչ միայն իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում պահանջների նախնական ցուցակի հրապարակումը, այլև դրա պատշաճ ներկայացումը վերը նշված կողմերին, որպեսզի սնանկության վարույթի ընթացքում լիարժեք ապահովվեն կողմերի իրավունքներն ու պարտականությունները[83]:

Օրենքի 46-րդ հոդվածի 6-րդ և 8-րդ մասերի համաձայն՝ եթե հրապարակումից հետո՝ յոթ օրվա ընթացքում, կառավարիչը, պարտապանը և պարտատերերը նախնական ցուցակի դեմ գրավոր առարկություններ չեն ներկայացնում դատարան, ապա դատավորը եռօրյա ժամկետում առանց նիստ հրավիրելու որոշում է կայացնում պահանջների ցուցակը հաստատելու մասին (վերջնական ցուցակ), իսկ եթե առարկություն է ներկայացվում պահանջների նախնական ցուցակի առաջնահերթության կամ որևէ պարտատիրոջ պահանջի վերաբերյալ, ապա դատարանը առարկությունն ստանալուց հետո՝

[83] Տե՛ս ՎԴ թիվ ԿԴ/0033/04/13 քաղաքացիական գործով 30.04.2015 թ. որոշումը:

15 օրվա ընթացքում, որոշում է պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունը և որոշում է կայացնում պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին: Ընդ որում, եթե առարկությունը ներկայացվում է սահմանված ժամկետի խախտմամբ, ապա դրանք կարող են քննարկման առարկա դառնալ միայն ժամկետի բացթողումը դատարանի կողմից հարգելի ճանաչվելու դեպքում:

Թեև հիշատակված կարգավորումներից կարող է տպավորություն ստեղծվել, որ դատարանը առարկություն չստանալու դեպքում առանց որևէ ստուգողական գործողության դրանք ներառում է պահանջների վերջնական ցուցակում՝ այդուհանդերձ նման մոտեցումը կարող է խնդրահարույց լինել և իմաստազրկել պահանջների հաստատման գործընթացի իմաստը և նշանակությունը՝ հնարավորություն ընձեռելով որպես պահանջ դիտարկել նաև պարտապանի նկատմամբ ներկայացված անհիմն ու ոչ իրավաչափ բոլոր նկրտումները:

Հիշյալ համատեքստում ուշագրավ է ՎԴ այն սկզբունքային դիրքորոշումը, ըստ որի. «Օրենսդիրը պարտավորեցրել է դատարանին անկախ պահանջի (պահանջների) նկատմամբ առարկության ներկայացումից քննության առնել դատարան ներկայացրած յուրաքանչյուր պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունը, որից հետո միայն որոշում կայացնել պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին»[84]: Ավելին, մեկ այլ դեպքում ՎԴ-ն, անդրադառնալով առարկություն ներկայացվելու պայմաններում պահանջի հաստատմանը, նշել է հետևյալը. «Պահանջի դեմ առարկություն ներկայացնելու դեպքերում դատարանները պարտավոր են պահանջի հիմնավորվածությունն ու օրինականությունն ստուգելիս առաջնորդվել ՔԴՕ սահմանված ապացուցման կանոններով՝ գնահատելով պահանջի և առարկությունների հիմքում ընկած փաստարկների

[84] Տե՛ս ՎԴ թիվ ԿԴ/0033/04/13 քաղաքացիական գործով 02.12.2016 թ. որոշումը:

հիմնավորվածությունը: Ընդ որում, ՎԴ-ն հարկ է համարում նշել, որ եթե պահանջի չափը, օրինականությունը և ապահովվածությունը որոշվում են նյութական և քաղաքացիական դատավարության օրենսդրության կանոնների համակցության արդյունքում, ապա արդեն պահանջի առաջնահերթությունը որոշվում է Օրենքով սահմանված կարգավորումներով»[85]:

Միաժամանակ հարկ է նկատել, որ, եթե մինչև Օրենքի փոփոխությունները պահանջի դեմ ներկայացված առարկությունը դատարանը քննության էր առնում դատական նիստում, որի ժամանակ դատավարության մասնակիցներին հնարավորություն էր ընձեռնվում պահանջում կամ առարկությամբ առկա բացթողումները կամ թերությունները շտկել, ապա ներկայումս առարկության դեպքում, որպիսի պայմաններում կարևորվում է պահանջները, ինչպես նաև պահանջների դեմ ներկայացվող առարկությունները դատարան ներկայացնելիս առավելագույնս պահպանել դրանցում վկայակոչված հանգամանքները հիմնավորող ապացույցները դատարան ներկայացնելու՝ օրենսդրի կողմից սահմանած դրույթները:

Քանի որ պարտատիրոջ կողմից սնանկության վարույթում պահանջ չներկայացնելը կամ դրա մերժումը բացասական հետևանքներ է առաջացնում այդ պարտատիրոջ համար, համապատասխան դատական ակտով հաստատված պարտատերերի ցուցակը և նրանց պահանջների չափն իրենց բնույթով չեն կարող միանշանակորեն համարվել վերջնական և անփոփոխելի հանգամանքներ[86]: Դա է պատճառը, որ Օրենքի 9-10-րդ մասերը սահմանում են պահանջների վերջնական ցուցակի հաստատումից հետո նոր պահանջ կամ արդեն իսկ հաստատված պահանջի փոփոխություն հաստատելու հնարավորություն, որը տեղի է ունենում վերևում ներկայացված կանոններով:

---

85 Տե՛ս ՎԴ թիվ ԵԿԴ/0021/04/12 սնանկության գործով 05.12.2019 թ. որոշումը:

86 Տե՛ս ՎԴ թիվ ԿԴ1/1302/02/13 քաղաքացիական գործով 17.07.2015թ. որոշումը:

Ողջ շարադրվածի լույսի ներքո հարկ է նկատել նաև, որ Օրենքի փոփոխություններով պահանջի ներկայացման առնչությամբ պարտատերերին լրացուցիչ բեռից ազատելու նպատակով օրենսդիրը սահմանել է, որ որպես պահանջ կարող է դիտվել նաև սնանկ ճանաչելու դիմումը, եթե դրանում առկա է դիմումը պահանջ դիտարկելու մասին միջնորդություն, ինչպես նաև ապահովված պահանջի չափը հաստատելու և ապահովված իրավունքի առարկայի իրացումը թույլատրելու մասին դիմումը: Իհարկե, ասվածը չի բացառում այդ պարտատերերի կողմից առանձին պահանջ ներկայացնելու հնարավորությունը, որպիսի պայմաններում քննարկման ենթակա է միայն այդ պահանջը:

ԳԼՈՒԽ 9. ԱՊԱՀՈՎՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

§1. Գրավով ապահովված պահանջները

Պահանջների ապահովման միջոցներից առաջատար դիրք է գրավում գրավի ինստիտուտը, որը թույլ է տալիս գրավով ապահովված պարտավորության պարտատիրոջը գրավի առարկայի արժեքից մյուս պարտատերերի հանդեպ նախապատվության իրավունքով ստանալու իր պահանջի բավարարում: Օրենքի՝ ապահովված պահանջների և դրանց բավարարման վերաբերյալ կարգավորումների վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ առկա է գրավով ապահովված պահանջների բավարարման երկու եղանակ.

1. սնանկության վարույթի շրջանակներում,
2. սնանկության վարույթից դուրս:

Գրավով ապահովված պահանջները սնանկության վարույթում կամ դրանից դուրս բավարարելու եղանակների էությունը քննարկելիս սկզբունքային է դրանց առանձնահատկությունների գնահատումը, որոնց մեջ կենտրոնական տեղ է զբաղեցնում պահանջների բավարարման հնարավոր սահմանափակումների հարցը: Այսպես, սնանկության վարույթի շրջանակներում՝ գրավով ապահովված պարտավորությունն առաջնահերթ բավարարվում է գրավադրված գույքի վաճառքից ստացված միջոցներից, իսկ դրանց անբավարարության դեպքում պարտապանի այլ գույքից՝ որպես չապահովված պահանջ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով: Պահանջի բավարարումը պարտապանի գրավից ազատ գույքից բոլոր դեպքերում սահմանափակվում է այնքանով,

քանի դեռ գրավադրված գույքի արժեքն ավելի կամ հավասար է ապահովված պարտատիրոջ պահանջին:

Սնանկության վարույթից դուրս գրավով ապահովված պահանջների բավարարման իրավունքը սահմանափակվում է գրավի արժեքի սահմաններով: Սնանկության վարույթում պարտապանի գույքի, այդ թվում՝ ապահովված իրավունքի առարկայի իրացման գործընթացի վերաբերյալ կարգավորումներից հետևում է, որ պարտապանի գույքը սնանկության վարույթում վաճառվում է հրապարակային սակարկությունների կամ ուղղակի գործարքի միջոցով, գույքի վաճառքի ձևը որոշվում է գույքի վաճառքի ծրագրում, իսկ գույքի վաճառքը, բացառությամբ՝ Օրենքով նախատեսված դեպքերի, կարող է իրականացվել բացառապես պարտապանի լուծարման վարույթը սկսելուց հետո:

Օրենքով սահմանված է նաև հրապարակային սակարկություններից ապահովված իրավունքի առարկան ի սեփականություն ստանալու հնարավորություն, որը լիովին համահունչ է գրավի իրավունքի բնույթին: Այսպես, սնանկության վարույթում ապահովված իրավունքի առարկան պարտատիրոջը կամ նրա նշած անձի օգտին ի սեփականություն կարող է հանձնվել, եթե իրացվող գույքի վերջին չկայացած աճուրդի համար առաջարկվող մեկնարկային գինը փոքր կամ հավասար է ապահովված պարտատիրոջ պահանջի գումարին կամ ապահովված պարտատերը փոխհատուցում է այդ գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, ինչպես նաև կառավարչի վարձատրությունը՝ գույքի մեկնարկային գնի 3%-ի, բայց ոչ ավելի, քան նվազագույն աշխատավարձի 10,000-ապատիկի չափով: Միաժամանակ, հարկ է փաստել, որ այս ինստիտուտը չի ամրագրում մեկնարկային գինը պահանջի չափից ավել լինելու դեպքում գրավի առարկան ստանալու հնարավորություն: Այնինչ, նման լուծումը թույլ կտար ապահովված պարտատիրոջ կողմից մեկնարկային գնի և պահանջի չափի տարբերությունը վճարելու պայմանով առավել վաղ փուլերում հասնել պահանջի բավարարմանը՝ զգալիորեն կրճատելով նաև սնանկության վարույթի տևողությունը:

Սնանկության վարույթի կարևորագույն ինստիտուտներից է մորատորիումը կամ պարտատերերի պահանջների բավարարման սառեցումը: Այն պարտապանի վճարունակության վերականգնման նպատակին հասնելու միջոցներից մեկն է՝ ուղղված պարտապանի գույքի էական նվազեցում թույլ չտալուն[87]: Մորատորիումի բովանդակությունը կազմող գործողությունները թվարկված են Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում, որոնք ընդհանուր առմամբ արգելում են պարտապանի պարտավորությունների՝ կամավոր կամ հարկադիր կարգով կատարման ցանկացած գործընթաց: Այս սահմանափակումները, ի թիվս այլնի, միտված են բացառելու պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջներով որևէ դատական գործի վարույթ, իսկ այդպիսի պահանջների առկայության դեպքում դրանք սնանկության վարույթում կենտրոնացնելուն:

Միաժամանակ պետք է արձանագրել, որ օրենսդիրը, այլ շահերի պաշտպանության նկատառումներից ելնելով, սահմանել է մորատորիումի գործողությունից բացառության դեպքեր: Ընդ որում, ապահովված իրավունքի առարկայի իրացումը մորատորիումի գործողությունից դուրս է գալիս ոչ թե իրավունքի ուժով, այլ եթե առկա է ապահովված պարտատիրոջ պահանջի չափը հաստատելու և ապահովված իրավունքի առարկայի իրացումը թույլատրելու մասին դատարանի որոշում:

Սնանկության վարույթից դուրս ապահովված իրավունքի առարկայի իրացումը հնարավոր է երկու կարգով՝ դատական և արտադատական: Դատական կարգով ապահովված իրավունքի առարկայի իրացումը իրականացվում է առանձին քաղաքացիական գործի շրջանակում, որի արդյունքում բռնագանձում տարածելու մասին դատական ակտը կատարվում է սնանկության գործի շրջանակներում՝ Օրենքով սահմանված կարգով: Ապահովված

---

87 Տե՛ս, օրինակ՝ ՎԴ թիվ ԵԿԴ/0469/02/14 քաղաքացիական գործով 17.07.2015թ. և թիվ ԵԿԴ/5306/02/14 քաղաքացիական գործով 13.01.2016թ. որոշումները:

իրավունքի առարկայի արտադատական իրացման հետ կապված հարաբերությունները գրեթե կարգավորված չեն Օրենքում, հետևաբար դրանց նկատմամբ, ներառյալ՝ ապահովված իրավունքի առարկայի բռնագանձման եղանակների հետ կապված կիրառելի են Օրենսգրքի կանոնները: Այս առումով ՎԴ-ն նշել է. «Արտադատական կարգի կիրառման դեպքում գրավի առարկան իրացվում է ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների, իսկ դատական կարգով բռնագանձման դեպքում՝ հրապարակային սակարկությունների միջոցով: Երկու դեպքում էլ գրավատուի և գրավառուի համաձայնությամբ կարող է սահմանվել այլ կարգ: ... ՎԴ-ն արձանագրում է, որ եթե սնանկության վարույթում սնանկ ճանաչված պարտապանի պարտավորությունն ապահովված է գրավով, ապա միայն Օրենքը գործել չի կարող, քանի որ գրավի համար Օրենսգրքով նախատեսված են այլ առանձնահատկություններ, որոնք պետք է հաշվի առնվեն սնանկության վարույթի ընթացքում»[88]:

Սնանկության վարույթում ապահովված իրավունքի առարկայի իրացումից ստացված միջոցների բաշխման վերաբերյալ Օրենքի կարգավորումների վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը էականորեն տարբերվող մոտեցումներ է ցուցաբերել չապահովված և ապահովված պահանջների բավարարմանն ուղղված միջոցների բաշխման հարցում: Այսպես, եթե չապահովված պահանջների բավարարման հերթականության մեջ առաջնահերթության կարգով բավարարվում են կառավարչի վարձատրությունը և վարչական ծախսերը, այնուհետև պահանջները՝ ըստ հերթերի, ապա պարտապանի պարտավորությունների դիմաց գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցներից արտահերթ վճարվում են գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, կառավարչի վարձատրությունը, որից հետո բավարարվում է գրավով ապահովված պահանջը: Այսինքն՝ քանի դեռ չեն վճարվել պարտապանի գրավադրված գույքի իրացումից ստացված

88 Տե՛ս, օրինակ՝ ՎԴ թիվ ԵՄԴ/1140/02/12 քաղաքացիական գործով 26.12.2013թ. և թիվ ԵԱԴԴ/0199/02/11 քաղաքացիական գործով 17.07.2015թ. որոշումները:

միջոցներից գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, կառավարչի վարձատրությունը, ամբողջությամբ չեն բավարարվել ապահովված պարտատիրոջ պահանջները, այլ պահանջների բավարարում կամ ծախսերի հատուցում չի կարող իրականացվել[89]:

Ուշադրության արժանի է ՍԿ դերակատարումը սնանկության վարույթից դուրս ապահովված իրավունքի առարկայի իրացման գործընթացում: Մասնավորապես՝ Օրենքի փոփոխություններով ամրագրվեց պահանջ, ըստ որի՝ ապահովված իրավունքի առարկայի իրացումից հետո գրավով ապահովված պարտատերը պարտավոր է մեկշաբաթյա ժամկետում, պատշաճ ձևով ծանուցել կառավարչին ապահովված իրավունքի առարկայի իրացման օրվա և գնի, ապահովված պարտավորության մարման չափի, ինչպես նաև առկայության դեպքում՝ ապահովված իրավունքի առարկայի իրացման արժեքի և ապահովված պահանջի տարբերության չափի, իսկ պարտավորությունը լրիվ մարված չլինելու դեպքում՝ պարտքի մնացորդի մասին: Ընդ որում, բոլոր այն դեպքերում, երբ ապահովված իրավունքի առարկայի իրացման արժեքն ավելի մեծ է ապահովված պարտատիրոջ պահանջից, ապա ապահովված պարտատերն ապահովված իրավունքի առարկան իրացնելուց հետո՝ 10-օրյա ժամկետում, պարտավոր է իրացման արժեքի և ապահովված պահանջի տարբերության չափով գումարը փոխանցել սնանկության հատուկ հաշվին, իսկ երրորդ անձ գրավատուին պատկանող ապահովված իրավունքի առարկայի իրացման դեպքում՝ երրորդ անձ գրավատուին[90]:

---

89 Տե՛ս, օրինակ՝ ՎԴ թիվ ԱՐԱԴ/0010/04/15 սնանկության գործով 25.03.2019թ. և թիվ ԵԿԴ/0126/04/15 սնանկության գործով 17.04.2019թ. որոշումները:

90 Գրավով ապահովված պահանջների հետ կապված առավել մանրամասն տես **Տ.Ա. Մարկոսյան.** Գրավով ապահովված պահանջները սնանկության վարույթում: Գիտագործնական ձեռնարկ / Եր., Արդարադատության ակադեմիա, 2021:

§2. Ապահովված իրավունքի առարկայի սնանկության վարույթից դուրս իրացման թույլատրումը

Ապահովված իրավունքի առարկան սնանկության վարույթից դուրս իրականացնելու հնարավորությունը ուղղակիորեն կախվածության մեջ է գտնվում ապահովված պահանջի չափը հաստատելու և ապահովված իրավունքի առարկայի իրացումը թույլատրելու մասին դատարանի որոշման առկայությունից: Այլ կերպ ասած՝ առանց դատարանի նման որոշման սնանկության վարույթից դուրս ապահովված իրավունքի առարկայի իրացումը անհնար է: Իր հերթին դատարանը կարող է այդպիսի որոշում կայացնել, եթե առկա է գրավով ապահովված պարտատիրոջ համապատասխան դիմում, որը բավարարում է հետևյալ պայմաններին.

- Պարտատիրոջ և պարտապանի միջև օրենքով սահմանված կարգով կնքված պայմանագրում առկա են գրավի առարկայի արտադատական բռնագանձման իրավունքի վերաբերյալ պայմաններ[91],
- Դիմումը ներկայացվել պարտապանի սնանկության մասին հայտարարությունից հետո՝ մեկամսյա ժամկետում:

Ապահովված պահանջի չափը հաստատելու և ապահովված իրավունքի առարկայի իրացումը թույլատրելու մասին դիմումը քննարկվում է առանց դատական նիստ հրավիրելու կամ դատական նիստում՝ կախված այն հանգամանքից, թե դրա դեմ ներկայացվել է առարկություն, թե՝ ոչ:

---

[91] Այս պայմանի առկայությունը պարտադիր է միայն այն դեպքում, երբ ապահովված իրավունքի առարկայի իրացումը իրականացվելու է արտադատական կարգով: Նման եզրահանգման համար հիմք է հանդիսանում Օրենքի 39.3-րդ հոդվածի 5-րդ մասը, որը թույլ է տալիս արտադատական կարգով գույքը իրացնելու իրավունք չունեցող գրավով ապահովված պարտատիրոջը դատական կարգով բռնագանձում տարածել գրավի առարկայի վրա:

Այսպես, Օրենքի 39.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Դատարանը, ստանալով ապահովված պարտատիրոջ դիմումը, դիմումի օրինակը երկու աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է պարտապանին և կառավարչին, որոնք դիմումի օրինակն ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, կարող են հայտնել գրավոր դիրքորոշում դիմումի կապակցությամբ»: Եթե պարտապանի կամ կառավարչի կողմից հինգ աշխատանքային օրվա ընթացքում դիրքորոշում չներկայացվելու կամ ներկայացված դիրքորոշմամբ չառարկվելու և դիմումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում դատարանն այդ ժամկետին հաջորդող մեկշաբաթյա ժամկետում կայացնում է որոշում ապահովված պարտատիրոջ պահանջի չափը հաստատելու և ապահովված իրավունքների առարկայի իրացում թույլատրելու մասին, իսկ առարկություն ներկայացվելու դեպքում՝ առարկությունը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, դատական նիստ է հրավիրում, որի արդյունքում դատարանը որոշում է պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը և ապահովվածությունը:

Դատարանը մերժում է գրավով ապահովված պարտատիրոջ դիմումը, եթե.

1. ապահովված պարտատերը չունի արտադատական կարգով գույքն իրացնելու իրավունք[92],
2. առանց ապահովված իրավունքի առարկայի օգտագործման պարտապանի ֆինանսական առողջացման ծրագիրը չի կարող իրականացվել, պայմանով, որ ապահովված պարտատիրոջը տրամադրվել է համարժեք պաշտպանություն, որի վերաբերյալ կնքվել է պայմանագիր,

[92] Օրենքում այս առումով մերժման հիմք է դիտարկվել միայն արտադատական կարգով գույքի իրացման իրավունքի բացակայությունը: Այնինչ, մերժման հիմք կարող է լինել ոչ միայն այդ հանգամանքը, այլև դիմումի սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացված լինելը, գրավի իրավունքի ծագած չլինելու կամ դադարած լինելու հանգամանքները և այլն:

3. ապահովված պարտատիրոջ պահանջի քննությունը ենթակա է կասեցման:

Դիմումի մերժման հիմքերը վերանալուց հետո դիմումատուն իրավունք ունի Օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ նույն հարցով կրկին դիմել դատարան:

Հարկ է նկատել, որ ապահովված իրավունքի առարկան սնանկության վարույթից դուրս իրացնելու հնարավորությունը դատարանի որոշմամբ թույլատրելու կարգավորումը Օրենքում տեղ է գտել 17.06.2016թ. ընդունված ՀՕ-105-Ն օրենքով[93] կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում, իսկ մինչ այդ գործող խմբագրությամբ Օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի համաձայն՝ մորատորիումի գործողությունը չէր տարածվում՝ գրավով ապահովված պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալու կամ նրանց՝ գրավով ապահովված պահանջների բավարարման համար ցանկացած գործարքի կամ դրա կատարմանն ուղղված ցանկացած գործողության կամ գործընթացի վրա, եթե ապահովված պարտատերը մորատորիում չտարածելու մասին ծանուցել է դատարանին: Այսինքն՝ մինչև 17.06.2016թ. ընդունված ՀՕ-105-Ն օրենքի ուժի մեջ մտնելը օրենսդրական մակարդակում որպես ապահովված իրավունքի առարկան սնանկության վարույթից դուրս իրացնելու միակ պայման օրենսդիրը դիտարկում էր ապահովված պարտատիրոջ կողմից մորատորիում չտարածելու մասին դատարանին ներկայացված ծանուցումը:

Այսուհանդերձ, դատական պրակտիկան զարգացել էր այլ ուղղությամբ՝ պարտադիր համարելով նաև այդ առնչությամբ համապատասխան դատական ակտի կայացումը, քանի որ նախ՝ այդպիսի ծանուցմամբ անձն ակնկալում էր որոշակի իրավական և փաստական հետևանքների առաջացում, որոնք ինքնին, միայն դատարանին ծանուցելու փաստի ուժով չէին կարող առաջանալ, քանի որ առկա

93 Ուժի մեջ է մտել 23.07.2016թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2016.07.13/54(1234) Հոդ.650:

էր դրանց իրավաչափության գնահատման և արդյունքում մերժման կամ բավարարման մասին որոշման կայացման անհրաժեշտություն: Եվ երկրորդ՝ սնանկության վարույթի առանձնահատկությամբ պայմանավորված, մորատորիումի գործողությունը չտարածելու մասին դատարանին ծանուցած պարտատերն ակնկալում էր նաև ապահովված առարկայի նկատմամբ կիրառված սահմանափակումների վերացում, եթե այդպիսիք կիրառվել են, որն էլ իր հերթին կրկին ենթադրում է դատական ակտի կայացում՝ որոշման ձևով:

Բացի այդ, նշված եզրահանգումն առավել կարևոր էր այն պարագայում, երբ մորատորիումի գործողությունը չտարածելու մասին ծանուցմամբ ակնկալվող հետևանքները շոշափում էին երրորդ անձանց իրավունքները, քանի որ այդ դեպքում առաջանում էր տարբեր անձանց իրավունքների և իրավական շահերի միջև հավասարակշռության ապահովման խնդիր, որն առանց դատական ակտի կայացման հնարավոր չէ իրականացնել: Այդ իսկ պատճառով օրենսդիրը սահմանել է մորատորիումի գործողությունը չտարածելու մասին ծանուցումը դատարանին ներկայացնելու պարտականություն:

Շարադրվածի հիման վրա ՎԴ-ն արդարացիորեն արձանագրել է, որ ապահովված պարտատիրոջ կողմից դատարանին ծանուցելու պահանջը չէր կարող ինքնանպատակ լինել և դատարանի դերն այդ հարցում չէր կարող սահմանափակվել միայն ծանուցումն ի գիտություն ընդունելով, այլ դատարանը պետք է մորատորիումի գործողությունը չտարածելու մասին ծանուցման վերաբերյալ կայացներ դատական ակտ՝ ապահովելով անձի արդար դատաքննության իրավունքի իրացումը, այդ թվում՝ անձի դատական ակտի բողոքարկման իրավունքը[94]: Ընդ որում, նման եզրահանգման համար ՎԴ-ն հիմք է ընդունել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ձևավորված այն հիմնադրույթը, որ «դատարան» եզրույթին բնորոշ հիմնական հատկություններից է ներկայացված

[94] Տե՛ս, օրինակ՝ ՎԴ թիվ ԵԿԴ/0078/04/15 քաղաքացիական գործով 20.07.2017թ. որոշումը:

հայցին վերաբերող բոլոր փաստական և իրավական խնդիրների հետ կապված պարտադիր որոշում կայացնելու հնարավորությունը[95]:

Այսպիսով, ակնհայտ է, որ ապահովված իրավունքի առարկան սնանկության վարույթից դուրս իրացնելու հնարավորությունը դատական ակտի հիման վրա իրականացնելու կարգավորումը Օրենքում նախատեսելու դրույթը միայն ամրապնդել և կատարելագործել է դատական պրակտիկայում որդեգրված մոտեցումները[96]:

Գրավով ապահովված պարտատիրոջ համար, ով չունի գրավի առարկայի վրա արտադատական կարգով բռնագանձելու իրավունք, Օրենքը սահմանում է այդ գույքի վրա դատական կարգով բռնագանձում տարածելու հայցով դատարան դիմելու հնարավորություն, որը ենթակա է քննության սնանկության վարույթի շրջանակներում՝ որպես առանձին քաղաքացիական գործ, իսկ պահանջի բավարարման դեպքում գույքը ենթակա է իրացման Օրենքի կանոնակարգումներին համապատասխան[97]:

Միաժամանակ, ողջ շարադրվածի համատեքստում պետք է նշել, որ ապահովված իրավունքի առարկայի սնանկության վարույթից դուրս իրացման վերաբերյալ ներկայացված վերլուծությունը հավասարապես կիրառելի է նաև այն դեպքերի համար, երբ որպես գրավատու հանդես է գալիս երրորդ անձը: Այլ կերպ ասած՝ երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկան սնանկության վարույթից

---

95 Տե՛ս, օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Բենթհեմը ընդդեմ Նիդերլանդների գործով 23.10.1985թ. վճիռը, կետ 40 և Ռոլֆ Գուստաֆսոնը ընդդեմ Շվեդիայի գործով 01.07.1997թ. վճիռը, կետեր 45-46:

96 Տե՛ս **Տ.Ա. Մարկոսյան.** Գրավով ապահովված պահանջները սնանկության վարույթում: Գիտագործնական ձեռնարկ / Եր., Արդարադատության ակադեմիա, 2021, էջ 39:

97 Հայց հարուցելու միջոցով գրավի առարկայի իրացման հնարավորություն ստանալու տարբերակը որևէ առումով արդարացված չէ, քանի որ թե հայցի հարուցման դեպքում, թե առանց այդ հայցի հարուցման վաճառքն իրականացվելու է նույն ընթացակարգով, որպիսի պայմաններում ստեղծվում է դատարանին անհարկի ծանրաբեռնելու ռիսկեր:

դուրս իրացնելու համար անհրաժեշտ է դատարանի համապատասխան որոշում, այլապես այդ գույքը Օրենքի 47-րդ հոդվածի ուժով դիտարկվում է պարտապանի գույք և դրա նկատմամբ ևս տարածվում է մորատորիումի գործողությունը[98]:

[98] Տե՛ս ՎԴ թիվ ԵԿԴ/0469/02/14 քաղաքացիական գործով 17.07.2015թ. որոշումը:

§ 3. Երաշխավորությամբ և երաշխիքով ապահովված պահանջները

Պահանջների բավարարումը ապահովող գործող մեխանիզմների շրջանակում առանձնահատուկ կարգավիճակ ունեն երաշխիքը կամ երաշխավորությունը, որոնք պարտատիրոջը հնարավորություն են տալիս պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում պահանջի բավարարում ստանալ երաշխիք կամ երաշխավորություն տված անձի միջոցների հաշվին:

Ապահովված պահանջների և դրանց բավարարման վերաբերյալ հարցերի ընդհանուր կարգավորումներին նվիրված Օրենքի 43-րդ, ինչպես նաև 39-րդ հոդվածների վերաբերելի դրույթների վերլուծությունից կարող ենք եզրակացնել, որ երաշխիքով կամ երաշխավորությամբ ապահովված պարտատերը կարող է իր պահանջն ուղղակիորեն ներկայացնել երաշխավորին սնանկության վարույթից առանձին, իսկ նման պահանջ չներկայացնելու կամ պահանջը լրիվ չբավարարվելու դեպքում՝ այդ պահանջը ներկայացնել սնանկության վարույթում:

ՎԴ-ն, անդրադառնալով սնանկության վարույթում երաշխիքով կամ երաշխավորությամբ ապահովված պարտատիրոջ կողմից պահանջ ներկայացնելու դեպքին, արձանագրել է, որ երբ երաշխավորությամբ ապահովված պարտավորության պարտատերն իր պահանջն ուղղակիորեն ներկայացնում է սնանկության վարույթում՝ ընդգրկվելով պարտատերերի ցուցակում, ապա այդ դեպքում պարտատերը համարվում է ապահովված պարտատեր և նման դեպքում պարտատիրոջ պահանջները՝ որպես ապահովված պահանջ, սնանկության վարույթի շրջանակներում կարող են բավարարվել երաշխավորի միջոցների հաշվին: ՎԴ համոզմամբ՝ սնանկության գործով կառավարիչը՝ որպես սնանկության վարույթում պարտապանի և պարտատերերի շահերի հավասարակշռությունն ապահովող հիմնական անձ, երաշխավորության հիմքով ապահովված պահանջատիրոջ պահանջները բավարարելու համար

կարող է հայցով դիմել դատարան երաշխավորի դեմ՝ ստացված գումարն ուղղելով ապահովված պահանջատիրոջ պահանջների բավարարմանը[99]: Ընդ որում, ՎԴ-ն թեև փաստել է, որ Օրենքը չի նախատեսում երաշխավորի գույքի իրացման ընթացակարգ, ինչպես օրինակ՝ գրավադրված գույքի դեպքում, այնուամենայնիվ գտնում է, որ օրենսդիրը չի բացառում, որ երաշխավորության հիմքով ապահովված պահանջատիրոջ պահանջները կարող են բավարարվել երաշխավորի գույքի իրացման արդյունքում:

ՍԿ ընդդեմ երաշխավորի հայցով դատարան դիմելու հնարավորությունը, կարծում ենք, գործող կարգավորումների համատեքստում որոշակիորեն խնդրահարույց է, որը կարող էր շտկվել Օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծում[100] առկա 56.1-րդ հոդվածի և դրա հետ կապված այլ դրույթների ընդունման դեպքում:

ՎԴ-ն, անդրադառնալով երաշխավորի դեմ սնանկության վարույթից դուրս պահանջ ներկայացնելու շրջանակներին, փաստել է, որ սնանկության վարույթի առկայության պայմաններում երաշխավորի դեմ պահանջ ներկայացնելու հնարավորությունը վերաբերում է միայն հայցային վարույթի կարգով գույքային պահանջ ներկայացնելուն, այլ ոչ թե նաև վերջինիս սնանկ ճանաչելուն: Այսինքն՝ երաշխավորը, անկախ նրանից՝ վերջինս համապարտ պարտավորություն է ստանձնել, թե ոչ, միևնույն պայմանագրի հիմքով՝ պարտապանի հետ միաժամանակ չի կարող սնանկ ճանաչվել:

Երաշխավորությամբ կամ երաշխիքով ապահովված պահանջների վերաբերյալ կարգավորումների շրջանակներում էական է, որ պարտապանի սնանկության գործընթացը չի ազդում ի ապահովումն պարտապանի պարտավորությունների կատարման երաշխիք կամ երաշխավորություն տված անձի՝ երաշխիքով կամ

---

[99] Տե՛ս ՎԴ թիվ ԵԱՔԴ/0067/04/16 քաղաքացիական գործով 20.07.2017թ. որոշումը:

[100] Նախագիծը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.e-draft.am/projects/874/about:

երաշխավորությամբ ստանձնած պարտավորությունների կատարման վրա: Միաժամանակ, երաշխիքով կամ երաշխավորությամբ ապահովված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պարտապանի սնանկության գործընթացում հաշվարկված՝ պայմանագրով սահմանված տուժանքների, տուգանքների և վճարման ենթակա տոկոսների գումարները չեն կարող պահանջվել պարտապանից:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նաև սնանկության գործի՝ գույքի բացակայության հիմքով ավարտվելու և հիմնական պարտապանին դրամական պարտավորությունից դատարանի վճռով ազատելու դեպքում համապարտ պարտավորություն ունեցող երաշխավորին պահանջ ներկայացնելու հնարավորության հարցը: Այսպես, դատական պրակտիկայում առկա է մոտեցում, ըստ որի՝ Օրենքի 97-րդ հոդվածի իմաստով պարտավորությունների կատարումից ազատվելն նշանակում է, որ պարտապանը ձերբազատվել է տվյալ պարտավորության կատարումից, այլևս չի կրում նման պարտավորության կատարման պարտականություն, հետևաբար օրենսդիրը նման իրավակարգավորում նախատեսելով նպատակ է հետապնդել բացառել պարտավորությամբ իրավազոր անձի՝ պարտատիրոջ պարտապանին պարտավորության կատարման պահանջ ներկայացնելու, ինչպես նաև պարտավորության կատարմանը հարկադրելու իրավական հնարավորությունը: Նման դեպքերում դադարում է պարտատիրոջ և պարտապանին կապող իրավական կապը և որպես հետևանք դադարում է գոյություն ունենալ պարտապանի և պարտատիրոջ միջև առկա պարտավորությունը, այլ կերպ ասած օրենքի ուժով դադարում են պատապանին և պարտատիրոջը կապող պարտավորական հարաբերությունները: Արդյունքում, Օրենքի 97-րդ հոդվածի ուժով պարտապանին պարտատիրոջ հանդեպ պարտավորության կատարումից ազատելը անվերապահորեն հանգեցնում է պարտապանի և պարտատիրոջ միջև առկա պարտավորության դադարման[101]:

[101] Տե՛ս, օրինակ՝ ՎՔԴ թիվ ԵԿԴ/2677/02/15 քաղաքացիական գործով 16.04.2019թ. որոշումը:

Միաժամանակ, Օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ի կետի իմաստով երաշխավորը, երաշխավորության պայմանագրով, այլ անձի պարտատիրոջ առջև պարտավորվում է պատասխանատվություն կրել այդ անձի կողմից իր պարտավորությունը լրիվ կամ մասնակի կատարելու համար:

Երաշխավորության՝ որպես պարտավորության պատշաճ կատարումը ապահովող գործիքի բնույթը արտահայտվում է նրանում, որ պարտատիրոջ և երաշխավորի միջև ձևավորվում է հիմնական (գլխավոր) պարտավորության նկատմամբ լրացուցիչ (ակցեսոր) պարտավորություն, որի ուժով հիմնական պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պարտատերը հնարավորություն է ստանում իր պահանջները ներկայացնելու երաշխավորին: Ընդ որում, երաշխավորության լրացուցիչ (ակցեսոր) բնույթը դրսևորվում է նրանով, որ այն չի կարող գոյատևել առանց հիմնական (գլխավոր) պարտավորության, ի տարբերություն երաշխիքի: Այսինքն՝ պարտապանին պարտավորությունների կատարումից ազատելու հետևանքով դադարում է նաև երաշխավորությունը, որպես լրացուցիչ պարտավորություն:

Հարկ է նկատել նաև, որ Օրենքում բացակայում է նաև երաշխիք տված անձից բավարարում ստանալու ընթացակարգը, որն իր հերթին բերում է մի շարք դժվարություններ: Այս հարցը ևս իր լուծումը կարող էր ստանալ վերը վկայակոչված նախագծի համապատասխան դրույթների ընդունման դեպքում:

ՄԱՍ VI. ՊԱՐՏԱՊԱՆԻ ԳՈՒՅՔԸ, ՄՈՐԱՏՈՐԻՈՒՄԸ ԵՎ ՊԱՐՏԱՊԱՆԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 10. ՊԱՐՏԱՊԱՆԻ ԳՈՒՅՔԸ

§1. Պարտապանի գույքակազմը և դրա բացահայտումը

Ֆինանսական առողջացման հնարավորության բացակայության դեպքում պարտապանի պարտավորությունների մարման միակ աղբյուրը նրա գույքի կառավարման արդյունքում հավաքագրվող գումարներն են, հետևաբար սնանկության վարույթի արդյունավետ ընթացքն ապահովելու համար էական նշանակություն ունի «պարտապանի գույք» հասկացության բովանդակության բացահայտումը և դրա վերաբերյալ ամբողջական տեղեկատվության առկայությունը:

Հարկ է նշել, որ «գույք» հասկացության վերաբերյալ տարբեր իրավական ակտերով միևնույն երևույթի վերաբերյալ տրված են տարբեր ձևակերպումներ: Այսպես, օրինակ՝ Օրենսգրքի 132-րդ հոդվածը գույքը բնորոշում է հետևյալ կերպ. գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները, աշխատանքները և ծառայությունները, տեղեկատվությունը, մտավոր գործունեության արդյունքները՝ ներառյալ դրանց նկատմամբ

բացառիկ իրավունքները (մտավոր սեփականություն), ոչ նյութական բարիքները, իսկ ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի համաձայն՝ ակտիվը հարկ վճարողին սեփականության իրավունքով պատկանող ցանկացած գույքն է, գույքային իրավունքը և անձնական ոչ գույքային իրավունքը:

Օրենքի երկու դրույթներում ևս անդրադարձ կա պարտապանի գույքի բովանդակությանը, մասնավորապես, Օրենքի 12-րդ հոդվածում 1-ին մասի «ա» կետը որպես պարտապանի գույք սահմանում է պարտապանի կապիտալ և ֆինանսական ներդրումները, հիմնական և շրջանառու միջոցները, ինչպես նաև ոչ նյութական ակտիվները և նշված կազմին չպատկանող այլ միջոցները, իսկ 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքի կազմում ներառվում են պարտապանին պատկանող ցանկացած գույքը, ներառյալ՝ մտավոր սեփականության օբյեկտ կամ այլ գույքային իրավունքներ, ինչպես նաև երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկաները: Ապահովված իրավունքի այն առարկան (այդ թվում՝ երրորդ անձին պատկանող), որի վերաբերյալ դատարանը Օրենքի 39.2-րդ հոդվածով սահմանված կարգով ընդունել է ապահովված պարտատիրոջ պահանջի չափը հաստատելու և ապահովված իրավունքի առարկայի իրացում թույլատրելու մասին որոշում, չի ընդգրկվում պարտապանի գույքի կազմում, բացառությամբ դրա իրացումից ստացված միջոցների, որոնք պարտապանի գույքի կազմում ընդգրկվում են Օրենքի 43-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքում:

Այսպիսով, ակնհայտ է, որ սնանկության օրենսդրության իմաստով «պարտապանի գույք» հասկացությունը ունի ավելի ընդգրկուն բովանդակություն և ներառում է.

1. պարտապանին սեփականության իրավունքով, այդ թվում՝ ամուսնության հիմքով, պատկանող ցանկացած գույք, բացառությամբ այն գույքի, որի վրա օրենքով սահմանված կարգով չի կարող բռնագանձում տարածվել,

2. պարտապանի ստանձնած պարտավորությունների կատարման ապահովման նպատակով երրորդ անձի կողմից գրավադրված գույքը, եթե առկա չէ այդ գույքի կապակցությամբ ապահովված պարտատիրոջ պահանջի չափը հաստատելու և ապահովված իրավունքի առարկայի իրացում թույլատրելու մասին որոշում,

3. ապահովված պարտատիրոջ պահանջի չափը գերազանցող ապահովված իրավունքի առարկայի իրացումից ստացված միջոցները այն դեպքում, երբ առկա է այդ գույքի կապակցությամբ ապահովված պարտատիրոջ պահանջի չափը հաստատելու և ապահովված իրավունքի առարկայի իրացում թույլատրելու մասին որոշում:

Պարտապանի գույքակազմի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները երկուսն են՝ պարտապանը և երրորդ անձինք: Օրենքով պարտապանի համար սահմանված է տեղեկատվության տրամադրման և հայտարարագիր ներկայացնելու պարտականություն, իսկ Նախարարի հրամանով սահմանված է հայտարարագրի ձևը և ներկայացման կարգը: Բոլոր դեպքերում ներկայացվող փաստաթղթերը, ի թիվս այլ տեղեկատվության, պետք է պարունակեն նաև տեղեկություններ պարտապանի գույքի մասին:

Երրորդ անձանցից պարտապանի գույքի մասին տեղեկատվության ստացումը իրականացվում է պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռը դատարանի կողմից մի շարք մարմիններ ուղարկելու միջոցով, որոնք կրում են պարտապանի գույքի վերաբերյալ իրենց տիրապետման տակ գտնվող տեղեկատվությունը ներկայացնել դատարան: Այնուհետև, ՍԿ կողմից պարտապանի գույքակազմի բացահայտմանն է ծառայում գույքագրումը: Բացի այդ, ՍԿ-ն նույնպես հնարավորություն ունի պարտապանի գույքի հայտնաբերման նպատակով հարցում ուղարկել պետական մարմիններին և վերջիններս պարտավոր են պատասխանել այդ հարցումներին:

Միաժամանակ, պարտապանի գույքի վերաբերյալ տեղեկատվության աղբյուր կարող է հանդիսանալ պարտատերը, որը ապահովված պահանջների դեպքում հիմնականում ստացվում սնանկության դիմումի կամ ներկայացված պահանջի շրջանակում:

§ 2. Պարտապանի գույքի գույքագրումը

Գույքագրումը պարտապանի գույքի կազմի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրմանը հաջորդող փուլն է, որի ընթացքում կատարվում է պարտապանի գույքերի փաստացի ուսումնասիրություն:

Գույքագրման աշխատանքների իրականացման համար Օրենքը սահմանում է հստակ ժամկետներ, սակայն գույքի մեծ ծավալներով կամ այլ օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված այդ ժամկետները դատարանի որոշմամբ ողջամիտ ժամկետով կարող են երկարաձգվել:

Սնանկության վարույթի բոլոր մասնակիցները հանդիսանում են գույքագրման աշխատանքների արդյունավետ իրականացման շահառու, քանի որ գույքագրումն, ըստ էության, համարվում է գույքի գնահատման աշխատանքների նախապատրաստական փուլ, որից հետո իրականացվելու է գույքի գնահատում, որի արդյունքում և ուրվագծվելու է սնանկության վարույթի հետագա ընթացքը՝ կողմերից յուրաքանչյուրը հնարավորություն է ստանալու գնահատել սնանկության վարույթից իր ակնկալիքը:

Գույքագրման աշխատանքների իրականացման համար Օրենքը որևէ հստակ ընթացակարգ չի սահմանում, սակայն դրանց ապահովման նպատակով Օրենքում ներառված են որոշ պարտադիր պայմաններ: Այսպես, սնանկության վարույթի մասնակիցները պետք է ծանուցվեն այդ աշխատանքների ժամանակի և վայրի մասին, պարտապանը պարտավոր է ներկա լինել և աջակցել գույքագրմանը, ապահովել գույքի հասանելիությունը և տրամադրել տեղեկություններ գույքի վերաբերյալ:

Օրենքի փոփոխություններով լուծում է տրվել նաև անշարժ գույքի տարածք մուտք գործելու հետ կապված խնդրին: Նման խոչընդոտի

առկայության դեպքում կառավարիչը կարող է դիմել դատարան և տարածք մուտք գործել դատարանի որոշմամբ:

Գույքագրման փուլի արդյունքը գույքագրման ակտն է: Թեև Օրենքը գույքագրման ակտի վերաբերյալ որևէ պահանջ չի ներկայացնում, այնուհանդերձ այն պետք է պարունակի գույքի յուրաքանչյուր միավորի ամբողջական նկարագիրը, ներառի տեղեկություններ դրա էական բնութագրիչների, առանձնահատկությունների վերաբերյալ: Դրանում ներառված տեղեկատվությունը պետք է հնարավորություն տա պատկերացում կազմել գույքի վերաբերյալ: Հենց այս փաստաթուղթն է, որ պետք է հիմք հանդիսանա գույքի գնահատման և կառավարման մեթոդների ընտրության համար: Որպես կանոն, այն կազմվում է սնանկության գործով կառավարչի կողմից, իսկ գույքագրման մասնակիցները այն ստորագրում են՝ տալով իրենց համաձայնությունը արձանագրվածին:

Գույքագրմանը մասնակցած վարույթի մասնակիցներն ունեն գույքագրման ակտի վերաբերյալ իրենց առարկությունները ներկայացնելու իրավունք: Դրանք պետք է ներկայացվեն գրավոր՝ այդ մասին նշում կատարելով գույքագրման ակտի վրա և դրան կցելով իրենց առարկությունները: Գույքագրման ակտն ստորագրելուց խուսափելու դեպքում կառավարիչն այդ մասին նշում է կատարում գույքագրման ակտում:

Ժամանակակից տեխնոլոգիաների առկայության պայմաններում, հատկապես գույքի մեծ ծավալների պայմաններում ցանկալի է, որ գույքագրման ընթացքը նաև տեսաձայնագրվի:

Ոչ շոշափելի գույքերի (օրինակ՝ ապրանքային նշանի, դեբիտորական պարտավորությունների) դեպքում իրականացվում է փաստաթղթային գույքագրում՝ նշված գույքի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթղթերի հիման վրա կազմվում է համապատասխան ակտ, որը նույնպես պետք է պարունակի այդ գույքի էական բնութագրիչների, դրանց նկատմամբ առկա իրավունքի ծագման հիմքերի մասին տեղեկատվություն:

§3. Պարտապանի գույքի գնահատումը

Գույքագրման աշխատանքներին հաջորդող փուլը պարտապանի գույքի գնահատման աշխատանքների կազմակերպումն է, որի վերաբերյալ Օրենքը ծավալուն կանոնակարգումներ չի սահմանել: Առկա միակ պահանջը փորձագետ հրավիրելու անհրաժեշտության դեպքում այդ մասին խորհրդին կամ 5 խոշոր պարտատերերին տեղեկացնելն է: Պարտապանի գույքի գնահատման անհրաժեշտության վերաբերյալ դրույթներ կան նաև Օրենքի այլ նորմերում, օրինակ՝ 75-րդ և 76-րդ հոդվածներում:

Թեև Օրենքով սահմանված է, որ գույքի գնահատումը կատարում է կառավարիչը, որն անհրաժեշտության դեպքում կարող է հրավիրել գնահատող փորձագետ, այնուհանդերձ գույքի որոշ տեսակների, օրինակ՝ անշարժ գույքի, գնահատման անհրաժեշտության դեպքում կառավարիչը պարտավոր է հրավիրել անկախ փորձագետի, քանի որ ՀՀ օրենսդրությամբ այդ գույքի գնահատումը կարող է իրականացնել միայն համապատասխան որակավորում ստացած անձը:

Ընդհանուր առմամբ անհրաժեշտ է արձանագրել, որ եթե անգամ օրենսդրությունը գնահատողի որակավորման առումով պարտադիր պայման չի սահմանում, ցանկացած գույքի գնահատման աշխատանքների իրականացումը պետք է վստահվի համապատասխան հմտություններ ունեցող ձեռնահաս փորձագետի: Ասվածը բխում է այն իրողությունից, որ պարտապանի գույքի անկախ գնահատումը արդարացիորեն համարվում է պարտատերերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կարևորագույն երաշխիք[102]:

---

[102] Տե՛ս **Караев К.Б.** Правовой статус конкурсных кредиторов при проведении конкурного производства// Юрист.2009, № 4:

Փորձագետ ներգրավելու առումով բացառություն կարող է կազմել դեբիտորական պարտավորությունների գնահատումն այն պարզ պատճառով, որ դեբիտորական պարտավորություններն ունեն դրամական արտահայտություն և դրանց գնահատված արժեքը իրենց փաստացի մեծությունն է: Մեկ կարևոր հանգամանք՝ եթե պարտավորությունը խնդրահարույց է, դրա գնահատումը կարող է ունենալ իրավական վերլուծության անհրաժեշտություն, ինչը կնշանակի, որ այդ առումով անհրաժեշտ կլինի իրավաբանի փորձագիտական կարծիք ստանալը:

Գնահատման աշխատանքներն ամփոփվում են փորձագետի կողմից կազմված եզրակացություններում, որոնք հիմք են հանդիսանում սնանկության վարույթում գույքերի կառավարման ընթացքում որոշումներ կայացնելու համար: Մասնավորապես, այդ եզրակացություններով արձանագրված՝ գույքերի գնահատված արժեքները հիմք են ընդունվում գույքի վաճառքի ծրագիր կազմելու համար և, որպես կանոն, ամրագրվում են որպես գույքի վաճառքի նպատակով կազմակերպվելիք առաջին աճուրդի մեկնարկային գին:

ԳԼՈՒԽ 11. ՊԱՐՏԱՊԱՆԻ ԳՈՒՅՔԻ ՆՎԱԶԵՑՈՒՄԸ ԲԱՑԱՌՈՂ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

§1. Մորատորիումի ընդհանուր բնութագիրը

Մնանկության ինստիտուտի նպատակների արդյունավետ կենսագործումը, ի թիվս այլնի, կախված է սնանկության վարույթի ընթացքում պարտապանի գույքի կազմի նվազեցումը բացառող գործիքակազմից, որը մի կողմից դրսևորվում է մորատորիումի գործիքների կիրառմամբ, իսկ մյուս կողմից պարտապանի գույքի վրա ազդող դատական գործերը սնանկության վարույթում կենտրոնացմամբ: Ընդ որում, այս ողջ գործընթացում էական է սնանկության վարույթի հիմնական մասնակիցներից մեկի՝ սնանկության գործով կառավարչի դերակատարումը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք երկրներում առկա են սնանկության վարույթ սկսելուց հետո պարտապանի գույքի նվազումը բացառող որոշակի գործիքակազմեր: Այսպես, օրինակ՝ Իսպանիայում, ընդհանուր կանոնի համաձայն, սնանկության վարույթը սկսելու պահից դատական կամ արտադատական կատարման վարույթներ չպետք է նախաձեռնվեն, սկսված վարույթներն էլ չպետք է շարունակվեն: Կանոնը սահմանում է որոշ բացառություններ՝ կապված վարչական ակտերի կատարման ընթացակարգերի և աշխատանքային հարաբերություններից բխող պահանջների հետ՝ պայմանով, որ դրանց բավարարումը չխոչընդոտի սնանկության վարույթի հետագա ընթացքին[103]:

[103] Տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://e-justice.europa.eu/content_insolvency-474-es-en.do?member=1:

Նույն կերպ Ֆրանսիայում սնանկության վարույթ սկսելու որոշումն ընդհատում է պարտապանի դեմ բերված բոլոր հայցերը՝ կապված գումարի բռնագանձման, գումարի հետ կապված պայմանագիրը չեղարկելու հետ: Կատարման վարույթները ևս կասեցվում են: Պարտատերերի կողմից ներկայացված առանձին վարույթներով պահանջների բավարարումը ընդհատվում է[104]: Գերմանիայում սնանկության վարույթի փաստով կիրառվող սահմանափակումներին զուգահեռ դատարանը սնանկության գործը վարույթ ընդունելուց հետո պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցները՝ պարտապանի գույքի նվազեցումը բացառելու համար: Սնանկության օրենքի 21-րդ հոդվածը նախատեսում է այս միջոցների շրջանակը: Մասնավորապես, դատարանը կարող է պարտապանի գույքի փոխանցման ընդհանուր արգելք սահմանել: Համանման կարգավորումներ դիտարկվում են նաև Չեխիայում[105], Շվեդիայում[106] և այլն:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը ևս սահմանում է պարտապանի գույքի կազմի նվազեցումը բացառող ինստիտուտներ, որոնցից է մորատորիումը կամ պարտատերերի պահանջների բավարարման սառեցումը, որը կիրառվում է օրենքի ուժով:

Մորատորիումը պարտապանի վճարունակության վերականգման միջոցներից մեկն է, որի էությունը դրսևորվում է նրանում, որ այն արգելում է պարտապանի դրամական միջոցների օգտագործումը՝ պարտապանի ֆինանսական վիճակի բարելավման համար կազմակերպչական և տնտեսական միջոցառումներ իրականացնելու

---

104 Տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://e-justice.europa.eu/content_insolvency-474-fr-en.do?member=1:

105 Տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://e-justice.europa.eu/content_insolvency-474-cz-en.do?member=1:

106 Տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://e-justice.europa.eu/content_insolvency-474-se-en.do?member=1:

համար[107]: Ըստ էության, նման դիրքորոշում է արտահայտվել նաև ՎԴ կողմից, որի համաձայն. «Պարտատերերի պահանջների բավարարման սառեցումը կամ մորատորիումը պարտապանի վճարունակության վերականգնման նպատակին հասնելու միջոցներից մեկն է: Այն առաջնահերթ ուղղված է պարտապանի գույքի էական նվազեցում թույլ չտալուն»[108]:

[107] Տե՛ս Несостоятельность (банкротство): Учебный курс. В 2 т. / Под. ред. д.ю.н., проф. **С.А. Карелиной**. Т. 1. – М.: Статут, 2019, էջ 680:

[108] Տե՛ս, օրինակ՝ ՎԴ թիվ ԵԿԴ/0469/02/14 քաղաքացիական գործով 17.07.2015թ. և թիվ ԵԿԴ/5306/02/14 քաղաքացիական գործով 13.01.2016թ. որոշումը:

§ 2. Մորատորիումի բովանդակությունը

Մորատորիումի բովանդակությունն են կազմում պարտապանի գույքի տնօրինումը սահմանափակող և այլ կերպ գույքի նվազեցումը բացառող պայմանները: Դրանք թվարկված են Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում, որոնցից առաջին խումբը կիրառվում է մինչև պարտապանի սնանկ ճանաչվելու հարցի լուծումը, իսկ մորատորիումը ամբողջ ծավալով կիրառելի է դառնում պարտապանի սնանկ ճանաչվելու պահից: Այսպես, Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու պահից.

ա) արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի կողմից իր պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը, ի մարումն պարտքի որևէ գործողություն կատարելը, բացառությամբ պարտապանի բնականոն ընթացիկ գործունեության հետ կապված պարտավորությունների,

բ) արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի գույքի, ինչպես նաև նրա մասնակցի (մասնակիցների) սեփականությունը հանդիսացող պարտապան կազմակերպությունում ունեցած բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայաբաժինների և օրենքներով սահմանված այլ արժեթղթերի) օտարումը, վարձակալության տալը, գրավադրումը կամ այլ ձևով ծանրաբեռնումը, բացառությամբ Օրենքի 55-րդ հոդվածի երկրորդ մասով նախատեսված դեպքերի,

գ) կասեցվում են գույքային բռնագանձումներով բոլոր կատարողական վարույթները, արգելվում են կատարողական և այլ փաստաթղթերով սահմանված անվիճելի կարգով գանձումները,

դ) արգելվում է պարտատիրոջ՝ մինչև պարտապանին սնանկ ճանաչելու մասին դիմում ներկայացնելը պարտապանի նկատմամբ ստանձնած ցանկացած պարտավորության հաշվանցը՝ պարտապանի նկատմամբ ունեցած իր պահանջի հետ, բացառությամբ Օրենքի 40.1-ին հոդվածով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից.

1. պարտապանի պարտավորությունների կատարման ժամկետները համարվում են սկսված,
2. արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի կողմից իր ցանկացած պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը, բացառությամբ պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված դեպքերի,
3. դադարում է պարտապանի վճարային, ներառյալ՝ հարկերի, տուրքերի այլ վճարների գծով պարտավորությունների նկատմամբ տոկոսների հաշվարկումը, ինչպես նաև այդ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար ցանկացած տեսակի տույժերի, տոկոսների և տուգանքների հաշվեգրումը,
4. կարճվում կամ ավարտվում են պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով քաղաքացիական, վարչական կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում գտնվող գործերը, և պարտապանի դեմ պարտատերերի պահանջները կարող են ներկայացվել սնանկության վարույթի շրջանակներում՝ Օրենքով սահմանված ժամկետներում և կարգով,
5. կարճվում է պարտապանի վերաբերյալ գույքային բռնագանձումներով կամ ոչ գույքային բնույթ ունեցող

ցանկացած կատարողական վարույթ, որն ազդում է սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառվող գույքի և իրավունքների վրա, բացառությամբ սույն օրենքով սահմանված այլ դեպքերի,

6. վերանում են պարտապանի գույքի վրա դրված արգելանքներն ու սահմանափակումները[109]:

ՎԴ-ն անդրադարձել է մորատորիումի ինստիտուտի վերլուծությանը՝ նշելով հետևյալը. «ՎԴ-ն հարկ է համարում հավելել, որ սնանկության վարույթի առանձնահատկություններով, սնանկության նպատակներով պայմանավորված՝ պարտապանի նկատմամբ կիրառվում են մի շարք սահմանափակումներ՝ սկսած պարտապանին սնանկ ճանաչելու մասին դիմումը վարույթ ընդունելու պահից: Մասնավորապես՝ արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի պարտավորություններով պարտատիրոջը դրամական կամ այլ բավարարում տալը (Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և 2-րդ մասի 2-րդ կետեր), պարտապանի գույքը տնօրինելը (Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետ), պարտատիրոջն արգելվում է մինչև պարտապանին սնանկ ճանաչելու մասին դիմում ներկայացնելը պարտապանի նկատմամբ ստանձնած ցանկացած պարտավորության հաշվանցը պարտապանի նկատմամբ ունեցած իր պահանջի հետ (Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետ) և այլն: Նշված սահմանափակումներն ինքնանպատակ չեն, այլ ուղղված են սնանկության գործընթացում պարտապանի գույքի ամբողջականության ապահովմանը՝ նպատակ ունենալով ապահովելու պարտատերերի պահանջների՝ օրենքով սահմանված հերթականությամբ համաչափ բավարարումը: Պարտատերերի պահանջների բավարարման սառեցումը միաժամանակ ուղղված է նաև պարտապանի շահերի բավարարմանը՝ նկատի ունենալով,

[109] Այս դրույթի առկայությունը մորատորիումի շրջանակում համահունչ չէ մորատորիումի էությանը:

որ պարտատերերի պահանջների բավարարումն իրականացվում է դատարանի հսկողությամբ, մասնավորապես՝ միջանկյալ բաշխման ծրագրին կամ ֆինանսական առողջացման ծրագրին համապատասխան: Այսպես, օրինակ, ֆինանսական առողջացման ծրագրով սահմանվում է պարտատերերի պարտավորությունների մարման ժամանակացույցը, նրանց պահանջների դիմաց վճարումներ կատարելու կարգը, ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներում կարող է իրականացվել պարտապանի ամբողջ գույքի կամ դրա մի մասի վաճառք կամ պարտապանի գույքը պարտատերերին հաշվանցով փոխանցում և այլն: Այսինքն՝ ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներում պարտատերերի պահանջների բավարարումն իրականացվում է այնպես, որ հնարավոր լինի ֆինանսապես առողջացնել սնանկ ճանաչված պարտապանին: Հետևաբար պարտատերերի պահանջների բավարարման սառեցման նպատակը մի կողմից բոլոր պարտատերերի շահերի ապահովումն է, որպեսզի որևէ պարտատեր օրենքով սահմանված առաջնահերթության խախտմամբ բավարարում չստանա, մյուս կողմից պարտապանի շահերի ապահովումն է՝ նկատի ունենալով, որ պարտատերերի պահանջների բավարարումն իրականացվում է օրենքով սահմանված ընթացակարգի հստակ պահպանմամբ՝ նպատակ ունենալով հնարավորինս ապահովելու նաև պարտապանի գործունեությունը»[110]:

Հիշյալ գործով ՎԴ-ն եզրահանգել է նաև, որ պարտապանին սնանկ ճանաչելու պահից պարտապանի պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատիրոջը դրամական կամ այլ բավարարում տալու արգելքը վերաբերում է ոչ միայն ուղղակիորեն սնանկ ճանաչված պարտապանի կողմից, այլ նաև վերջինիս պարտապան հանդիսացող անձանց կողմից, ի կատարումն սնանկ ճանաչված պարտապանի հանդեպ ունեցած պարտավորության, սնանկ ճանաչված պարտապանի պարտատիրոջը դրամական կամ

[110] Տե՛ս ՎԴ թիվ ԵԱՔԴ/0254/02/16 քաղաքացիական գործով 27.12.2017թ. որոշումը:

այլ բավարարում տալուն՝ դրանով իսկ բացառելով սնանկության վարույթից դուրս պարտապանի ակտիվների շրջանառությունը:

Միաժամանակ պետք է արձանագրել, որ օրենսդիրը, այլ գերակա շահերի պաշտպանության նկատառումներից ելնելով, սահմանել է մորատորիումի գործողությունից բացառության դեպքեր: Մասնավորապես, Օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մորատորիումի գործողությունը չի տարածվում.

ա. ալիմենտների բռնագանձման վրա,

բ. միջանկյալ բաշխման ծրագրերով ժամանակավոր կառավարչի վարձատրության, վարչական և պարտապանի ընթացիկ գործունեության համար անհրաժեշտ այլ ծախսերի վրա,

գ. ապահովված իրավունք ունեցող պարտատիրոջ ապահովված իրավունքի առարկայի վրա, եթե դատարանը սույն օրենքով սահմանված կարգով պարտատիրոջը թույլատրել է դրա իրացումը արտադատական կարգով[111],

դ. ի ապահովումն սնանկության գործընթացում գտնվող պարտապանի պարտավորությունների կատարման՝ երաշխիք կամ երաշխավորություն տված անձանց կողմից այդ երաշխիքի կամ երաշխավորության գծով դրամական կամ այլ բավարարում տալու կամ դրա կատարմանն ուղղված ցանկացած գործողության կամ գործընթացի վրա: Ընդ որում, պարտապանի սնանկության գործընթացը չի ազդում ի ապահովումն պարտապանի պարտավորությունների կատարման երաշխիք կամ

[111] Թեև այստեղ խոսվում է միայն արտադատական կարգով իրացման թույլտվություն տրվելու մասին, սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դատարանը ունի նաև դատական կարգով սնանկության վարույթից դուրս գույքի իրացում թույլատրելու լիազորություն, որպիսի պայմաններում մորատորիումի գործողությունը ևս բացառվում է:

երաշխավորություն տված անձի՝ երաշխիքով կամ երաշխավորությամբ ստանձնած պարտավորությունների կատարման վրա,

ե Օրենքի 40.1-ին հոդվածով նախատեսված դեպքերում,

զ Օրենքի 40-րդ հոդվածի 3.1-ին մասով սահմանված դեպքում պարտապանի ստանձնած պարտավորությունների նկատմամբ,

է պարտապանի կողմից իր հարկային պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույցի կնքման գործընթացի նկատմամբ, եթե սնանկության վարույթի միակ պարտատերը հարկային մարմինն է:

Կարևոր է ընդգծել նաև, որ մորատորիումի գործողությունը շարունակվում է մինչև տվյալ սնանկության գործի ավարտը: Ընդ որում, չնայած գույքի տնօրինման առնչությամբ գործող սահմանափակումներին, իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից մինչև պարտապանի գործունեության կասեցումը ընկած ժամանակահատվածում ֆինանսական և այլ բնույթի հաշվետվություններ շարունակում է ներկայացնել պարտապանի ղեկավարը կամ անհատ ձեռնարկատերը և կրում է դրանք չներկայացնելու կամ ոչ պատշաճ ներկայացնելու համար օրենսդրությամբ սահմանված պատասխանատվությունը:

§ 3. Մորատորիումի ընթացքում որոշակի գործողությունների թույլատրումը

Մորատորիումի ընթացքում որոշակի գործողությունների թույլատրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Օրենքի 40-րդ հոդվածում, որի հիման վրա կարելի է եզրահանգել, որ մորատորիումի ընթացքում որոշակի գործողությունների թույլատրելու հարցը կարող է քննարկվել, եթե.

1. առաջանում է համարժեք պաշտպանություն տալու անհրաժեշտություն,
2. տվյալ գույքը վաճառքի (իրացման) ենթակա չէ,
3. առկա է պարտապանի և պարտատիրոջ միատեսակ հանդիպական պարտավորությունների հաշվանցի անհրաժեշտություն,
4. առկա է պարտապանի կողմից նոր ֆինանսական պարտավորություններ ստանձնելու անհրաժեշտություն:

Մորատորիումի ընթացքում որոշակի գործողությունների թույլատրման հարցը դատարանը քննարկում է շահագրգիռ անձի դիմումի հիման վրա, որպիսին կարող է լինել պարտապանը, պարտատերը կամ ՍԿ-ն: Ընդ որում, պարտատերերի պահանջների

վերջնական ցուցակը հաստատելուց հետո պարտապանի կողմից նոր ֆինանսական պարտավորություններ ստանձնելու դիմում ներկայացնելու պայման է պարտատիրոջ (պարտատերերի ժողովի) համաձայնությունը:

Մորատորիումի ընթացքում որոշակի գործողությունների կատարումը թույլատրելու մասին դիմումն ստանալու հաջորդ օրը դատարանը դիմումի պատճենն ուղարկում է պարտապանին և կառավարչին՝ պարտատիրոջ կողմից դիմում ներկայացնելու դեպքում, իսկ եթե դիմումը ներկայացվել է պարտապանի (պարտատիրոջ հետ իր ունեցած փոխադարձ պարտավորությունների հաշվանցի կատարման նպատակով) կամ կառավարչի կողմից, ապա համապատասխանաբար պարտատիրոջը (պարտատերերին) և կառավարչին կամ պարտատիրոջն ու պարտապանին:

Եթե դիմումի պատճենն ստանալուն հաջորդող 7 օրվա ընթացքում պարտապանը (պարտատերը) գրավոր չի առարկում դիմումի դեմ, ապա այդ ժամկետի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, դատավորն առանց դատական նիստ հրավիրելու որոշում է կայացնում մորատորիումի ընթացքում որոշակի գործողությունների կատարումը թույլատրելու հարցի վերաբերյալ, իսկ առարկություն ներկայացվելու դեպքում դատարանն առարկությունն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, նշանակում է դատական նիստ, որի ժամանակի և վայրի մասին կողմերը ծանուցվում են պատշաճ ձևով:

Առարկությունների քննարկման արդյունքում նույն օրը դատարանը որոշում է կայացնում մորատորիումի ընթացքում որոշակի գործողությունների կատարումը թույլատրելու կամ դիմումը մերժելու մասին:

Օրենսդիրը, բացառությամբ հաշվանցի հետ կապված դեպքի, չի հստակեցրել մորատորիումի ընթացքում որոշակի գործողությունների կատարումը թույլատրելու կամ դիմումը մերժելու հիմքերը, ինչը նշանակում է, որ դատարանը համապատասխան որոշման հարցում ունի որոշակի հայեցողություն, որը պետք է իրացվի Օրենքի ընդհանուր

կարգավորումների և սնանկության ինստիտուտի նպատակների հաշվառմամբ:

Ի տարբերություն շարադրվածի՝ դատարանը բոլոր դեպքերում պետք է մերժի հաշվանցի դիմումը, եթե.

ա) պարտապանի նկատմամբ ունեցած պահանջը պարտատիրոջն է փոխանցվել այլ անձի կողմից՝ սնանկության դիմում ներկայացնելուն նախորդած 90 օրվա ընթացքում, և այդ ընթացքում պարտապանը անվճարունակ էր,

բ) պարտատերը պարտապանի նկատմամբ պարտավորությունն ստանձնել է սնանկության դիմում ներկայացնելուն նախորդած 90 օրվա ընթացքում՝ պարտապանի նկատմամբ իր ունեցած պահանջի հետ հաշվանց կատարելու նպատակով,

գ) հաշվանցի արդյունքում կխախտվի պահանջների բավարարման՝ օրենքով սահմանված հերթականությունը և համամասնությունը:

§ 4. Մորատորիումի խախտմամբ գույքի տնօրինման հետևանքները

Մորատորիումի բովանդակությունը կազմող պայմանների խախտումը կարող է այն կատարող անձանց համար առաջացնել տարատեսակ իրավական հետևանքներ: Այս առումով հատկապես ուշագրավ է ՀՀ քրեական օրենսգրքի 192-րդ հոդվածի 2-րդ մասը, որը քրեական պատասխանատվություն է սահմանում պարտապանի փաստացի անվճարունակության մասին իմացող պարտապան իրավաբանական անձի ղեկավարի կամ նրա հիմնադիրների (մասնակիցների) կամ նրան՝ կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող այլ անձանց կամ պարտապան ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից ակնհայտորեն ի վնաս այլ պարտատերերի առանձին պարտատերերի գույքային պահանջներին ապօրինի բավարարում տալու և, հավասարապես՝ պարտատիրոջ կողմից նման բավարարումն ընդունելու համար այն դեպքում, երբ պարտատերը տեղյակ է սնանկ պարտապանի կողմից ի վնաս այլ պարտատերերի իրեն տրված նախապատվության մասին, և եթե պարտապանին կամ պարտատերերին պատճառվել է խոշոր՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող գումարի չափով վնաս:

Բացի այդ, Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելուց հետո՝ մինչև նրա վերաբերյալ լուծարելու մասին որոշում ընդունելը, պարտապանի ղեկավարը գործում է կառավարչի համաձայնությամբ և նրա հսկողության ներքո: Պարտապանի ղեկավարին արգելվում է պարտապանի գույքը տնօրինելու կամ պարտապանի համար գույքային պարտավորություն առաջացնող ցանկացած գործողություն կատարել առանց կառավարչի թույլտվության:

Հասկանալի է, որ հիշատակված դրույթը գործում է մորատորիումի ընթացքում որոշակի գործողություններ թույլատրելու վերաբերյալ կարգավորումների հետ համակարգային ամբողջության մեջ, այսինքն՝ Օրենքով նախատեսված դեպքերում անհրաժեշտ է նաև մորատորիումի ընթացքում որոշակի գործողությունների կատարումը թույլատրելու մասին դատարանի որոշման առկայություն:

Այնումենայնիվ, անկախ նրանից, թե կոնկրետ դեպքում, բավարար է միայն ՍԿ թույլտվությունը, թե անհրաժեշտ է նաև մորատորիումի ընթացքում որոշակի գործողությունների կատարումը թույլատրելու մասին դատարանի որոշման առկայությունը՝ առանց ՍԿ թույլտվության պարտապանի գույքը տնօրինելու կամ պարտապանի համար գույքային պարտավորություն առաջացնող ցանկացած գործարք օրենսդիրը դիտարկել է առոչինչ՝ երաշխավորելով մորատորիումի բովանդակության անշեղ կենսագործումը:

ԳԼՈՒԽ 12. ՊԱՐՏԱՊԱՆԻ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

§1. Վիճարկելի գործարքների ընդհանուր բնութագիրը

Սնանկության ինստիտուտի նպատակների արդյունավետ կենսագործումը ենթադրում է ոչ միայն սնանկության վարույթի հարուցման պահին պարտապանի ունեցած գույքի արդյունավետ կառավարումը, այլև մինչև սնանկության վարույթի հարուցումը պարտապանի իրականացրած առանձին գործարքների դիտարկումը, որոնք պարտապանի գույքի նվազեցման կամ անհամաչափ նվազեցման ուժով սնանկության վարույթի համատեքստում խախտում են պարտապանի կամ պարտատերերի շահերը: Նման իրավիճակներ հնարավոր են, երբ պարտապանը գործարքի կատարմամբ առավելություն է տվել որևէ պարտատիրոջ, գործարքի կնքմամբ նպատակ է հետապնդել խուսափել իր պարտավորությունների կատարումից և այլն:

Հենց հիշատակված խնդրին է նվիրված մասնագիտական գրականության և միջազգային պրակտիկայում հայտնի՝ պարտապանի վիճարկելի գործարքների ինստիտուտը, որն, ի տարբերություն քաղաքացիաիրավական առումով վիճարկելի գործարքների, չի ենթադրում գործարքի՝ օրենքի խախտմամբ կնքված լինելու պայման: Ավելին, նման գործարքները կնքման պահին առերևույթ համապատասխանում են օրենքին և սնանկության վարույթում քննարկման առարկա են դառնում բացառապես սնանկության ինստիտուտի նպատակներին հակասելու հիմքով: Ընդ որում, դրանց առնչությամբ «վիճարկելի» եզրույթի կիրառումը կրում է

պայմանական բնույթ և պայմանավորված է այն հանգամանքով, որ գործարքի վիճարկումը առանձին դեպքերում հանդես է գալիս որպես պարտապանի՝ մինչև սնանկության վարույթի հարուցումը ունեցած գույքակազմի վերականգման միջոց[112]:

Օրենսդիրը վիճարկելի գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորել է Օրենքի 54-րդ հոդվածում, որի հիման վրա կարելի է դրանք պայմանականորեն բաժանել երեք խմբի.

1. պարտապանի անհատույց փոխանցումներ,
2. առավելություն տվող գործարքներ,
3. ոչ շահեկան գործարքներ:

Պարտապանի անհատույց փոխանցումները կարող են լինել ինչպես դրամային, այնպես ոչ դրամային, այդ թվում՝ ապրանքներ, արժեթղթեր, շարժական և անշարժ գույք[113]: Ընդ որում, այս խումբ գործարքների հիման վրա փոխանցված գույքը կարող է հետ պահանջվել պարտապանի հետ փոխկապակցված անձանցից, եթե փոխանցումը կատարվել է պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող հինգ տարվա ընթացքում, իսկ այլ անձանցից, եթե փոխանցումը կատարվել է պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող երեք տարվա ընթացքում:

«Առավելություն տվող» գործարքների շրջանակում ներառվում է երկու ենթախումբ գործարքներ: Դրանցից առաջինների շարքին են դասվում այն գործարքները, այդ թվում՝ ոչ դրամային, որոնք.

- կատարվել են սնանկության դիմում ներկայացնելուն նախորդած 90 օրվա ընթացքում կամ մեկ տարվա ընթացքում, եթե փոխանցումը կատարվել է փոխկապակցված անձին,

---

112 Առավել մանրամասն տես Վճռաբեկ դատարանը թիվ ԵՔԴ/1165/02/08 քաղաքացիական գործով 2012թ. հոկտեմբերի 19.10.2012թ. որոշումը:

113 Տե՛ս ՎԴ թիվ ԵԿԴ/2304/02/10 քաղաքացիական գործով 23.03.2012թ. որոշումը:

- կատարվել են պարտատիրոջը կամ վերջինիս օգտին նախկինում ստանձնած պարտավորության դիմաց,
- կատարելու պահին պարտապանը եղել է անվճարունակ,
- պարտատիրոջը տվել են էապես ավելին բավարարում նրա համեմատ, քան պարտատերը կստանար սնանկության վարույթում՝ պարտապանի լուծարման դեպքում:

Այնուամենայնիվ, անկախ հիշատակված պայմանների առկայությունից, Օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված դեպքերում գործարքը որպես առավելություն տվող չի կարող քննարկման առարկա դառնալ: Մասնավորապես, փոխանցված գույքը կամ դրա արժեքը չի կարող հետ պահանջվել, եթե.

ա

փոխանցման հետ միաժամանակ պարտատերը պարտապանին է փոխանցում համարժեք այլ գույք,

բ

պարտապանի կողմից պարտատիրոջ նկատմամբ նախկինում ստանձնած պարտավորության կատարումից հետո պարտատերը գրավի առարկա չհանդիսացող նոր գույք է փոխանցել պարտապանին,

գ

պարտապանն իր բնականոն գործունեության իրականացման ընթացքում կատարել է պարտատիրոջ նկատմամբ այդ ընթացքում ստանձնած պարտավորությունը, եթե այն կատարվել է գործարար շրջանառության սովորույթներին համապատասխան,

դ

փոխանցմամբ կատարվել է պարտատիրոջ նկատմամբ ստանձնած 200.000 դրամը չգերազանցող պարտավորություն,

ե

պարտապանի գույքի գրավի այն պայմանագրերը, որի արդյունքում չեն խախտվում չապահովված պարտատերերի իրավունքները (որի արդյունքում պարտապանի չապահովված պարտավորությունների արժեքը չի գերազանցի նրա գրավով չծանրաբեռնված գույքի արժեքից),

զ

փոխանցմամբ կատարվել են հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով պարտավորությունները, վարչական տուգանքի վճարումները:

Առավելություն տվող գործարքների հաջորդ ենթախումբն վերաբերում է պարտապանի և պարտատիրոջ միջև զուտացման համաձայնության և (կամ) ապահովության պայմանագրերի համաձայն բռնագանձված ապահովության առարկային, եթե միաժամանակ առկա են հետևյալ պայմանները.

- զուտացման համաձայնությունը և (կամ) ապահովության պայմանագիրը կնքվել է սնանկության դիմում դատարան ներկայացնելուն նախորդած 90 օրվա ընթացքում,
- կնքման պահին պարտապանի համար սնանկությունը կամ սնանկության հնարավորությունը կանխատեսելի էր,
- այդպիսի զուտացման համաձայնություն և (կամ) ապահովության պայմանագիր կնքելը չէր բխում պարտապանի շահերից և հետապնդում էր բացառապես ակտիվները սնանկության գործընթացից դուրս բերելու նպատակ:

Վիճարկելի գործարքների հաջորդ խումբը կազմում են պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող երեք տարվա ընթացքում կատարված գործարքները, փոխանցումները և գույքի օտարումները, որոնց արդյունքում պարտապանը կրել է վնասներ՝ գույքի, ծառայության, աշխատանքի իրացման արժեքի և գործարքի կատարման պահի դրությամբ դրա շուկայական արժեքի տարբերության հետևանքով, բացառությամբ եթե գործարքը կնքվել է հրապարակային սակարկության հիման վրա: Այլ կերպ ասած՝ այս խումբ գործարքների դեպքում առկա է գույքի իրացման արժեքի և գործարքի կատարման պահի դրությամբ դրա շուկայական արժեքի տարբերություն, որն էլ հանդիսանում է պարտապանի կրած «վնաս» [114]: Հենց վերջին հանգամանքն էլ պայմանավորում է քննարկվող խումբ գործարքների ոչ շահեկան բնույթը:

Բացի վերոհիշյալ պայմաններից, դատական պրակտիկայում ձևավորվել է հստակ դիրքորոշում այն կապակցությամբ, որ վիճարկելի գործարքների հիմքում պետք է ընկած լինի պարտատերերի նկատմամբ պարտավորության կատարումից չարամտորեն խուսափելու պարտապանի մտադրությունը[115]: Մասնավորապես, ՍԴ-ն, հաշվի առնելով թիվ ԵԿԴ/2304/02/10 և թիվ ԵՔԴ/1165/02/08 քաղաքացիական գործերով ՎԴ արտահայտած դիրքորոշումները, ինչպես նաև Ազգային ժողովի ներկայացրած բացատրությունը, նշել է, որ, ըստ էության, Ազգային ժողովը և ՎԴ-ն որպես վիճարկվող նորմի նպատակ են դիտարկում պարտատերերի նկատմամբ պարտավորության կատարումից չարամտորեն խուսափելը կանխելը, որով պետությունը թույլ չի տալիս խախտել պարտատերերի իրավունքը՝ դրանով իսկ պաշտպանելով այլոց՝ պարտատերերի հիմնական իրավունքները: Նշված նպատակին հասնելու համար, և՛ ըստ Ազգային ժողովի բացատրության, և՛ ըստ ՎԴ դիրքորոշման, որպես միջոց է դիտարկվում վիճարկվող դրույթում նկարագրված

[114] Տե՛ս ՎԴ թիվ ԵԿԴ/1446/02/13 քաղաքացիական գործով 28.12.2015թ. որոշումը:

[115] Տե՛ս ՍԴ 31.01.2017թ. թիվ ՍԴՈ-1340 որոշումը:

փոխանցումները հետ ստանալը, քանի որ դրանք փոխանցումներ են կամ փոխանցումների տեսակներ են, որոնք վկայում են կամ ակնհայտորեն վկայում են պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու պարտապանի մտադրության մասին:

Միաժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ, Օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, փոխանցված գույքը կամ դրա արժեքը չի կարող հետ պահանջվել, եթե դրանք փոխանցվել են բանկի կամ վարկային կազմակերպության ապահովված պահանջների բավարարման համար այդ գույքի հետ կապված գործարքների կատարման արդյունքում: Այսինքն, անկախ վիճարկելի գործարքի համար վերոնշյալ պայմանների առկայությունից, կոնկրետ դեպքում օրենսդիրը սահմանափակել է այն հետ ստանալու հնարավորությունը:

§2. Վիճարկելի գործարքների արդյունքում նվազած պարտապանի գույքակազմի վերականգնման կարգը

Վիճարկելի գործարքների արդյունքում նվազած պարտապանի գույքի վերականգման գործառույթը օրենսդիրը վերապահել է ՍԿ-ին: Մասնավորապես, Օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ կառավարիչը պարտատերերի պահանջների վերջնական ցուցակի հաստատումից հետո՝ վեց ամսվա ընթացքում, դիմում է դատարան դատական կարգով հետ ստանալու փոխանցումները:

Հատկանշական է, որ Օրենքի փոփոխություններով դատարան դիմելու նախկին մեկ տարվա ժամկետը փոխարինվել է վեցամսյա ժամկետով: Բացի այդ, վերանայվել է նաև նման պահանջներով դատարան դիմելու ժամկետի մեկնարկի պահը: Այսպես, նախկին խմբագրությամբ Օրենքով դատարան դիմելու մեկ տարվա ժամկետը հաշվարկվում էր սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից: Այժմ վեցամսյա ժամկետը հաշվարկվում է պարտատերերի պահանջների վերջնական ցուցակի հաստատելու պահից: Նման փոփոխության նպատակն, ըստ էության, այն է, որ սնանկ ճանաչելուց հետո վարույթի վաղ փուլերում գործնականում հնարավոր չէ պատկերացում կազմել ոչ միայն ընդհանրապես նման գործարքների առկայության, այլ դրանց վիճարկման քայլին դիմելու նպատակահարմարության և անհրաժեշտության մասին, քանի դեռ պարտատերերի քանակի, պահանջների չափի և դրանց բավարարման համար անհրաժեշտ գույքի մասին ընդհանուր պատկերն առկա չէ: Իսկ դրանք կարող են հնարավորինս պարզ դառնալ պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծությունից, որտեղ նաև վեր են հանվելու Օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված գործարքների առկայության մասին տեղեկությունները:

Ուշագրավ է նաև այն, որ Օրենքի նախկին խմբագրությունից հետևում էր, որ այս մեխանիզմը կիրառելը թողնված էր կառավարչի հայեցողությանը, որի չիրականացումը կարող էր վնաս պատճառել պարտատերերին, իսկ որոշ դեպքերում՝ նաև պարտապանին: Այժմ, ինչպես բխում է Օրենքի ձևակերպումից, նման հայցով դատարան դիմելը ՍԿ համար պարտականություն է՝ բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքի: Խոսքը վերաբերում է Օրենքի 54-րդ հոդվածի 1.1-ին մասին, ըստ որի՝ կառավարիչը փոխանցումները հետ ստանալու պահանջով դիմում է դատարան, եթե առկա չէ կոնկրետ պահանջով դատարան դիմելուց ձեռնպահ մնալու մասին պարտատերերի ժողովի որոշումը: Ընդ որում, նման որոշում կարող է կայացվել, եթե նույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջով դատարան դիմելու արդյունքում կառավարչի կողմից կատարվելիք ծախսերը ողջամտորեն կարող են գերազանցել հետ ստացվող փոխանցման արժեքը (գինը):

Շարադրվածի համատեքստում հարկ է, սակայն, ընդգծել, որ ՍԿ կողմից հայցի հարուցման պարտականությունը ծագում է ոչ թե վիճարկելի գործարքի վերաբերյալ ենթադրության, այլ նման պահանջի ծագման համար անհրաժեշտ փաստերի առկայության և փոխանցման վերադարձը բացառող պայմանների բացակայության դեպքում: Ընդ որում, ի տարբերություն պարտապանի գույքակազմի վրա ազդեցություն ունեցող գործերի համար սահմանված հատուկ կանոնի, ՍԿ կողմից հարուցվող հայցերով գործերը օրենսդիրը չի ներառել առանձին քաղաքացիական գործերի շրջանակում: Այսինքն՝ այս գործերը ենթակա են քննության ԸՀԴ-ում:

ԳԼՈՒԽ 13. ՊԱՐՏԱՊԱՆԻ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ

§1. Պարտապանի համար կենսական նշանակություն ունեցող պայմանագրերը

Պարտապանի ընթացիկ պայմանագրերի գործողությունը սնանկության վարույթում մի կողմից կարող է հանգեցնել պարտապանի գույքի նվազման, իսկ մյուս կողմից դրանց դադարեցումը կարող է խաթարել պարտապանի բնականոն գործունեության հնարավորությունը կամ առաջացնել այլ բարենպաստ հետևանքներ: Դա է պատճառը, որ օրենսդիրը թույլատրել է այն պայմանագրերի հետագա գործողությունը, որոնք ունեն կենսական նշանակություն առաջին հերթին պարտապանի գործունեության համար:

Այսպես, Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանին կոմունալ ծառայություններ (էլեկտրաէներգիա, բնական գազ, ջուր, հեռախոսակապ և այլն) մատուցող կազմակերպությունները չեն կարող հրաժարվել, մերժել, դադարեցնել իրենց ծառայությունների մատուցումը պարտապանին դատարանի կողմից նրան սնանկ ճանաչելու պատճառով, եթե պարտապանը սնանկ ճանաչվելուց հետո ժամանակին կատարում է նշված ծառայությունների դիմաց ընթացիկ վճարումները: Ընդ որում, Օրենքը սահմանում է երաշխիք առ այն, որ մինչև պարտապանին սնանկ ճանաչելն առաջացած պարտքի առկայությունը չի կարող հիմք հանդիսանալ կոմունալ ծառայությունների տրամադրման պայմանագրի լուծման կամ ծառայությունների դադարեցման համար:

Հարկ է նշել, որ մինչև Օրենքի փոփոխությունները պարտապանի համար կենսական նշանակություն ունեցող պայմանագրերի շարքին օրենսդիրը դասում էր միայն պարտապանին կոմունալ ծառա-

յություններ մատուցելուն ուղղված պայմանագրերը: Այնինչ միայն կոմունալ ծառայությունները բավարար չէ պարատապանի գոյության համար կենսական ծառայությունների շրջանակը որոշելու համար, ավելին՝ պարտապանի գործունեության համար կենսական կարող են լինել նաև և հատկապես որոշ ապրանքների մատակարարումները, որոնց ուղղված պայմանագրերի շարունակականությունն ապահովելը հենց բխում է միջազգային լավագույն փորձից:

Հիշատակվածի հաշվառմամբ՝ Օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է, որ ՍԿ պահանջով և դատարանի որոշմամբ պարտապանի գործունեությունը շարունակելու համար կենսական նշանակություն ունեցող ապրանքների և ծառայությունների մատուցմանն ուղղված պայմանագրերը չեն ընդգրկվում մորատորիումի սահմանափակումների ներքո, և դրանցից բխող վճարումները կատարում է կառավարիչը՝ որպես վարչական ծախսեր:

Ակնհայտ է, որ ապրանքների և ծառայությունների՝ պարտապանի համար կենսական նշանակություն ունենալու հանգամանքը, ի տարբերություն կոմունալ ծառայությունների, գնահատողական կատեգորիա է, և այդ ապրանքների և ծառայությունների՝ պարտապանի համար կենսական նշանակություն ունենալը ենթակա է ՍԿ կողմից հիմնավորման՝ հաշվի առնելով պարտապանի գործունեության բնույթը: Այսպես, օրինակ՝ այդպիսին կարող է դիտարկվել ալյուրի մատակարարումը հացաբուլկեղենի արտադրության համար կամ թղթի մատակարարումը հրատարակչական գործունեություն իրականացնողի համար:

Այդուհանդերձ, օրենսդիրը կոմունալ ծառայություն չհանդիսացող կենսական նշանակություն ունեցող այլ ծառայությունների և ապրանքների կենսականությունը որոշելու հանգամանքը չի պայմանավորել միայն ՍԿ հիմնավորմամբ: Մասնավորապես, Օրենքը ամրագրում է լրացուցիչ պայման առ այն, որ նախ ՍԿ-ն պետք է նման պայմանագրերի գոյության փաստը ամրագրի պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծության մեջ և համապատասխան հիմնավորումներով պայմանագրի օրինակը ներկայացնի

դատարանի հաստատմանը, իսկ դատարանն էլ իր որոշմամբ պետք է գնահատի այդ պայմանագրի համապատասխանությունը Օրենքի պահանջներին, որից հետո միայն այդ պայմանագրերի գործողությունը կարող է շարունակվել:

Բացի վերոնշյալ դեպքից, օրենսդիրը, ըստ էության, նախատեսել է պարտապանի համար կենսական նշանակություն ունեցող պայմանագրերի գործողության ևս մեկ կանոն: Խոսքը վերաբերում է Օրենքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությանը, որի համաձայն՝ պարտապանի ղեկավարը, մինչև վերջինիս գործունեության կասեցումը, կառավարչի առաջարկությամբ և դատարանի որոշմամբ կարող է շարունակել պարտապանի գործունեության արդյունք հանդիսացող գույքի իրացումը, ծառայությունների մատուցումը կամ աշխատանքների կատարումը, եթե նման գործառնությունների դադարեցումը կհանգեցնի պարտապանի գործունեության խաթարման, դադարման կամ կարող է առաջացնել պարտապանի համար այլ անբարենպաստ հետևանքներ:

Այսպիսով, պետք է եզրահանգել, որ օրենսդիրը, որպես ընդհանուր կանոն, ամրագրել է պարտապանի համար կենսական նշանակություն ունեցող պայմանագրերի շարունակականության գաղափարը՝ նպատակ ունենալով երաշխավորել սնանկության նպատակների իրականացման համար անհրաժեշտ նախադրյալներ:

§2. Պարտապանի ընթացիկ պայմանագրերից բխող պարտավորությունների դադարումը և դադարեցումը

Պարտապանի ընթացիկ պայմանագրերից բխող պարտավորությունները, որոնք պարտապանի համար չունեն կենսական նշանակություն, սնանկության փաստով ենթակա են կամ կարող են լուծվել: Ընդ որում, Օրենքը սահմանում է պարտապանի պայմանագրերի լուծման հետևյալ ռեժիմները.

1. Պայմանագրի լուծումը Օրենքի ուժով,
2. Պայմանագրի լուծումը կոնտրագենտի հայեցողությամբ,
3. Պայմանագրի լուծումը դատարանի որոշմամբ:

Օրենքի ուժով լուծվում են գույք օտարելու պայմանագրերը: Այսպես, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գույքն օտարելու պայմանագրային պարտավորությունները պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից չեն կարող կատարվել: Դա մի կողմից բխում է այն մոտեցումից, որ պարտապանի գույքակազմը պետք է մնա անձեռնմխելի և օգտագործվի բացառապես սնանկության վարույթի նպատակներով՝ պարտապանի առողջացման կամ լուծարման դեպքում պարտատերերի պահանջների բավարարման համար, իսկ մյուս կողմից Օրենքի 19-րդ հոդվածի ուժով դատարանը պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց արգելանք է դնում պարտապանին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա:

Միաժամանակ, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է բացառություններ այն դեպքերում, երբ ՍԿ միջնորդության հիման վրա դատարանի որոշմամբ թույլատրվում է գույքն օտարելու պարտապանի պարտավորության կատարումը, սակայն միայն հստակ սահմաններում, այն է՝ պարտապանի գործունեության, գույքի,

գործարքի առանձնահատկություններից և այլ հանգամանքներից ելնելով: Այդպիսի բացառիկ դեպքեր կարող են լինել, օրինակ երբ գույքի արժեքն առավել ցածր է, քան դրա պահպանման ծախսերը կամ երբ այդ պայմանագիրը չկատարելուց բխող հնարավոր պահանջները կարող են շատ ավելի մեծ լինել, քան այդ գույքի արժեքն է կամ երբ գույքի օտարումը կարող է հանգեցնել պարտապանի հետագա գործունեության համար այլ ներդրումների և այլն:

Օրենքի ուժով ենթակա են լուծման նաև պարտապանի՝ որպես գործատու կնքած աշխատանքային պայմանագրերը: Այս առումով Օրենքը հատուկ կարգավորումներ չի սահմանում և միայն Օրենքի 50-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է, որ պարտապանի աշխատանքային պայմանագրերը լուծվում են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ուշագրավ է, որ մինչև 2010 թվականի հունիսի 24-ի փոփոխությունները ՀՀ աշխատանքային օրենսգիրքը[116] սահմանում էր գործատուի սնանկության դեպքում աշխատանքային պայմանագրերը լուծելու հատուկ հիմք և հնարավորություն, ավելին՝ օրենսգրքի 114-րդ հոդվածով նախատեսված՝ գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու արգելքը չէր գործում գործատուի սնանկության դեպքում: Այժմ օրենսգիրքը այս կարգավորումներից օգտվելու հնարավորությունը նախատեսում է լուծարման պահից:

Կոնտրագենտի հայեցողությամբ պայմանագրերի լուծման դեպքերը նախատեսված են Օրենքի 51-րդ և 53-րդ հոդվածներով: Այսպես, Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտատիրոջ կողմից պարտապանին վաճառված գույքի նկատմամբ պահանջը գրանցելու պահին պարտապանը ձեռք չի բերել սեփականության իրավունք, ապա պարտատերը կարող է այն հետ ստանալ կամ չհանձնել պարտապանին: Նույն կերպ Օրենքի

[116] Ընդունվել է 09.11.2004թ.: Ուժի մեջ է մտել 21.06.2005թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2004.12.21/69(368) Հոդ.1385:

53-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ եթե պարտապանին սնանկ ճանաչելուց հետո պայմանագրի մյուս կողմը համաձայն է պարտապանի՝ ծառայություններ մատուցելու պայմանագրային պարտավորություններն ընդունել, ապա պարտապանը կարող է կառավարչի հսկողությամբ իրականացնել այդ ծառայությունները՝ մինչև պարտապանի լուծարումը: Ընդ որում, եթե կառավարիչը գտնում է ոչ նպատակահարմար պարտապանի՝ Օրենքի 53-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված պայմանագրային պարտավորությունների կատարումը, ապա այդ պայմանագրերից բխող պահանջները բավարարվում են Օրենքով սահմանված կարգով:

Դատարանի որոշմամբ պարտապանի պայմանագրերի լուծման հետ կապված հարաբերությունները կարգավորված են Օրենքի 45-րդ հոդվածում: Նշյալ նորմը սահմանում է, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ 2 ամսվա ընթացքում, կառավարչի միջնորդությամբ, դատարանի որոշմամբ կարող են լուծվել պարտապանի կողմից կնքված և կատարման ժամկետը չլրացած պայմանագրերը, որոնք երկու կողմից էլ ամբողջությամբ դեռ չեն կատարվել, ներառյալ՝ պարտապանի գույքի և ակտիվների վրա էականորեն ազդող այն պայմանագրերը, որոնք պարտապանը ստիպված կնքել է ծանր հանգամանքների բերումով իր համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններով, որից օգտվել է մյուս կողմը: Այսինքն՝ այս հիմքով պայմանագիրը կարող է լուծվել, եթե.

1. պայմանագրի կատարման ժամկետը չի լրացել,
2. պայմանագիրը երկու կողմից էլ դեռ ամբողջությամբ կատարված չէ,
3. պայմանագիրը լուծելու միջնորդությունը ՍԿ կողմից ներկայացվել է պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ 2 ամսվա ընթացքում:

Դատարանի որոշմամբ պայմանագրերի լուծման հարցը քննարկելիս հատկապես ուշադրության արժանի է պարտապանի համար «վնասակար» գործարքների հասկացությունը, որը նաև առկա է միջազգային փորձում[117]:

ՀՀ օրենսդրությունը ծանրաբեռնող պայմանագրերի կոնցեպտը դիտարկել է ծայրահեղ ծանր պայմաններով կնքված գործարքների համատեքստում: Մասնավորապես, Օրենքի փոփոխությունների արդյունքում Օրենքի 45-րդ հոդվածում հստակեցվել է, որ պայմանագրերը լուծելու պարտապանի իրավունքը տարածվում է նաև պարտապանի գույքի և ակտիվների վրա էականորեն ազդող այն պայմանագրերի նկատմամբ, որոնք պարտապանը ստիպված կնքել է ծանր հանգամանքների բերումով իր համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններով, որից օգտվել է մյուս կողմը: Ենթադրվում է, որ նման պայմանագրերը լուծելու մասին միջնորդությամբ հանդես գալու դեպքում կառավարիչը պետք է հիմնավորի նաև, որ նման պայմանագրերը «ծանրաբեռնող» պայմանագրեր են, էականորեն ազդում են կամ կարող են ազդել պարտապանի գույքի և ակտիվների վրա, այսինքն՝ դրանց կատարումը ավելի շատ բացասական ազդեցություն կունենա պարտապանի գույքակազմի վրա, քան այն արժեքն է, որ այդ պայմանագիրը կարող էր ունենալ կամ ուներ պարտապանի գույքակազմում: Ընդ որում, քանի որ խոսքը այստեղ գնում է ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններով կնքված գործարքի մասին, որից օգտվել է մյուս կողմը, ապա դատարանները այս պայմանագրերի՝ Օրենքի 45-րդ հոդվածի չափանիշներին

---

[117] Մասնավորապես, ըստ Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» (Doing Business) զեկույցի մեթոդոլոգիայի՝ պարտապանը պետք է հնարավորություն ունենա հրաժարվելու այն պայմանագրերից, որոնք տվյալ պահին «չափացանց ծանրաբեռնող» (overly burdensome) կարող են լինել պարտապանի համար: Պայմանագրի արդյունավետության տեսանկյունից, ծանրաբեռնող պայմանագրերից հրաժարվելն արդյունավետ է այն դեպքերում, երբ դրա կատարումը նվազ արժեք է բերում: Այս պարագայում պայմանագրերը կհամարվեն ծանրաբեռնող, երբ դրանց կատարմանն ուղղված ծախսերը գերազանցում են այն պայմանագրի և դրա կատարման արժեքը:

համապատասխանությունը գնահատելիս պետք է առաջնորդվեն այն չափանիշներով, որոնք կիրառվում են դատական պրակտիկայում՝ Օրենսգրքի 313-րդ հոդվածով նախատեսված՝ ստրկացուցիչ գործարքի հիմքով գործարքի անվավերությունը ճանաչելիս:

Միաժամանակ, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ կատարման ժամկետը չլրացած պայմանագրերը բոլոր դեպքերում գործում են մինչև պարտապանի գործունեության կասեցումը: Այսինքն՝ անկախ նրանից, թե ՍԿ այդ պայմանագրերը լուծելու միջնորդությամբ հանդես չի եկել, կամ այդ միջնորդությունը դատարանի կողմից մերժվել է, այսպիսի պայմանագրերի գործողությունը օրենքի ուժով դադարում է պարտապանի գործունեության կասեցման պահից:

Վերոշարադրյալի համատեքստում կարևոր է արձանագրել, որ օրենսդիրը հավասարակշռել է նաև պարտապանի հետ պայմանագիր կնքած կողմերի շահերը: Մասնավորապես, նրանք ստանում են պայմանագրի լուծմամբ պատճառված վնասները և վճարման ենթակա այլ գումարները սնանկության վարույթում ստանալու հնարավորություն:

ՄԱՍ VII. ՊԱՐՏԱՊԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԵՎ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 14. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ

§1. Ֆինանսական առողջացման վարույթի ընդհանուր բնութագիրը

Ֆինանսական առողջացման վարույթը պարտապանի անվճարունակության վերականգնմանն ուղղված ինքնուրույն ընթացակարգ է: Այն հնարավորություն է տալիս պարտապանին դուրս գալ ֆինանսական ճգնաժամից՝ իր ներքին ռեսուրսների և (կամ) արտաքին միջոցների ներգրավման շնորհիվ՝ միաժամանակ պարտատերերին համապատասխան իրավական երաշխիքներ տրամադրելու միջոցով և իրականացվում է պարտատերերի ու դատարանի հսկողության ներքո[118]:

---

[118] Առավել մանրամասն տե՛ս **Бородкин В.Г.** Введение финансового оздоровления и столкновение конкурирующих интересов // Право и экономика. 2014. № 11. էջեր 25–26; Несостоятельность (банкротство): Научно-практический комментарий новелл законодательства и практики его применения / Под ред. **В.В. Витрянского.** М.: Статут, 2010 (автор главы – С.В. Сарбаш), էջ 142; **Карелина С.А.** Принципы правового регулирования отношений, возникающих в связи с несостоятельностью (банкротством) должника // Предпринимательское право. 2008. № 2.; **Карелина С.А.** Правовое регулирование несостоятельности (банкротства): Учебно-практич. пособие. М., 2007, էջ 142:

Ֆինանսական առողջացման կարևորությունը բացատրվում է նրանով, որ այն համարվում է հենց սնանկության առաջնային նպատակ. անձին սնանկ ճանաչելու նպատակը քաղաքացիական շրջանառության կայունության ապահովումն է՝ այդ շրջանառության անվճարունակ մասնակիցներին ֆինանսապես առողջացնելու կամ նրանց քաղաքացիական շրջանառությունից դուրս մղելու նպատակով, որպեսզի վերջիններիս անվճարունակության հետևանքով չտնահարվեն նաև քաղաքացիական շրջանառության մնացած մասնակիցների շահերը[119]:

Ֆինանսական առողջացման վարույթը իրենից ներկայացնում է պարտապանի ֆինանսական դրության վերականգնմանն ուղղված միջոցառումների ու գործիքների համալիր և ցանկալի այլընտրանք լուծարման վարույթին: Ընդ որում, ֆինանսական առողջացման վարույթի շրջանակներում պարտատերերի պահանջների բավարարումն իրականացվում է այնպես, որ հնարավոր լինի ֆինանսապես առողջացնել սնանկ ճանաչված պարտապանին[120]: Այսինքն, ֆինանսական առողջացման վարույթը սնանկության ողջ վարույթի առանցքային փուլերից է, որը պայմանավորված է սնանկության վարույթի առանձնահատկությամբ, այն է՝ հնարավորություն տալ բարեխիղճ և պարտաճանաչ պարտապանին հաղթահարել ֆինանսական դժվարությունները, վերականգնել իր բնականոն գործունեությունը՝ միևնույն ժամանակ ապահովելով պարտատերերի շահերի պաշտպանությունը[121]:

---

[119] Տե՛ս ՎԴ թիվ ԵՄԴ/0049/04/15 սնանկության գործով 07.04.2017թ. որոշումը:

[120] Տե՛ս ՎԴ թիվ ԵԱՔԴ/0254/02/16 քաղաքացիական գործով 27.12.2017թ. որոշումը:

[121] Տե՛ս ՎԴ թիվ ԱՐԱԴ/0043/04/13 սնանկության գործով 27.12.2017թ. որոշումը:

Այսպիսով, ֆինանսական առողջացման վարույթը հետապնդում է հետևյալ անմիջական նպատակները.

կարգավորել շահերի բախումը պարտապանի և պարտատերերի միջև՝ միաժամանակ պարտապանին հնարավորություն տալով իրականացնելու իր հետագա տնտեսական գործունեությունը[122],

առավելագույնս բավարարել պարտատերերի պահանջները՝ ապահովելով առավել լավ արդյունք, քան պարտապանի լուծարման դեպքում կլինի,

պահպանել կենսունակ բիզնես գործունեությունը՝ դրանով նաև պահպանելով աշխատատեղերը և առևտրային կապերը մատակարարների հետ[123]:

Օրենքի ընդհանուր վերլուծությունից կարելի է բխեցնել ֆինանսական առողջացման վարույթի հետևյալ հիմնական տարրերը.

- ֆինանսական առողջացման ծրագրի բովանդակության և նախատեսվելիք միջոցառումների շրջանակի որոշումը,
- ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացումը, քվեարկությունը և հաստատումը,
- ֆինանսական առողջացման ծրագրի իրագործումը և վերահսկողությունը դրա նկատմամբ,
- ֆինանսական առողջացման վարույթի ավարտին պարտապանի առողջացման հանգամանքի հաստատումը կամ նրա ուղղորդումը դեպի լուծարման վարույթ:

---

122 Տե՛ս Несостоятельность (банкротство): Учебный курс. В 2 т. / Под ред. д.ю.н., проф. **С.А. Карелиной.** Т. 1. – М.: Статут, 2019, էջ 618:

123 Տե՛ս UNCITRAL Legislative Guide on Insolvency Law, էջ 209, § 3:

§2. Ֆինանսական վիճակի վերլուծությունը՝ որպես պարտապանի ֆինանսական առողջացման հնարավորության գնահատման միջոց

Պարտապանի ֆինանսատնտեսական վիճակի վերլուծության կանոնավոր իրականացումը անհրաժեշտ է ինչպես անվճարունակությունը կանխելու, այնպես էլ սնանկության ընթացակարգերի իրականացման շրջանակներում:

Պարտապանի ֆինանսատնտեսական իրավիճակի վերլուծության նշանակությունը կարևորվում է նրանով, որ որքանով ճիշտ են ախտորոշվում ու դասակարգվում առողջ և մրցունակ կազմակերպությունները իսկապես սնանկ կազմակերպություններից, այդքանով մեծանում է հավանականությունը խուսափելու սնանկության գործընթացում ընդգրկվելուց, առավել ևս սնանկության հետևանքով լուծարվելուց, ինչը նախապայման է դառնում սնակության դեպքերը սահմանափակելու, դրանով իսկ հասարակությանը հասցվող մարդկային, նյութական ու ֆինանսական վնասները նվազագույնի հասցնելու համար[124]:

Ֆինանսական առողջացման շրջանակներում ֆինանսական վիճակի վերլուծությունը կարող է կիրառվել հետևյալ նպատակներով.

- գնահատել ֆինանսական առողջացման ծրագրի իրատեսականությունը և իրագործելությունը,
- որոշել ծրագրի ցուցանիշների ձեռքբերման և պարտքի մարման ժամանակացույցի պահպանման մակարդակը,

[124] Տե՛ս **Վ. Սարգսյան** «Սնանկության կառավարման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում (ոչ ֆինանսական հատվածի առևտրային կազմակերպությունների օրինակով, տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2020, էջ 18:

- արտաքին եւ ներքին պայմանների փոփոխության կապակցությամբ գնահատել ֆինանսական առողջացման ծրագրի եւ պարտքի մարման ժամանակացույցի փոփոխման նպատակահարմարությունը,
- վերահսկել պարտատերերի պահանջներով ընթացիկ վճարումների ժամանակին իրականացումը,
- ներկայացնել պարտքի մարման ժամանակացույցի կատարման վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն պարտատերերի ժողովին (խորհրդին)[125]:

Հարկ է նկատել, որ Օրենքը ևս կարևոր տեղ է հատկացնում պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծությանը՝ այդ պարտականությունը դնելով սնանկության գործով կառավարչի վրա: Այն շատ կարևոր նշանակություն ունի հենց ֆինանսական առողջացման հնարավորությունը գնահատելու, ինչպես նաև առողջացման ծրագիր մշակելու համար: Այսպես, նախ Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետը սահմանում է, որ կառավարիչը վերլուծում է.

- պարտապանի ֆինանսական վիճակը,
- սնանկության պատճառները,
- պարտապանի ֆինանսական, տնտեսական և ներդրումային գործունեությունը և նրա դրությունն ապրանքային շուկայում:

Բացի այդ, առանձնակի կարևորություն տալով այս գործիքին, Օրենքի 58-րդ հոդվածը պարտականություն է սահմանում կառավարչի համար՝ պարտապանին սնանկ ճանաչելուց հետո՝ 35 օրվա ընթացքում դատարան ներկայացնելու պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծությունը, ընդ որում՝ պարտապանի գործունեությունը բազմաբնույթ լինելու և մեծ ծավալներ ունենալու

---

[125] Տե՛ս Несостоятельность (банкротство): Учебный курс. В 2 т. / Под ред. д.ю.н., проф. **С.А. Карелиной**. Т. 1. – М.: Статут, 2019, էջ 469:

կամ այլ հարգելի պատճառների առկայության դեպքում դատարանը հնարավորություն ունի երկարաձգել ֆինանսական վիճակի վերլուծությունը ներկայացնելու ժամկետը ողջամիտ ժամկետով:

Օրենքը սահմանում է այն նվազագույն տվյալները, որ պետք է պարունակի պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծությունը, մասնավորապես, տեղեկություններ.

- սնանկության պատճառների մասին,
- դատական ծախսերի փոխհատուցման և կառավարչի վարձատրության համար պարտապանի միջոցների բավարար լինելու մասին,
- պարտապանի վճարունակության վերականգնման հնարավորությունների մասին,
- պարտապանի դեբիտորական պարտավորությունների հավաքման հնարավորության մասին,
- Օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պայմանագրերի մասին,
- Օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված գործարքների մասին,
- կեղծ կամ կանխամտածված սնանկության հատկանիշների առկայության, ինչպես նաև սնանկության վարույթը ֆինանսական առողջացմամբ ավարտելու հնարավորության մասին:

Այստեղ հարկ է հատուկ ուշադրություն դարձնել երկու հանգամանքի վրա. նախ այն, որ ֆինանսական վիճակի վերլուծությամբ սնանկության գործով կառավարիչը պետք է գա եզրահանգման պարտապանի վճարունակության վերականգնման հնարավորությունների մասին, ինչպես նաև սնանկության վարույթը ֆինանսական առողջացմամբ ավարտելու հնարավորության մասին: Ահա այս երկու կարևոր կետերն են, որ ընդգծում են ֆինանսական վիճակի վերլուծության և կառավարչի դերը ֆինանսական առողջացման հիմքերը ստեղծելու հարցում:

Հատկանշական է նաև, որ Օրենքի փոփոխությունների արդյունքում Նախարարի 2020 թ. մարտի 12-ի N 107-Ն հրամանով[126] սահմանվել է պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծության ձևը և բովանդակությունը: Ըստ այդմ՝ պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծությունում շարադրվում են.

Սնանկության պատճառները, որի շրջանակներում շարադրվում են այն հանգամանքները, որոնք, կառավարչի եզրահանգմամբ, հանգեցրել են պարտապանի սնանկության:

Դատական ծախսերի փոխհատուցման համար պարտապանի միջոցների բավարար լինելը, որի շրջանակներում շարադրվում են վերլուծությունները, որոնց հիման վրա եզրահանգում է կատարվել դատական ծախսերի փոխհատուցման հնարավորության վերաբերյալ, ինչպես նաև, արվում են եզրահանգումներ դատական ծախսերի փոխհատուցման հնարավորության վերաբերյալ:

Կառավարչի վարձատրության համար պարտապանի միջոցների բավարար լինելը, որի շրջանակներում շարադրվում են վերլուծությունները, որոնց հիման վրա եզրահանգում է կատարվել կառավարչի վարձատրության համար պարտապանի միջոցների բավարար լինելու հնարավորության վերաբերյալ, ինչպես նաև, արվում են եզրահանգումներ կառավարչի վարձատրության համար պարտապանի միջոցների բավարար լինելու հնարավորության վերաբերյալ:

[126] Ուժի մեջ է մտել 15.04.2020թ.: Տե՛ս ՀՀԳՏ 2020.03.20/10(678) Հոդ.70:

Պարտապանի դեբիտորական պարտավորությունները, որի շրջանակներում շարադրվում է պարտապանի դեբիտորական պարտավորությունների ընդհանուր նկարագիրը՝ դեբիտորների թիվը, պարտքի չափը, պարտքի առաջացման հիմքերը, պատճառները, հայցային վաղեմության ժամկետն անցած լինելու հանգամանքը, դրա պատճառը և այլն, դեբիտորական պարտավորությունների հավաքագրման ուղղությամբ իրականացվելիք գործողությունները, վերլուծություններ և եզրահանգում՝ դրանց հավաքագրման հնարավորությունների վերաբերյալ:

Օրենքի 49-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ պարտապանի՝ կենսական նշանակություն ունեցող ապրանքների և ծառայությունների մատուցմանն ուղղված պայմանագրերը, որի շրջանակներում շարադրվում են պարտապանի՝ կենսական նշանակություն ունեցող ապրանքների և ծառայությունների մատուցմանն ուղղված պայմանագրերի նկարագիրը, դրանցից յուրաքանչյուրի մասով՝ հիմնավորում պարտապանի համար կենսական նշանակություն ունենալու հանգամանքի վերաբերյալ, եզրահանգում՝ դրանք հաստատելու նպատակով դատարան ներկայացնելու անհրաժեշտության և հնարավորության մասին՝ նշելով հաստատվելու դեպքում այդ պայմանագրերով սահմանված վճարումների կատարման աղբյուրները և կարգը):

Օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված գործարքները (երրորդ անձանց կատարված փոխանցումների և գույքի օտարումների վերաբերյալ գործարքներ), որի շրջանակներում շարադրվում են պարտապանի կողմից իրականացված՝ Օրենքի 54-րդ հոդվածով սահմանված գործարքների նկարագիրը, յուրաքանչյուր գործարքի մասով վերլուծություններ դատարան դիմելու համար իրականացվելիք գործողությունների, ինչպես նաև դատական պրակտիկայի հաշվառմամբ՝ ակնկալվող հնարավոր դատական ակտի մասին:

Դատարանում պարտապանի մասնակցությամբ գույքային (դրամական) բնույթի պահանջներով հարուցված և քննվող քաղաքացիական գործերը, որի շրջանակներում շարադրվում են պարտապանի մասնակցությամբ, այդ թվում՝ Օրենքի 4-րդ հոդվածի իմաստով ՍՆԴ ենթակա գույքային (դրամական) բնույթի պահանջներով հարուցված և քննվող քաղաքացիական գործերի առկայության վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև այդ գործերի շրջանակներում վիճելի իրավահարաբերությունների նկարագիրը, վերլուծություններ դրանց լուծման ուղղությունների և հնարավորությունների վերաբերյալ):

Որպես եզրահանգում՝ վերլուծության մեջ նշվում են.

Կեղծ կամ կանխամտածված սնանկության հատկանիշների առկայությունը, որի շրջանակներում կատարվում են վերլուծություններ և եզրահանգում՝ կեղծ կամ կանխամտածված սնանկության հատկանիշների առկայության կամ բացակայության վերաբերյալ, առկայության դեպքում՝ իրականացվելիք գործողությունները,

Պարտապանի վճարունակության վերականգնման հնարավորությունները, որի շրջանակներուում շարադրվում են պարտապանի, պարտատերերի կամ կառավարչի կողմից ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու մտադրության մասին, վերլուծություններ, որոնց հիման վրա եզրահանգում է կատարվել պարտապանի վճարունակության վերականգնման հնարավորության վերաբերյալ, ինչպես նաև, որպես եզրահանգում՝ նշվում է պարտապանի վճարունակության վերականգնման և սնանկության վարույթը ֆինանսական առողջացմամբ ավարտելու հնարավորության վերաբերյալ),

Այլ վերլուծություններ և եզրահանգումներ:

§3. Ֆինանսական առողջացման ծրագիրը և դրա բովանդակությունը

Ֆինանսական առողջացման ծրագիրը, ըստ էության, ֆինանսական առողջացման վարույթի մեկնարկի համար անհրաժեշտ և գլխավոր նախապայմանն է: Ընդ որում, խոսքը վերաբերում է Օրենքի պահանջներին համապատասխան կազմված և սահմանված կարգով ընդունված և հաստատված առողջացման ծրագրի մասին: Ֆինանսական առողջացման ծրագիրն այն փաստաթուղթն է, որով, կարելի է ասել, կանխորոշվում է ֆինանսական առողջացման վարույթի ողջ ընթացքը. սահմանվում են այն պայմանները, որոնք անհրաժեշտ են լինելու ապահովել, և այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ են լինելու իրագործել պարտապանի ֆինանսական առողջացման համար, նախատեսվում են պարտապանի գործունեության անհրաժեշտ պայմաններն ու ուղղությունները, պարտատերերի պահանջների բավարարման վերաբերյալ գնահատականները, կառավարչի վարձատրությունը, այսինքն՝ այն ողջ տեղեկատվական բազան, որով պետք է շարժվեն պարտապանն ու շահագրգիռ մյուս կողմերը ֆինանսական առողջացման վարույթի ընթացքում:

Օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆինանսական առողջացման ծրագիր է համարվում պարտապանի վճարունակությունը վերականգնելու նպատակով նրա նկատմամբ կիրառվող, օրենքով չարգելված միջոցառումների համալիրը, որի իրականացման դեպքում պարտապանը չի լուծարվելու կամ չի կայացվելու ֆիզիկական անձի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու մասին վճիռ:

Այսինքն, ֆինանսական առողջացման ծրագիրը միջոցառումների համալիր է, որի իրականացման հետևանքով ակնկալվում է այնպիսի արդյունքի ստացում, որի շրջանակներում հնարավոր կլինի բավարարել պարտատերերի պահանջները, ընդ որում, ֆինանսական

առողջացման ծրագիրը կարող է ունենալ իրականացման որոշակի հավանականություն, որի բարձր կամ ցածր լինելը պետք է որոշի դատարանը, հաշվի առնելով նաև պարտատերերի կողմից ներկայացված առարկությունները[127]:

Ֆինանսական առողջացման ծրագրի բովանդակության առումով պետք է նշել, որ ֆինանսական առողջացման ծրագիրը օրենքով չարգելված միջոցառումների համալիր է: Հենց այս սկզբունքն է ընկած այն կարգավորման հիմքում, որով Օրենքը սահմանում է ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներում իրականացվող հնարավոր միջոցառումների ոչ սպառիչ ցանկը: Օրենքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներում կարող են իրականացվել հետևյալ միջոցառումները.

- պարտապանի ամբողջ գույքի կամ դրա մի մասի վաճառքը,
- պարտապանի գույքը պարտատերերին հաշվանցով փոխանցելը,
- պարտապանի գույքի գրավադրումը,
- շահութաբերություն չապահովող գործունեության դադարեցումը և ձեռնարկատիրական գործունեության ոլորտի փոփոխությունը,
- անշահավետ գործարքների փոփոխումը կամ դադարեցումը,
- պարտքի վերակառուցումը (պարտքի մարման ժամկետների հետաձգում, վերաձևակերպում, պարտավորությունների կատարումից ազատում),
- պարտքի փոխարինումը արժեթղթերով,
- դեբիտորական պարտավորությունների բռնագանձումը,
- նոր վարկի ստացումը,

[127] Տե՛ս ՎԴ թիվ ԵԷԴ/0057/04/15 սնանկության գործով 27.05.2020թ. որոշումը:

- նոր ներդրումների իրականացումը,
- պարտապանի վերակազմակերպումը,
- նոր բաժնետոմսերի թողարկումը կամ հետգնումը,
- պարտապան կազմակերպության մասնակցի (մասնակիցների) սեփականությունը հանդիսացող պարտապան կազմակերպությունում ունեցած բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայաբաժինների և օրենքներով սահմանված այլ արժեթղթերի) օտարումը, վարձակալության տալը, գրավադրումը կամ այլ ձևով ծանրաբեռնումը,
- օրենքով չարգելված այլ միջոցառումներ:

Որպես օրենքով չարգելված այլ միջոցառումներ կարող են դիտարկվել հետևյալը, որոնք բխում են նաև միջազգային պրակտիկայից[128].

1. պարտապանի ձեռնարկության վերակազմավորումը (կորպորատիվ վերակազմավորում, որի արդյունքում մեկուսացվում, առանձնացվում են շահույթ չապահովող ստորաբաժանումները/ուղղությունները՝ պաշտպանելու համար եկամտաբեր ուղղությունները),

2. ամբողջ ձեռնարկության կամ դրա մասի կառավարումը պարտատերերի օգտին (նշանակվում է երրորդ, անկախ կողմ՝ օժտված անհրաժեշտ հմտություններով՝ ձեռնարկությունը ղեկավարելու համար՝ ի շահ բոլոր կողմերի),

3. երրորդ անձի գույքի գրավադրումը,

---

[128] Տե՛ս World Bank Group. A Toolkit For Out-of-Court Workouts, էջեր 18-19 (հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://documents1.worldbank.org/curated/en/851561511964075432/pdf/121753-WP-PUBLIC-OCWToolkitFINALENGLISHWEB.pdf):

4 պարտապանի՝ այլ կազմակերպություններում իր բաժնեմասերի տրամադրումը/փոխանցումը պարտատերերին,

5 պարտավորությունների վերջնահաշվարկ բաժնետոմսերով (սա առավելապես կիրառելի է աշխատակիցների դեպքում, երբ աշխատավարձը վճարվում է բաժնետոմսերով կամ ածանցյալ գործիքներով):

Այս տարբերակները կարող են համակցվել կամ կիրառվել այնպես, որ այլընտրանքային տարբերակներ հնարավոր լինի առաջարկել տարբեր դասերի պարտատերերին: Այնուամենայնիվ, միևնույն դասի պարտատերերի նկատմամբ պետք է կիրառվեն հավասարարժեք (համարժեք) միջոցառումներ[129]:

Ձուլ բովանդակային առումով, բայց ոչ ձևի կամ ծրագրի կազմման կամ ծրագրի բովանդակության մանրամասնեցման, Օրենքը նախատեսում է այն պարտադիր պայմանները, որոնք պետք է պարունակի ֆինանսական առողջացման ծրագիրը: Մասնավորապես, Օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ ֆինանսական առողջացման ծրագիրը պետք է ներառի.

1. ապահովված, չապահովված և այլ խմբերի պարտատերերի նկատմամբ պարտավորությունների մարման ժամանակացույցը, նրանց պահանջների դիմաց վճարումների կատարման կարգը, այդ թվում՝ պահանջների բավարարման կարգը պարտապանին պատկանող անշարժ և պետական գրանցման ենթակա այլ գույքով,
2. պարտապանին պարտավորություններից ազատելու, դրանք հետաձգելու կամ վերաձևակերպելու կարգը և չափերը,
3. պարտապանի վճարունակությունը վերականգնելու համար

129 Տե՛ս նույն տեղում:

Օրենքի 59-րդ հոդվածով նախատեսված միջոցառումների բովանդակությունը և իրականացման կարգն ու ժամկետները, դրանց իրականացման արդյունքում պարտապանի գործունեությունը շարունակելիս պարտատերերի պահանջների բավարարման հնարավորությունների ավելացման հիմնավորումները, պարտապանին պատկանող գույքի վաճառքի դեպքում՝ վաճառվող գույքի կազմը,

4. ֆինանսական առողջացման ծրագրի կատարման համար անհրաժեշտ՝ կառավարչի և այլ մասնագետների, պարտապանի ղեկավարի վարձատրության և վարչական ծախսերի փոխհատուցման կարգը և չափերը:

Սրանք իրականում այն նվազագույն պահանջներն են, որոնք անհրաժեշտ են ֆինանսական առողջացման ծրագիր կազմելու և ներկայացնելու համար: Սակայն պետք է հաշվի առնել, որ, ընդհանուր առմամբ, որակյալ ֆինանսական առողջացման ծրագիրը պետք է ներառի շատ այլ կարևոր դրույթներ ևս, օրինակ.

պայմաններ, որոնք կբնութագրեն պարտապանի ընդհանուր վիճակը, դրությունը,

պարտապանի՝ ֆինանսական միջոցներ ստանալու աղբյուրները,

պարտապանի տնտեսական գործունեության արդյունավետությունը պահպանելուն ուղղված միջոցառումներ, ընդ որում, այս միջոցառումներն էլ կարող են բազմաբնույթ լինել:
Տեսականորեն նման միջոցառումները կարող են լինել՝

- **տնտեսական** բնույթի, որի ներքո կարող են դիտարկվել, օրինակ՝ շահութաբերություն չապահովող գործունեության դադարեցումը, ձեռնարկատիրական գործունեության ոլորտի փոփոխությունը, պարտապանի գույքի վաճառքը,
- կազմակերպչական բնույթի, օրինակ՝ վերակազմակերպում, պրոֆեսիոնալ կառավարող սուբյեկտների ներգրավում,

- **Ֆինանսական** բնույթի, օրինակ՝ ֆինանսավորման աղբյուրների որոշում, ներդրումների ապահովում, միջոցների օգտագործման ուղղությունների որոշում,
- **տեղեկատվական** բնույթի, որին օրենսդրությունը հատուկ անդրադարձ չի կատարում, սակայն ևս կարևոր է հաջող ֆինանսական առողջացում իրականացնելու համար, օրինակ՝ լրացուցիչ գովազդ, մարկետինգ գործունեության նոր ուղղությունների վերաբերյալ և արտադրվելիք նոր ապրանքների կամ մատուցվելիք նոր ծառայությունների վերաբերյալ, առաջարկների գնահատում և այլն[130]: Որպես ֆինանսական առողջացման ծրագրի օրինակելի կառուցվածք, կարող է դիտարկվել հետևյալը.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

- Ամփոփագիր
- Պարտապանի մասին ընդհանուր տեղեկություններ
- Պարտապանի ընթացիկ գործունեությունը
- Պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծությունը
- Միջոցառումների ծրագիրը
- Հավելվածներ

130 Տե՛ս **Карелина С.А.** Правовое регулирование несостоятельности (банкротства): Учебно-практич. пособие. М., 2007, էջ. 149: Ֆինանսական առողջացման ծրագրի ձևի և բովանդակության առումով բավականին օգտակար կարող է լինել ռուսական փորձը: Մասնավորապես, տես ՌԴ Արդյունաբերության և էներգետիկայի նախարարության և Տնտեսական զարգացման նախարարության 2007 թվականի ապրիլի 25-ի համատեղ հրամանով հաստատվել են Ֆինանսական առողջացման ծրագիր կազմելու մեթոդական ցուցումները (հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc&base=LAW&n=69134&fld=134&dst=100010,0&rnd=0.3853783869682095#09193484230857716):

Ֆինանսական առողջացման ծրագրի ամփոփագիրը ֆինանսական առողջացման ծրագրում ներառված կարևորագույն դրույթների ամփոփումն է:

Պարտապանի մասին ընդհանուր տեղեկություններ բաժնում կարող են ներառվել.

- պարտապանին նույնականացնող տվյալները,
- նրա կազմակերպաիրավական կառուցվածքը,
- հակիրճ տեղեկատվություն կազմակերպության ստեղծման պատմության և գործունեության մասին,
- կառավարման մարմինների կառուցվածքը և տվյալները, անհատական կազմը,
- տեղեկատվություն կազմակերպության հիմնական բաժնետերերի ‘մասնակիցների’, կազմակերպության կանոնադրական կապիտալում պետական մասնաբաժնի մասին, տեղեկատվություն դուստր և կախյալ ձեռնարկությունների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների վերաբերյալ,
- տեղեկատվություն արդյունաբերական, ֆինանսական խմբերի և ասոցիացիաների մասնակցության մասին:

«Տեղեկատվություն պարտապանի ընթացիկ գործունեության մասին»[131] բաժինը կարող է արտացոլել հետևյալ տեղեկատվությունը.

- տեղեկատվություն տնտեսական գործունեության այն ոլորտի մասին, որտեղ գործում է պարտապանը, ներառյալ՝ ֆինանսական առողջացման ծրագրի ժամանակահատվածում տվյալ ոլորտի զարգացման հեռանկարները, ոլորտում մրցակցության մակար-

[131] Այս տվյալները ներկայացնելու համար կարող է էական նշանակություն ունենալ Օրենքի 19-րդ և 29-րդ հոդվածների հիման վրա պարտապանի գործունեության, ֆինանսական վիճակի, ներառյալ՝ գույքագրված ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ պահանջելու պարտատերերի իրավունքի իրացումը:

դակը, տեղեկատվություն կազմակերպության հիմնական մրցակիցների վերաբերյալ, ինչպես նաև այլ գործոնների գնահատումը, որոնք կարող են էապես ազդել ոլորտի զարգացման վրա՝ ֆինանսական առողջացման ծրագրի գործողության ընթացքում,

- տեղեկատվություն պարտապանի գործունեության վայրի (մարզի, քաղաքի) սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին,
- տեղեկատվություն կազմակերպության հիմնական արտադրական ակտիվների կազմի և կառուցվածքի, արտադրական ուժերի ծանրաբեռնման և մոբիլիզացման հնարավորությունների վերաբերյալ,
- տեղեկատվություն կազմակերպության աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ (անձնակազմի թվաքանակ և որակավորում, աշխատանքային ռեսուրսների ոլորտում կազմակերպության քաղաքականություն),
- թողարկվող ապրանքների (մատուցվող ծառայությունների) հիմնական տեսակները, ընթացիկ և պլանավորված ծավալները,
- հումքի, նյութերի և ծառայությունների աղբյուրները (նշելով մատակարարներին), որոնք կազմում են կազմակերպությանը տրամադրվող բոլոր մատակարարումների ավելի քան 10 տոկոսը, և այն գործոնների գնահատումը, որոնք կարող են էապես ազդել կազմակերպությանը հումքով և նյութերով ապահովելուն ֆինանսական առողջացման ծրագրի ընթացքում,
- կազմակերպության արտադրանքի (ծառայությունների) վաճառքի հիմնական ոլորտները, որոնք կազմում են եկամուտների ավելի քան 10 տոկոսը, շուկայավարման համակարգի կազմակերպումը և գործոնների գնահատումը, որոնք կարող են էապես ազդել կազմակերպության ապրանքների (ծառայությունների) վաճառքի վրա,
- տեղեկատվություն պարտապանի մասնակցությամբ դատական և արբիտրաժային վարույթների վերաբերյալ, ինչպես նաև պարտապանի մասնակցությամբ կայացված դատական ակտի վերաբերյալ, որոնցով, ի թիվս այլնի, անդրադարձ է կատարվել նաև նրա ակտիվների ծանրաբեռնմանը կամ տնօրինմանը:

«Պարտապանի ընթացիկ ֆինանսական վիճակի վերլուծություն» բաժնում վերլուծվում է կազմակերպության ընթացիկ ֆինանսական վիճակը առնվազն 3 տարվա կտրվածքով: Այս բաժնում կարող է ներառվել.

- կազմակերպության ակտիվների և պարտավորությունների վերլուծությունը.

  Ակտիվների և պարտավորությունների վերլուծությունն իրականացվում է ըստ ակտիվների խմբերի, որպեսզի գնահատվի ակտիվների ձևավորման և օգտագործման արդյունավետությունը ձեռքբերված պարտավորություններին համապատասխան: Առաջարկվում է հատուկ ուշադրություն դարձնել այն հաշվեկշռային տարրերի փոփոխությանը, որոնց շեղումը կազմել է 10 տոկոսից ավելին, և անդրադառնալ այդ փոփոխության պատճառներին: Պետք է նաև վերլուծվեն ժամկետանց պարտավորությունների առաջացման պատճառները:

- գործունեության ֆինանսական արդյունքների վերլուծությունը.

  Ֆինանսական արդյունքների վերլուծությունը տալիս է կազմակերպության եկամուտների և ծախսերի կառուցվածքի պատկերը, ոչ շահութաբեր գործունեության պատճառները: Վերլուծությունն իրականացնելիս ցանկալի է նշել այն պատճառները, որոնք առաջացրել են եկամտի և ծախսերի որոշակի կետերի փոփոխություն՝ 10 տոկոսից ավելի գումարով:

- կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեությունը բնութագրող գործակիցների վերլուծությունը:

Պարտապանի ֆինանսական վիճակը վերլուծելիս կարող են օգտագործվել հետևյալ գործակիցները և ցուցանիշները.

- իրացվելիության բացարձակ ցուցանիշը,
- ընթացիկ իրացվելիությունը,
- պարտապանի պարտավորությունների ապահովման ցուցանիշը,
- ընթացիկ պարտավորություններով վճարունակության աստիճանը,
- ինքնավարության գործակիցը (ֆինանսական անկախություն),
- սեփական շրջանառու կապիտալով ապահովվածության ցուցանիշը,
- դեբիտորական պարտքերի հարաբերակցությունը ընդհանուր ակտիվներին,
- ժամկետանց պարտավորությունների մասնաբաժինը ընդհանուր պարտավորությունների մեջ,
- զուտ ակտիվները,
- ծախսերի մասնաբաժինը ընդհանուր եկամուտում:

§4. Ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացումը, քննարկումը, ընդունումը և հաստատումը

Ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացման հետ կապված հարցերը կարգավորված են Օրենքի 60-րդ հոդվածով: Հոդվածը կարգավորում է ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը և ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու ժամկետի հարցը:

Օրենքը նախատեսում է, որ ֆինանսական առողջացման ծրագիր կարող են ներկայացնել պարտապանը, կառավարիչը, ապահովված պահանջների առնվազն 1/3-ին տիրապետող պարտատերերը, չապահովված պահանջների առնվազն 1/3-ին տիրապետող պարտատերերը, ինչպես նաև պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայահավաք) կապիտալի առնվազն 1/3-ին տիրապետող անձինք:

Վերոնշյալ անձինք, փաստորեն, շահագրգռված լինելով պահպանել պարտապանի տնտեսական գործունեությունն ու բիզնեսը, պարտատերերին առաջարկում են որոշակի զիջումների գնալ և հնարավորություն տալ, որ պարտապանը վերականգնի իր վճարունակությունը[132]:

Պարտատերերի կողմից ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու հարցի առնչությամբ հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ Օրենքը նման իրավունքով օժտում է ապահովված կամ չապահովված պահանջների առնվազն 1/3-ին տիրապետող պարտատերերին: Սա նշանակում է, որ մյուս այն պարտատերերը, որոնք ֆինանսական առողջացման ծրագրի

---

[132] Տե՛ս Несостоятельность (банкротство): Учебный курс. В 2 т. / Под ред. д.ю.н., проф. **С.А. Карелиной.** Т. 1. – М.: Статут, 2019, էջ 619:

ներկայացմանը չեն մասնակցել, պետք է ստանան համապատասխան երաշխիքներ՝ ելնելով սնանկության վարույթում պարտատերերի շահերի հավասարակշռման սկզբունքից: Այս առումով Օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ առանց պարտատիրոջ գրավոր համաձայնության, ֆինանսական առողջացման ծրագիրը չի կարող նախատեսել այդ պարտատիրոջ պահանջների բավարարման այլ հերթականություն, քան նախատեսված է Օրենքով: Ընդ որում, անկախ ամեն ինչից, պարտատերերից որևէ մեկը չպետք է ֆինանսական առողջացման ծրագրի արդյունքում նվազ նպաստավոր պայմաններում հայտնվի, քան եթե պարտապանը լուծարվեր, եթե իհարկե տվյալ պարտատերը գրավոր այլ համաձայնություն չի տալիս, օրինակ՝ պահանջների նվազեցման կամ հրաժարման վերաբերյալ:

Ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու ժամկետի առումով Օրենքը սահմանում է, որ ֆինանսական առողջացման ծրագիրը պետք է ներկայացվի մինչև պարտատերերի առաջին ժողովը: Ընդ որում, ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու իրավունք ունեցող անձի միջնորդությամբ դատարանը կարող է երկարաձգել ծրագրի ներկայացման ժամկետը ևս 30 օրով:

Օրենքի ընդհանուր վերլուծությունը ցույց է տալիս, որ լայն իմաստով ֆինանսական առողջացման ծրագրի քննարկումը ընդգրկում է հետևյալ փուլերը.

- Ծրագրի նախնական քննարկում դատարանում,
- Ծրագրի քվեարկություն և ընդունում պարտատերերի ժողովի կողմից,
- Ծրագրի հաստատում դատարանի կողմից:

Օրենքի ուժով ֆինանսական առողջացման ծրագրի քվեարկությունն ու ընդունումն իրականացվում է պարտատերերի ժողովում: Սակայն նախքան պարտատերերի ժողովի հրավիրումը և ծրագրի քվեարկությունը այն քննարկվում է դատարանի կողմից: Այս փուլում դատարանը քննարկման առարկա է դարձնում միայն

Օրենքի ձևական պահանջներին համապատասխանության հարցը: Այսինքն՝ ֆինանսական առողջացման ծրագիրը այս փուլում քննարկելու, հաստատելու, թույլատրելու պահանջ և այդ առնչությամբ որոշում ընդունելու անհրաժեշտություն առկա չէ: Սակայն Օրենքով նախատեսված է ծրագիրն առանց քննարկման թողնելու հնարավորությունը, որը որոշելու հարցը վերապահված է դատարանին ֆինանսական առողջացման ծրագիրն ստանալուց հետո՝ երկու օրվա ընթացքում: Մասնավորապես, դատարանը նման որոշում է ընդունում, եթե ֆինանսական առողջացման ծրագիրը չի համապատասխանում Օրենքով սահմանված պահանջներին: Այս հարցի քննարկման փուլում դատարանին վերապահված է նաև հնարավորություն՝ ծրագիր ներկայացնող անձից պահանջել ներկայացնել ծրագրի վերաբերյալ փորձագետի եզրակացություն[133]: Իսկ բոլոր այն դեպքերում, երբ դատարանը որոշում չի ընդունում ֆինանսական առողջացման ծրագիրն առանց քննարկման թողնելու մասին, ապա կառավարիչը, պարտապանը և հայտնի բոլոր պարտատերերը ծանուցվում են դատարանում ֆինանսական առողջացման ծրագրի առկայության և ծրագրին նրանց ծանոթանալու իրավունքի մասին:

Վերոնշյալից հետո կառավարիչը հրավիրում է պարտատերերի ժողով ֆինանսական առողջացման ծրագիրը քննարկելու նպատակով: Օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քվեարկությանը կարող են մասնակցել միայն հաստատված պահանջներով պարտատերերը, բացառությամբ ապահովված պահանջներով պարտատերերի և պարտապանի հիմնադիրների (մասնակիցների, բաժնետերերի, անդամների կամ գործընկերների) պահանջներով պարտատերերի: Այս առումով Օրենքի փոփոխություններով նախատեսվել է, որ ֆինանսական առողջացման ծրագիրը քվեարկում են ապահովված պարտատերերը, եթե տվյալ սնանկության գործով բոլոր պարտատերերը հանդիսանում են ապահովված պարտատերեր:

---

[133] Օրենսդիրը չի հստակեցրել փորձաքննության տեսակը, սակայն, ելնելով ֆինանսական առողջացման բնույթից, նման փորձաքննությունը պետք է տնտեսագիտական լինի:

Օրենքով հատուկ ընթացակարգ է նախատեսվում պետական և համայնքային բյուջեներից նկատմամբ դրամական պարտավորություններից բխող պահանջներով պարտատերերի՝ ֆինանսական առողջացման ծրագրի քվեարկությանը մասնակցելու մասով: Ի տարբերություն նախկին խմբագրությամբ Օրենքի, որը բացառում էր ՀՀ պետական և համայնքային բյուջեների պահանջներով պարտատերերի մասնակցությունը ֆինանսական առողջացման ծրագրի քվեարկությանը, Օրենքը նախատեսում է նման հնարավորությունը՝ դրանով իսկ նպաստավոր պայմաններ ստեղծելով ֆինանսական առողջացումների համար: Այս կապակցությամբ պետք է նշել, որ Կառավարության 2020թ. սեպտեմբերի 10-ի N 1517-Ն որոշմամբ[134] սահմանվել են այն դեպքերը, երբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ դրամական պարտավորություններից բխող պահանջներով պարտատերերը կարող են մասնակցել ֆինանսական առողջացման ծրագրերի քվեարկությանը: Որոշմամբ նաև սահմանվում է քվեարկությանը մասնակցելու կարգը:

Օրենքի 63-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, թե որ դեպքերում է ֆինանսական առողջացման ծրագիրը համարվում ընդունված: Մասնավորապես, այն ընդունված է համարվում, եթե դրա ընդունման օգտին քվեարկել է պարտատերերի ձայների պարզ մեծամասնությունը, ինչի մասին ժողովը կայացնում է որոշում:

Օրենքն անդրադարձել է նաև ֆինանսական առողջացման ծրագրի ընդունման կարգին այն դեպքում, երբ մեկ սնանկության գործի շրջանակում ներկայացվում են մի քանի ֆինանսական առողջացման ծրագրեր: Այսպես, եթե քվեարկվում են մեկից ավելի ծրագրեր, ապա դրանք քվեարկվում են ըստ ներկայացման առաջնայնության, իսկ արդեն ֆինանսական առողջացման ծրագրի ընդունումից հետո մնացած ծրագրերը չեն քվեարկվում:

---

[134] Ուժի մեջ է մտել 24.09.2020թ.: Տե՛ս Միասնական կայք 2020.09.07-2020.09.20 Պաշտոնական հրապարակման օրը 14.09.2020թ.:

Պարտատերերի ժողովի կողմից ծրագիրն ընդունվելուց հետո այն անցնում է դատարանի կողմից հաստատման փուլ: Հատկանշական է, որ ՀՀ սնանկության օրենսդրության մոդելը կառուցված է այնպես, որ դատարանը առանց պարտատերերի ժողովի չի կարող հաստատել ֆինանսական առողջացման ծրագիրը, այսինքն՝ այս հարցում դատարանին ակտիվ դեր վերապահված չէ: Ընդ որում, հաստատման հարցը քննարկելիս դատարանը գնահատում է միայն ծրագրի՝ Օրենքով սահմանված պահանջներին համապատասխանության հարցը: Սա, ըստ էության, իրենից ներկայացնում է Օրենքի 61-րդ հոդվածով սահմանված պարտադիր պայմաններին համապատասխանության տեսանկյունից ծրագրի գնահատում:

Այսպես, Օրենքի 64-րդ հոդվածի համաձայն՝ ֆինանսական առողջացման ծրագիրը՝ ժողովի որոշմամբ ընդունվելու և Օրենքով սահմանված պահանջներին համապատասխանելու դեպքում, հաստատվում է դատարանի որոշմամբ: Հակառակ դեպքում դատարանը որոշում է ընդունում ֆինանսական առողջացման ծրագիրը մերժելու և պարտապանին լուծարելու մասին: Ծրագրի հաստատման ընթացակարգի տեսանկյունից կարևորվում է այն պարտատերերի իրավունքների պաշտպանությունը, որոնք դեռևս պահանջներ չեն ներկայացրել սնանկության վարույթում, հետևաբար՝ ծրագիրը այդ պարտատերերին առնչվող հարցերը դեռևս չի շոշափում: Մասնավորապես, ծրագիրը դատարանի հաստատմանը ներկայացնելիս պարտապանը պարտավոր է դատարան ներկայացնել պահանջներ չներկայացրած պարտատերերի ցուցակը: Պահանջներ չներկայացրած պարտատերերը ՔԴՕ սահմանված կարգով ծանուցվում են պարտապանի սնանկության և պարտատերերի պահանջները մեկամսյա ժամկետում դատարան ներկայացնելու անհրաժեշտության մասին, իսկ ներկայացված պահանջները դատարանը քննարկում է Օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով: Ընդ որում, եթե ծանուցված պարտատերը պահանջ չի ներկայացնում, ապա պարտապանի ֆինանսական առողջացման հիմքով սնանկության գործն ավարտելուց հետո

պարտապանն ազատվում է պարտավորությունից, իսկ չծանուցված պարտատերերը պահպանում են պարտապանի դեմ պահանջ ներկայացնելու իրավունքը:

§ 5. Ֆինանսական առողջացման ծրագրի իրականացումը և փոփոխությունը

Օրենքի 65-րդ հոդվածից բխում է, որ ֆինանսական առողջացման ծրագրի իրականացումը ենթադրում է պարտապանի գործունեության համապատասխանեցում ծրագրին և գործունեության իրականացում բացառապես ծրագրի շրջանակներում, այսինքն՝ պարտապանը կառավարչի վերահսկողությամբ պարտավոր է կատարել ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումները: Ֆինանսական առողջացման ծրագրի գործողության ընթացքում պարտապանի կառավարման մարմինները, այդ թվում՝ ղեկավարը, գործում են ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված իրավասության շրջանակներում: Այսինքն՝ պարտապանը պարտավոր է կատարել ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումները, որոնց նկատմամբ վերահսկողություն է իրականացվում ինչպես կառավարչի, այնպես էլ դատարանի կողմից[135]:

Որպես վերահսկողության մեխանիզմներ կիրառելի են օրենքով նախատեսված բոլոր գործիքները, որոնցով օժտված է կառավարիչը: Սկ-ն իր վերահսկողության շրջանակներում առնվազն երեք ամիսը մեկ դատարան է ներկայացնում հաշվետվություն՝ ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման վերաբերյալ, իսկ դատարանն էլ հաշվետվությունների ստուգման միջոցով իրականացնում է իր վերահսկողությունը: Ամեն դեպքում, թեև օրենքը սահմանում է, որ ծրագրի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է կառավարչի կողմից, այնուհանդերձ պարտատերերը, որպես սնանկության վարույթի մասնակիցներ և ֆինանսական առողջացման ծրագրի շահառուներ, զրկված չեն օրենքով սահմանված գործիքների կիրառմամբ ծրագրի

---

135 Տե՛ս ՎԴ թիվ ԱՐԱԴ/0043/04/13 սնանկության գործով 27.12.2017թ. որոշումը:

իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հնարավորությունից:

Ֆինանսական առողջացման ծրագրով է պայմանավորված նաև պարտատերերի պահանջների ճակատագիրը. պարտատերերի պահանջները բավարարվում են միայն ծրագրով սահմանված կարգով:

Ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման տեսանկյունից կարևորվում է նաև դրա ժամկետը: Ընդհանրապես, ծրագրով նախատեսվող միջոցառումների իրականացման ընդհանուր ժամկետը հիմնավորվում է՝ ելնելով պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծության արդյունքներից՝ հաշվի առնելով վերլուծության արդյունքում բացահայտված ներքին և արտաքին ռեսուրսները, ինչպես նաև վճարունակության վերականգման համար առաջարկվող միջոցառումների բնույթը:

Օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետը չի կարող գերազանցել 36 ամիսը, եթե Օրենքով սահմանված կարգով դրա գործողության ժամկետը չի երկարաձգվել: Օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորը որոշում է ընդունում ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետը մինչև 12 ամիս երկարաձգելու կամ դրա մեջ փոփոխություններ մտցնելու մասին, եթե այդ որոշումն ընդունվել է ֆինանսական առողջացման ծրագրի ընդունման վերաբերյալ Օրենքով սահմանված պահանջներին համապատասխան: Իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ֆինանսական առողջացման ծրագրի ընդհանուր տևողությունը դատարանի կողմից դրա սկզբնական հաստատումից հետո չի կարող գերազանցել 72 ամիսը, իսկ սկզբնական հաստատվող ֆինանսական առողջացման ծրագրի տևողությունը չի կարող գերազանցել 36 ամիսը:

Ամեն դեպքում, Օրենքով նախատեսված առավելագույն եռամյա ժամկետի սահմանումը այդքան էլ արդարացված չի թվում, քանի որ պարտապանները կարող են ունենալ տարբեր կարգավիճակ

(ռազմավարական, քաղաքաշինական, գյուղացիական տնտեսության) և նրանց ֆինանսական առողջացումը կարող է էական նշանակություն ունենալ պետության և տնտեսության համար, ուստի այդ դեպքերի համար պետք է նախատեսել ֆինանսական առողջացման ծրագրի իրագործման առավել երկար ժամկետներ՝ հինգից տասը տարի[136]:

Հարկ է նշել, որ ֆինանսական առողջացման ծրագրերի հաջողման հնարավորության մեծացմանն ուղղված կարևոր գործիքներ են ծրագրում փոփոխությունների կատարման և ծրագրի ժամկետը մինչև 12 ամսով երկարաձգելու հնարավորությունները: Օրենքը ծրագիր ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտներին թույլ է տալիս այդ հարցերով դիմել պարտատերերի ժողովին: Դիմումը քննարկվում է ֆինանսական առողջացման ծրագրի քննարկման ընթացակարգերին համապատասխան, և ժողովի հավանության դեպքում դատարանը որոշում է ընդունում ծրագրում փոփոխություն կատարելու և/կամ ժամկետը մինչև 12 ամսով երկարաձգելու մասին: Երկարաձգման հնարավորությունների քանակը սահմանափակված չէ, սակայն օրենքը սահմանափակել է առողջացման ծրագրի ընդհանուր ժամկետը, որը դրա սկզբնական հաստատումից հետո իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի սնանկության դեպքում չի կարող գերազանցել 72 ամիսը, իսկ ֆիզիկական անձանց սնանկության դեպքում՝ 4 տարին:

Փոփոխությունների իրականացման կարգի առումով Օրենքի 66-րդ հոդվածը նախատեսում է ֆինանսական առողջացման ծրագրում փոփոխություններ կատարելու հնարավորությունը նույն կարգով, ինչպես իրականացվում է ժամկետի երկարաձգումը: Բոլոր դեպքերում հարկ է նկատել, որ ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետի երկարաձգումը ինքնին կարող է հանգեցնել ֆինանսական առողջացման ծրագրի բովանդակության, այսինքն՝ միջոցառումների

---

[136] Տե՛ս **Свириденко О.М.** Концепция несостоятельности (банкротства) в Российской Федерации: методология и реализация: автореф. … канд. юрид. наук: специальность 12.00.03 / О.М. Свириденко. – М., 2010, էջ 19:

փոփոխությանը: Բացի այդ, ֆինանսական առողջացման ծրագրի փոփոխությունները ևս պետք է իրականացվեն այն սկզբունքներով, որոնք կիրառվում են ծրագրի նախնական կազմման և ընդունման դեպքում՝ ծրագրի օրինականություն, իրատեսականություն, պարտատերերի շահերի հավասարակշռում և այլն:

§6. Ֆինանսական առողջացման վարույթի ավարտը և դրա հետևանքները

Օրենքի 68-րդ և 69-րդ հոդվածների վերլուծությունը թույլ է տալիս ֆինանսական առողջացման վարույթի ավարտի հիմքերը դասակարգել երկու հիմնական խմբի.

ֆինանսական առողջացման ծրագրի վաղաժամկետ դադարեցման հիմքեր,	ֆինանսական առողջացման ծրագրի ավարտի հիմքեր:

Ծրագրի վաղաժամկետ դադարեցման հիմքերը հետևյալն են.

- երբ տեղի է ունենում ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված պարտավորությունների մարման ժամանակացույցի էական խախտում,
- առկա են հանգամանքեր, որոնք վկայում են, որ պարտապանն ի վիճակի չէ կատարել պարտավորությունների մարման ժամանակացույցը[137],
- ֆինանսական առողջացման ծրագրի հաստատումից հետո դատարան են ներկայացվում նոր պահանջներ և մեկամսյա ժամկետում չեն ներկայացվում ծրագրի փոփոխություններ, որոնք նախատեսում են նաև նոր ներկայացված պահանջների բավարարում, կամ այդ փոփոխությունները ներկայացվում են դատարան և դատարանի որոշմամբ մերժվում են:

[137] Նմանատիպ իրավիճակ կարող է առաջանալ, օրինակ, այն դեպքում, երբ ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված վճարումների իրականացումը կապված է ծրագրի շրջանակներում նախատեսված մեկ այլ գործողության, օրինակ՝ դեբիտորական պարտքերի բռնագանձման հետ, և բռնագանձման պահանջով դատական վարույթի ընթացքից ակնհայտ է, որ մինչև ծրագրի գործողության ավարտը այդ ընթացակարգով պարտավորությունները չեն մարվելու:

Ծրագրի վաղաժամկետ դադարեցման պահանջով դատարան կարող են դիմել ՍԿ-ն, պարտապանը, առավել խոշոր պահանջներ ունեցող հինգ չապահովված պարտատերերը, իսկ այն դեպքում, երբ ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման ընթացքում պետք է օգտագործվի ապահովված պարտատիրոջ (պարտատերերի) պահանջի դիմաց գրավադրված գույքը, ապա նաև նշված ապահովված պարտատերը (պարտատերերը): Ներկայացված հիմքերի առկայության կամ բացակայության հարցը որոշում է դատարանը, և կայացնում ֆինանսական առողջացման ծրագիրը դադարեցնելու և պարտապանին լուծարելու մասին որոշում, եթե ներկայացված հիմքերից որևէ մեկը առկա է, իսկ հակառակ դեպքում ֆինանսական առողջացման ծրագրի վաղաժամկետ դադարեցումը մերժվում է:

Ինչ վերաբերում է ֆինանսական առողջացման ծրագրի ավարտին, ապա այն տեղի է ունենում այն դեպքում, երբ.

- ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետը չի լրացել և
- կառավարիչը դատարան է ներկայացնում ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվություն:

Ընդ որում, վերոնշյալ հիմքով վարույթն ավարտելու դեպքում հնարավոր է երկու ելք՝ կախված պարտատերերի պահանջները բավարարված լինել կամ չլինելու հանգամանքից:

Այսպես, եթե մինչև ֆինանսական առողջացման ծրագրի գործողության վերջնաժամկետը ծրագիրը վաղաժամկետ չի ավարտվում կամ դադարեցվում, ապա ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 15 օր առաջ կառավարիչը պետք է դատարան ներկայացնի ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվություն՝ կցելով.

ա. պարտապանի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունը,

բ. պարտատերերի պահանջների գրանցամատյանը՝ նշելով բավարարված պահանջները,

գ. պարտատերերի պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերը:

Հարկ է նշել, որ կառավարչի հաշվետվությունը էական նշանակություն ունի ֆինանսական առողջացման վարույթի ավարտի հարցը լուծելու տեսանկյունից: Այն պետք է պարունակի ֆինանսական առողջացման ծրագրի կատարման ընթացքի և պարտավորությունների բավարարման մասին տեղեկությունների այնպիսի ծավալ, որոնց գնահատման արդյունքում դատարանը հնարավորություն ունենա կայացնելու պարտապանին առողջացած համարելու և սնանկության վարույթն ավարտելու կամ պարտապանի նկատմամբ լուծարման վարույթ սկսելու մասին որոշումներից որևէ մեկը:

ՎԴ գնահատմամբ ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվությունը պարտապանի ֆինանսական առողջացման մասին ամփոփ տեղեկատվություն պարունակող փաստաթուղթ է, որն արտացոլում է պարտապանի՝ վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական դրությունը,

պարտապանի ֆինանսական առողջացմանն ուղղված և իրականացված միջոցառումների նկարագիրը, պարտատերերի պահանջների բավարարված լինելու կամ չլինելու հանգամանքը և այլ տեղեկություններ: Այլ կերպ ասած՝ ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվության ներկայացումը պարտապանի ֆինանսական առողջացման գործընթացի ավարտին ուղղված ընթացակարգ է, քանի որ այդ փաստաթղթի քննարկման արդյունքներով է որոշվում՝ պարտապանը վերջնականապես առողջացել է, թե՝ ոչ: Ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվության ներկայացումը դատարանին, դատարանի կողմից դրա քննարկումը և արդյունքում համապատասխան դատական ակտի կայացումը վկայում են այն մասին, որ պարտապանի ֆինանսական առողջացման նկատմամբ իրականացվում է նաև դատական վերահսկողություն[138]:

Ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվությունն ստանալուց ոչ ուշ, քան երկու և ոչ շուտ, քան մեկ շաբաթվա ընթացքում նշանակում է նիստ՝ այդ մասին առնվազն երեք օր առաջ ծանուցելով կառավարչին, պարտապանին և պարտատերերին[139]: Ընդ որում, կառավարչի, պարտապանի և որևէ պարտատիրոջ չներկայանալն արգելք չէ նիստի անցկացման համար:

Դատական նիստում դատարանը, ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին կառավարչի հաշվետվության և ֆինանսական առողջացման ծրագրի կատարման վերաբերյալ

---

138 Տե՛ս ՎԴ թիվ ԱՐԱԴ/0043/04/13 սնանկության գործով 27.12.2017թ. որոշումը:

139 Եթե պարտատերերի թիվը 10-ից ավելի է, ապա նրանց համար պատշաճ ծանուցում է համարվում իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում նիստի վայրի և ժամանակի մասին հրապարակված հայտարարությունը: Ամենախոշոր 5 պարտատերերին ծանուցումն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ հանձնվում է ստացականով:

պարտատերերի առարկությունների քննության արդյունքներով կայացնում է.

ա) վճիռ՝ ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին կառավարչի հաշվետվությունը հաստատելու և սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին, եթե պարտատերերի պահանջները բավարարվել են կամ

բ) որոշում՝ ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին կառավարչի հաշվետվության հաստատումը մերժելու և պարտապանին լուծարելու մասին, եթե պարտատերերի պահանջները բավարարված չեն:

Հատկանշական է, որ այս առումով ՎԴ-ն արձանագրել է, որ օրենսդրի կողմից ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվության քննարկման արդյունքում դատարանի կողմից կայացվող դատական ակտերի տեսակների սպառիչ սահմանումն ինքնանպատակ չէ, այլ կոչված է սնանկության վարույթում ապահովելու բոլոր պարտատերերի շահերի պաշտպանությունը և դրանց միջև հավասարակշռությունը: Ըստ այդմ՝ այն դեպքում, երբ ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվության քննարկման արդյունքներով պարզվում է, որ բոլոր պարտատերերի պահանջները բավարարվել են, դատարանը հաստատում է ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվությունը և վճիռ է կայացնում սնանկության գործն ավարտելու մասին, մինչդեռ այն դեպքում, երբ պարզվում է, որ բոլոր պարտատերերի պահանջները բավարարված չեն, դատարանը որոշում է կայացնում ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվության հաստատումը մերժելու և պարտապանին լուծարելու մասին[140]:

[140] Տե՛ս ՎԴ թիվ ԱՐԱԴ/0043/04/13 քաղաքացիական գործով 27.12.2017թ. որոշումը:

Այսպիսով, կարող ենք նշել, որ ֆինանսական առողջացման վարույթը կարող է ունենալ երկու ելք.

- պարտապանի լուծարում՝ առողջացման ծրագրի վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև պարտատերերի պահանջները բավարված չլինելու պայմաններում ծրագրի ավարտի դեպքերում,
- պարտապանի ֆինանսական առողջացում և սնանկության վարույթի ավարտ՝ պարտատերերի պահանջները բավարված լինելու հիմքով ծրագրի ավարտի դեպքում:

Անդրադառնալով սնանկության վերաբերյալ գործի ավարտման հետևանքներին՝ պետք է նշել, որ այդ հարցին անդրադառնում է Օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասը, որի ուժով սնանկության վերաբերյալ գործի ավարտի դեպքում պարտապանը համարվում է ֆինանսապես առողջացած և կարող է շարունակել իր գործունեությունը: Այդ դեպքում գործն ավարտելու պահից վերանում են Օրենքի ուժով նախատեսված կասեցումները: Միաժամանակ առողջացած անձն ազատվում է բոլոր այն պարտավորություններից, որոնցից բխող պահանջները չեն ներկայացվել ավարտված սնանկության գործի շրջանակներում, և այդ պարտատերերը զրկվում են հետագայում առողջացած անձի նկատմամբ պահանջներ ներկայացնելու իրավունքից:

Սակայն վերոնշյալ կանոնից նախատեսվում են նաև բացառություններ, որոնց ընտրությունը պայմանավորված է դրանց կենսական նշանակությամբ և կարևորությամբ: Այսպես, եթե սնանկության գործն ավարտվել է սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, ապա պարտապանը չի ազատվում բոլոր այն պարտավորություններից, որոնցից բխող պահանջները չեն ներկայացվել ավարտված սնանկության գործի շրջանակներում:

Պարտապանը չի կարող ազատ ճանաչվել նաև.

ալիմենտների վճարումից,

սնանկ ճանաչելու պահին նախորդած մեկ տարվա ընթացքում հարկային մարմիններից թաքցրած պարտավորությունների վճարումներից,

կյանքի և առողջությանը պատճառված վնասներից առաջացող պարտավորություններից,

հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման պարտավորություններից,

այն պարտավորություններից, որոնցից բխող պահանջները չեն ներկայացվել պարտատերերից անկախ պատճառներով՝ հարգելի ճանաչված դեպքերում:

Հարկ է, սակայն, նկատի ունենալ, որ վերոնշյալ բացառությունները կիրառելի են բացառապես սնանկության վարույթի ավարտից հետո այն պարտավորությունների նկատմամբ, որոնցից բխող պահանջները չեն ներկայացվել ավարտված սնանկության գործի շրջանակներում կամ էլ ներկայացման պարագայում բավարարում չեն ստացել, և ընդ որում՝ ոչ թե ցանկացած պարտավորության, այլ միայն նրանց մասով, որոնք նախատեսված են Օրենքի 90-րդ հոդվածի 4-րդ մասով[141]:

[141] Տե՛ս ՎԴ թիվ ԵԱՔԴ/1747/02/12 քաղաքացիական գործով 30.04.2015թ. որոշումը:

ԳԼՈՒԽ 15. ԼՈՒԾԱՐՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ

§1. Լուծարման վարույթի մեկնարկը և պարտապանի գործունեությունը լուծարման վարույթի ընթացքում

Սնանկության վարույթում պարտապանի ֆինանսական առողջացման հնարավորությունները սպառելուց հետո պարտապանի նկատմամբ սկսվում է լուծարման վարույթ: Ընդ որում, անհատ ձեռնարկատերերի դեպքում լուծարման վարույթի ներքո հասկացվում է պարտապան անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման վարույթը, քանի որ ֆիզիկական անձի նկատմամբ «լուծարում» եզրույթը չի կարող կիրառվել:

Օրենքի 70-րդ հոդվածը հստակ սահմանում է այն դեպքերը, որոնց վրա հասնելու պարագայում սկսվում է լուծարման վարույթը, այն է.

- երբ Օրենքով սահմանված ժամկետում ֆինանսական առողջացման ծրագիր չի ներկայացվում.
- ֆինանսական առողջացման ծրագիրը վաղաժամկետ դադարեցվում է.
- դատարանը մերժում է ներկայացված ֆինանսական առողջացման ծրագրի հաստատումը.
- դատարանը մերժում է ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին կառավարչի հաշվետվությունը:

Վերոնշյալ բոլոր դեպքերում դատարանը որոշում է կայացնում պարտապան իրավաբանական անձի լուծարման կամ պարտապան անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման վարույթ[142] սկսելու մասին: Ընդ որում, եթե դատարանը մինչև լուծարման վարույթ սկսելու հիմքերի ծագումը թույլատրել է իրականացնել պարտապանի գործունեության ստուգում կամ ուսումնասիրություն, ապա իր կայացրած որոշման կատարման հնարավորության ապահովման նպատակով պետք է պարտապանի լուծարման գործընթաց չսկսի այնքան ժամանակ, քանի դեռ ողջամիտ ժամկետում իր կայացրած դատական ակտի կատարման հնարավորություն չի ընձեռել դատական ակտի հասցեատիրոջը[143]:

Հարկ է նկատի ունենալ, որ անհրաժեշտ է տարբերակել իրավաբանական անձի Օրենսգրքի կարգավորումներին համապատասխան լուծարումը և լուծարումը սնանկության վարույթում: Այսպես, Օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ իրավաբանական անձը կարող է լուծարվել նրա հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմնի որոշմամբ՝ ներառյալ այն ժամկետը լրանալու կապակցությամբ, որով ստեղծվել է իրավաբանական անձը, կամ այն նպատակին հասնելու կապակցությամբ, որի համար նա ստեղծվել է: Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ եթե լուծարվող իրավաբանական անձի գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով: Օրենսգրքի 71-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձը դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել, եթե նա ի վիճակի չէ բավարարել պարտատերերի պահանջները: Իրավաբանական անձին դատարանով սնանկ ճանաչելու հիմքերը, կարգը, ինչպես նաև սնանկ ճանաչված իրավաբանական անձի պարտատերերի պահանջների բավարարման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով:

---

142 Սույն գլխում «լուծարման վարույթ» հասկացության ներքո ենթադրվում է նաև անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման վարույթը:

143 Տե՛ս ՎԴ թիվ ԵԱՔԴ/0119/04/17 սնանկության գործով 25.07.2019թ. որոշումը:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ իրավաբանական անձը կարող է լուծարվել ինչպես նրա հիմնադիրների, այնպես էլ կանոնադրությամբ դրա համար լիազորված մարմնի որոշմամբ: Նշվածից բացառություն է այն դեպքը, երբ լուծարվող իրավաբանական անձի գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար: Այս դեպքում իրավաբանական անձը կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով, որի առանձնահատկությունները սահմանվում են օրենքով: Այսինքն՝ Օրենսգրքով նախատեսվում է իրավաբանական անձի լուծարում միայն այն դեպքում, երբ պարտապանի ակտիվները բավարարում են պարտատերերի պահանջները, կամ լուծարվող իրավաբանական անձը պարտավորություններ չունի[144]:

Լուծարման վարույթ սկսելու մասին որոշումը կայացնելուց հետո՝ 5 օրվա ընթացքում, դատարանն այն ուղարկում է իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնին՝ համապատասխան գրառում կատարելու համար, իսկ ՍԿ-ն այդ որոշումը հրապարակում է հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում:

Լուծարման վարույթ սկսելու մասին որոշումը էական ազդեցություն է ունենում պարտապանի գործունեության վրա: Նման որոշում կայացնելու դեպքում գույքը կառավարելու կամ տնօրինելու՝ պարտապանի բոլոր իրավունքները կասեցվում են դատարանի որոշմամբ: Պարտապանի գործունեության կասեցման պահից վերջինիս անունից ՍԿ-ն է ներկայացնում սնանկության վարույթի ընթացքում հարկերի և (կամ) վճարների գծով լրացուցիչ առաջացած պարտավորությունների վերաբերյալ հարկային մարմնի սահմանած ձևով տեղեկատվություն, այդ թվում՝ ապահովված պարտատիրոջ կողմից ներկայացված տեղեկատվությունը (որի հիման վրա հաշվարկվում են պարտապանի հարկային պարտավորությունները), և դրանք գրանցում է պարտատերերի գրանցամատյանում՝

144 Տե՛ս ՎԴ թիվ ԵԿԴ/0018/04/10 քաղաքացիական գործով 27.12.2011թ. որոշումը:

համապատասխան հերթում: Միևնույն ժամանակ, պարտապանի լուծարման գործընթացը սկսվելուց հետո Օրենքն արգելում է ստուգում կամ ուսումնասիրություն իրականացնելը, բացառությամբ միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության և հանդիպակաց ուսումնասիրությունների:

Օրենքը, ամեն դեպքում, հնարավորություն է տալիս պարտապանին կառավարչի միջնորդության հիման վրա կայացված դատարանի որոշմամբ ամբողջությամբ կամ մասնակիորեն վերսկսել իր գործունեությունը մինչև մեկ տարի ժամանակով, եթե պարտապանի գործունեության վերսկսումը կարող է ավելացնել պարտատերերի պահանջների բավարարման հնարավորությունը:

Սա, ըստ էության, լուծարման վարույթի ընթացքում պարտապանի առողջացման հնարավորություն ընձեռող ընթացակարգ է: Պարտապանի գործունեությունը վերսկսելու մասին բոլոր պարտատերերը պատշաճ կերպով ծանուցվում են և եթե ծանուցվելուց հետո՝ 7 օրվա ընթացքում, պարտատերերից որևէ մեկը գրավոր առարկություն է ներկայացնում դատարան, ապա կառավարիչը հրավիրում է խորհրդի նիստ, իսկ վերջինի ձևավորված չլինելու դեպքում՝ ժողով՝ քննարկման դնելով այդ հարցը: Խորհրդի կամ ժողովի որոշումը և նիստի արձանագրությունը կառավարիչն իր միջնորդության հետ ներկայացնում է դատարան, որից հետո դատարանն առանց դատական նիստ հրավիրելու որոշում է կայացնում միջնորդությունը բավարարելու կամ այն մերժելու մասին: Դատավորի որոշումը եռօրյա ժամկետում կառավարիչն ուղարկում է պարտատերերին և հարկային համապատասխան մարմնին:

Պարտապանի գործունեությունը վերսկսվելու դեպքում նախ կառավարիչը շարունակում է դատարանին ներկայացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ֆինանսական և այլ բնույթի հաշվետվություններ: Բացի այդ, կառավարիչը պարտավոր է յուրաքանչյուր ամիս դատարան ներկայացնել հաշվետվություն՝ պարտապանի վերսկսած գործունեության վերաբերյալ: Այդ

հաշվետվությունները պարտատերերի ժողովում կամ խորհրդում քննարկվում են յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ:

Այն դեպքում, երբ պարտապանի գործունեության վերսկսման արդյունքում բավարարվում են պարտատերերի բոլոր պահանջները, ապա կառավարիչը դատարան է ներկայացնում վերջնական հաշվետվություն, որում պարունակվում է հիմնավորված միջնորդություն գործն ավարտելու մասին: Կառավարչի վերջնական հաշվետվությունը պետք է պարունակի ամփոփ տեղեկատվություն պարտապանի ակտիվների հավաքման վերաբերյալ: Հաշվետվությանը կցվում են պարտապանի վերջնական հաշվեկշիռը, ինչպես նաև.

- պարտատերերի պահանջների գրանցամատյանը՝ նշելով բավարարված պահանջները,
- պարտատերերի պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերը:

Վերջնական հաշվեկշիռը և հաշվետվությունը դատարան ներկայացնելու մասին կառավարիչը ծանուցում է բոլոր պարտատերերին՝ առաջարկելով տասնօրյա ժամկետում ծանոթանալ այդ փաստաթղթերի՝ իր մոտ դեպոնացված օրինակին:

Դատավորը վերջնական հաշվեկշիռն ստանալուց ոչ ուշ, քան 15 և ոչ շուտ, քան 10 օրվա ընթացքում նշանակում է նիստ՝ այդ մասին առնվազն երեք օր առաջ ծանուցելով կառավարչին և պարտատերերին: Եթե պարտատերերի թիվը 10-ից ավելի է, ապա նրանց համար պատշաճ ծանուցում է համարվում հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում նիստի վայրի և ժամանակի մասին հրապարակված հայտարարությունը: Ընդ որում, որևէ պարտատիրոջ չներկայանալն արգելք չէ նիստի անցկացման համար:

Դատարանը, հաստատելով վերջնական հաշվեկշիռը, վճիռ է կայացնում լուծարման վարույթը դադարեցնելու և պարտապանի սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին: Հակառակ դեպքում դատարանը մերժում է վերջնական հաշվեկշռի հաստատումը և գործն ավարտելու միջնորդությունը՝ նշելով մերժման պատճառները:

Այսպիսով, պարտապանի լուծարման վարույթի ընթացքում պարտապանի առողջացման և պարտատերերի պահանջների բավարարման նպատակով պարտապանը կարող է վերսկսել իր գործունեությունը և դրա հաջող ավարտի դեպքում առողջանալ, որը հանգեցնում է պարտատերերի պահանջների բավարարմանը և լուծարման վարույթի դադարեցմանը: Հակառակ դեպքում պարտապանի լուծարման վարույթը շարունակվում է, որին հետևում են լուծարման վարույթի հետագա ընթացակարգերը:

§ 2. Պարտապանի գույքի վաճառքը լուծարման վարույթում

Պարտապանի լուծարման վարույթը ազդեցություն է ունենում ոչ միայն պարտապանի գործունեության, այլ նաև նրա գույքի վրա:

Ինչպես նշվեց, նախ պարտապանի գույքը կառավարելու կամ տնօրինելու բոլոր իրավունքները կասեցվում են դատարանի որոշմամբ: Մյուս կողմից, լուծարման վերաբերյալ որոշումը կայացնելուց հետո՝ 7 օրվա ընթացքում, կառավարիչը դատարանի որոշման հիման վրա արգելադրում է պարտապանին սեփականության իրավունքով պատկանող գույքը, բացառությամբ այն գույքի, որի վրա, ՀՀ օրենսդրության համաձայն, բռնագանձում չի կարող տարածվել:

Բացի այդ, պարտապանի գույքի գույքագրումը և գնահատումը կատարելուց հետո, կառավարիչը կազմում է գույքի վաճառքի ծրագիր և այն քննարկելու նպատակով հրավիրում է խորհրդի նիստ, իսկ եթե խորհուրդ չի ստեղծվել՝ պարտատերերի ժողով: Գույքի վաճառքի ծրագիրը պետք է պարունակի պարտապանի գույքի նկարագիրը, դրանց գնահատված արժեքները, ինչպես նաև վաճառքի նախատեսվող ձևը: Ծրագիրը խորհրդի կամ ժողովի հավանությանն արժանանալուց հետո կառավարչի կողմից դատարան է ներկայացվում գույքը ծրագրին համապատասխան վաճառելու թույլտվություն ստանալու մասին միջնորդություն: Եթե գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու վերաբերյալ վաճառքի ծրագիրը պարտատերերի ժողովի կամ խորհրդի հավանությանը չի արժանանում, այն քննարկելու նպատակով խորհրդի նիստը կամ ժողովը չի կայանում, կառավարիչն իրավունք է ստանում դատարան դիմել վաճառքի ծրագիրը հաստատելու և գույքի վաճառքը թույլատրելու մասին միջնորդությամբ: Այլ է իրավիճակը, երբ ժողովի կամ խորհրդի հավանությանը չի արժանանում գույքն ուղղակի գործարքով օտարելու մասին հարցը: Այս դեպքում, կառավարչի միջնորդությունը ենթակա է մերժման:

Այսպիսով, օրենսդիրը սահմանել է որոշակի բացառություններ, որոնց դեպքում գույքի վաճառքի ծրագիրը դատարանը կարող է հաստատել՝ անկախ պարտատերերի խորհրդի կամ ժողովի որոշումից: Այդ բացառություններն են.

1. գույքի վաճառքի ծրագիրը պարտատերերի խորհրդի կամ ժողովի կողմից հաստատված չլինելը կամ
2. ծրագրի հաստատման համար խորհրդի կամ ժողովի նիստերի անցկացման անհնարինությունը:

Հատկանշական է, որ, ՎԴ գնահատմամբ, վերոգրյալ դեպքերի թվին է դասվում նաև պարտատերերի խորհրդի կամ ժողովի կողմից ծրագրի հաստատման համար որոշում կայացնելու անհնարինությունը՝ նկատի ունենալով, որ խորհրդի կամ ժողովի նիստերը կարող են հրավիրվել և անցկացվել՝ առանց դրանց ընթացքում որևէ որոշում կայացնելու: Նման դեպքերը նույնանում են նիստերի անցկացման անհնարինության հետ՝ նկատի ունենալով, որ նիստի նպատակը որոշման կայացումն է, և եթե անհնար է որոշում կայացնել, ուստի նիստն էլ դառնում է իմաստազուրկ[145]:

Պետք է նկատի ունենալ, որ պարտապանի գույքի վաճառքի հաստատված ծրագիրը, անկախ նրանից, թե որ ընթացակարգով է հաստատվել, անվերապահորեն վերջնական փաստաթուղթ չէ և կարող է ենթարկվել փոփոխության: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանել այն դեպքերը, որոնք հիմք կարող են ծառայել հաստատված ծրագիրը փոփոխության ենթարկելու համար:

Այս առումով ՎԴ-ն արձանագրել է, որ ծրագրի փոփոխությունը կարող է վերաբերել ինչպես վաճառքի մեջ ներառվող գույքի կազմին, քանակին, գնին և այլն, այնպես էլ ծրագրով նախատեսված ընթացակարգերին: Բացի այդ, նկատի ունենալով, որ ծրագրի փոփոխման համար քննարկվող իրավական դրույթը սահմանել է նույն իրավակարգավորումը, ինչ նախատեսված է ծրագրի

145 Տե՛ս ՎԴ թիվ ԵՇԴ/0111/04/16 սնանկության գործով 02.08.2019թ. որոշումը:

հաստատման համար, ՎԴ-ն նշել է, որ ծրագրի փոփոխությունը ենթակա է հաստատման պարտատերերի խորհրդի կամ ժողովի որոշմամբ, այնուհետև (այդ թվում՝ խորհրդի կամ ժողովի որոշման բացակայության դեպքում)՝ դատական կարգով: Հետևաբար եթե պարտապանի գույքի վաճառքի հաստատված ծրագրում բացակայում է գույքագրման ցանկում ներառված որևէ գույք, կամ ի հայտ է գալիս նախկինում չբացահայտված այլ գույք, ապա նման դեպքերի համար օրենսդիրը նախատեսել է ծրագրի փոփոխման ինստիտուտից օգտվելու իրավական հնարավորությունը[146]:

Անդրադառնալով գույքի վաճառքի եղանակներին՝ հարկ է նշել, որ Օրենքը նախատեսում է գույքի վաճառքի երկու եղանակ՝ ուղղակի գործարքով կամ հրապարակային սակարկություններով, որոնց հետ կապված հարաբերությունները կարգավորված են Օրենքի համապատասխանաբար 76-րդ և 77-րդ հոդվածներում, ինչպես նաև Նախարարի 12.03.2020թ. «Պարտապանին պատկանող գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու կարգը սահմանելու մասին» թիվ 116-Ն հրամանով[147]:

Հիշյալ համատեքստում ուշադրության են արժանի Օրենքի 76-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, որոնցից առաջինը սահմանում է գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին կառավարչի կողմից դատարան միջնորդություն ներկայացնելու պահանջ, որը, ի թիվս այլնի, պետք է պարունակի աճուրդի մեկնարկային գինը, իսկ երկրորդը նախատեսում է այդ միջնորդության դեմ դատարան յոթնօրյա ժամկետում գրավոր առարկություն ներկայացնելու և աճուրդի ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու պարտատիրոջ իրավունքը՝ սնանկության հատուկ հաշվին գույքի վաճառքի իր

---

146 Տե՛ս նույն տեղում:

147 01.12.2021թ. ուժի մեջ կմտնի Նախարարի 27.11.2020թ. «Հրապարակային սակարկությունների համար նախատեսված էլեկտրոնային կայքի միջոցով սնանկության վարույթում պարտապանին պատկանող գույքի վաճառքի իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 491-Ն հրամանը, որով ուժը կորցրած է ճանաչվելու Նախարարի 12.03.2020թ. թիվ 116-Ն հրամանը:

կողմից առաջարկվող մեկնարկային գնի հինգ տոկոսի, բայց ոչ ավելի, քան հինգ միլիոն դրամի չափով դեպոզիտ վճարելու պայմանով: Ընդ որում, պարտատիրոջ մեկնարկային ավելի բարձր գին առաջարկելու մասին առարկությանը պետք է կցվի դեպոզիտի վճարումը հավաստող փաստաթուղթը և եթե առարկություն են ներկայացրել մեկից ավելի պարտատերեր, ապա հրապարակային սակարկություններով գույքի իրացումը թույլատրվում է առաջարկվող ամենաբարձր մեկնարկային գնով:

Վկայակոչված կարգավորումներից բխում է հետևյալը.

1. պարտատերերը կառավարչի կողմից վաճառքի թույլտվություն տալու միջնորդության վերաբերյալ կարող են ներկայացնել գրավոր առարկություններ,
2. այդ առարկությունները կարող են ներկայացնել դատարանի կողմից միջնորդության կապակցությամբ որոշման կայացմանը նախորդած յոթնօրյա ժամանակահատվածում,
3. առարկությունում պետք է ներկայացվի առաջարկվող գույքի մեկնարկային գնից ավելի բարձր մեկնարկային գին,
4. պարտատերերը պետք է սնանկության հատուկ հաշվին վճարեն իրենց կողմից առաջարկվող մեկնարկային գնի հինգ տոկոսի, բայց ոչ ավելի, քան հինգ միլիոն դրամի չափով դեպոզիտ,
5. մեկից ավելի պարտատերերի կողմից առարկություն ներկայացվելու դեպքում հրապարակային սակարկություններով գույքի իրացումը թույլատրվում է առաջարկվող ամենաբարձր մեկնարկային գնով:

Հասկանալի է, որ թե՛ պարտապանի գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին կառավարչի միջնորդությունը, թե՛ գույքի իրացումը ավելի բարձր մեկնարկային գնով իրացնելու պարտատիրոջ առարկությունը պետք է արժանանան դատարանի գնահատականին: Այս առումով Օրենքի 76-րդ հոդվածի 3-րդ մասը

սահմանում է, որ կառավարչի միջնորդության դեմ առարկություն ներկայացնելու ժամկետի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

ա) գույքի վաճառքը թույլատրելու մասին՝ բավարարելով կառավարչի միջնորդությունը, եթե որևէ պարտատեր սույն հոդվածի երկրորդ մասով սահմանված ժամկետում և կարգով առարկություն չի ներկայացրել դատարան,

բ) գույքի վաճառքը պարտատիրոջ առաջարկած գնով թույլատրելու մասին՝ չբավարարելով կառավարչի միջնորդությունը, եթե որևէ պարտատեր սույն հոդվածի երկրորդ մասով սահմանված ժամկետում և կարգով առարկություն է ներկայացրել դատարան[148],

գ) կառավարչի միջնորդությունը մերժելու մասին, եթե կառավարչի կողմից չեն պահպանվել սույն օրենքով սահմանված պահանջները:

Միաժամանակ, տեղին է հիշատակել ՎԴ այն դիրքորոշումը, ըստ որի. «Օրենսդիրը ոչ միայն սահմանել է վաճառքի թույլտվության միջնորդության դեմ բերված առարկության հստակ ժամանակահատված, այլև նախատեսել է, որ առարկությունը պետք է վերաբերի կոնկրետ գույքի վաճառքի մեկնարկային գնին: Նշված վավերապայմաններին չբավարարող առարկությունները չեն կարող սույն իրավանորմի իմաստով գնահատվել որպես վաճառքի թույլտվության վերաբերյալ ներկայացված միջնորդության դեմ բերված առարկություն և դատարանի կողմից այդ կապակցությամբ չի կարող կիրառվել Օրենքի 76-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետի կանոնը»[149]:

---

148 Օրենքում այս առումով վրիպակ է տեղ գտել, քանի որ նշվում է առարկության չներկայացվելու մասին:

149 Տե՛ս ՎԴ թիվ ԵՇԴ/0111/04/16 սնանկության գործով 02.08.2019թ. որոշումը:

Ակնհայտ է, որ հիշատակված կարգավորումները կոչված են մի կողմից դատական վերահսկողության ներքո պահելու պարտապանի գույքի իրացման գործընթացի օրինականությունը, մյուս կողմից՝ երաշխավորելու պարտատերերի պահանջների բավարարման ավելի մեծ հնարավորություն բոլոր այն դեպքերում, երբ գույքի մեկնարկային գինը որևէ պատճառով որոշվել է շուկայական գնից ցածր տարբերակով:

Այնուամենայնիվ, պետք է նկատել, որ կառավարչի առաջարկած մեկնարկային գնից բարձր մեկնարկային գին առաջարկելու պարտատերերի ոչնչով չսահմանափակված հնարավորությունը կարող է չարաշահումների տեղիք տալ: Իհարկե, Օրենքի 76-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումը ունի որոշակի զսպող ազդեցություն, քանի որ, եթե պարտապանի գույքի վաճառքը թույլատրվել է պարտատիրոջ առաջարկած գնով, և գույքը այդ սակարկություններով չի վաճառվել, ապա պարտատիրոջ դեպոզիտ վճարած գումարը չի վերադարձվում: Սակայն դա բավարար համարվել չի կարող:

Այս պնդումը, առաջին հերթին, պայմանավորված է այն իրողությամբ, որ Օրենքը, ի տարբերություն սնանկության գործով կառավարչի, պարտատիրոջ համար չի նախատեսում ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելիս գույքի գնահատման ակտ ներկայացնելու պահանջ: Բացի այդ, պարտատիրոջ առաջարկած գնով գույքը չվաճառվելու դեպքում հաջորդ աճուրդի մեկնարկային գինը որոշվում է ոչ թե սնանկության գործով կառավարչի, այլ պարտատիրոջ առաջարկած մեկնարկային գնից նվազեցման միջոցով: Արդյունքում պարտատիրոջ կողմից չափազանց բարձր գին առաջարկված լինելու դեպքում պարտատերը, այդ թվում՝ ապահովված, ստիպված է տևական ժամանակ սպասել աճուրդների շարքի իրականացման միջոցով դրա իրացվելի գնի սահմանմանը և նոր միայն ստանալ համապատասխան պահանջի բավարարում[150]:

---

[150] Տե՛ս **Տ.Ա. Մարկոսյան.** Գրավով ապահովված պահանջները սնանկության վարույթում: Գիտագործնական ձեռնարկ / Եր., Արդարադատության ակադեմիա, 2021, էջեր 18-23:

Անդրադառնալով հրապարակային սակարկությունների իրականացման ընթացակարգային հարցերին՝ պետք է նշել, որ, վերևում նշված հրամանով հաստատված կարգը, ըստ էության, համարվում է աճուրդի կանոնակարգ: Մինչ այդ, գործընթացը կանոնակարգվում էր միայն «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքով, որը սնանկության վարույթի առանձնահատկությունները հաշվի չէր առնում, և արդյունքում ոլորտը մնացել էր առանց հանգամանալից կանոնակարգման[151]:

Կարևոր երկու առաջընթացները, որոնք կարելի է արձանագրել նշված կանոնակարգման արդյունքում, վերաբերում է հերթական աճուրդների կազմակերպման ժամկետների սահմանմանը և, գույքի տեսակով պայմանավորված, աճուրդը չկայանալու դեպքում մեկնարկային գների իջեցման սահմանաչափերի հաստատմանը: Ըստ այդմ՝ Նախարարի հրամանով սահմանվել է, որ կառավարիչը հրապարակային սակարկություններով գույքի վաճառքը թույլատրելու մասին դատարանի որոշումն ստանալու օրվանից՝ հնգօրյա ժամկետում ապահովում է առաջին աճուրդի անցկացման մասին հայտարարության հրապարակումը: Երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդների մասին հայտարարությունները հրապարակվում են նախորդ աճուրդը չկայացած համարվելու օրվանից հետո ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում: Դե իսկ Օրենքի ուժով գույքի վաճառքը կազմակերպվում է աճուրդի վերաբերյալ վերջին հայտարարությունից 15 օր հետո: Այսինքն՝ առաջին աճուրդը պետք է տեղի ունենա գույքի վաճառքը թույլատրելու մասին դատարանի որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 20 օր հետո, իսկ յուրաքանչյուր հերթական աճուրդը պետք է տեղի ունենա նախորդ

---

151 Հարկ է, սակայն, նկատի ունենալ, որ Օրենքի փոփոխությունների անցումային դրույթների ուժով այդ կանոնակարգը պարտադիր է միայն Օրենքի փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո, այսինքն՝ 2020թ. ապրիլի 15-ից հետո հարուցված սնանկության գործերով կազմակերպվող աճուրդների նկատմամբ, ինչը, սակայն չի բացառում կառավարչի կողմից, որպես աճուրդի կանոնակարգ, այդ հրամանով սահմանված կարգավորումների կիրառումը նաև մինչև այդ հարուցված գործերով կազմակերպվող աճուրդների նկատմամբ:

աճուրդը չկայացած համարվելու օրվանից ոչ ուշ, քան 20 օր հետո: Ընդ որում, գույքը հրապարակային սակարկություններով չվաճառվելու դեպքում կառավարչի կողմից գույքի իրացումը հրապարակային սակարկություններով (կրկնաճուրդ) շարունակելու վերաբերյալ դատարանի լրացուցիչ որոշում չի պահանջվում:

Մեկնարկային գների իջեցման սահմանաչափերի մասով սահմանվել է, որ աճուրդը չկայացած համարվելու դեպքում յուրաքանչյուր հաջորդ աճուրդի համար լոտի մեկնարկային գինը նվազեցվում է անշարժ գույքի դեպքում՝ լոտի նախորդ աճուրդում սահմանված մեկնարկային գնի 10 տոկոսի չափով, շարժական գույքի դեպքում՝ 20 տոկոսի չափով, լոտում և՛ անշարժ և շարժական գույքեր ներառված լինելու դեպքում՝ 10 տոկոսի չափով, թանկարժեք մետաղ կամ քարեր պարունակող պերճանքի առարկաների դեպքում՝ 2 տոկոսի չափով, պահանջի իրավունքների (դեբիտորական պարտքերի, վճարային պահանջի իրավունք վկայող արժեթղթերի) դեպքում՝ 10 տոկոսի չափով:

Հրամանով նախատեսված այլ կարգավորումները վերաբերում են աճուրդի մասին հայտարարությանը ներկայացվող պահանջներին, աճուրդի մասնակցության կարգին, նախավճարի և մասնակցության վճարի չափերին, աճուրդի արդյունքների գրանցմանը, աճուրդը չկայացած համարելու և դրա հետևանքներին և այլն:

Օրենքը նաև կարգավորում է գույքի իրացումը ընդհատելու հարցը: Այսպես, կառավարչի միջնորդությամբ, դատարանի որոշմամբ ընդհատվում է հրապարակային սակարկություններով գույքի իրացումը, եթե տեղի է ունեցել վաճառվող գույքի կազմի (նախորդ աճուրդների նկատմամբ), ինչպես նաև շուկայական գների կտրուկ փոփոխություն: Հրապարակային սակարկություններով գույքի իրացումն ընդհատելու մասին դատարանի որոշման վերաբերյալ կառավարիչն անհապաղ տեղեկացնում է ամենախոշոր 5 պարտատերերին: Պարտապանի գույքի հրապարակային սակարկություններով իրացումն ընդհատվելու դեպքում այն կրկին հրապարակային սակարկություններով կարող է իրացվել դատարանի թույլտվությամբ:

Խոսելով պարտապանի գույքի ուղղակի վաճառքի մասին՝ պետք է նշել, որ պարտապանին պատկանող գույքի վաճառքն ուղղակի գործարքով իրականացնելու մտադրության դեպքում կառավարիչը պարտավոր է հրավիրել խորհրդի նիստ, իսկ վերջինի ձևավորված չլինելու դեպքում՝ ժողով՝ քննարկման դնելով այդ հարցը: Եթե խորհուրդը կամ ժողովը հավանություն է տալիս ուղղակի գործարքի վերաբերյալ կառավարչի մտադրությանը, ապա կառավարչի միջնորդության[152] հիման վրա դատարանը թույլատրում է գույքի վաճառքը, հակառակ դեպքում, երբ խորհուրդը կամ ժողովը հավանություն չի տալիս կառավարչի մտադրությանը, դատարանը մերժում է գույքը վաճառելու վերաբերյալ միջնորդությունը: Դատարանի կողմից գույքն ուղղակի վաճառքով վաճառելու թույլտվություն տալու մասին որոշում կայացնելուց հետո կառավարիչը հայտնի գնորդի հետ կնքում է գույքի առուվաճառքի պայմանագիր, որը հիմք է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցամատյանում անհրաժեշտ գրառումներ կատարելու համար:

Վերոնշյալ կանոնից բացառություն է նախատեսված այն դեպքում, երբ կառավարիչը ցանկանում է վաճառել այնպիսի գույքը, որի արժեքը չի գերազանցում պարտապանի՝ տվյալ պահին առկա գույքի արժեքի մեկ տոկոսը: Այդ դեպքում գույքի ուղղակի գործարքով վաճառքի համար խորհրդի նիստի, իսկ վերջինի ձևավորված չլինելու դեպքում ժողովի հրավիրումը պարտադիր չէ: Այս բացառությունը, սակայն, չի գործում այն դեպքում, երբ վաճառվող գույքի արժեքը գերազանցում է հինգ միլիոն դրամը:

Հատկանշական է նաև, որ Օրենքը արգելում է ուղղակի գործարքով վաճառել կառավարչի կամ որևէ պարտատիրոջ հետ փոխկապակցված անձին:

---

[152] Միջնորդության մեջ նշվում են գույքի գտնվելու վայրը, գույքի նկարագրությունը, վաճառքի գինը և հնարավոր գնորդը, ինչպես նաև կցվում է խորհրդի (ժողովի) նիստի արձանագրությունը:

§3. Գույքի վաճառքից ստացված միջոցների բաշխումը և պարտատերերի պահանջների բավարարումը

Օրենքի 79-րդ հոդվածը սահմանում է, որ պարտապանի գույքի վաճառքից (օտարումից) ստացված սնանկության վարույթի շրջանակներում հավաքագրվող գումարները մուտքագրվում են պարտապանի սնանկության հատուկ հաշվեհամարին:

Ընդհանրապես, ըստ գոյացման աղբյուրի, հավաքագրվող գումարները տարանջատվում են երկու հիմնական խմբի.

- գումարներ, որոնք գոյացել են ապահովված պահանջների բավարարման նպատակով իրականացված գործողությունների արդյունքում,
- գումարներ, որոնք գոյացել են սնանկության վարույթի շրջանակներում իրականացված գործողությունների արդյունքում, սակայն նախորդ խմբին չեն պատկանում:

Առաջին խմբին են պատկանում պահանջի ապահովման առարկա հանդիսացող գույքի օտարումից առաջացած դրամական միջոցները և ապահովված պահանջների կատարման ապահովման համար երաշխիք և երաշխավորություն տված անձանցից, կամ համապարտ այլ պարտապաններից հավաքագրված գումարները:

Սնանկության վարույթում հավաքագրված ցանկացած այլ գումար երկրորդ խմբին պատկանող գումար է:

Թեև օրենքով ուղղակիորեն նման տարանջատում սահմանված չէ, այնուհանդերձ սնանկության գործով կառավարիչը պարտավոր է վարել նման հաշվառում: Ավելին՝ առաջին խմբին դասվող գումարները ենթակա են հաշվառման նաև ըստ ապահովված պահանջների, քանի որ յուրաքանչյուր ապահովված պահանջ կարող է բավարարվել միայն այդ պահանջն ապահովող միջոցներից գոյացած գումարներով:

Օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքի վաճառքից (օտարումից) ստացված (փոխհատուցված) միջոցները բաշխվում են սույն օրենքով սահմանված հերթականությամբ՝ կառավարչի կողմից հաստատված և սույն հոդվածով սահմանված կարգով ընդունված (չառարկված) միջանկյալ բաշխման ծրագրին համապատասխան: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտապանի պարտավորությունների դիմաց գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցներից արտահերթ վճարվում են գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, ինչպես նաև կառավարչի վարձատրությունը:

Այսպիսով, օրենսդիրը էականորեն տարբերվող մոտեցումներ է ցուցաբերել չապահովված և ապահովված պահանջների բավարարմանն ուղղված միջոցների բաշխման հարցում: Այսպես, եթե չապահովված պահանջների բավարարման հերթականության մեջ առաջնահերթության կարգով բավարարվում են կառավարչի վարձատրությունը և վարչական ծախսերը, այնուհետև պահանջները՝ ըստ հերթերի, ապա պարտապանի պարտավորությունների դիմաց գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցներից արտահերթ վճարվում են գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, կառավարչի վարձատրությունը, որից հետո բավարարվում է գրավով ապահովված պահանջը[153]:

Գոյացած գումարները բաշխելու նպատակով սնանկության գործով կառավարիչը կազմում է միջանկյալ բաշխման ծրագիր, որը մեկ միասնական դատավարական փաստաթուղթ է և ներառում է համապարփակ տեղեկատվություն սնանկության վարույթում հավաքագրված դրամական միջոցների հանրագումարի, դրանց ծագման աղբյուրների, ինչպես նաև Օրենքի 43 և 44-րդ հոդվածներով սահմանված ապահովված և չապահովված պահանջների ու 82-րդ

---

[153] Տե՛ս **Տ.Ա. Մարկոսյան.** Գրավով ապահովված պահանջները սնանկության վարույթում: Գիտագործնական ձեռնարկ / Եր., Արդարադատության ակադեմիա, 2021, էջեր 48-50:

հոդվածով սահմանված կարգով պահանջների բավարարման հերթականության վերաբերյալ[154]:

ՍԿ-ն միջանկյալ բաշխման ծրագրի մեկական օրինակ ուղարկում է պարտապանին և պարտատերերին, իսկ երկու օրինակը՝ դատարանին: Եթե պարտատերերի թիվը 10-ից ավելի է, կառավարիչը միջանկյալ բաշխման ծրագիրը դատարան ներկայացնելու մասին ծանուցում է հրապարակում հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում, և դատարան է ներկայացնում միջնորդություն ծրագիրը դեպոնացնելու մասին:

Պարտատերերն իրավունք ունեն ծրագիրն ստանալու (հրապարակման դեպքում՝ հրապարակվելու) օրվանից 7 օրվա ընթացքում իրենց առարկությունները ներկայացնել դատարան: Առարկությունները քննարկվում են դատական նիստի ընթացքում, որի արդյունքներից ելնելով դատարանը կայացնում է ծրագիրը անփոփոխ թողնելու, փոփոխելու կամ մերժելու մասին որոշում:

Առարկությունների բացակայության դեպքում դատարանը ծրագրի մեկ օրինակի վրա կատարում է գրառում այն առարկված չլինելու վերաբերյալ և այդ օրինակը վերադարձնում է կառավարչին:

Կառավարիչը գումարների բաշխումը կատարում է չառարկված ծրագրին կամ դատարանի որոշմանը համապատասխան: Ընդ որում, պարտապանի դրամական միջոցներն անբավարար լինելու դեպքում համապատասխան հերթի պարտատերերի միջև դրանք բաշխվում են բավարարման ենթակա պահանջների գումարներին համամասնորեն, իսկ յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո:

Միևնույն ժամանակ, ՍԿ-ն պարտավոր է յուրաքանչյուր ամիս, մինչև հաջորդ ամսվա 10-ը ներառյալ, դատարան ներկայացնել պարտապանի գույքի վաճառքի, դրանից առաջացած

---

154 Տե՛ս ՍԴ 14.09.2021թ. թիվ ՍԴՈ-1609 որոշումը:

միջոցների բաշխման, պարտատերերի պահանջների բավարարման, պարտապանի գույքի և ակտիվների (այդ թվում՝ դեբիտորական պարտքերի) հավաքման ուղղությամբ իր իրականացրած միջոցառումների մասին:

§ 4. Սնանկության վերաբերյալ գործի ավարտը պարտապանի լուծարմամբ

Օրենքը նախատեսում է մի քանի իրավիճակ, որոնց դեպքում սնանկության վերաբերյալ գործը ենթակա է ավարտման: Դրանք բաժանվում են երկու հիմնական խմբերի.

1. սնանկության վարույթի ավարտը պարտապանի լուծարմամբ,
2. սնանկության վարույթի ավարտը պարտապանի ֆինանսական առողջացմամբ:

Առաջին դեպքում սնանկության վարույթն ավարտելու իրավական հիմքերից մեկը Օրենքի 105-րդ հոդվածն է, ըստ որի՝ եթե սնանկության վարույթի ընթացքում պարտապանին սեփականության իրավունքով պատկանող որևէ գույք չի հայտնաբերվել, կամ հայտնաբերված գույքի նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ բռնագանձում տարածվել չի կարող, ապա այդ հանգամանքներն ի հայտ գալու պահից սկսած կառավարիչը և պարտատերերը կարող են դիմել դատարան՝ սնանկության վարույթն ավարտելու մասին միջնորդությամբ:

Նույն սուբյեկտները սնանկության վարույթն ավարտելու միջնորդությամբ կարող են դատարան դիմել նաև այն դեպքերում, երբ պարտապանի գույքը հայտնաբերել հնարավոր չէ, պարտապանի գույքն այնքան փոքրարժեք է, որ ողջամիտ չէ սնանկության հետագա ընթացակարգերի իրականացումը, կամ պարտապանի գույքի հայտնաբերման կամ ակտիվների հավաքման ուղղությամբ իրականացվելիք ծախսերը չեն արդարացնում սնանկության հետագա ընթացակարգերի իրականացումը:

Այս առումով օրենսդիրը նախատեսել է հավասարակշռող գործիք. եթե որևէ պարտատեր առարկում է սնանկության վերաբերյալ գործի ավարտի դեմ, ապա պարտավոր է դատարանի որոշմամբ սահմանված չափով դեպոզիտ վճարել սնանկության հատուկ հաշվին՝ ի ապահովումն սնանկության գործի վարույթի հետ կապված

ծախսերի հատուցման, որից հետո սնանկության վարույթը կարող է շարունակվել:

Օրենսդիրը նշված գործիքի կիրառման մեթոդաբանությունը մանրամասն չի սահմանել, սակայն ենթադրվում է, որ համապատասխան հանգամանքներն ի հայտ գալու պահից հետո սնանկության գործը ավարտելու մասին հիմնավորված միջնորդությունը ներկայացվում է դատարան՝ այդ մասին տեղեկացնելով վարույթի մասնակիցներին: Վերջիններս միջնորդության դեմ իրենց առարկությունները ներկայացնում են դատարան և սնանկության վարույթի մասնակիցներին:

Ենթադրվում է, որ առարկություն ներկայացնողը պետք է մատնանշի, թե հատկապես ինչպիսի գործողություններ դեռևս պետք է կատարվեն վարույթն ավարտելու համար, որի հիման վրա դատարանը պետք է կատարի առարկությունում մատնանշված փաստարկների գնահատում և նախատեսվող ծախսերի հաշվարկ: Դատարանի հաստատած չափով գումարը առարկություն ներկայացնողի կողմից վճարվելուց հետո սնանկության վարույթը ենթակա է շարունակման:

Պարտապանի լուծարմամբ սնանկության վարույթի ավարտման մյուս իրավական հիմքը Օրենքի 87-րդ հոդվածն է, որի համաձայն՝ վարույթը ենթակա է ավարտման պարտապանի գույքերի վաճառքից ստացված միջոցները սահմանված կարգով բաշխելուց հետո, եթե վարույթի շրջանակներում այլ գործողությունների (օրինակ՝ դեբիտորական պարտավորությունների հավաքագրում) կատարման անհրաժեշտություն առկա չէ: Այս դեպքում վարույթն ավարտելու նպատակով պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց ոչ ուշ, քան 15 օր հետո կառավարիչը դատարան է ներկայացնում վերջնական հաշվետվություն և միջնորդություն սնանկության վարույթն ավարտելու վերաբերյալ:

Հաշվետվությանը կից ներկայացվում են պարտապանի ակտիվների հավաքագրման ուղղությամբ կատարված գործողությունների

ապացույցները, գույքի վաճառքը և պահանջների բավարարումը հավաստող ապացույցները, պարտատերերի պահանջների գրանցամատյանից քաղվածքը, գույքի վաճառք իրականացված լինելու դեպքում՝ վաճառքը հաստատող ապացույցները, վարույթում գումարներ հավաքագրված լինելու դեպքում՝ դրանց բաշխման ապացույցները:

Հարկ է նշել, որ կառավարչի կողմից դատարան ներկայացրած վերջնական հաշվետվությունը վերաբերում է սնանկության վարույթի շրջանակներում գրանցված պարտատերերին և նրանց հետ հաշվարկներ կատարելու և դրանց պահանջների հետ կապված ամբողջ փաստաթղթաշրջանառությանը, որի մեջ չեն ներառվում սնանկության վարույթից դուրս իրենց իրավունքներն իրացնող պարտատերերը[155]:

Միջնորդությունը դատարան ներկայացնելու մասին կառավարիչը ծանուցում է վարույթի մասնակիցներին՝ առաջարկելով տասնօրյա ժամկետում ծանոթանալ իր կողմից կազմված հաշվետվությանը և միջնորդությանը, որոնց մեկ օրինակը դեպոնացվում է կառավարչի մոտ:

Սնանկության վարույթն ավարտելու հարցի լուծման նպատակով դատարանը հրավիրում է դատական նիստ: Դատարանը, քննելով վերջնական հաշվետվությունը, վճիռ է կայացնում պարտապանի լուծարման հետևանքով սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին, կամ մերժում է գործն ավարտելու միջնորդությունը՝ նշելով մերժման պատճառները:

Պարտապանի լուծարմամբ սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից ոչ ուշ, քան 45 օրվա ընթացքում կառավարիչը պարտապանի՝ օրենքով և իրավական այլ ակտերով պահպանման ենթակա արխիվային փաստաթղթերը կարգավորված վիճակում հանձնում

[155] Տե՛ս ՎԴ թիվ ԵԿԴ/0090/04/13 սնանկության գործով 13.07.2021թ. որոշումը:

է ՀՀ պետական արխիվ և իրականացնում է օրենքով սահմանված բոլոր այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են պարտապան իրավաբանական անձի լուծարման կամ պարտապան անհատ ձեռնարկատիրոջ, այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի սնանկության հետևանքով գործունեության դադարման պետական գրանցման համար:

Կառավարիչը իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմին է ներկայացնում.

- դիմում, որում պետք է նշվի նաև իրավաբանական անձի պետական գրանցման ‘հաշվառման’ համարը,
- պարտապանի լուծարման հետևանքով սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին դատարանի վճռի պատճենը,
- պարտապանի՝ արխիվացման ենթակա փաստաթղթերը արխիվ հանձնելու մասին փաստաթուղթ:

Ընդ որում, կառավարիչը գույքային պատասխանատվություն է կրում սույն հոդվածի երկրորդ մասում նշված պարտականությունները չկատարելու հետևանքով երրորդ անձանց պատճառած վնասի համար:

Վերոնշյալ համատեքստում հարկ է ընդգծել, որ Օրենքի փոփոխություններին զուգահեռ 2019թ. լրացում է կատարվել նաև «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի 50-րդ հոդվածում, որով, որպես իրավաբանական անձի լուծարման պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթեր նախատեսվել են լուծարումը գրանցելու դիմումը ներկայացնելու օրվան նախորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում.

- Դատական դեպարտամենտի տված տեղեկատվությունը՝ իրավաբանական անձի մասնակցությամբ հարուցված և չավարտված դատական գործերի բացակայության վերաբերյալ,
- Հարկադիր կատարումն ապահովող ծառայության տված տեղեկատվությունը՝ իրավաբանական անձի մասնակցությամբ հարուցված և չկարճված կատարողական վարույթների բացակայության վերաբերյալ:

Նշված կարգավորումը սահմանվել է այն հանգամանքից ելնելով, որ կարող էր առկա լինել իրավիճակ, երբ իրավաբանական անձի լուծարումը գրանցվեր այն պայմաններում, երբ այդ անձի մասնակցությամբ դեռևս առկա էր չավարտված դատական կամ կատարողական վարույթ, այնինչ անձի լուծարման հետևանքով այդ վարույթներն ի չիք էին դառնում:

Իրավաբանական անձ պարտապանը համարվում է լուծարված, իսկ պարտապան անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը՝ դադարած համապատասխան պետական գրանցման պահից: Այդ պահից նաև դադարեցվում են կառավարչի՝ Օրենքով սահմանված իրավունքներն ու պարտականությունները:

ՄԱՍ VIII.
ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

ԳԼՈՒԽ 16. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՍՆԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

§1. Ֆիզիկական անձանց սնանկության վարույթի հարուցումը և գործի քննությունը

Ֆիզիկական անձանց սնանկ ճանաչելու հետ կապված առանձնահատկությունները կարգավորված են Օրենքի 11-րդ գլխով: Ընդհանուր կանոնի համաձայն՝ ֆիզիկական անձանց սնանկության հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են Օրենքի դրույթները, եթե վերոնշյալ գլխով այլ բան նախատեսված չէ:

Օրենքի համաձայն՝ ֆիզիկական անձին սնանկ ճանաչելու մասին դիմումը դատարան կարող է ներկայացնել տվյալ ֆիզիկական անձը կամ պարտատերը անձամբ կամ ներկայացուցչի միջոցով: Ֆիզիկական անձանց սնանկ ճանաչելու հիմքերը նախատեսված են Օրենքի 3-րդ հոդվածում և առկա չէ տարբերակում ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև՝ կապված անվճարունակության հատկանիշների առնչությամբ: Ընդ որում, ֆիզիկական անձանց

դեպքում սնանկ ճանաչելու հիմքում դրված պարտավորությունների 74 %-ը բխում է պայմանագրերից[156]:

Օրենքի 93-րդ հոդվածը սահմանում է ֆիզիկական անձանց սնանկ ճանաչելու գործընթացի հատուկ կանոնները: Մասնավորապես, հոդվածի առաջին մասը սահմանում է, որ ֆիզիկական անձին սնանկ ճանաչելու մասին վճռով դատարանն արգելանք է դնում տվյալ անձի գույքի վրա, բացառությամբ այն գույքի, որի վրա օրենքով չի կարող բռնագանձում տարածվել:

Միևնույն ժամանակ օրենսդիրը հնարավորություն է վերապահել ֆիզիկական անձի գույքը ազատել արգելանքից ֆիզիկական անձի միջնորդությամբ երկու դեպքում՝ եթե ներկայացվում է երրորդ անձանց կողմից երաշխավորություն կամ պարտավորությունների կատարման այլ ապահովում: Հաստակեցնելով այս դրույթը՝ օրենսդիրը նախատեսում է, որ դատարանն ազատում է ֆիզիկական անձի գույքն արգելանքից, եթե վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով գրավադրվում է պարտապանի պարտավորությունները գերազանցող (առնվազն 30 տոկոսով) արժեքով գույք, ներկայացվում է երաշխիք կամ սնանկության հատուկ հաշվին որպես դեպոզիտ մուտքագրվում են պարտավորությանը համարժեք դրամական միջոցներ:

Ինչպես այլ երկրներում, այնպես էլ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է ֆիզիկական անձին վերապահված հնարավորությունը պարտատերերի հետ վերջնահաշվարկներ կատարելու կամ հաշտության համաձայնություն ներկայացնելու համար: Սակայն դատարանի կողմից սահմանված ժամկետում հաշտության համաձայնություն չկնքելու դեպքում դատարանը համապատասխան հիմքերի առկայության պայմաններում վճիռ է կայացնում անձին սնանկ ճանաչելու մասին:

---

[156] Առավել մանրամասն տե՛ս Միացյալ Թագավորության կառավարության Լավ Կառավարման հիմնադրամի ֆինանսավորմամբ 2019թ. պատրաստված «Սնանկության ոլորտի հետազոտության հաշվետվությունը», էջ 43:

Օրենքի 93-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Ֆիզիկական անձի օգտին ժառանգության բացման մասին տեղեկությունների առկայության դեպքում դատարանի որոշմամբ կարող է կասեցվել սնանկության մասին գործի վարույթը՝ մինչև օրենքով սահմանված կարգով ժառանգության հարցի լուծումը:

Նախ հարկ է նկատել, որ այս կարգավորումը բացառություն է սնանկության վարույթի ընդհանուր կարգավորումների համատեքստում, քանի որ այն իրավաբանական անձանց սնանկության դեպքում նախատեսում է միայն առանձին պարտատիրոջ պահանջի քննությունը կասեցնելու հնարավորություն: Մյուս կողմից, ուշադրության է արժանի հիշատակված դրույթում օգտագործված «կարող է» բառը, որը նշանակում է, որ դատարանը այս հիմքով սնանկության վարույթը պետք է կասեցնի միայն այն դեպքում, երբ առանց պարտապանի օգտին ժառանգության հարցի լուծման հնարավոր չէ վարույթի շարունակումը, այլ կերպ ասած՝ պարտապանը չունի բավարար գույք:

Սնանկության դիմումներկայացնելու փուլում ֆիզիկական անձանց սնանկ ճանաչելու գործընթացի տեսանկյունից հատկանշական է Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված կարգավորումն առ այն, որ դատավորը վերադարձնում է սնանկության կամ սնանկության վտանգի վերաբերյալ դիմումը, եթե մեկ դիմումում միացված են մի քանի պարտապաններին սնանկ ճանաչելու վերաբերյալ պահանջներ, բացառությամբ եթե պարտապաններն ամուսիններ են և դիմողի նկատմամբ օրենքի ուժով համապարտ են:

Վկայակոչված նորմի մեկնաբանությունից ակնհայտ է, որ դրանում ամրագրված բացառությունը վերաբերում է միայն ֆիզիկական անձ պարտապաններին, սակայն հետաքրքրություն է ներկայացնում դրա գործնական կիրառությունը: Խոսքն այն մասին է, որ Օրենքը դիմումի բովանդակության և կցվող փաստաթղթերի առնչությամբ այս մասով չունի հատուկ կարգավորումներ: Այնուամենայնիվ, սնանկության դիմումը մի քանի պարտապանների դեմ ներկայացված լինելու հանգամանքը պարտավորեցնում է դատարանին

ստուգել հիշատակված պայմանների առերևույթ առկայությունը: Հետևաբար, դիմողը բացասական հետևանքներից խուսափելու համար պարտավոր է դիմումում հիմնավորել համապատասխան պարտավորության օրենքի ուժով համապարտ բնույթը, ինչպես նաև դիմումին կցել պարտապանների ամուսիններ լինելու մասին ապացույց:

§2. Ֆիզիկական անձի ֆինանսական առողջացումը

Ֆիզիկական անձի առողջացման ծրագիրը ներկայացնելու, հաստատելու հետ կապված հարաբերությունների նկատմամբ տարածվում են իրավաբանական անձանց համար Օրենքով սահմանված իրավակարգավորումները, եթե այլ բան սահմանված չէ Օրենքի 94-րդ հոդվածով:

Հարկ է նշել, որ մինչև 2016 թվականը Օրենքը սահմանում էր, որ ֆիզիկական անձի ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատում է դատարանը, եթե այն համապատասխանում է Օրենքով սահմանված պահանջներին: Այսինքն՝ ֆինանսական առողջացման ծրագրի հաստատման միակ պայմանը դրա Օրենքի պահանջներին համապատասխանությունն էր: Արդյունքում պարզ չէր, թե արդյոք պարտատերը կարող է ֆինանսական առողջացման ծրագրի առնչությամբ ներկայացնել առարկություն և նման իրավունք ունենալու դեպքում ինչ ժամկետում կարող էր այն իրականացնել:

ՎԴ-ն, անդրադառնալով այս հարցերին, նախ արձանագրել է, որ, ֆիզիկական անձի սնանկության առանձնահատկություններից ելնելով, օրենսդիրը վերջինիս ֆինանսական առողջացման ծրագրի վերաբերյալ պարտատերերի կողմից քվեարկության հնարավորություն չի նախատեսել, այդուհանդերձ, հնարավորություն է տվել պարտատերերին՝ ծանոթանալու ֆինանսական առողջացման ծրագրին, և իրենց իսկ շահերի պաշտպանությունից ելնելով՝ նաև վիճարկել այն: Այնուհետև ՎԴ-ն դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ Օրենքում այս իրավունքի իրականացման համար ժամկետի բացակայության պայմաններում այդ ժամկետը ենթակա է սահմանման դատարանի կողմից՝ ապահովելով այդ իրավունքի իրականացման համար իրական երաշխիքներ[157]:

[157] Առավել մանրամասն տե՛ս ՎԴ թիվ ՇԴ/0031/04/13 սնանկության գործով 30.04.2015թ. որոշումը:

Միաժամանակ պետք է նկատել, որ օրենսդրական մակարդակում իրավիճակը փոխվեց 17.06.2016 թվականին կատարված փոփոխություններով: Այսպես, Օրենքի 94-րդ հոդվածի 2-րդ մասում կատարվեց լրացում՝նախատեսելով նաև պարտապանի և գրանցված պարտատիրոջ համաձայնության պահանջ:

Ֆիզիկական անձանց ֆինանսական առողջացման ծրագրի հաջորդ առանձնահատկությունը կապված է դրա առավելագույն ժամկետի հետ: Մասնավորապես, Օրենքի 94-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ֆիզիկական անձի առողջացման ծրագրի առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել չորս տարին:

Հետաքրքրական է նաև ֆինանսական առողջացման ծրագրերի ներկայացման մասով վիճակագրությունը: Այսպես, պարտապան ֆիզիկական անձանց շուրջ 72%-ը չի ցանկացել ներկայացնել ֆինանսական առողջացման ծրագիր, 17,1%-ը՝ ցանկացել, բայց չեն ներկայացրել, իսկ ներկայացրել է միայն 5,7%-ը: Ի համեմատություն նշենք, որ օրինակ իրավաբանական անձանց դեպքում ֆինանսական առողջացման ծրագրեր ներկայացվել են առավել շատ դեպքերում, այն է՝ 16,8% [158]:

[158] Միացյալ Թագավորության կառավարության Լավ Կառավարման հիմնադրամի ֆինանսավորմամբ 2019թ. պատրաստված «Մնանկության ոլորտի հետազոտության հաշվետվությունը», էջեր 80-83:

§ 3. Ֆիզիկական անձի գույքը և դրա վաճառքը

Օրենքը առանձին դրույթով անդրադարձել է պարտապանի գույքին, որը կարող է ներառվել վաճառքի ենթակա գույքի կազմում: Ընդ որում, գույքի շրջանակը կախվածության մեջ է դրվում նաև այն հանգամանքից, թե արդյոք գործի շրջանակում հաստատվել է ֆինանսական առողջացման ծրագիր, թե ոչ: Մասնավորապես, ֆիզիկական անձի առողջացման ծրագիր հաստատված լինելու դեպքում վերջինիս վաճառքի ենթակա գույքի կազմում ներառվում է նաև այն գույքը, որը նա ձեռք է բերել սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, սակայն մինչև գործի ավարտը կամ Օրենքի 68-րդ հոդվածով նախատեսված դեպքի վրա հասնելը: Իսկ ֆինանսական առողջացման ծրագիր հաստատված չլինելու դեպքում պարտապան ֆիզիկական անձի վաճառքի ենթակա գույքի կազմում չի ներառվում վերջինիս սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ձեռք բերված գույքը, բացառությամբ դրան հաջորդող 180 օրվա ընթացքում ժառանգությամբ ստացված կամ ժառանգություն բացելու դեպքում ստացման ենթակա գույքի, ինչպես նաև այն գույքի, որը ստացվել է մինչև սնանկության դիմում ներկայացնելը պարտապանի կնքած գործարքի արդյունքում:

Օրենքի փոփոխություններով Օրենքի 95-րդ հոդվածում կատարվել է լրացում, որի համաձայն՝ հոդվածը չի տարածվում պարտապանի աշխատավարձից կատարվող գանձումների վրա: Կատարված լրացումը նպատակ է հետապնդում ապահովել պարտատերերի պահանջների առավելագույնս բավարարումը: Մասնավորապես, Օրենքի 95-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված կարգավորմամբ նույն հոդվածով նախատեսված սահմանափակումներն ու բացառությունները չեն կարող տարածվել աշխատավարձի վրա, այլ կերպ ասած՝ այդ հոդվածում կիրառվող գույք եզրույթի շրջանակներում այն չի դիտարկվում: Ասվածը նշանակում է, որ

կատարված փոփոխությունների ուժով աշխատավարձի նկատմամբ բռնագանձումը սնանկության վարույթի շրջանակներում կատարվում է ընդհանուր հիմունքներով և որևէ առանձնահատկություն այդ հարցում նախատեսված չէ[159]:

Ասվածը կարելի է հիմնավորել նաև այն հանգամանքով, որ աշխատավարձի նկատմամբ բռնագանձում տարածելու կարգը կիրառվում է կատարողական վարույթի ընթացքում: Մասնավորապես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 5-րդ, 43-րդ, 58-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից բխում է, որ բոլոր դեպքերում առաջին հերթին բռնագանձման ենթակա են պարտապանի դրամական միջոցները: Նշված մոտեցումը տրամաբանական է և արդարացված, քանի որ պարտատիրոջ պահանջը ևս դրամական պահանջ է: Ուստի այն դեպքում, երբ պարտապանն ունի բավարար դրամական միջոցներ, ապա արդարացված չի լինի այդ պահանջի բավարարման համար արգելադրել և իրացնել պարտապանին պատկանող այլ՝ շարժական կամ անշարժ գույք: Ավելին, այլ գույքի հայտնաբերումը և դրա

---

159 Դատական պրակտիկայում, սակայն, այս հարցին տրվել է այլ մեկնաբանություն: Մասնավորապես, օրինակ՝ ՎՔԴ թիվ ՍնԴ/1823/04/20 սնանկության գործով 03.03.2021թ. որոշմամբ հանգել է նրան, որ Օրենքի 95-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավակարգավորումը վերաբերում է անմիջապես գործարքի արդյունք հանդիսացող գույքի ձեռքբերման դեպքերին, և դրա կանոնները կիրառելի չեն աշխատանքային իրավահարաբերությունների նկատմամբ: Դատարանը, ի թիվս այլնի, նշել է, որ աշխատավարձի արգելադրումը սնանկության վարույթում չի կարող իրականացվել այնպես, որ պարտապանը սնանկ ճանաչվելուց հետո անորոշ ժամանակով զրկվի իր աշխատանքի դիմաց վարձատրությունն օգտագործելու հնարավորությունից, քանի որ դա անմիջական խոչընդոտ կհանդիսանա սնանկության վարույթի ընթացքում պարտապանի սոցիալ-ֆինանսական վերականգնման համար և կկաշկանդի նրան դրսևորել որևէ նախաձեռնողականություն նոր աշխատանք փնտրելու կամ եկամուտներ ստանալու հարցում: Դատարանի գնահատմամբ՝ Օրենքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի գործողությունը տարածվում է Աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով միայն մինչև սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահը վճարված աշխատավարձից կատարվող գանձումների վրա և պարտապանի՝ վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ստացվող աշխատավարձը չի մտնում Օրենքի 95-րդ հոդվածի իմաստով վաճառքի ենթակա գույքի կազմի մեջ:

հաշվին պարտատիրոջ պահանջի բավարարումը ենթադրում է լրացուցիչ ռեսուրսների կիրառում ևս: Ուստի Օրենքով նախատեսվել է արդյունավետ և ճկուն լուծում, որը կապահովի պարտապանի կողմից որոշակի դրամական միջոցներ տնօրինելու հնարավորությունը՝ միաժամանակ ապահովելով պարտատիրոջ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Նման կարգավորումները, սակայն, գործում են օրենքով նախատեսված լրացուցիչ երաշխիքների հաշվառմամբ: Այսպես՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 6-րդ գլուխը սահմանում է պարտապան ֆիզիկական անձի աշխատավարձի և այլ տեսակի եկամուտների վրա բռնագանձում տարածելու հնարավորությունը: Սակայն աշխատավարձի նկատմամբ կիրառվող սահմանափակումը բացարձակ բնույթ չի կրում, քանի որ բռնագանձում տարածելիս թույլատրվում է պահել այդ եկամուտների միայն մի մասը և միայն այդ մասն ուղղել պահանջների բավարարմանը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է, որ աշխատավարձից և դրան հավասարեցված վճարներից կարող է պահվել հիսուն տոկոսից ոչ ավելի: Այլ կերպ ասած, մյուս մասով աշխատավարձի վրա բռնագանձում չի տարածվում: Առանձին դեպքերում պահումների չափը չի կարող գերազանցել աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների յոթանասունհինգ տոկոսը: Այս երաշխիքները կիրառվում են նաև սնանկության վարույթում, քանի որ Օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի ուժով կառավարիչը դատարանի որոշման հիման վրա արգելադրում է պարտապանին սեփականության իրավունքով պատկանող գույքը, բացառությամբ այն գույքի, որի վրա, ՀՀ օրենսդրության համաձայն, բռնագանձում չի կարող տարածվել: Իսկ այդ գույքի ցանկը, որոնց թվում է նաև աշխատավարձի հիսուն տոկոսը, նախատեսված է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով:

Օրենքը, պարտապանի շահերի պաշտպանության նպատակով նախատեսել է այն գույքի շրջանակը, որը սնանկության վարույթում իրացման ենթակա չէ: Մասնավորապես նախատեսվել է, որ պարտատերերի պահանջների բավարարման նպատակով իրացման (օտարման) ենթակա չէ պարտապանի այն գույքը, որի վրա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չի կարող բռնագանձում տարածվել: Այդ գույքի ցանկը նախատեսվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 51-րդ հոդվածով: Նշվածը վերաբերում է նաև պարտապանի միակ բնակարան հանդիսացող գույքին, որը չբռնագանձելու ռեժիմը տարածվում է նաև սնանկության վարույթում[160]: Այս առումով Օրենքի 96-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե հարկադիր կատարման օրենսդրության իմաստով՝ պարտապանի միակ բնակարանն իրացվում է կառավարության սահմանած գումարը գերազանցող գնով, ապա կառավարության սահմանած՝ միակ բնակարանի իրացման համար նախատեսված նվազագույն գումարը վերադարձվում է պարտապանին և ենթակա չէ բռնագանձման:

Ի թիվս «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով նախատեսված գույքի սպառիչ ցանկի՝ օրենսդիրը հատուկ նորմ է նախատեսել Օրենքով՝ սահմանելով, որ պարտապանի կամ այլ անձանց պահանջով դատարանի որոշմամբ բռնագանձում կարող է չտարածվել բռնագանձման ենթակա պարտապանի այն գույքի վրա, որի արժեքը էական ազդեցություն չի կարող ունենալ պարտատերերի պահանջների բավարարման համար:

[160] Այս առնչությամբ ուշագրավ է ՎԴ թիվ ԱՎԴ/0060/04/17 սնանկության գործով 05.06.2020թ. որոշումը:

§ 4. Ֆիզիկական անձի սնանկության հետևանքները

Ֆիզիկական անձանց սնանկության վարույթի ավարտի և դրա հետևանքների հիմքում ընկած են հետևյալ երեք սկզբունքները.

- պարտավորություններից ազատում,
- խտրականության բացառում,
- կրկնակի սնանկության արգելք:

Մասնավորապես, առաջինը սնանկության վարույթի ավարտից հետո պարտավորություններից ազատվելու հանգամանքն է: Երկրորդը՝ խտրականության բացառումը հետագա հարաբերություններում: Երրորդը՝ հետագայում որոշակի ժամանակահատվածում կրկին սնանկ ճանաչվելու հնարավորության բացառումը:

Հենց նշվածով է պայմանավորված ֆիզիկական անձանց սնանկության ինստիտուտին բնորոշ «նոր մեկնարկի և սկզբի» գաղափարը, որը բնութագրվում է հնարավորությամբ՝ պարտքերի մարման ժամանակացույցի ավարտից հետո ազատ լինել պարտավորություններից: Սակայն այժմ էլ կան երկրներ, ովքեր չեն ընդունում պարտավորություններից լիովին ազատելու մասին դրույթը, և նախատեսում են մասնակի ազատման հնարավորություն, կամ որոշակի ժամանակահատվածի սահմանում, որի ավարտից հետո է պարտապանը դառնում տնտեսական հարաբերությունների ակտիվ սուբյեկտ, կամ պարտավորությունների մարման այնպիսի ժամկետի սահմանում, ինչպիսին օրինակ երեքից հինգ տարին կարող է լինել: Հենց այս մոդելն է հայտնի «վաստակած նոր մեկնարկ» անունով:

Առաջին բաղադրիչի մասով Օրենքը ևս նախատեսում է այն պարտավորությունների շարքը, որոնց կատարումից պարտապանը չի ազատվում նույնիսկ սնանկության վարույթի ավարտից հետո, երբ կայացվում է ֆիզիկական անձի սնանկության գործը

պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու մասին վճռիռ: Այդ պարտավորությունների շարքին են դասվում.

- Օրենքի 90-րդ հոդվածի երկրորդ մասով նախատեսված պարտավորությունները,
- սնանկության դիմում ներկայացնելուն նախորդած 90 օրվա ընթացքում ստանձնած և 100·000 դրամը գերազանցող պարտավորությունները,
- ուսման վարկավորման գումարը վերադարձնելու պարտավորությունը,
- պարտատերերի պահանջներից բխող պարտավորությունները, եթե պարտապանը սնանկության վարույթի ընթացքում գույք է թաքցրել՝ թաքցված գույքի արժեքի չափով:

Ինչ վերաբերում է կրկնակի սնանկության արգելքին, ապա Օրենքի 99-րդ հոդվածը սահմանում է, որ ֆիզիկական անձի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու մասին վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ հինգ տարվա ընթացքում, նույն ֆիզիկական անձը չի կարող կամավոր սնանկության դիմում ներկայացնել սնանկ ճանաչվելու համար, իսկ նման դիմում ներկայացնելու դեպքում դիմումի ընդունումը ենթակա է մերժման:

ԳԼՈՒԽ 17. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

§1. Լուծարվող պարտապանի սնանկությունը

Օրենքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե լուծարվող իրավաբանական անձ-պարտապանի գույքի արժեքը բավարար չէ պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա իրավաբանական անձը լուծարվում է Օրենքով սահմանված կարգով: Նշյալ դրույթի վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգելու, որ այն վերաբերում է սնանկության վարույթից դուրս արդեն լուծարման գործընթացում գտնվող իրավաբանական անձին, որի գույքի արժեքը բավարար չէ պարտատերերի պահանջները բավարարելու համար:

Իրավաբանական անձանց լուծարումը նախատեսված է Օրենսգրքի 67-70-րդ հոդվածներով, մասնավորապես սահմանված է լուծարման հիմքերը, իրավաբանական անձի լուծարման մասին որոշում ընդունած անձի պարտականությունները, լուծարման և պարտատերերի պահանջների բավարարման կարգը: Ընդ որում, լուծարման հիմքերի մեջ, ի թիվս այլնի, նախատեսված է, եթե լուծարվող իրավաբանական անձի գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով:

Հարկ է նշել, որ Օրենսգրքով մանրամասն կարգավորված է իրավաբանական անձանց լուծարման կարգը: Այսպես, օրենսդիրը պարտավորեցրել է լուծարման հանձնաժողովին http://www.azdarar.am հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հայտարարություն զետեղել նրա լուծարման և պարտատերերի պահանջների ներկայացման

կարգի ու ժամկետի մասին, որը չի կարող պակաս լինել երկու ամսից՝ սկսած լուծարման մասին հրապարակման պահից:

Լուծարման հանձնաժողովը միջոցներ է ձեռնարկում պարտատերերին հայտնաբերելու և դեբիտորական պարտքն ստանալու ուղղությամբ, ինչպես նաև պարտատերերին տեղեկացնում է իրավաբանական անձի լուծարման մասին:

Վերը նշված գործողությունների կատարումից հետո, եթե պարզվում է, որ լուծարվող իրավաբանական անձի գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջներն ամբողջությամբ բավարարելու համար, լուծարման հանձնաժողովը պարտավոր է դադարեցնել լուծարումը և կազմակերպությանը սնանկ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնել դատարան:

Օրենքով կարգավորված է լուծարվող իրավաբանական անձանց սնանկության առանձնահատկությունները: Մասնավորապես, եթե լուծարման հանձնաժողովը իրականացրել է պարտատերերի հայտնաբերմանն ուղղված վերը նշված բոլոր գործողությունները, ապա վերջինիս կազմած պարտատերերի ցուցակը հիմք է ՍնԴ կողմից պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու համար: Հակառակ դեպքում, եթե դատարանը գալիս է այն եզրահանգման, որ պարտատերերի հայտնաբերմանն ուղղված վերը նշված գործողությունները չեն կատարվել կամ թերի են կատարվել, որպիսի օրինակ կարող է լինել լուծարման հանձնաժողովի կողմից http://www.azdarar.am հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում պարտապանի լուծարման և պարտատերերի պահանջների ներկայացման կարգի ու ժամկետի մասին հայտարարությունը չզետեղելը, ապա պարտատերերը լուծարվող իրավաբանական անձի նկատմամբ իրենց պահանջները կարող են սնանկության դատարան ներկայացնել լուծարվող պարտապանին սնանկ ճանաչելու մասին սնանկության գործով կառավարչի հայտարարությունը http://www.azdarar.am հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու օրվա-

նից մեկ ամսվա ընթացքում: Ընդ որում, այս դեպքում արդեն պարտատերերի վերջնական ցուցակը հաստատելու ընթացակարգն իրականացվում է Օրենքի 46-րդ հոդվածով սահմանված կարգով:

Լուծարվող պարտապանի գործի քննության առանձնահատկություններից է նաև այն, որ, ի տարբերություն ընդհանուր ընթացակարգով իրականացվող իրավաբանական անձանց սնանկության վարույթի, լուծարման հանձնաժողովը չի կարող ներկայացնել ֆինանսական առողջացման ծրագիր, քանի որ իրավաբանական անձի կանոնադրությամբ դրա համար լիազորված բարձրագույն մարմինը մինչև սնանկության վարույթ սկսելն արդեն որոշում է կայացրել պարտապանին լուծարելու մասին, իսկ Օրենքի դրույթների վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգելու, որ ֆինանսական առողջացման ծրագիրը պետք է ներկայացվի մինչև պարտապանի լուծարումը: Հետևաբար, կարող ենք արձանագրել, որ ոչ միայն լուծարվող պարտապանի, այլ նաև ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու իրավասություն ունեցող մյուս սուբյեկտների, այդ թվում՝ պարտատերերի և սնանկության գործով կառավարչի կողմից լուծարվող պարտապանի սնանկության դեպքում չի կարող ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացվել:

Պետք է նշել նաև, որ լուծարվող պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից լուծարման հանձնաժողովի լիազորությունները դադարում են, որպիսի պարագայում, լուծարման հանձնաժողովը պարտավոր է սնանկության գործով կառավարչին հանձնել պարտապանի ողջ գույքը, հաշվապահական և այլ փաստաթղթերը, իսկ լուծարվող պարտապանի սնանկության վարույթում իրականացվող ընթացակարգերը, այդ թվում՝ առկայության դեպքում լուծարվող պարտապանի գույքի վաճառքը, պարտատերերի պահանջների բավարարումը, սնանկության գործի ավարտը և իրավաբանական անձի լուծարման հետևանքով գործունեության դադարման պետական գրանցման համար անհրաժեշտ գործողությունները շարունակվում են Օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

§ 2. Բացակայող պարտապանի սնանկությունը

Դատական պրակտիկայում հաճախ են հանդիպում դեպքեր, երբ ֆիզիկական անձ պարտապանը, անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձ պարտապանի ղեկավարը գտնվում է արտերկրում, կամ գտնվում է երկրում, սակայն փոխել է բնակության վայրը, որի մասին դիմողը, դատարանը և ԺԿ-ն տեղեկացված չեն: Քիչ չեն նաև դեպքերը, երբ նշված անձինք հրաժարվում են ստանալ իրենց կամ իրենց ղեկավարած կազմակերպությանը հասցեագրված ծանուցումները:

Նման իրավիճակում պարտապանը համարվում է բացակայող՝ անկախ այն բանից, թե վերոնշյալ իրավիճակներից որն է իրականում առկա:

Վերոհիշյալ դեպքերից ցանկացածի պարագայում դատարանն իր նախաձեռնությամբ հետախուզում է հայտարարում տվյալ անձի՝ ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր պարտապանի, իրավաբանական անձ պարտապանի ղեկավարի, ինչպես նաև պարտապանի գույքի և փաստաթղթերի նկատմամբ՝ կայացնելով համապատասխան որոշում, որի հիման վրա կազմված կատարողական թերթն ուղարկվում է հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը:

Հետախուզվողին հայտնաբերելու դեպքում վերջինս տեղեկացվում է սնանկության վարույթի մասին և ապահովվում է նրա մասնակցությունը վարույթին:

Եթե պարտապանը կամ նրա որևէ ներկայացուցիչ չի հայտնաբերվում, Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը որոշում է կայացնում կատարողական վարույթն ավարտելու մասին, որը հիմք է հանդիսանում սնանկության վարույթը հետախուզվող անձանց բացակայությամբ շարունակելու համար: Այս դեպքում,

Օրենքի 103-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, դատարանը պարտապանին ծանուցում է նրա վերջին հայտնի՝ գտնվելու կամ բնակության վայրի հասցեով, և այդ ծանուցումը բավարար է գործի վարույթը շարունակելու համար:

Ծանուցումն ուղարկելուց հետո 9 օրվա ընթացքում պարտապանն իրավունք ունի վիճարկել իր սնանկությունը կամ դրա վերաբերյալ ներկայացնել իր դիրքորոշումը, որի դեպքում դատարանը պետք է սնանկության վարույթը շարունակի ընդհանուր ընթացակարգերին համապատասխան:

Նշված ժամկետում պարտապանից որևէ դիրքորոշում չստանալու դեպքում, ժամկետի ավարտից 3 օր հետո դատարանը վճիռ է կայացնում պարտապանին սնանկ ճանաչելու մասին, եթե առկա են Օրենքով սահմանված սնանկության հատկանիշները:

Վերոնշյալ ընթացակարգը դիտարկելով որպես պարզեցված՝ օրենսդիրը սահմանել է, որ ցանկացած պահի պարտապանի կամ նրա գույքի հայտնաբերման դեպքում կառավարչի միջնորդությամբ դատարանը կարող է որոշում կայացնել՝ սնանկության պարզեցված ընթացակարգի դադարեցման և Օրենքով նախատեսված սնանկության ընդհանուր ընթացակարգերին անցնելու մասին:

Հիշատակվածի առնչությամբ, սակայն, հարկ է արձանագրել, որ նման ընթացակարգով վճռի կայացումից հետո սնանկության վարույթի որևէ առանձնահատուկ ընթացակարգ սահմանված չէ, այսինքն՝ անկախ այն բանից, թե պարտապանը բացակայում է, թե ոչ, նրան սնանկ ճանաչելուց հետո սնանկության վարույթն իրականացվում է միևնույն ընթացակարգով, որպիսի պայմաններում Օրենքի ընդհանուր ընթացակարգին անցնելու վերաբերյալ կարգավորման անհրաժեշտությունը բացակայում է:

ՄԱՍ IX. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐԻՉԸ

ԳԼՈՒԽ 18. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

§1. Սնանկության կառավարչի կարգավիճակը

Սնանկության վարույթի իրականացումը անհնար է պատկերացնել առանց այնպիսի կարևոր սուբյեկտի մասնակցության, ինչպիսին է ՍԿ-ն, ում գործառույթների մեջ է մտնում պարտապանի ակտիվների և գործունեության ընդհանուր կառավարումը[161]: Ընդ որում, իր գործունեության ընթացքում ՍԿ-ն պետք է հավասարակշռություն ապահովի պարտապանի և պարտատերերի շահերի միջև[162]:

Հարկ է նշել, որ մինչև անձին սնանկ ճանաչելու հարցի լուծումը ՍԿ-ն հանդես է գալիս ԺԿ կարգավիճակում՝ օրենքով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ[163]: Մասնավորապես,

---

[161] Տե՛ս Council regulation (EC) No 1346/2000 of 29 May 2000 on insolvency proceedings, Article 2(b):

[162] Տե՛ս ՎԴ թիվ ԵԱԴԴ/0100/04/17 սնանկության գործով 25.02.2020թ. որոշումը:

[163] Նման պայմաններում ակնհայտ է, որ ՍԿ-ի և սնանկության ԺԿ-ի կարգավիճակները հավասարեցված են, եթե Օրենքով որևէ հարաբերության համար բացառություն սահմանված չէ:

Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Մնանկության ԺԿ-ն.

ա) միջնորդություն է ներկայացնում դատարան՝ սույն օրենքի 13-րդ հոդվածի չորրորդ մասով նախատեսված սահմանափակումների կիրառման համար,

բ) մինչև պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահն իրականացնում է սույն օրենքի 29-րդ հոդվածի առաջին մասի «ե», «զ» և «ժա.1» կետերով նախատեսված լիազորությունները»:

Մնանկության ԺԿ և ՍԿ լիազորությունները հանգում են հետևյալին.

Սնանկության ԺԿ լիազորություններ	ՍԿ լիազորություններ
	դատարանի պահանջով, իր նախաձեռնությամբ կամ պարտապանի նկատմամբ գրանցված պահանջների 5 տոկոսից ավելի ունեցող պարտատերերի պահանջով հրավիրում է պարտատերերի ժողով և նախագահում է այն: Եթե պարտատերերի ժողով է հրավիրվում կառավարչին ազատելու մասին դատարանին միջնորդություն ներկայացնելու հարցով, ապա այն նախագահում է ժողովին ներկա, ձայնի իրավունք ունեցող ամենախոշոր պարտատերը
	սնանկության գործով դիմում է դատարան՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում
	պարտապանի անունից դիմում է դատարաններ՝ դատական կարգով լուծում պահանջող հարցերով, ներգրավվում է պարտապանի այն դատավարությու-

	ներում, որոնցում վերջինս հանդես է գալիս որպես հայցվոր, պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ, առանց լիազորագրի հանդես է գալիս պարտապանի անունից
	իր լիազորությունների կատարումը պատշաճ ապահովելու նպատակով ներգրավում է, իսկ Նախարարի ենթաօրենսդրական ակտով սահմանված չափանիշներին համապատասխանող պարտապանի դեպքում պարտատերերի ժողովի որոշմամբ պարտավոր է ներգրավել համապատասխան մասնագիտացված կազմակերպություններ կամ մասնագետների և այլ աշխատակիցների և նրանց վարձատրել պարտապանի հաշվին
կազմակերպում է գույքագրում, միջոցներ է ձեռնարկում պարտապանին պատկանող գույքի պահպանության ապահովման համար	կազմակերպում է գույքագրում, միջոցներ է ձեռնարկում պարտապանին պատկանող գույքի պահպանության ապահովման համար
վերլուծում է պարտապանի ֆինանսական վիճակը, սնանկության պատճառները, ինչպես նաև պարտապանի ֆինանսական, տնտեսական և ներդրումային գործունեությունը և նրա դրությունն ապրանքային շուկայում	վերլուծում է պարտապանի ֆինանսական վիճակը, սնանկության պատճառները, ինչպես նաև պարտապանի ֆինանսական, տնտեսական և ներդրումային գործունեությունը և նրա դրությունն ապրանքային շուկայում
	վարում է պարտատերերի պահանջների գրանցամատյանը
	ստուգում է պարտապանին ներկայացվող պահանջների հիմնավորվածությունը

	ՀՀ-ում գործող բանկերից մեկում պարտապանի անունով բացում է սնանկության հատուկ հաշիվ և դրան է հաշվեգրում պարտապանի անունով ստացվող բոլոր դրամական միջոցները
	պարտապանին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա դատարանի որոշման հիման վրա արգելանք է դնում կամ հանում արգելանք
	հսկողություն է իրականացնում պարտապանի ղեկավարի պարտականությունների կատարման նկատմամբ
օրենքով սահմանված կարգով դիմում է շարժական գույքի նկատմամբ կիրառված սահմանափակումները գրանցելու համար	օրենքով սահմանված կարգով դիմում է շարժական գույքի նկատմամբ կիրառված սահմանափակումները գրանցելու համար
	պատասխանում է պարտապանի կամ պարտատիրոջ դիմումներին և հարցումներին դիմումը կամ հարցումը ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, եթե օրենքով այլ ժամկետ սահմանված չէ, ինչպես նաև պարտապանի կամ պարտատերերի կամ պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրով ներգրավված ֆինանսավորողի պահանջով վերջիններիս տրամադրում է տեղեկություններ պարտապանի սնանկության վարույթի կամ ֆինանսական առողջացման վերաբերյալ պահանջը գրավոր ստանալուց հետո՝ առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում

	յուրաքանչյուր եռամսյակ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը հաշվետվություն է ներկայացնում դատարան սնանկության գործով իր կողմից նախորդ ժամանակահատվածում ձեռնարկված գործողությունների և սնանկության գործի ընթացքի վերաբերյալ՝ անհրաժեշտության դեպքում կցելով համապատասխան փաստաթղթերը
	պարտատիրոջ պահանջով վերջինիս տրամադրում է տեղեկություններ պարտապանի գործունեության, ֆինանսական վիճակի, ներառյալ՝ գույքագրված ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ
ԺԿ միջնորդութամբ դատարանի որոշմամբ կարող է կիրառվել պարտապանի կամ նրա տիրապետման կամ օգտագործման ներքո գըտնըվող գույքի տնօրինման, տիրապետման կամ օգտագործման ցանկացած անհրաժեշտ սահմանափակում, եթե դրանց չկիրառման արդյունքում կարող է էապես նվազել պարտապանի գույքը	իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ

Վերոհիշյալ դրույթներից բխում է, որ սնանկության ԺԿ լիազորությունները, ՍԿ համեմատությամբ, զգալիորեն սահմանափակ են: Այս առումով տեղին է հիշատակել ՎԴ դիրքորոշումը, ըստ որի. «Օրենսդրական նման կարգավորումը պայմանավորված է մինչ սնանկ ճանաչվելը և սնանկ ճանաչվելուց հետո պարտապանի իրավական կարգավիճակի առանձնահատկություններով: Մինչ սնանկ ճանաչվելը պարտապանն ինքնուրույն է իրացնում իր իրավունքները և պարտականությունները, այդ թվում նաև՝ դատավարական, հետևաբար օրենսդիրը սնանկության ԺԿ-ին վերապահել է սահմանափակ լիազորություններ: Մինչդեռ, սնանկ ճանաչվելուց հետո պարտապանի որոշ իրավունքներ, այդ թվում նաև՝ դատավարական, իրացնում է կառավարիչը: Մասնավորապես, վերջինս պարտապանի անունից դիմում է դատարաններ՝ դատական կարգով լուծում պահանջող հարցերով, ներգրավվում է պարտապանի այն դատավարություններում, որոնցում վերջինս հանդես է գալիս որպես հայցվոր, պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ, առանց լիազորագրի հանդես է գալիս պարտապանի անունից»[164]:

Կարևոր է ընդգծել, որ, օրենքով այլ բան սահմանված չլինելու դեպքում, իր լիազորություններն իրականացնելիս կառավարիչը գործում է պարտապանի անունից և իր պատասխանատվությամբ:

[164] Տե՛ս ՎԴ թիվ ԵԿԴ/0282/02/12 քաղաքացիական գործով 29.11.2013թ. որոշումը:

§2. Սնանկության կառավարչի որակավորումը

Սնանկության համակարգի պատշաճ գործունեությունը, սնանկության վարույթի արդյունավետությունը մեծապես կախված է ՍԿ-ների պրոֆեսիոնալիզմից՝ որպես սնանկության վարույթի կենտրոնական դերակատարներից մեկի: Հնարավոր չէ պատկերացնել որևէ սնանկության վարույթ առանց կառավարչի ներգրավման՝ որպես դատարանի, պարտատերերի և պարտապանի միջև կապող օղակի[165]:

Հաշվի առնելով այն խնդիրները, որոնց լուծումը ակնկալվում է կառավարչից, պարտականությունները, որոնք նա կրում է և վստահությունը նրա հանդեպ՝ պահանջում է կառավարչից հիմնարար որակավորում ունենալ, այդ թվում՝ ընդհանուր ինտելեկտ և կարողություններ, փորձառություն, մասնագիտական գիտելիքներ[166]: Կառավարիչների մասնագիտացումն ու փորձառությունը ապահովում է ոչ միայն վարույթի արդյունավետ իրականացումը, այլ նաև սնանկության համակարգի հանդեպ վստահությունը[167]:

Օրենքում փոփոխություններով էականորեն բարելավվեցին ՍԿ-ների մասնագիտության իրավական կարգավորման դաշտը՝ նպատակ ունենալով բարեփոխել նաև ոլորտի պրակտիկ դրսե-

---

165 Տե՛ս EBRD Assessment of Insolvency Office Holders. Review of the Profession in the EBRD Region, էջ 32 (հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.insol-europe.org/download/documents/844):

166 Տե՛ս EBRD Insolvency Office Holder Principles. EBRD Principles in Respect of the Qualifications, Appointment, Conduct, Supervision, nd Regulation of Office Holders in Insolvency Cases, June 2007, էջ 3 (հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.ebrd.com/documents/legal-reform/ebrd-insolvency-office-holder-principles.pdf):

167 Տե՛ս UNCITRAL, Legislative Guide on Insolvency Law, 2005, էջ 175 (հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/05-80722_ebook.pdf):

վորումներն այդ առումով: Ինչպես նշվում է Օրենքի փոփոխությունների հիմնավորման մեջ[168], Օրենքով ՍԿ-ին ներկայացվող պարտադիր պահանջները բավարար չեն իրեն վերապահված գործառույթներն արդյունավետորեն իրականացնելու համար, իսկ կառավարչի ստաժավորումը հանդիսանում է ոչ պարտադիր և հետապնդվող նպատակի ապահովման համատեքստում խնդրահարույց է թվում:

Օրենքի փոփոխությունների արդյունքում ոչ միայն հստակեցվեցին կառավարչին ներկայացվող պահանջները, այլ նաև վերանայվեց կառավարիչների որակավորման կարգը:

Այսպես, Օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ որպես կառավարիչ կարող է որակավորվել այն ֆիզիկական անձը[169], որը միաժամանակ բավարարում է հետևյալ բոլոր պահանջները.

1. 63 տարին չլրացած չէ,
2. ունի բարձրագույն կրթություն,
3. որակավորման համար դիմելու օրվան նախորդած վերջին հինգ տարվա ընթացքում ունի իրավաբանական, հաշվապահական կամ այլ տնտեսագիտական գործունեության ոլորտում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ,
4. Նախարարի սահմանած կարգով անցել է համապատասխան ուսուցում,

[168] Հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.parliament.am/draft_docs7/K-188_himnavorum.pdf:

[169] Միջազգային պրակտիկայում որպես ՍԿ կարող են նշանակվել նաև իրավաբանական անձինք: Օրենքի փոփոխությունների նախագծում ևս առկա էր նման դրույթ, որը հետագայում չպահպանվեց (նախագիծը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.e-draft.am/projects/442/about):

5 հանրային ծառայող չէ,

6 հանցագործություն կատարելու համար չունի չմարված կամ չհանված դատվածություն,

7 որակավորման համար դիմելու օրվան նախորդող վերջին հինգ տարիների ընթացքում սնանկ չի ճանաչվել,

8 դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա անգործունակ կամ սահմանափակ գործունակ չի ճանաչվել:

Այսպիսով, Օրենքի փոփոխություններով վերացվել է որևէ կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության կազմակերպման կամ ղեկավարման հետ կապված պաշտոններ զբաղեցրած լինելու վերաբերյալ պահանջը՝ փոխարենը որպես նորամուծություն սահմանելով ուսուցում անցնելու պահանջը:

Ուսուցումն անցկացվում է Նախարարի 2020թ. մարտի 12-ի N 106-Ն հրամանով[170] սահմանված կարգով: Ուսուցումն իրականացվում է կառավարիչ դառնալու ցանկություն ունեցող հավակնորդների՝ որպես կառավարիչ գործելու համար անհրաժեշտ կարողությունների, հմտությունների ձևավորման, մասնագիտական գիտելիքների ծավալի ընդլայնման համար:

Հավակնորդների ուսուցման դասընթացները ներկայումս կազմակերպվում են «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից՝ Նախարարի հաստատած ուսուցման ծրագրին համապատասխան՝ վճարովի հիմունքներով, տարեկան առնվազն մեկ անգամ: Դասընթացների ծրագրում կարող են ներառվել կառավարչի գործունեության ոլորտին առնչվող դասընթացի

[170] Ուժի մեջ է մտել 15.04.2020թ.: Տես ՀՀԳՏ 2020.03.20/10(678) Հոդ.69:

թեմաներ, այդ թվում՝ քաղաքացիական, քաղաքացիական դատավարության, սնանկության, քրեական, սահմանադրական, ֆինանսական, հարկային իրավունքի, ինչպես նաև կառավարման, հաշվապահական հաշվառման և այլ թեմաներ: Ուսուցման ավարտին հավակնորդը ստանում է վկայական՝ երկու տարի ժամկետով՝ հնարավորություն ձեռք բերելով այդ ընթացքում մասնակցել որակավորման ստուգումներին:

ՍԿ-ների որակավորումն իրականացնում է ՀՀ ԱՆ-ն՝ որակավորման ստուգման միջոցով, որն Նախարարի 2020թ. մարտի 3-ի N 112-Ն հրամանով[171] սահմանված կարգով անցկացնում է Նախարարին կից խորհրդակցական մարմին հանդիսացող որակավորման հանձնաժողովը:

Հանձնաժողովում ընդգրկվում են ներկայացուցիչներ Արդարադատության, Էկոնոմիկայի, Ֆինանսների նախարարություններից, ԻԿԿ-ներից, ինչպես նաև իրավաբան և տնտեսագետ գիտնականներ:

Որակավորման ստուգումն անցկացվում է երեք փուլով՝ թեստավորում, խնդրի լուծում և հարցազրույց[172]: Որակավորման բոլոր

---

171 Ուժի մեջ է մտել 15.04.2020թ.: Տե՛ս ՀՀԳՏ 2020.03.20/10(678) Հոդ.74:

172 Հարցազրույցի նպատակն է որպես կառավարիչ արդյունավետ գործելու համար անհրաժեշտ հմտություններն ու որակները բացահայտելը: Անհրաժեշտ հմտություններն ու որակները բացահայտվում են մասնակցի մասնագիտական աշխատանքի փորձառությունը, կառավարիչ դառնալու շարժառիթն ու ակնկալիքը, կառավարչի կարգավիճակին և գործունեությանը վերաբերող իրավական ակտերի պահանջներին, վարքագծի կանոններին տեղեկացվածությունը, նրա անձնական հատկանիշները (մասնավորապես՝ ինքնատիրապետում, վարվեցողություն, հեղինակության (ազդեցության) չափավոր կիրառում, պատասխանատվության զգացում, ունկնդրելու կարողություն, հաղորդակցման հմտություններ, արդարամտություն, վերլուծական կարողություններ և կառավարչի աշխատանքի համար անհրաժեշտ ոչ մասնագիտական այլ հատկանիշներ) գնահատելու միջոցով: Գնահատումն իրականացվում է յուրաքանչյուր մասնակցի անձնական գործի և անցած մասնագիտական փորձի ուսումնասիրության, ինչպես նաև կառավարչի գործունեությանը վերաբերող հիպոթետիկ իրավիճակի վերաբերյալ մասնակցի կողմից վերլուծություն իրականացնելու և դիրքորոշում ներկայացնելու միջոցով:

փուլերը հաղթահարած մասնակիցների ցանկը հանձնաժողովը ներկայացնում է Նախարարին՝ առաջարկելով ցանկում նշված մասնակիցներին շնորհել սնանկության գործով կառավարչի որակավորում:

Հանձնաժողովի առաջարկության հիման վրա նախարարը շնորհում է սնանկության գործով կառավարչի որակավորում կամ մերժում է որակավորման շնորհումը: Որակավորում շնորհելու մասին որոշում կայացվելու դեպքում համապատասխան անձին տրվում է անժամկետ գործողությամբ որակավորման վկայական:

§ 3. Սնանկության կառավարչի հաշվառումը և հաշվառումից հանումը

ՍԿ-ների հաշվառման հետ կապված հարցերը կարգավորում են Օրենքի 24.1-ին հոդվածով և դրա հիման վրա ընդունված՝ Նախարարի 2020 թվականի մարտի 12-ի «Սնանկության գործով կառավարչին հաշվառելու և հաշվառումից հանելու կարգը սահմանելու մասին» N 108-Ն հրամանով[173]:

Օրենքը սահմանում է այն պայմանները, որոնց անհրաժեշտ է բավարարել որպես կառավարիչ հաշվառվելու համար: Դրանք են.

1. սնանկության գործով կառավարչի որակավորման վկայականի առկայությունը,
2. որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված լինելը,
3. կառավարիչների ինքնակարգավորվող որևէ կազմակերպությանը անդամակցությունը,
4. սնանկության գործերին մասնակցող անձանց պատճառված վնասի համար իր քաղաքացիական պատասխանատվությունը ապահովագրած լինելը՝ առնվազն 5 միլիոն դրամի չափով,
5. անձի՝ 63 տարին լրացած չլինելը:

ՍԿ-ների հաշվառումն իրականացնում է ՀՀ ԱՆ-ն: Հաշվառման համար անձը ՀՀ ԱՆ է ներկայացնում դիմում և դրան կից անհրաժեշտ փաստաթղթերը: Դիմումի ձևը և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանված է վերոնշյալ հրամանով, որոնցից է հաշվառման համար

[173] Ուժի մեջ է մտել 15.04.2020թ.: Տե՛ս ՀՀԳՏ 2020.03.20/10(678) Հոդ.71:

10 հազար դրամի չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը:

Հաշվառվելիս անձը դիմումում նշում է նաև այն սպասարկման տարածքը (տարածքները), որտեղ ցանկանում է ծավալել իր գործունեությունը՝ Երևան քաղաք և (կամ) մարզ (մարզեր) կամ կարող է նշել ՀՀ ամբողջ տարածքը: Տարածքի մասին նշումը հիմք է հանդիսանում հետագայում տարածքային սկզբունքով վիճակահանություն իրականացնելիս՝ կառավարչի թեկնածու առաջարկելու համար:

Դիմումը ներկայացնելուց հետո, եթե առկա են լինում թերություններ, հնարավորություն է տրվում երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք, իսկ վերջնական փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում իրականացվում է հաշվառումը:

Հաշվառումն իրականացվում է, եթե բացակայում են հաշվառումը մերժելու հիմքերը, մասնավորապես եթե.

1. դիմողի ներկայացրած փաստաթղթերում ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ առկա չեն,
2. անձի 63 տարեկանը չի լրացել՝ բացառությամբ այն դեպքի, երբ կառավարիչը ստացել է իր գործունեությունը շարունակելու թույլտվություն,
3. դիմումի մեջ և կից փաստաթղթերում թերություններ հայտնաբերված լինելու դեպքում դրանք սահմանված ժամկետում շտկվել են:

Դիմումը մերժվելու դեպքում որոշումն երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է դիմողին:

Անձին որպես կառավարիչ հաշվառելուց հետո նրա մասին տեղեկությունները հրապարակվում են ՀՀ ԱՆ կայքի համապատասխան բաժնում[174]:

Որոշակի առանձնահատկություններ են առկա այն դեպքում, երբ լրացած է լինում կառավարչի գործունեության տարիքը (63 տարեկանը), սակայն Օրենքի հիման վրա կառավարիչը ստացած է լինում թույլտվություն շարունակելու վարել առկա գործերը: Այդ դեպքում կառավարչի վերաբերյալ տվյալներում արվում է համապատասխան ծանոթագրություն՝ նշելով գործունեությունը շարունակելու ժամկետը, ինչպես նաև նշում այն մասին, որ կառավարիչը չի կարող մասնակցել կառավարչի ընտրությանը և նշանակվել սնանկության ԺԿ կամ ՍԿ:

Հատկանշական է, որ կառավարիչը ցանկացած ժամանակ կարող է դիմել ՀՀ ԱՆ և կատարել փոփոխություններ վերոնշյալ տեղեկություններում: Ասվածը վերաբերում է նաև իր սպասարկման տարածքները փոխելու հնարավորությանը:

Հաշվառման ժամանակ անձը տրամադրում է նաև իր էլեկտրոնային փոստի հասցեն, և հաշվառվելու ընթացքում ու նաև դրանից հետո կառավարչի հետ ՀՀ ԱՆ հաղորդակցությունն իրականացվում է էլեկտրոնային եղանակով:

Հարկ է նաև նշել, որ Օրենքը չի սահմանում որոշակի ժամկետ որակավորում ստացած կառվարիչների կողմից հաշվառման դիմում ներկայացնելու համար: Սակայն պետք է նկատի ունենալ, որ կառավարչի որակավորում ստանալուց հետո կառավարիչը պարտավոր է երեք տարվա ընթացքում անդամակցել որևէ ԻԿԿ, հակառակ դեպքում որակավորումը ենթակա է դադարեցման՝ հիմք ընդունելով Օրենքի 29.2-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը:

Օրենքը նաև սահմանում է կառավարչին հաշվառումից հանելու դեպքերը: Դրանք են.

174 Տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.moj.am/managers/browse:

1. երբ կառավարիչը համապատասխան դիմում է ներկայացնում ՀՀ ԱՆ,
2. կառավարչի գործունեությունը կասեցվում է,
3. կառավարչի որակավորումը դադարեցվում է:

Հաշվառումից հանելու վերաբերյալ որոշումը կայացվում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում համապատասխանաբար.

1. կառավարչի դիմումը նախարարություն ներկայացվելուց հետո,
2. կառավարչի գործունեությունը կասեցնելու կամ որակավորումը դադարեցվելու մասին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո:

Սեփական դիմումի համաձայն կամ որակավորումը դադարեցվելու հիմքով կառավարչին հաշվառումից հանելու դեպքում ՀՀ ԱՆ կայքից հեռացվում են կառավարչի վերաբերյալ տվյալները, իսկ գործունեությունը կասեցնելու հիմքով հաշվառումից հանելու դեպքում կառավարչի վերաբերյալ տվյալները չեն հեռացվում, սակայն կայքում նշում է կատարվում գործունեությունը կասեցված լինելու վերաբերյալ: Կառավարչի գործունեությունը վերականգնվելու դեպքում նախարարությունը վերականգնում է կառավարչի հաշվառումը՝ համապատասխան գրառում կատարելով գրանցամատյանում և կայքում վերականգնելով կառավարչի վերաբերյալ տվյալները:

Կառավարչին հաշվառումից հանելու մասին որոշումն եռօրյա ժամկետում ուղարկվում է կառավարչին այն կայացնելուց հետո և կարող է որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում բողոքարկվել դատարան:

Հատկանշական է, որ Օրենքը չի արգելում կառավարչին ցանկացած պահի դուրս գալ հաշվառումից և հետագայում կրկին հաշվառվել որպես կառավարիչ: Իր դիմումի համաձայն հաշվառումից դուրս գալու դեպքում կառավարիչը շարունակում է սպասարկել առկա գործերը, և միակ հետևանքն այն է, որ այլևս նրան նոր գործով

հնարավոր չէ ընտրել և նշանակել որպես կառավարիչ, այդ թվում՝ նա այլևս չի կարող մասնակցել վիճակահանությանը՝ կառավարիչ ընտրվելու համար: Այսինքն՝ կառավարիչը կարող են սեփական դիմումի համաձայն հաշվառումից դուրս գալու հնարավորությունից օգտվել՝ կարգավորելու իր ծանրաբեռնվածությունը այն դեպքում, երբ այլևս չի ցանկանում մասնակցել գործերով վիճակահանություններին: Ընդ որում, սեփական դիմումի համաձայն հաշվառումից դուրս գալու և կրկին հաշվառվելուց հետո նախկինում ներկայացված փաստաթղթերը այլև չեն ներկայացվում և կրկին պետական տուրք չի վճարվում:

§ 4. Մնանկության կառավարչի վարքագծի կանոնները

Կառավարչի վարքագծի կանոնները կառավարիչների մասնագիտական գործունեության պատշաճությունը, արդյունավետությունը և նրանց ձեռնհասությունը ապահովելու և գնահատելու լավագույն միջոցներից են: Դրանք Օրենքով սահմանված ընդհանուր կարգավորումներից և սկզբունքներից բխող դրույթներ են, որոնք ընդհանուր առմամբ պետք է արտացոլեն ՍԿ գործունեության լավագույն դրսևորումները, այս կամ այն իրավիճակում պատշաճ գործելու ուղղություններն ու սկզբունքները:

Ընդհանրապես, կարող է հարց ծագել՝ ինչու պետք է մասնագիտացված անձինք իրենց աշխատանքն իրականացնելու համար կարիք ունենան հատուկ կանոնների, և եթե նրանք որակավորված և ձեռնհաս են, ինչու նրանց չպետք է թույլ տրվի առաջնորդվել իրենց սեփական կանոններով: Հարցի պատասխանն ունի երկու պատճառ:

Նախ, մասնագետներին թողնել ինքնուրույն վարվել իրենց սեփական կանոններով, շատ դեպքերում կարող է խնդրահարույց լինել, քանի որ անձանց գիտելիքները, փորձը և ունակությունները զգալիորեն տարբերվում են: Ընդհակառակը, պրոֆեսիոնալները նախընտրում են իրենց պարտականությունների և իրավասությունների հստակ կարգավորումը:

Երկրորդ, մասնագիտական աշխատանքի և էթիկայի ստանդարտները նպաստում են մասնագետների նկատմամբ հանրային վստահության ձևավորմանը և ամրապնդմանը: Ստանդարտները սահմանում են այն նշաձողը, որը պետք է բավարարեն մասնագետները: Սա հավասարապես վերաբերում է նաև սնանկության գործով կառավարիչներին: Կառավարիչները պարտականություններ ունեն դատարանի, պարտատերերի, պարտապանի և այլ անձանց առջև, իսկ այդ պարտականությունները

լավագույնս կատարվում են աշխատանքային և էթիկայի հստակ ստանդարտների առկայության պարագայում, որպեսզի նրանց գործունեությունը լինի կանխատեսելի[175]:

Օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ կառավարչի վարքագծի կանոնները մշակում և կիրառում է ԻԿԿ-ն[176]: Միևնույն ժամանակ, 2016թ. փոփոխությունների արդյունքում Օրենքը լրացվեց 23.1-ին հոդվածով՝ սահմանելով այն հիմնական վարքագծի կանոնները, որոնցով պետք է առաջնորդվեն սնանկության գործով կառավարիչները:

Չնայած Օրենքի նշված հոդվածով սահմանված է վարքագծի կանոնների սպառիչ ցանկ, սակայն պետք է նկատի ունենալ, որ դրանք զուտ հիմնադրութային կանոններ են, ինչը նշանակում է, որ կանոնների լույսի ներքո և դրանց հաշվառմամբ ԻԿԿ-ն պետք է սահմանի իր անդամ հանդիսացող կառավարիչների վարքագծի կանոնները, որոնք պարտադիր են տվյալ կազմակերպության անդամ-կառավարիչների համար:

Հատկանշական է նաև, որ Օրենքը կարգապահական պատասխանատվություն է նախատեսում կառավարչի վարքագծի կանոնների խախտման համար՝ վարույթ իրականացնելու լիազորությունը վերապահելով ԻԿԿ-ին:

Վարքագծի հիմնադրութային կանոնները օրենքով սահմանելու մոտեցումը բխում է նաև միջազգային պրակտիկայից: Ինչպես նշվում է ՎԶԵԲ սկզբունքներում՝ առաջնային օրենսդրությունը պետք է սահմանի հիմնական, հիմնարար չափանիշներ, որոնք անհրաժեշտ

---

175 Տե՛ս Bankruptcy Supervision Agency and European Bank for Reconstruction and Development. Manual on the National Standards and Code of Ethics For Bankruptcy Administrators, Belgrade, 2010, էջ 7 (հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.ebrd.com/downloads/legal/insolvency/manual.pdf):

176 23.09.2021թ. դրությամբ գործում է Սնանկության գործով կառավարիչների կոլեգիա ԻԿԿ-ի «Սնանկության գործով կառավարչի վարքագծի կանոնագրք»-ի՝ 2017թ. խմբագրությունը (հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://snank.am/page/2073):

են կառավարիչների գործունեության համար: Նման չափանիշների նպատակը բոլոր իրավիճակներում բոլոր կառավարիչների համար կանոնների նախատեսումն է[177]:

Օրենքի 23.1-ին հոդվածը նախանշում է կառավարչի վարքագծի հետևյալ հիմնական կանոնները.

1. ապահովել հարգալից և անկողմնակալ վերաբերմունք պարտապանի և պարտատերերի նկատմամբ,
2. կողմերին պարզաբանել սնանկության գործընթացի բնույթը,
3. պահպանել սնանկության գործի ընթացքում իրեն հայտնի դարձած օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունները,
4. սնանկության գործընթացում իրեն վերապահված լիազորություններն իրականացնել հնարավոր սեղմ ժամկետներում, ողջամիտ և նվազ ծախսատարության սկզբունքով՝ առանց սնանկության վարույթին, պարտապանի և պարտատիրոջ շահերին վնասելու,
5. նպաստել կառավարիչների նկատմամբ վստահության ձևավորմանը:

Հիշատակված 4-րդ կետով սահմանված կանոնը ընդլայնվել է օրենսդրական փոփոխությունների արդյունքում: Մասնավորապես, նախկինում սահմանված էր կառավարչի պարտականությունը՝ սնանկության գործընթացում իրեն վերապահված լիազորությունները հնարավոր սեղմ ժամկետներում իրականացնելու վերաբերյալ: Կանոնի ընդլայնման արդյունքում կառավարիչը պարտավորվում է հավասարակշռված մոտեցում ցուցաբերել սնանկության վարույթի նկատմամբ՝ իր լիազորություններն իրականացնելով այնպես, որ չտուժեն վարույթի ժամկետները և ծախսերը լինեն հնարավորինս

[177] Տե՛ս EBRD Insolvency Office Holder Principles. EBRD Principles In Respect of the Qualifications, Appointment, Conduct, Supervision, And Regulation of Office Holders In Insolvency Cases, June 2007, էջ 7 (հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.ebrd.com/documents/legal-reform/ebrd-insolvency-office-holder-principles.pdf):

քիչ, սակայն միևնույն ժամանակ չոտնահարվեն պարտապանի և պարտատերերի շահերը և սնանկության ողջ վարույթը: Այսինքն՝ կանոնը ամբողջացվել է խնայողության հիմնարար սկզբունքի տրամաբանությամբ:

ՎԶԵԲ սկզբունքներով առաջարկվում է սահմանել վարքագծի կանոններ հետևյալ հարցերի կապակցությամբ[178].

1. **հաշվետվությունների ներկայացում.** այս կանոնի ներքո պետք է սահմանվեն ՍԿ կողմից պարտատերերին և դատարանին ներկայացվող հաշվետվություններին ներկայացվելիք պահանջները և դրանց ներկայացման ուղենիշային ժամկետները,

2. **ակտիվների հավաքագրում (գույքագրում) և պահպանություն.** այստեղ պետք է սահմանվեն գույքերի նույնականացման, գույքագրման, պահպանության, ապահովագրության, պարտապանի հաշիվների կառավարման և այլ հարցերը,

3. **պարտապանի բիզնեսի կառավարում.** սա վերաբերում է այն պայմաններին, որոնց համապատասխան պետք է իրականացվի բիզնեսի կառավարումը, դրանից բխող հարկային և այլ պարտավորությունների իրականացումը և այլն,

4. **պարտատերերի ժողովների հրավիրում և վարում.** այստեղ պետք է ներկայացվեն ժողովի մասին ծանուցման, ժողով հրավիրելու ժամկետների, օրակարգում հարցերի ընդգրկման, որոշումների կայացման և քվեարկության կարգի և այլնի վերաբերյալ մանրամասներ,

[178] Ibid., էջեր 7-8:

5 **պարտապանի գույքի վաճառք.** այստեղ պետք է քննարկվեն գույքի վաճառքի այլընտրանքային եղանակները՝ օրինակ՝ գույքի ուղղակի վաճառքի իրականացման կարգն ու պայմանները,

6 **սնանկության հատուկ հաշվի բացումն ու կառավարում.** սա վերաբերում է սնանկության հատուկ հաշվին դրամական միջոցների փոխանցմանը, դրանց օգտագործմանը, ապահովագրությանը և այլն,

7 **ֆինանսական առողջացման ծրագրի տիպային ձևեր և լրացման կանոններ.** այստեղ պետք է ներկայացվեն ֆինանսական առողջացման ծրագրերի բովանդակությունը և դրա նկարագրությունը:

Պետք է նշել նաև, որ Օրենքը սահմանում է միայն վարքագծի հիմնական կանոնների շրջանակը, իսկ էթիկայի կանոնների առումով դաշտը ամբողջությամբ թողնված է ԻԿԿ կարգավորմանը: Վարքագծի և էթիկայի կանոնների տարբերակման առումով հարկ է նկատել, որ վարքագծի կանոնները դիտարկվում են որպես գործունեության կանոններ կամ չափանիշներ, այնինչ էթիկայի կանոնները ունեն որոշակի առանձնահատկություններ: Չնայած երկուսն էլ վերաբերում են կառավարչի գործունեությանը, սակայն վարքագծի կանոնները կառավարչին պարտավորեցնում կամ ուղղորդում են իրենց լիազորությունների իրականացման և պարտականությունների կատարման կոնկրետ, պրակտիկ դեպքերում: Այնինչ, էթիկայի կանոնները ավելի լայն կիրառություն ունեն, առավել ընդհանրական բնույթի են՝ սահմանելով, թե ինչպես վարվել այս կամ

այն լիազորությունն իրականացնելիս[179]: Օրինակ, չնայած Օրենքի 23.1-ին հոդվածը սահմանում է վարքագծի կանոններ, սակայն այդ կանոններից առաջինը՝ ապահովել հարգալից և անկողմնակալ վերաբերմունք պարտապանի և պարտատերերի նկատմամբ, իր բնույթով առավելապես էթիկայի կանոն է:

[179] Տե՛ս Bankruptcy Supervision Agency and European Bank for Reconstruction and Development. Manual on the National Standards and Code of Ethics For Bankruptcy Administrators, Belgrade, 2010, էջ 126 (հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.ebrd.com/downloads/legal/insolvency/manual.pdf):

§ 5. Սնանկության կառավարչի վերապատրաստումը

Ցանկացած ոլորտում մասնագիտական պատշաճ պատրաստվածության ապահովման երաշխիք է ոչ միայն մասնագիտական ուսուցումը, այլև ընթացիկ վերապատրաստումները, և այս առումով սնանկության գործով կառավարիչների գործունեության ոլորտը ևս բացառություն չէ: Եթե սնանկության գործով կառավարիչների հավակնորդների պարտադիր ուսուցման պահանջն ուղղված է նրանց մոտ անհրաժեշտ գիտելիքների և համապատասխան հմտությունների ձևավորմանը, ապա ընթացիկ վերապատրաստումները միտված են սնանկության գործով կառավարիչների շարունակական մասնագիտական զարգացմանը՝ ունեցած գիտելիքների և հմտությունների ընդլայնման և կատարելագործման միջոցով:

Սնանկության գործով կառավարիչների վերապատրաստման ինստիտուտը, ըստ էության, համեմատաբար նոր է և մինչև վերջերս կարգավորված էր շատ ընդհանրական ձևով: Մասնավորապես, Օրենքը սահմանում էր, որ սնանկության գործով կառավարիչները տարեկան անցնում են նվազագույն 24 ակադեմիական ժամ ընդհանուր տևողությամբ ամենամյա պարտադիր վերապատրաստում, իսկ տարվա ընթացքում վերապատրաստումներին նվազագույնը 8 ժամ առանց հարգելի պատճառների չմասնակցելը հիմք էր կառավարչի գործունեությունը կասեցնելու համար:

Արդյունքում՝ օրենսդրական առումով հստակեցված չէին թե՛ վերապատրաստումների կազմակերպման և անցկացման ընթացակարգային, թե՛ բովանդակային կողմերը: Իրավիճակը փոխվեց Օրենքի փոփոխությունների շնորհիվ, երբ ամենամյա պարտադիր վերապատրաստումների անցկացման պահանջին զուգահեռ նախատեսվեցին երկու նոր դրույթներ: Առաջինն այն է, որ եթե սնանկության գործով կառավարիչը մասնակցել է այլ համարժեք դասընթացների, կուրսերի կամ վերապատրաստումների, ապա նա

համապատասխան մասով կամ ամբողջությամբ, կախված դրանց տևողությունից, ազատվում է վերապատրաստումներ անցնելու պարտականությունից: Եվ երկրորդը, որն ունի առանցքային նշանակություն, ամենամյա պարտադիր վերապատրաստումների անցկացման կարգ ունենալու և այն Նախարարի կողմից սահմանվելու կարգավորումն է:

Հենց այդ հիմքով էլ Նախարարը 2020 թվականի մարտի 12-ին ընդունեց N 104-Ն հրամանը[180], որը վերաբերում է սնանկության գործով կառավարիչների ամենամյա պարտադիր վերապատրաստումներ անցկացնելու կարգը սահմանելուն: Դրանով, ըստ էության, մանրամասն կարգավորումների ենթարկվեցին վերապատրաստումների կազմակերպման ու անցկացման հետ կապված հարաբերությունները:

Հատկապես ուշադրության է արժանի վերապատրաստման դասընթացների ծրագրի կազմումն է, որի մասով կարգում երկու կարևոր շեշտադրում կա: Նախ այն բավականին ներառական է: Խոսքն այն մասին է, որ վերապատրաստման դասընթացների ծրագրի վերաբերյալ առաջարկներ ստանալու նպատակով ԻԿԿ-ն պարտավոր է դիմել կառավարիչներին: Կազմակերպությունը կարող է նույն նպատակով հարցումներ ուղարկել ՀՀ ԱՆ, ինչպես նաև սնանկության ոլորտին առնչվող պետական և տեղական ինքնակառավարման այլ մարմիններին և կազմակերպություններին: Այստեղ, բնականաբար, կազմակերպությունների շրջանակում առաջնահերթ նկատի է առնված գիտական հաստատությունները, ինչը թույլ կտա առավել համապարփակ և գիտական մոտեցումներին համահունչ վերապատրաստման դասընթացների ծրագիր ունենալ:

Վերապատրաստման դասընթացների ծրագրի կազման վերաբերյալ մյուս շեշտադրումը նրա թիրախային բնույթն է: Մասնավորապես, կարգով ամրագրվել է, որ ծրագրում բոլոր դեպքերում պետք է ներառվեն սնանկության և հարակից ոլորտներում

[180] Ուժի մեջ է մտել 15.04.2020թ.: Տե՛ս ՀՀԳՏ 2020.03.20/10(678) Հոդ.67:

կատարված օրենսդրական փոփոխություններին, ինչպես նաև կառավարիչների կարգապահական պատասխանատվության կրկնվող դեպքերին առնչվող թեմաները: Հասկանալի է, որ այս պահանջները նվազագույն անհրաժեշտ են, իսկ ծրագիրը չի կարող շրջանցել նաև դատական պրակտիկայի զարգացումներին վերաբերող թեմաները:

Կարգավորվել է նաև դասընթացների կազմակերպման ձևաչափերը առկա և հեռակա ուսուցման տրամաբանությամբ և բնականաբար հեռակա ձևաչափի կիրառումը պայմանավորված է արտակարգ կամ ռազմական դրությամբ, ինչպես նաև անմիջական հանդիպման անհնարինություն առաջացնող այլ դեպքերով:

Նախարարի վերոհիշյալ հրամանով հստակեցվել են նաև այլ կուրսերի և դասընթացների համարժեքության գնահատման և վերապատրաստումներից ազատելու չափանիշները: Այսպես, նման իրավունքից կառավարիչը կարող է օգտվել, եթե այդ կուրսը, դասընթացը կամ վերապատրաստումը անցկացվել է միջազգային կամ տեղական կազմակերպության կողմից և այն թեմաներով, որոնք վերոհիշյալ չափանիշներով արդիական են, այսինքն՝ անհրաժեշտ են և ենթակա են ներառման վերապատրաստումների դասընթացների ծրագրի մեջ: Ընդ որում, կառավարիչը նման կուրսեր և դասընթացներ անցնելուց առաջ պետք է ստանա ԻԿԿ համաձայնությունը, այլապես այս իրավունքից օգտվել չի կարող:

Միևնույն ժամանակ ամրագրվել է, որ եթե սնանկության գործով կառավարիչը զբաղվում է դասախոսական պրակտիկայով, մասնավորապես՝ դասավանդում է պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում, Արդարադատության ակադեմիայում և այլ համապատասխան հաստատություններում, ապա կառավարչի դասավանդած ժամերը համարվում են վերապատրաստման ժամերին հավասար ժամեր:

Օրենսդրական բարեփոխումների արդյունքում հստակեցվել են նաև ՀՀ ԱՆ՝ վերապատրաստումների կազմակերպման և անցկաց-

ման գործընթացին ներգրավածության դեպքերը, որը, ի թիվս այլնի, ներառում է վերապատրաստման դասընթացի ծրագրի վերաբերյալ առաջարկների, դասընթացավարների թեկնածությունների ներկայացումը, ինչպես նաև վերապատրաստումների արդյունքների վերաբերյալ ԻԿԿ կողմից ներկայացված տեղեկանքի ուսումնասիրությունը: Ընդ որում, այդ տեղեկանքի հիման վրա ՀՀ ԱՆ-ն ձեռնարկում է օրենքով սահմանված միջոցներ վերապատրաստում չանցած անձանց մասով:

§6. Մնանկության կառավարչի հաշվետվողականությունը

ՍԿ-ն հաշվետվողականության մասին խոսելիս անհրաժեշտ է տարանջատել նրա հաշվետվողականությունը դատարանի առջև և ՀՀ ԱՆ առջև: Եվ եթե դատարանի առջև հաշվետվողականությունը վերաբերում է կոնկրետ սնանկության գործին, ապա երկրորդը կրում է վիճակագրական բնույթ:

Այսպես, Օրենքի ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնել ՍԿ կողմից դատարան ներկայացվող հետևյալ հաշվետվությունները.

1. եռամսյակային հաշվետվությունները, որոնք ներկայացվում են մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը և արտացոլում են ՍԿ կողմից հաշվետու ժամանակահատվածում ձեռնարկված գործողությունների և սնանկության գործի ընթացքի վերաբերյալ տեղեկություններ՝ անհրաժեշտության դեպքում համապատասխան փաստաթղթերի կցմամբ,

2. ֆինանսական առողջացման ծրագրի կատարման վերաբերյալ հաշվետվությունները, որոնք ներկայացվում են առնվազն եռամսյակային կտրվածքով,

3. ֆինանսական առողջացման ծրագրի վաղաժամկետ ավարտի մասին հաշվետվությունը,

4. ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվությունը, որը ներկայացվում է ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 15 օր առաջ,

5. պարտապանի վերսկսած գործունեության վերաբերյալ ամենամսյա հաշվետվությունները, որոնք ներկայացվում են պարտապանի գործունեությունը կասեցվելուց և վերսկսվելուց հետո,

6. պարտապանի գործունեության վերսկսման արդյունքում պարտատերերի բոլոր պահանջները բավարարվելու դեպքում վերջնական հաշվետվությունը,

7. պարտապանի գույքի վաճառքի, դրանից առաջացած միջոցների բաշխման, պարտատերերի պահանջների բավարարման, պարտապանի գույքի և ակտիվների, այդ թվում՝ դեբիտորական պարտքերի, հավաքման ուղղությամբ իրականացրած միջոցառումների մասին ամենամսյա հաշվետվությունները, որոնք ներկայացվում են պարտապանի լուծարման վարույթ սկսելու դեպքում լուծարման մասին որոշման ընդունման պահից՝ յուրաքանչյուրը մինչև հաջորդ ամսվա 10-ը ներառյալ,

8. պարտապանի լուծարմամբ գործ ավարտելիս վերջնական հաշվետվությունը, որը ներկայացվում է պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց ոչ ուշ, քան 15 օր հետո,

9. վերջնական հաշվետվությունը, որը ներկայացվում է սնանկության վերաբերյալ գործը պարտատերերի կողմից պահանջներից հրաժարվելու, պահանջներ չներկայացվելու կամ պահանջների բավարարման դեպքում:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ թվարկված բոլոր հաշվետվությունները ենթակա չեն յուրաքանչյուր գործով կիրառման, քանի որ դրանց մի մասը բացառում է մյուսների ներկայացման հնարավորությունը կամ վերացնում այդպիսի անհրաժեշտությունը:

ՍԿ ընդհանուր կամ վիճակագրական բնույթի հաշվետվողականության հիմքերը դրվեցին Օրենքի փոփոխությունների

արդյունքում: Մասնավորապես, Օրենքի 27.1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանվեց, որ մինչև հաշվետու տարվան հաջորդող մարտի 1-ը ՍԿ-ն ՀՀ ԱՆ է ներկայացնում իր գործունեության վերաբերյալ վիճակագրական բնույթի տարեկան հաշվետվություն:

Օրենքը նախատեսում է նաև այն նվազագույն տվյալները, որոնք պետք է ներառվեն ՍԿ տարեկան հաշվետվությունում: Այսպես, Օրենքի 27.1-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կառավարչի կողմից ներկայացվող վիճակագրական հաշվետվությունը ներառում է տեղեկություններ կառավարչի կողմից վարվող գործերի, դրանց քանակի, այդ թվում՝ ֆինանսական առողջացման դեպքերի, ֆինանսական վերլուծությամբ իր կողմից հայտնաբերված կեղծ և կանխամտածված սնանկության հատկանիշների, իր աշխատավայրի և աշխատակիցների վերաբերյալ և այլ վիճակագրական տեղեկատվություն:

Հիշատակված տեղեկությունների մանրամասները, ինչպես նաև հաշվետվության ներկայացման կարգը սահմանվել է Նախարարի 2020թ. մարտի 12-ի «Սնանկության գործով կառավարչի և կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության կողմից ՀՀ ԱՆ ներկայացվող տարեկան հաշվետվությունների ձևերը և դրանց ներկայացման կարգը սահմանելու մասին» N 103-Ն հրամանով[181]:

Հաշվետվության ներածական մասում նշվում են ՍԿ անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, որակավորման վկայականի համարը, անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համարը, ՀՎՀՀ-ն, կոնկտակտային տվյալները, հասցեները:

Բուն հաշվետվության մեջ արտացոլվում են մի շարք տվյալներ կապված կառավարչի կողմից վարվող և ավարտված գործերի, գործերով հաստատված պահանջների չափերի, ֆինանսական առողջացման դեպքերի, անցկացված աճուրդների, ստացած

[181] Ուժի մեջ է մտել 15.04.2020թ.: Տես ՀՀԳՏ 2020.03.20/10(678) Հոդ.66:

վարձատրության և վարչական ծախսերի հատուցման, կարգապահական պատասխանատվության վարույթների և այլնի վերաբերյալ:

Հաշվետվությունը լրացվում և էլեկտրոնային եղանակով ուղարկվում է ՀՀ ԱՆ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին[182], իսկ էլեկտրոնային եղանակով ներկայացնելու անհնարինության դեպքում ներկայացվում է թղթային եղանակով: Հաշվետվությունները ներկայացվում են էլեկտրոնային ստորագրությամբ ստորագրված էլեկտրոնային փաստաթղթի ձևով կամ փաստաթղթի սքանավորված տարբերակով, ընդ որում՝ փաստաթղթի սքանավորված տարբերակով ներկայացնելիս փաստաթղթի յուրաքանչյուր էջը պետք է լինի ստորագրված:

Եթե հաշվետվությունում նշված տեղեկությունները թերի կամ անորոշ են լինում կամ այլ կերպ ենթակա են լինում պարզաբանման, ապա ՍԿ-ից կարող է պահանջվել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պարզաբանում հաշվետվության վերաբերյալ կամ շտկել հաշվետվության մեջ առկա թերությունները և ներկայացնել հաշվետվության լրամշակված տարբերակը: Ամեն դեպքում ՍԿ-ն իր նախաձեռնությամբ կարող է մինչև հաշվետվության ներկայացման ժամկետի ավարտը ՀՀ ԱՆ ներկայացնել հաշվետվության լրամշակված տարբերակը:

[182] 05.10.2020թ. դրությամբ ՀՀ ԱՆ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեն է info@moj.am:

§7. Մնանկության կառավարչի գործունեության կասեցումը և որակավորման դադարեցումը

ՍԿ որակավորվելուց հետո կարող են ծագել օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի որոշ հանգամանքներ, որոնք ժամանակավորապես կամ ընդհանրապես խոչընդոտում են ՍԿ գործունեությունը: Հենց այս դեպքերին համարժեք արձագանքելու համար օրենսդրությունը նախատեսում է ՍԿ գործունեությունը կասեցնելու և որակավորումը դադարեցնելու գործիքակազմերը:

ՍԿ գործունեությունը կասեցնելու հիմքերը սպառիչ են, մասնավորապես դա կարող է տեղի ունենալ, եթե նա.

1. անցել է հանրային ծառայության՝ հանրային ծառայության մեջ գտնվելու ժամկետով, բայց ոչ ավելի, քան հինգ տարի ժամկետով,

2. զորակոչվել է ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մինչև ծառայության ժամկետը լրանալը,

3. մեկ տարուց ավելի ժամանակով առողջական վիճակի պատճառով ի վիճակի չէ կատարելու իր մասնագիտական պարտականությունները, եթե առկա են առողջական վիճակը հավաստող համապատասխան փաստաթղթեր, բայց ոչ ավելի, քան 5 տարի ժամկետով: Այսինքն այս դեպքում առկա է լինում այնպիսի հիվանդություն, որը զրկում է կառավարչին մեկ տարուց ավելի ժամանակով կատարելու իր մասնագիտական պարտականությունները և կառավարիչը կարող է խնդրել մինչև 5 տարի ժամկետով կասեցնել իր գործունեությունը,

4. օրենքով սահմանված կարգով ճանաչվել է անհայտ բացակայող,

5 դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է սնանկ,

6 Օրենքով սահմանված ժամկետում չի կնքել ապահովագրության պայմանագիրը,

7 իր դիմումի համաձայն դուրս է եկել ԻԿԿ-ից և մեկամսյա ժամկետում չի դարձել կառավարիչների որևէ ԻԿԿ անդամ,

8 ԻԿԿ ընդհանուր ժողովի որոշմամբ հեռացվել է ԻԿԿ-ից,

9 որպես անհատ ձեռնարկատեր հանվել է հաշվառումից:

Ընդ որում, եթե առկա են լինում վերոնշյալ ցանկի 1-3-րդ և 5-9-րդ կետերով նախատեսված հիմքեր, օրինակ՝ երբ կառավարիչը անցնում է հանրային ծառայության, նա պարտավոր է տասնօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԱՆ և ԻԿԿ՝ կցելով կասեցման հիմքերը հավաստող համապատասխան փաստաթղթերը:

Պետք է ընդգծել, սակայն, որ հիշատակվածը չի բացառում այն դեպքերը, երբ կասեցման հիմք հանդիսացող հանգամանքներին ՀՀ ԱՆ-ն իրազեկվի իր լիազորությունների իրականացման ընթացքում և այդ դեպքում դրանք ևս պետք է հիմք ընդունվեն:

ՍԿ գործունեության կասեցումը հանգեցնում է կառավարչի որակավորման վկայականի գործողության կասեցման: Այլ կերպ ասած՝ կասեցման ժամանակահատվածում անձը համարվում է կառավարչի որակավորում չունեցող: Նա այլևս չի կարող շարունակել վարել իր առկա գործերը և նոր գործերով էլ չի կարող նշանակվել կառավարիչ: Դա է պատճառը, որ Կառավարչի գործունեությունը կասեցնում է Նախարարը, ում իրավասությանն է վերապահված կառավարչի գործունեության կասեցումը, նման որոշում կայացնելու

դեպքում ծանուցում կառավարչին, ԻԿԿ-ին, ինչպես նաև Դատական դեպարտամենտին՝ դատարաններին տեղեկացնելու համար, և որոշումը հրապարակվում է ՀՀ ԱՆ պաշտոնական կայքում: Ընդ որում, դատարանը ստանալով կառավարչի գործունեությունը կասեցնելու որոշումը պետք է նրա մասնակցությամբ բոլոր սնանկության գործերով կայացնի կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին որոշում:

Միաժամանակ, պետք է նկատել, որ գործունեությունը կասեցնելու հիմքերը վերանալուց հետո, օրինակ՝ ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից վերադառնալուց հետո, կառավարիչը կարող է դիմել ՀՀ ԱՆ իր գործունեությունը վերականգնելու և հաշվառվելու համար՝ կցելով համապատասխան փաստաթղթերը:

Նախարարը, ուսումնասիրելով ներկայացված նյութերը և հիմնավորված համարելով կառավարչի դիմումը, եռօրյա ժամկետում որոշում է կայացնում նրա գործունեությունը վերականգնելու և նրան հաշվառելու մասին:

Ի տարբերություն գործունեության կասեցման, կառավարչի որակավորման դադարեցումը կրում է անդառնալի բնույթ, այսինքն՝ համապատասխան հիմքերի վերացումը չի կարող հանգեցնել նրա որակավորման վերականգնմանը:

ՍԿ որակավորումը դադարեցվում է.

1. կառավարչի դիմումի հիման վրա,

2. կառավարչի 65 տարին լրանալու դեպքում: Այս դեպքում սակայն կառավարիչը իր պաշտոնավարման տարիքը լրանալուց առնվազն մեկ ամիս առաջ կարող է դիմել Նախարարին՝ խնդրելով թույլատրել մինչև հինգ տարի ժամկետով շարունակել զբաղվել կառավարչի գործունեությամբ, եթե կառավարիչը մասնակցում է դեռևս չավարտված սնանկության վարույթի,

3 կառավարչի մահվան, դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա անգործունակ, սահմանափակ գործունակ կամ մահացած ճանաչվելու դեպքում,

4 նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռ օրինական ուժի մեջ մտնելու դեպքում, որով նա դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար, կամ որով նախատեսված է ազատությունից զրկելու հետ կապված պատիժ,

5 կառավարչի նկատմամբ որպես կարգապահական տույժ որակավորման դադարեցումը կիրառվելու դեպքում,

6 կառավարչի պարտականությունների կատարման հետևանքով պարտատիրոջը կամ պարտապանին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ դատական ակտը երեք ամսվա ընթացքում չկատարելու դեպքում,

7 վերջին մեկ տարվա ընթացքում դատարանի կողմից երեք անգամ կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվելու դեպքում՝ իր լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով,

8 վերջին մեկ տարվա ընթացքում կառավարիչ ընտրվելու դեպքում առնվազն երեք անգամ Օրենքով չնախատեսված հիմքով իր պարտականությունները կատարելուց հրաժարվելու դեպքում,

9 սնանկության գործով կառավարչի որակավորումը օրենքի պահանջների խախտմամբ ստացած լինելու դեպքում,

10 որակավորվելուց հետո երեք տարի անընդմեջ ԻԿԿ անդամ չհանդիսանալու դեպքում:

Կառավարչի որակավորումը դադարեցվում է նաև այն դեպքում, երբ կառավարիչը գործունեությունը կասեցված է լինում, սակայն որոշակի ժամանակահատվածում կասեցման հիմքերը չեն վերանում: Մասնավորապես.

1

երբ անձը գտնվում է հանրային ծառայության մեջ հինգ տարուց ավել ժամկետով: Այսինքն՝ երբ անձը անցնում է հանրային ծառայության, առաջիկա 5 տարիների ընթացքում նրա գործունեությունը կասեցվում է, և եթե նաև դուրս գա հանրային ծառայությունից այդ ընթացքում, ապա կարող է վերականգնել իր գործունեությունը: Սակայն եթե 5 տարին լրանալուց հետո էլ չհայտնի Նախարարությանը հանրային ծառայությունը դադարեցնելու և իր գործունեությունը վերականգնելու ցանկության մասին և (կամ) շարունակի մնալ հանրային ծառայության մեջ, ապա վերջինիս որակավորումը դադարեցվելու է,

2

նույնը նաև պարտադիր զինվորական ծառայության դեպքում, երբ ծառայության ժամկետը լրանալուց հետո անձը շարունակում է զինվորական ծառայությունը,

3

համանման դեպքում, երբ անձը առողջական վիճակի պատճառով ի վիճակի չի եղել կատարելու իր մասնագիտական պարտակա-նությունները, խնդրել է կասեցնել իր գործունեությունը, օրինակ հինգ տարի ժամկետով, սակայն հինգ տարին լրանալուց հետո էլ ի վիճակի չէ անցնել աշխատանքի: Այս դեպքում ևս առկա է որակավորման դադարեցման հիմք,

4

անհայտ բացակայող ճանաչվելու հիմքով գործունեությունը կասեցվելուց հետո հինգ տարվա ընթացքում, կառավարչին անհայտ բացակայող ճանաչելու մասին վճիռը չի վերացվել,

5

սնանկ ճանաչվելու հիմքով գործունեությունը կասեցվելուց հետո՝ երեք տարվա ընթացքում սնանկության վարույթը չի ավարտվել,

6

օրենքով սահմանված ժամկետում ապահովագրության պայմանագիրը չկնքելու հիմքով գործունեությունը կասեցվելուց հետո մեկ տարվա ընթացքում, կառավարիչը չի կնքել ապահովագրության պայմանագիր,

7

իր դիմումի համաձայն ԻԿԿ դուրս գալու հիմքով գործունեությունը կասեցվելուց հետո մեկ տարվա ընթացքում չի դարձել որևէ ԻԿԿ անդամ,

8

ԻԿԿ-ից հեռացվելու հիմքով գործունեությունը կասեցվելուց հետո երկու տարվա ընթացքում չի դարձել որևէ ԻԿԿ անդամ,

9

որպես անհատ ձեռնարկատեր հաշվառումից հանվելու հիմքով գործունեությունը կասեցվելուց հետո մեկ տարվա ընթացքում չի հաշվառվել որպես անհատ ձեռնարկատեր:

ՍԿ որակավորումը դադարեցվում է Նախարարի որոշմամբ, որը, կախված դադարեցման հիմք հանդիսացող հանգամանքից, ունի ազդեցության տարբերակումներ: Այսպես, որպես կանոն, կառավարչի որակավորումը դադարեցվում է Նախարարի որոշման ուժի մեջ մտնելու պահից՝ բացառությամբ հետևյալ դեպքերի.

1. կառավարչի պաշտոնավարման տարիքը լրանալու դեպքում որակավորումը դադարեցվում է պաշտոնավարման ժամկետը լրանալու օրվանից,
2. դադարեցման հիմք հանդիսացող հանգամանքները դատական ակտերով հաստատված լինելու դեպքում՝ այդ դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից:

ՍԿ որակավորումը դադարեցնելու մասին Նախարարի որոշումը կայացնելուց հետո եռօրյա ժամկետում ուղարկվում է կառավարչին: Միաժամանակ, հարկ է նկատել, որ, չնայած Օրենքում նման կարգավորման բացակայությանը, կառավարչի որակավորման դադարեցման որոշումը պետք է ուղարկվի Դատական դեպարտամենտ՝ դատարաններին ծանուցելու համար, քանի որ այդ հանգամանքը հիմք է կառավարչի լիազորությունը սնանկության գործերով վաղաժամկետ դադարեցնելու համար:

Կառավարչի որակավորման դադարեցման դեպքում ուժը կորցրած է ճանաչվում նրան տրամադրված որակավորման վկայականը և նա հանվում է հաշվառումից, որի մասին նշում է կատարվում ՀՀ ԱՆ կայքում: Այսինքն՝ նա այդ պահից այլևս չի հանդիսանում ՍԿ և չի կարող իրականացնել այդպիսի գործունեություն:

Շարադրվածով պայմանավորված.

1. Կառավարչի որակավորման դադարեցման մասին իրազեկվելու դեպքում դատարանը անհապաղ պետք է վաղաժամկետ դադարեցնի նրա լիազորությունը իր վարույթում գտնվող սնանկության գործով,

2. Որակավորումը դադարեցված կառավարիչը պարտավոր է տվյալ սնանկության գործով նոր կառավարիչ նշանակվելուց հետո՝ ոչ ուշ, քան մեկշաբաթյա ժամկետում, իր մոտ պահպանվող՝ ընթացիկ սնանկության գործերով փաստաթղթերը հանձնել նոր կառավարչին: Ըստ որում, այս պարտականության կատարումը խթանելու նպատակով օրենսդիրը սահմանել է, որ կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվելու դեպքում նրա վարձատրությունը և վարչական ծախսերի փոխհատուցումը կատարվում է, եթե սնանկության վարույթին առնչվող բոլոր փաստաթղթերը հանձնման-ընդունման ակտի հիման վրա հանձնվել են նոր կառավարչին:

Միաժամանակ, ակնհայտ է, որ թե կառավարչի գործունեության կասեցումը, թե որակավորման դադարեցումը ունեն նշանակալի ազդեցություն կառավարչի համար, ինչով պայմանավորված օրենսդիրը նախատեսել է, որ համապատասխան որոշումը կառավարիչը կարող է ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում բողոքարկել դատարան:

ԳԼՈՒԽ 19. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ԵՎ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ

§1. Սնանկության կառավարչի նշանակումը

ՍԿ նշանակման գործընթացը ներառում է կառավարչի թեկնածության ընտրությունը և հաստատումը դատարանի կողմից: Այս առումով միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա չէ միասնական մոտեցում: Օրինակ՝ որոշ երկրներ պարտատերերին թույլատրում են կառավարչի նշանակման հարցում ունենալ վճռորոշ դերակատարում, երկրների մյուս խումբը այս հարցում կարևոր դերը վերապահում է դատարանին[183]:

ՎԶԵԲ-ը մշակել է սնանկության գործով կառավարիչների նշանակման գործընթացի վերաբերյալ առաջարկություններ, որոնց համաձայն՝ օրենսդրությունը պետք է սահմանի.

1 կոնկրետ գործով կառավարչի մասնակցությունը բացառող հանգամանքների շրջանակը, ինչպիսիք են պարտապանի նկատմամբ պահանջների առկայությունը, շահերի բախումը, պարտապանից կամ հիմնական պարտատերերից մեկից կախվածությունը,

[183] Տե՛ս ASSESSMENT OF INSOLVENCY OFFICE HOLDERS Review of the profession in the EBRD region, էջ 16 (հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.ebrd.com/cs/Satellite?c=Content&cid=1395277239633&pagename=EBRD%2FContent%2FDownloadDocument):

կոնկրետ գործով կառավարչին նշանակելու իրավասություն ունեցող մարմինը, օրինակ՝ դատարանը, պետական այլ մարմինը, պարտատերերի ժողովը,	2
ընտրության հստակ չափանիշներ կամ կառավարչին ռեեստրից պատահականության սկզբունքով ընտրելու կարգ այն դեպքում, երբ կառավարչին նշանակում է դատարանը կամ այլ մարմին: ՎԶԵԲ-ի տեսանկյունից թույլատրելի են նաև այնպիսի տարբերակներ, ինչպիսիք են կառավարչի թեկնածությունը պարտապանի կամ պարտատերերի կողմից առաջարկելը կամ դատարանի կողմից կառավարչին նշանակելու լիազորությունը պարտատերերի ժողովին փոխանցելը,	3
որ կառավարչի մասնակցությամբ գործերի քանակը չի սահմանափակվում: Սակայն կարևոր է, որ պարտապանը և պարտատերերը կարողանան կոնկրետ կառավարչի նշանակման դեմ առարկություններ ներկայացնել և վիճարկել վերջինիս նշանակումը[184]:	4

Պետք է նկատել, որ ՍԿ թեկնածուի ընտրության առումով օրենսդիրը որդեգրել է մի քանի լուծումների միախառնված տարբերակը: Այսպես, Օրենքը նախատեսում է կառավարչի, այդ թվում՝ ԺԿ թեկնածուի ընտրության երկու եղանակ.

1. սնանկության դիմում ներկայացրած անձի կողմից,
2. հատուկ համակարգչային ծրագրի միջոցով:

Առաջին եղանակի դեպքում ՍԿ թեկնածու առաջարկում է պարտապանը՝ կամավոր սնանկության դեպքում, իսկ հարկադրված սնանկության դեպքում պարտատերը (մի քանի պարտատերերի պարագայում՝ բոլոր պարտատերերը): Ընդ որում, ԺԿ թեկնածությունն

[184] Տե՛ս Restructuring & insolvency guide for Europe and the Middle East. էջ 156.

առաջարկվում է սնանկության դիմումով, իսկ ԺԿ որպես ՍԿ նշանակելու դեմ առարկելիս՝ այդ առարկություններով:

Ուշադրության արժանի է նաև ՍԿ թեկնածու առաջարկելու մասով Օրենքի փոփոխություններով իրականացված հետևյալ երկու բարեփոխումները.

1. այլևս անհրաժեշտ չէ ՍԿ թեկնածու առաջարկելիս ներկայացնել համապատասխան թեկնածուի վերաբերյալ փաստաթղթերը, որոնք պահանջվում էին նախկին օրենսդրությամբ (օրինակ՝ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության վկայականի, կառավարչի որակավորման վկայականի, ապահովագրական վկայագրի պատճեններ): Փոխարենը առաջարկ ներկայացնող անձը պետք է նշի միայն նույնականացնող տվյալներ (կառավարչի անուն, ազգանուն, հայրանուն և ցանկալի է նաև նշել որակավորման վկայականի համարը),

2. համապատասխան առաջարկին պետք է կցվի տվյալ կառավարչի գրավոր համաձայնությունը այդ դիմումի հիման վրա հարուցվող գործով որպես ԺԿ հանդես գալու վերաբերյալ, որը բխում էր կառավարչի կողմից իր գործունեությունը կազմակերպելու ինքնուրույնությունը երաշխավորելու անհնարժեշտությունից: Եվ հենց այդ մոտեցումից էլ բխում է, որ այսպիսի համաձայնությունները պետք է լինեն կոնկրետ, այսինքն՝ դրանում պետք է հստակ ցույց տրվի, թե ում սնանկության հարցով է տրվում այս համաձայնությունը և, հետևաբար, ընդհանուր համաձայնությունները, այսինքն՝ անորոշ թվով անձանց սնանկության գործերով թեկնածու առաջադրվելու տրամաբանությամբ չպետք է թույլատրվեն:

Սնանկության դիմում ներկայացրած անձի կողմից ՍԿ թեկնածու չառաջարկելու կամ առաջարկված թեկնածուի՝ Օրենքի պահանջներին չհամապատասխանելու դեպքում ՍԿ թեկնածուի ընտրությունը կատարվում է երկրորդ եղանակով, այսինքն՝ հատուկ համակարգչային ծրագրի միջոցով, որը իրականացվում է դատարանի

կողմից ՀՀ ԱՆ ներկայացված պահանջագրի հիման վրա: Այս առումով Օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է հետևյալը.

> «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը պահանջագիրն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, հատուկ համակարգչային ծրագրի միջոցով տարածքային սկզբունքով ընտրում է կառավարչի թեկնածուին՝ այդ մասին անհապաղ տեղյակ պահելով կառավարչին, և դատարան է ներկայացնում նրա թեկնածությունը: Կառավարչի կողմից սպասարկման որևէ տարածք ընտրելու դեպքում վերջինս որպես ԺԿ (կառավարիչ) կարող է նշանակվել միայն այդ տարածքում: Կառավարչի ընտրությունը տարածքային սկզբունքով չի կատարվում, եթե տվյալ տարածքն սպասարկող կառավարիչ ընտրել հնարավոր չէ»:

Հիշատակված եղանակով ՍԿ թեկնածուի ընտրության կարգի մանրամասները սահմանված են Նախարարի 2020 թվականի մարտի 13-ի «Մնանկության գործով կառավարչի թեկնածուի ընտրության կարգի մանրամասները սահմանելու մասին» N 111-Ն հրամանով[185]: Այսպես, ՀՀ ԱՆ-ն, դատարանից ստանալով կառավարչի թեկնածու ներկայացնելու վերաբերյալ պահանջագիր, համակարգչային ծրագրում մուտքագրում է դրա տվյալները: Մուտքագրված պահանջագրերի հիման վրա մինչև հաջորդ աշխատանքային օրը անցկացվում է վիճակահանություն ծրագրի միջոցով ինքնաշխատ եղանակով՝ առանց նախարարության միջամտության: Վիճակահանությունը իրականացվում է պատահականության սկզբունքով՝ հիմք ընդունելով երկու հիմնական չափանիշ.

1. որ տարածքում է գործունեություն ծավալում կառավարիչը (Երևան, մարզեր, ՀՀ ողջ տարածք),
2. որքան է կազմում տվյալ կառավարչի ծանրաբեռնվածությունը:

---

185 Ուժի մեջ է մտել 15.04.2020թ.: Տե՛ս ՀՀԳՏ 2020.03.20/10 (678) Հոդ.73

Յուրաքանչյուր կառավարչի սպասարկման տարածքը նախապես ամրագրվում է ծրագրում՝ կառավարչի հաշվառման ժամանակ, իսկ ծանրաբեռնվածությունը որոշվում է կառավարչի հաշվառման ժամանակ իր տրամադրած գործերի քանակի և հետագայում մակագրվող և ավարտվող գործերի քանակի հաշվարկի միջոցով: Ընդ որում, կառավարչի ծանրաբեռնածությունը հաշվարկելու նպատակից ելնելով՝ յուրաքանչյուր կառավարիչ պարտավոր է պարտապանի կամ պարտատիրոջ առաջարկի հիման վրա որպես ԺԿ (կառավարիչ) նշանակվելու, ինչպես նաև յուրաքանչյուր սնանկության գործով իր լիազորությունները դադարելու դեպքում այդ մասին ծանուցել նախարարությանը՝ նախարարի վերոնշյալ հրամանով սահմանված կարգով, իսկ նման ծանուցումը չիրականացնելու համար կառավարիչը կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի պահանջների չկատարման հիմքով:

Համակարգչային ծրագիրը վիճակահանությունն իրականացնում է հետևյալ սկզբունքներով.

1. վիճակահանությունը կատարվում է պատահականության սկզբունքով՝ ծրագրում ներառված այն կառավարիչների ցանկից, որոնք տվյալ պահին սպասարկում են նվազ քանակով ընթացիկ գործեր և սպասարկում են համապատասխան պահանջագրում նշված պարտապանի վայրին համապատասխանող տարածքը: Սույն ենթակետի իմաստով նվազ քանակով ընթացիկ գործեր ունեցող են համարվում այն կառավարիչները, որոնց կողմից սպասարկվող գործերի քանակը մինչև 30 գործով ավել է տվյալ պահին այդ տարածքում նվազագույն քանակով ընթացիկ գործեր սպասարկող կառավարչի գործերի քանակից: Եթե տվյալ պահին այդ տարածքում նվազագույն քանակով ընթացիկ գործեր սպասարկող կառավարչի գործերի քանակը պակաս է 20-ից, ապա սույն ենթակետի իմաստով նվազ քանակով ընթացիկ գործեր ունեցող են համարվում այն կառավարիչները, որոնց կողմից սպասարկվող գործերի քանակը մինչև 40 գործով ավել է տվյալ պահին այդ տարածքում նվազագույն քանակով ընթացիկ գործեր սպասարկող կառավարչի գործերի քանակից,

2 նախորդ իմաստով նվազ քանակով ընթացիկ գործեր ունեցող կառավարիչների բացակայության դեպքում վիճակահանությունը կատարվում է պատահականության սկզբունքով՝ ծրագրում ներառված այն բոլոր կառավարիչների ցանկից, որոնք սպասարկում են համապատասխան պահանջագրում նշված պարտապանի վայրին համապատասխանող տարածքը,

3 եթե տվյալ պահանջագրով պարտապանի վայրին համապատասխանող տարածքը որևէ կառավարիչ չի ընտրել (կամ որպես սպասարկման տարածք չի որոշվել ՀՀ ողջ տարածքը), ապա վիճակահանությունը կատարվում է պատահականության սկզբունքով՝ ծրագրում որպես տվյալ տարածքին հարող նշված տարածքը սպասարկող կառավարիչների ցանկից՝ նախորդ երկու կետերը հաշվի առնելով,

4 նախորդ կետով սահմանված կարգով կառավարիչ ընտրելու անհնարինության դեպքում վիճակահանությունը կատարվում է ծրագրում ներառված բոլոր կառավարիչների ցանկից՝ 1-ին կետի իմաստով նվազ քանակով ընթացիկ գործեր սպասարկող կառավարիչներից[186]:

Հարկ է նշել, որ յուրաքանչյուր առանձին գործով ներկայացված պահանջագրի հիման վրա վիճակահանությանը չի մասնակցում այն կառավարիչը.

1. որն արդեն իսկ տվյալ գործով նշանակված է ԺԿ կամ ՍԿ,
2. որի թեկնածությունը տվյալ գործով ներկայացվել է դատարան

[186] ՍԿ պատահական ընտրության նոր համակարգի հիմքում դրված սկզբունքներից դժվար չէ եզրակացնել, որ դրա շնորհիվ բացառվելու է գործերի կենտրոնացումը առանձին կառավարիչների մոտ, ըստ այդմ նրանց՝ գերբեռնումը և թերբեռնումը՝ որպես հետևանք նպաստելով գործերի վարման արդյունավետության բարձրացմանը: Բացի այդ, գործերի համաչափ բաշխումը ստեղծում է ՍԿ միջև շահույթի հնարավորինս հավասար բաշխման հնարավորություն՝ զգալիորեն բարելավելով այս ոլորտի գործարար միջավայրը:

և դատարանը գտել է, որ նա չի համապատասխանում Օրենքի պահանջներին կամ էլ երբ դատարանը հիմնավոր է համարում կառավարչի առարկությունը իր թեկնածության վերաբերյալ:

Յուրաքանչյուր գործով տեղի ունեցած վիճակահանության տվյալները հրապարակվում են ՀՀ ԱՆ կայքի համապատասխան բաժնում[187]: Ընտրված կառավարչի թեկնածուն անմիջապես իր էլեկտրոնային փոստին ստանում է ծանուցում ընտրվելու մասին, իսկ ՀՀ ԱՆ վիճակահանության հիման վրա կազմված արձանագրությունը ներկայացնում է դատարան:

ՍԿ թեկնածությունն ստանալուց հետո դատարանը ստուգում է նրա համապատասխանությունը Օրենքի պահանջներին, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի.

1. Ընդհանուր պահանջներ,
2. Հատուկ պահանջներ:

Ընդհանուր պահանջներն են ՀՀ ԱՆ կողմից անձի որպես կառավարիչ հաշվառված լինելը, նրա գործունեության կասեցված չլինելը, ինչպես նաև նրա պաշտոնավարման տարիքը լրացած չլինելը: Ընդ որում, այս տվյալները ենթակա են ստուգման ՀՀ ԱՆ կայքում հրապարակված տվյալների հիման վրա:

Հատուկ պահանջները սահմանված են Օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ մասում, որի համաձայն՝ որպես ՍԿ չի կարող նշանակվել այն անձը, որը.

1. փոխկապակցված է պարտատերերի կամ պարտապանի հետ,
2. պարտապանի կամ նրա հետ փոխկապակցված անձի նկատմամբ ունի պահանջ կամ պարտավորություն:

Փոխկապակցվածության հիմքերը սահմանված են Օրենքի 9-րդ հոդվածում: Մասնավորապես, իրավաբանական անձի հետ

187 Տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.moj.am/page/613:

փոխկապակցված են համարվում.

ա) անձի նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմնական, դուստր կամ կախյալ իրավաբանական անձը,

բ) անձի ղեկավարը, ինչպես նաև տնօրենների խորհրդի (դիտորդ խորհրդի) անդամը, պարտապանի կոլեգիալ գործադիր մարմնի անդամը, գլխավոր հաշվապահը (հաշվապահը), ինչպես նաև սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելու պահից վերջին մեկ տարվա ընթացքում նշված պաշտոններից ազատված անձը,

գ) անձի կանոնադրական (բաժնեհավաք, փայահավաք) կապիտալի 20 և ավելի տոկոսին տիրապետող անձը,

դ) պարտապանին կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձը կամ մարմնի անդամը:

Անձի նկատմամբ փոխկապակցված է համարվում նաև անձը, որը տվյալ անձի կամ վերը նշված ֆիզիկական անձանց հետ գտնվում է ազգակցական հարաբերությունների մեջ (ամուսինը, նրանց հետ երկու աստիճան ուղիղ վերընթաց և վայրընթաց ազգակցական կապերի մեջ գտնվող անձինք, եղբայրը, քույրը և նրանց հետ ուղիղ վայրընթաց ազգակցական կապերի մեջ գտնվող անձինք, ամուսնու եղբայրը, քույրը):

Հիշատակված պահանջներին անհամապատասխանություն հայտնաբերելու, ինչպես նաև կառավարչի կողմից իր թեկնածության դեմ գործունեությանը խոչընդոտող անհաղթահարելի ուժի (ֆորսմաժորային) հանգամանքների հիմքով առարկության դեպքում դատարանը մեկօրյա ժամկետում կառավարչի թեկնածություն ներկայացնելու պահանջագիր է ներկայացնում ՀՀ ԱՆ, և նոր թեկնածուի ընտրությունն իրականացվում է վերոշարադրյալ կարգով:

Օրենքով սահմանված պահանջների համապատասխանության և ՍԿ թեկնածուի հիմնավոր առարկության բացակայության դեպքում դատարանը դատական ակտ է կայացնում համապատասխան թեկնածուին ՍԿ նշանակելու մասին:

§ 2. Մնանկության կառավարչի փոխարինումը

ՍԿ փոխարինումը տեղի է ունենում այն դեպքում, երբ առկա է անձին որպես ՍԿ նշանակելը խոչընդոտող հանգամանքներ կամ նրա ոչ պատշաճ գործունեության դեպքում: Ընդ որում, այս հանգամանքները ենթակա են գնահատման սնանկության կառավարչի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման ինստիտուտի շրջանակում, որը նախատեսված է Օրենքի 32-րդ հոդվածում:

Այսպիսի գործընթաց սկսելու հիմք է.

1. դատարանի նախաձեռնությունը,
2. պարտատերերի խորհրդի կամ ժողովի միջնորդությունը,
3. պարտատիրոջ միջնորդությունը,
4. պարտապանի միջնորդությունը:

Անկախ գործընթաց սկսելու նախաձեռնություն ցուցաբերած սուբյեկտից՝ կառավարչի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման համար անհրաժեշտ են ծանրակշիռ հիմքեր, քանի որ այն հանդիսանում է կառավարչի գործունեությանը, այդ թվում՝ վարձատրություն ստանալու իրավունքին լրջագույն միջամտություն: Այսպես, դատարանը վաղաժամկետ դադարեցնում է կառավարչի լիազորությունները հետևյալ հիմքերից առնվազն մեկի առկայության դեպքում.

1. կառավարիչը չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում իր լիազորությունները,
2. կառավարչի որակավորումն դադարեցվել կամ նրա գործունեությունը կասեցվել է,
3. կառավարիչը փոխկապակցված է պարտատերերի կամ պարտապանի հետ,
4. պարտապանի կամ նրա հետ փոխկապակցված անձի նկատմամբ ունի պահանջ կամ պարտավորություն:

Եթե վերը թվարկած մյուս հիմքերի դեպքում դատարանը հնարավորություն ունի գրավոր նյութերի հիման վրա կայացնել հիմնավորված դատական ակտ, ապա լիազորությունների իրականացման խախտումների դեպքում առկա է կառավարչի լսված լինելու իրավունքի երաշխավորման անհրաժեշտություն:

Հիշատակվածով պայմանավորված՝ նախքան այս հիմքով որոշում կայացնելը դատարանը եռօրյա ժամկետ է տալիս կառավարչին հնարավոր խախտման վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու, ինչպես նաև սահմանում է ողջամիտ ժամկետ խախտումները շտկելու համար:

Արդյունքում հնարավոր է երկու իրավիճակ, երբ դատարանը չդադարեցնի կառավարչի լիազորությունները, մասնավորապես՝ երբ.

1. կառավարչի դիրքորոշման ուժով հերքվի նրա կողմից խախտում կատարելու ենթադրությունը,
2. դատարանի սահմանած ժամկետում կառավարիչը շտկում է թույլ տված խախտումը և այդ մասին ապացույցները սահմանված ժամկետում ներկայացնում է դատարան:

Ասվածը վկայում է այն մասին, որ այս գործիքը առաջնահերթ ուղղված է կառավարչի կողմից թույլ տրված խախտումները վերացնելուն, այլ ոչ թե «անցանկալի» կառավարիչներին վարույթից հեռացնելուն:

Հարկ է նշել, որ դատարանի կողմից կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվելու դեպքում այդ մասին որոշումն անհապաղ ուղարկվում է տվյալ կառավարչին, պարտապանին և պարտատերերին, ինչպես նաև ՀՀ ԱՆ: Ընդ որում, մեկ տարվա ընթացքում ՍԿ լիազորությունների վաղաժամկետ դադարեցման երեք դեպքը հիմք է նրա որակավորումը դադարեցնելու համար:

Միաժամանակ, պետք է նկատել, որ լիազորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հիմքով կառավարչի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում դատարանը մեկօրյա ժամկետում կառավարչի թեկնածություն ներկայացնելու պահանջագիր է ներկայացնում ՀՀ ԱՆ, իսկ նոր կառավարչի նշանակումը տեղի է ունենում ընդհանուր կարգով:

ԳԼՈՒԽ 20. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. Կառավարչի վարձատրության ընդհանուր պայմանները

Սնանկության վարույթի առանցքային ընթացակարգերը ֆինանսական առողջացման ծրագրի հաստատման կամ պարտապանի նկատմամբ լուծարման վարույթ սկսելու դեպքերն են: Ֆիզիկական անձանց դեպքում թեև լուծարման վարույթ չի նախատեսվում, այնուհանդերձ ֆինանսական առողջացման ծրագիր չհաստատվելու դեպքում ենթադրվում է, որ վերջինիս ակտիվները պետք է վաճառվեն՝ պարտատերերի պահանջները բավարարելու համար:

Պարտապանի ֆինանսական առողջացման դեպքում կառավարչի վարձատրության չափը սահմանվում է ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման ընթացքում պարտատերերի պահանջների բավարարման չափից ելնելով՝ հինգից տասը տոկոսի չափով: Նշված սահմաններում վարձատրության չափն առաջարկում է ծրագիր ներկայացնողը, իսկ որոշումն, ըստ էության, ընդունվում է պարտատերերի ժողովի կողմից: Օրենքը սահմանում է, որ ֆինանսական առողջացման ծրագիրը հաջողությամբ ավարտելու և պարտապանի առողջացման դեպքում կառավարչին վճարվում է հինգից տասը տոկոսի չափով պարգևավճար՝ ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված կարգով:

Այլ է կառավարչի վարձատրության ձևավորման ընթացակարգը ֆինանսական առողջացման ծրագիր չհաստատվելու դեպքում, երբ կառավարչի վարձատրությունը կատարվում է պարտապանի դրամական միջոցներից, պարտապանի, երրորդ անձանց գույքի

վաճառքից (օտարումից) կամ ակտիվների (այդ թվում՝ դեբիտորական պարտքերի) հավաքագրումից գոյացած միջոցներից, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ միջոցներից:

ՍԿ վարձատրության չափը որոշվում է հաշվի առնելով պահանջների բավարարման չափը, սակայն Օրենքը սահմանել է հստակ բացառություն՝ պահանջների բավարարման չափի մեջ չներառելով գույքի իրացումից ծագող հարկային պարտավորությունների գումարը:

ՍԿ վարձատրության ընդհանուր պայմանները հետևյալն են.

1. մինչև 25 միլիոն դրամ՝	10 տոկոս,
2. 25-50 միլիոն դրամ՝	2 500 000 դրամին գումարած 25 միլիոն դրամը գերազանցող գումարի 8 տոկոսը,
3. 50-100 միլիոն դրամ՝	4 500 000 դրամին գումարած 50 միլիոն դրամը գերազանցող գումարի 3 տոկոսը,
4. 100-500 միլիոն դրամ՝	6 000 000 դրամին գումարած 100 միլիոն դրամը գերազանցող գումարի 2 տոկոսը,
5. 500 միլիոն դրամից ավելին՝	14 000 000 դրամին գումարած 500 միլիոն դրամը գերազանցող գումարի 1 տոկոսը:

ՎԴ-ն մի շարք գործերով անդրադարձել է ՍԿ վարձատրության հաշվարկման մեթոդաբանությանը՝ նշելով, որ կառավարչի վարձատրությունը պետք է հաշվարկվի ոչ թե պարտատերերի պահանջների բավարարմանն ուղղվող ամբողջ գումարի նկատմամբ, այլ պետք է ներառվի պարտատերերի պահանջների բավարարմանն ուղղվող գումարի մեջ, այսինքն՝ հաշվարկվի Օրենքով սահմանված տոկոսներով՝ պարտատերերին փաստացի փոխանցվող գումարների նկատմամբ[188]: Ընդ որում, այս մոտեցման համար հիմք է նաև այն իրողությունը, որ վարչական ծախսերն ու կառավարչի վարձատրությունը պարտատերերի պահանջներ չեն դիտարկվում[189]:

Այսպես, օրինակ, եթե առկա դրամական միջոցների չափը կազմում է 10 մլն դրամ, ապա կառավարչի վարձատրությունը պետք է կազմի ոչ թե 1 մլն դրամ, այլ 909.091,0 դրամ, իսկ պարտատերերի պահանջների բավարարմանը ուղղվող գումարը պետք է լինի 9.090.909,0 դրամ, այսինքն՝ կառավարչի վարձատրությունը պետք է կազմի պարտատերերին փաստացի փոխանցվող գումարի 10 տոկոսը: Ընդ որում, այս կերպ, որպես կանոն, ամբողջական թվեր չեն ստացվում, և արդյունքում առաջանում է ստացված թվերը կլորացնելու անհրաժեշտություն:

Հարկ է նշել, որ ՍԿ վարձատրությունը իրականացվում է միջանկյալ բաշխման ծրագրին համապատասխան: Ծրագիրը կազմվում և հաստատվում է կառավարչի կողմից, որում ներառվում է նաև կառավարչի վարձատրության չափը:

Հիշատակվածի համատեքստում հետաքրքրական է այն հարցը, թե կառավարչի վարձատրության տոկոսադրույքը պետք է հաշվարկել սնանկության ամբողջ վարույթի ընթացքում հավաքագրված միջոցների, թե յուրաքանչյուր բաշխման ծրագրով բաշխման ենթակա

---

188 Տե՛ս, օրինակ՝ ՎԴ թիվ ԵԿԴ/0075/04/15 սնանկության գործով 07.04.2018թ. որոշումը:

189 Տե՛ս, օրինակ՝ ՎԴ թիվ ԵՄԴ/0047/04/15 սնանկության գործով 15.11.2018թ. որոշումը:

գումարների նկատմամբ: Այս առումով հիշատակման արժանի է ՎԴ դիրքորոշումը, ըստ որի՝ կառավարչի վարձատրությունը պետք է հաշվարկվի յուրաքանչյուր բաշխման ծրագրվ պարտատերերի պահանջների բավարարմանն ուղղվող միջոցներից ելնելով[190]:

Հասկանալի է, որ ՎԴ կողմից ձևակերպված մոտեցմամբ առաջնորդվելու դեպքում կառավարչի վարձատրության չափը կլինի ավելի մեծ, քանի որ Օրենքը բավարարված պահանջների չափի բարձրացման դեպքում որոշակիորեն նվազեցնում է կիրառելի տոկոսադրույքը: Այնուամենայնիվ, պետք է նկատել, որ Օրենքը սահմանում է ոչ թե միջանկյալ բաշխման ծրագրով բավարարման ենթակա, այլ առհասարակ բավարարված պահանջների վերաբերյալ դրույթ:

Օրենքը սահմանում է նաև կառավարչի պարգևավճար ստանալու հնարավորությունը: Մասնավորապես, եթե սնանկության գործն ավարտվում է պարտատերերի պահանջների բավարարմամբ, և կառավարչի կողմից հավաքվել են պարտատերերի պահանջների չափը գերազանցող ակտիվներ, ապա կառավարիչն ստանում է նաև պարգևավճար հավաքված ակտիվների՝ պարտատերերի գրանցված պահանջների չափը գերազանցող մասի 5 տոկոսի չափով:

Բացի այդ, Օրենքի փոփոխություններով ներդրվել է սնանկության վարույթի հնարավորինս սեղմ ժամկետներում ավարտելուն միտված ՍԿ ջանքերը խթանող գործիքակազմ: Այսպես, Օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սնանկության գործով վարույթի տևողությունը՝ սկսած պարտապանի լուծարման վարույթ սկսելու մասին որոշում կայացնելու պահից մինչև սնանկության գործն ավարտելու մասին վճիռ կայացնելը՝ մինչև վեց ամիս տևելու, իսկ ֆիզիկական անձի սնանկության դեպքում՝ սկսած պարտատերերի առաջին ժողովի անցկացման օրվանից մինչև սնանկության գործն ավարտելու մասին վճիռ կայացնելը՝ մինչև վեց ամիս տևելու

[190] Տե՛ս, օրինակ՝ ՎԴ թիվ ԵԱԴԴ/0100/04/17 սնանկության գործով 25.02.2020թ. որոշումը:

դեպքում (չհաշված ֆինանսական առողջացման ծրագրի ժամանակահատվածը) կառավարիչն ստանում է պարգևավճար: Այն կազմում է կառավարչի վարձատրության 20 տոկոսը, եթե պարտատերերի պահանջների բավարարման չափը մինչև 50 մլն դրամ է, իսկ 50 մլն դրամը գերազանցելու դեպքում՝ 50 տոկոսը: Ընդ որում, վարույթի տևողությունը վեցամսյա ժամկետը գերազանցելու դեպքում նախատեսված պարգևավճարի տոկոսադրույքը յուրաքանչյուր հաջորդ վեց ամսվա համար պահանջների բավարարման չափը մինչև 50 մլն դրամ լինելու նվազում է 5 տոկոսի չափով, իսկ ավել լինելու դեպքում՝ 10 տոկոսի չափով:

§2. Կառավարչի վարձատրության հատուկ պայմանները

Օրենքը սահմանում է կառավարչի վարձատրության ոչ միայն ընդհանուր պայմանները, այլև սահմանում է առանձին դեպքերի համար վարձատրության հատուկ պայմաններ: Այդպիսի դեպքերն են.

1. սննդկության գործի վարույթի կարճումը,
2. սննդկության դիմումի մերժումը, այդ թվում՝ պարտատերերի կողմից պահանջներից հրաժարվելու կամ դրանց կատարման ժամկետը երկարաձգվելու հիմքով,
3. ԺԿ՝ որպես կառավարիչ չնշանակումը,
4. պարտատերերի կողմից պահանջների չներկայացումը,
5. կառավարչի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը՝ բացառությամբ, եթե կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվել են լիազորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, ինչպես նաև Օրենքի 29.2-րդ հոդվածի 1-ին մասի 5-9-րդ կետերով նախատեսված դեպքերում որակավորման դադարեցման հիմքով,
6. ապահովված իրավունքի առարկան ապահովված պարտատիրոջ կամ նրա նշած երրորդ անձի կողմից ի սեփականություն ընդունումը,
7. երկրորդ կամ հաջորդ հերթական աճուրդից հետո գույքը չիրացվելու դեպքում պարտատիրոջ կողմից գույքի ի սեփականություն ընդունումը,

8 պարտապանի գույք չունենալու, այն հայտնաբերելու անհնարինության կամ գույքի արժեքը նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից պակաս լինելու հիմքով սնանկության վարույթի ավարտը:

Վերոնշյալ 1-5-րդ կետերում նախատեսված դեպքերում կառավարչի ամսական վարձատրությունը կատարվում է դատարանի կողմից համապատասխան վճիռը (որոշումը) կայացնելու պահին նախորդող վերջին մեկ տարում համապատասխանաբար պարտապանի տնօրենի համար հաշվարկված վարձատրության կամ ֆիզիկական անձ պարտապանի տարեկան եկամտի 1/12-ի չափով, բայց ոչ պակաս, քան «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին»[191] օրենքի 1-ին հոդվածով սահմանված չափով, իսկ ֆիզիկական անձ պարտապանի՝ վերջին մեկ տարվա ընթացքում եկամուտ չունենալու դեպքում՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքի 1-ին հոդվածով սահմանված չափով:

Ապահովված իրավունքի առարկան ապահովված պարտատիրոջ կամ նրա նշած երրորդ անձի կողմից ի սեփականություն ընդունելու դեպքում կառավարչի վարձատրությունը կազմում է ապահովված իրավունքի առարկայի մեկնարկային գնի երեք տոկոսը, բայց ոչ ավելի, քան նվազագույն աշխատավարձի 10 000-ապատիկը:

Երկրորդ կամ հաջորդ հերթական աճուրդից հետո գույքը չիրացվելու դեպքում պարտատիրոջ կողմից գույքի ի սեփականություն ընդունման դեպքում կառավարչի վարձատրության ընդհանուր պայմաններով որոշված չափին ենթակա է հավելագրման դրա մեկ տոկոսի չափով գումար:

---

[191] Ընդունվել է 17.12.2003թ.: Ուժի մեջ է մտել 01.01.2004թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2004.01.16/3(302) Հոդ.43:

Պարտապանի գույքի բացակայության կամ դրա նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից պակաս լինելու հիմքով սնանկության վարույթի ավարտի դեպքում կառավարչի չստացած վարձատրության փոխարեն կառավարչին պետական բյուջեից վճարվում է փոխհատուցում՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքի 1-ին հոդվածով սահմանված չափով:

ԳԼՈՒԽ 21. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ

§1. Սնանկության կառավարիչների մասնագիտական միավորման կարգավիճակը և կառավարման մարմինները

Սնանկության գործով կառավարիչների՝ որպես առանձին մասնագիտական հանրույթի հավաքական շահերի պաշտպանության և գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով Օրենքը նախատեսել է նրանց ինքնակարգավորվող կազմակերպության (այսուհետ նաև՝ ԻԿԿ) ինստիտուտը, որն ունի ոչ առևտրային բնույթ:

ԻԿԿ ստեղծմանը և լուծարմանը առնչվող հարաբերությունների հիմնական կարգավորումը տեղ է գտել Օրենքի 26-րդ հոդվածում: Մասնավորապես, ԻԿԿ հիմնադիր կարող են հանդիսանալ ոչ պակաս, քան 20 ՍԿ, իսկ դրա գրանցումից հետո այն պետք է մշտապես ունենա կառավարիչ հանդիսացող ոչ պակաս, քան 20 անդամ:

ԻԿԿ-ի պետական գրանցման համար, բացի օրենքով սահմանված փաստաթղթերից, ներկայացվում են նաև տեղեկություններ նրա անդամների մասին: ԻԿԿ անվանումը պետք է ներառի «ինքնակարգավորվող կազմակերպություն» բառերը կամ «ԻԿԿ» հապավումը: Ըստ որում, ՍԿ-ն կարող է լինել միայն մեկ ԻԿԿ անդամ:

Հիշատակվածի համատեքստում պետք է նկատել նաև, որ օրենսդիրը ներկայումս թույլատրում է մի քանի ԻԿԿ գոյություն, որը մինչև Օրենքի փոփոխությունները հնարավոր չէր: Այդուհանդերձ, 2021

թվականի դրությամբ ՀՀ-ում պետական գրանցում ստացած միակ ԻԿԿ-ն «Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» ԻԿԿ-ն է (այսուհետ նաև՝ «ՍԳԿԿ» ԻԿԿ), ի տարբերություն մի շարք երկրներում առկա պրակտիայի, ինչպես օրինակ՝ Ուկրաինայի դեպքում, որտեղ ներկայումս գրանցված են 7 ԻԿԿ-ներ[192]:

Օրենքի 27-րդ հոդվածը սահմանում է ԻԿԿ կառավարման մարմինների շրջանակը, որտեղ բարձրագույն մարմինը նրա անդամների ընդհանուր ժողովն է, որը կազմակերպության ղեկավարումն իրականացնում է տարեկան կամ արտահերթ ժողովների գումարման միջոցով: Ընդհանուր ժողովն իրավազոր է, եթե դրան մասնակցում է անդամների երկու երրորդը: Ընդհանուր ժողովում որոշումներն ընդունվում են մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ, իսկ ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության հարցերով՝ բոլոր անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդով: Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության հարցերն են.

ա. ԻԿԿ կանոնադրության, կանոնների, կարգերի ընդունումը և դրանցում փոփոխությունների կատարումը,

բ. ԻԿԿ անդամին անդամությունից զրկելը,

գ. ԻԿԿ դիտորդ խորհրդի, վերահսկիչ ծառայության անդամների և ղեկավարի ընտրությունը և նրանց լիազորությունների դադարեցումը,

192 Տե՛ս Sergiy Donkov: “Ukraine: Self-Regulation of Bankruptcy Trustees: Shall We Wait Or Have To Develop?”, 21 March 2019, Mondaq.

դ ԻԿԿ գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունների հաստատումը,

ե ԻԿԿ կանոնադրությամբ սահմանված այլ հարցեր,

զ ԻԿԿ անդամավճարի չափը սահմանելը:


ԻԿԿ-ն ունի նաև գործադիր մարմին, որը ընտրվում կամ նշանակվում է դիտորդ խորհրդի կողմից, կարող է լինել միանձնյա՝ գործադիր տնօրեն, կամ կոլեգիալ՝ վարչություն և վարչության ղեկավար, և կոչված է կազմակերպել ԻԿԿ աշխատանքները՝ հաշվետու լինելով դիտորդ խորհրդին:

ԻԿԿ հաջորդ մարմինը կարգապահապական հանձնաժողովն է, որն իրավասու է կառավարչի վարքագծի կանոնների խախտման առնչությամբ հարուցել կարգապահական վարույթ և կիրառել պատասխանատվության միջոցներ:

§2. Սնանկության կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության գործառույթները

ԻԿԿ գործառույթները խտացված կերպով ներկայացված են նրա գործունեության նպատակների միջոցով, որոնց շրջանակում հիմնական տեղ են զբաղեցնում կազմակերպության անդամների գործունեության թափանցիկությանը և արդյունավետության բարձրացմանը նպաստելը, ինչպես նաև հավաքական շահերի պաշտպանությունը: Ըստ այդմ, ԻԿԿ-ն ունի մի շարք լիազորություններ, որոնցից են.

- ներկայացնում և պաշտպանում է ՍԿ-ների շահերը,
- մշակում և կիրառում է ՍԿ-ների վարքագծի կանոնները,
- ՍԿ դիմումով տալիս է կառավարիչների վարքագծի կանոնների կիրառման վերաբերյալ խորհրդատվական պարզաբանումներ,
- անդամագրում և անդամությունից հեռացնում է ՍԿ-ներին,



Օրենսդրությամբ ուղղակիորեն չնախատեսված գործունեության տեսանկյունից հատկապես հիշատակման է արժանի սնանկության ոլորտի օրենսդրական փոփոխություններ նախատեսող նախագծերի վերաբերյալ կարծիք տալը, ինչպես նաև ոլորտային բարեփոխումների անհրաժեշտության մասին ազդակների փոխանցումը իրավասու պետական կառավարման համակարգի մարմիններին: Ընդ որում, այս գործընթացում ԻԿԿ-ն հանդես է գալիս պետական մարմինների և ՍԿ-ների միջև կապող օղակի դերում և ունի զգալի դերակատարում ոլորտի շարունակական բարեփոխման համատեքստում:

Հասկանալի է, որ ԻԿԿ-ն իր գործունեությունը իրականացնելու համար պետք է ունենա որոշակի գույք, այդ թվում՝ դրամական միջոցներ, որը չի կարող օգտագործվել ԻԿԿ անդամների պարտավորությունների համար, իսկ ԻԿԿ անդամները իրենց հերթին պատասխանատվություն չեն կրում ԻԿԿ պարտավորությունների համար:

ԻԿԿ գույքի ձևավորման աղբյուր են հանդիսանում նաև ԻԿԿ անդամների կողմից կատարվող վճարումները: Այս առումով ուշագրավ են Օրենքի փոփոխությունները, որոնցով սահմանվել է, որ անդամավճարի կամ իր անդամներից գանձվող ցանկացած այլ վճարի չափը սահմանում է՝ համաձայնեցնելով ՀՀ ԱՆ հետ, եթե միանվագ վճարի չափը գերազանցում է նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկը, իսկ պարբերական վճարի դեպքում ամսական վճարի չափը գերազանցում է նվազագույն աշխատավարձի տասնապատիկը, իսկ ՀՀ ԱՆ-ն, իր հերթին, իրավասու է մերժել ԻԿԿ-ի կողմից առաջարկվող չափով վճարի սահմանումը, եթե այն հիմնավորված չհամարի:

§3. Սնանկության կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողությունը

Օրենսդիրը, ՍԿ-ների ԻԿԿ-ին օժտելով որոշակի ինքնավարությամբ, միաժամանակ ՀՀ ԱՆ-ն օժտել է իրականացվող գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավասությամբ: Մասնավորապես, Օրենքի 27.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԻԿԿ կողմից Օրենքի, իրավական այլ ակտերի և ԻԿԿ կանոնադրական պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ՀՀ ԱՆ-ն: Ընդ որում, Օրենքի և այլ իրավական ակտերի պահանջների, ինչպես նաև իր կանոնադրության և կանոնների բազմակի կամ կոպիտ խախտումների համար ԻԿԿ-ն կարող է ՀՀ ԱՆ հայցով լուծարվել դատարանի որոշմամբ:

ԻԿԿ գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողության գործիքակազմը ունի բավականին ընդգրկուն բովանդակություն, որը դրսևորվում է ՀՀ ԱՆ և ԻԿԿ փոխհարաբերությունները կարգավորող մի շարք դրույթներում: Դրանցից հատկապես հիշատակման է արժանի ԻԿԿ կողմից ՀՀ ԱՆ տարեկան վիճակագրական բնույթի հաշվետվություն ներկայացնելու պահանջը, որը նախատեսվել է Օրենքի փոփոխությունների արդյունքում:

Այսպես, Օրենքի 27.1-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող մարտի 1-ը ԻԿԿ-ն ՀՀ ԱՆ է ներկայացնում իր գործունեության վերաբերյալ վիճակագրական բնույթի տարեկան հաշվետվություն, որը ներառում է տեղեկություններ կազմակերպության կողմից հարուցված կարգապահական վարույթների, անցկացվող վերապատրաստումների, անդամների թվի և անդամների տվյալների վերաբերյալ:

Հիշատակված տեղեկությունների մանրամասները, ինչպես նաև հաշվետվության ներկայացման կարգը սահմանվել է Նախարարի 2020թ. մարտի 12-ի «Մանկության գործով կառավարչի և ԻԿԿ կողմից ՀՀ ԱՆ ներկայացվող տարեկան հաշվետվությունների ձևերը և դրանց ներկայացման կարգը սահմանելու մասին» N 103-Ն հրամանով:

Հաշվետվության ներածական մասում նշվում են ԻԿԿ անվանումը, պետական գրանցման համարը, ՀՎՀՀ-ն, կազմակերպության հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն, գտնվելու վայրի հասցեն, պաշտոնական կայքի տվյալները, հաշվետվության լրացման ամսաթիվը, գործադիր մարմնի ղեկավարի տվյալները:

Բուն հաշվետվության մեջ արտացոլվում են կազմակերպության կողմից հարուցված և ընթացիկ կարգապահական վարույթների, հարուցված և կարճված կարգապահական վարույթների քանակը, այն վարույթների քանակը, որոնցով կիրառվել են կարգապահական տույժեր՝ ըստ տեսակների (նախազգուշացում, նկատողություն, կառավարչին կազմակերպությունից հեռացնել), տեղեկություններ կազմակերպության կողմից անցկացվող վերապատրաստումների վերաբերյալ՝ վերապատրաստումների, դրանց մասնակիցների, բացակայողների և վերապատրաստումից ազատվածների քանակը, վերապատրաստումների պարբերականությունը: Նշվում է նաև կազմակերպության անդամների քանակը և նրանց տվյալները:

Հաշվետվությունը լրացվում և էլեկտրոնային եղանակով ուղարկվում է ՀՀ ԱՆ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին, իսկ էլեկտրոնային եղանակով ներկայացնելու անհնարինության դեպքում ներկայացնում է թղթային եղանակով: Հաշվետվությունները ներկայացվում են էլեկտրոնային ստորագրությամբ ստորագրված էլեկտրոնային փաստաթղթի ձևով կամ փաստաթղթի սքանավորված տարբերակով, ընդ որում՝ փաստաթղթի սքանավորված տարբերակով ներկայացնելիս փաստաթղթի յուրաքանչյուր էջը պետք է լինի ստորագրված:

Եթե հաշվետվությունում նշված տեղեկությունները թերի կամ անորոշ են լինում կամ այլ կերպ ենթակա են լինում

պարզաբանման, ապա կազմակերպությունից կարող է պահանջվել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պարզաբանում հաշվետվության վերաբերյալ կամ շտկել հաշվետվության մեջ առկա թերությունները և ներկայացնել հաշվետվության լրամշակված տարբերակը: Ամեն դեպքում ԻԿԿ-ն իր նախաձեռնությամբ կարող է մինչև հաշվետվության ներկայացման ժամկետի ավարտը ՀՀ ԱՆ ներկայացնել հաշվետվության լրամշակված տարբերակը:

Միաժամանակ, հարկ է նշել, որ իր գործունեության թափանցիկությունը ապահովելու նպատակով ԻԿԿ-ն իր տարեկան հաշվետվությունը պարտավոր է հրապարակել նաև իր պաշտոնական կայքում[193]:

193 «Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» ԻԿԿ-ի 2020թ. հաշվետվությունը հրապարակված է www.snank.am կայքում:

ԳԼՈՒԽ 22. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

§1. Սնակության կառավարչի գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողության ընդհանուր բնութագիրը

ՍԿ-ներն այն հիմնական դերակատարներն են, որոնք նպաստում և ապահովում են սնանկության նպատակների կենսագործումը: Միևնույն ժամանակ, սնանկության վարույթում ՍԿ կարևորագույն դերակատարումը ենթադրում է նրա լիազորությունների համարժեք ծավալ, ինչպես նաև դրանց իրականացման օրինականության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարբեր են ինչպես ՍԿ-ների գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողության շրջանակը, այնպես էլ վերահսկող մարմինները:

ՍԿ-ների նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների մեջ առաջին հերթին հիշատակման է արժանի դատարանը: Տարբեր երկրներում կառավարիչների գործունեությունը դատարանի կողմից վերահսկողության ենթակա է տարբեր ծավալներով: Նման վերահսկողության ինտենսիվությունը բնորոշվում է նրանով, թե ինչպիսի որոշումներ կարող են կառավարիչներն ընդունել ինքնուրույն և որ որոշումների համար է պարտադիր դատարանի նախնական հաստատումը, ինչպես նաև այն հանգամանքով,

թե օրենսդրությունը թույլատրում է արդյոք դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ միջամտություն, թե դա հնարավոր է միայն պարտատերերի համապատասխան պահանջի հիման վրա:

Որոշ երկրներում, ինչպիսիք են օրինակ Բելգիան, Ռումինիան, Լեհաստանը, ՍԿ-ների ողջ գործունեությունը դատարանի ամենօրյա վերահսկողության ներքո է[194]: Ընդ որում, ՍԿ հաշվետվողականությունը հաճախ սահմանվում է ոչ թե պարտատերերի, այլ դատարանի առաջ[195]:

Բազմաթիվ են օրինակները, երբ ՍԿ-ների նկատմամբ վերահսկողություն իրականացնում են մի քանի մարմիններ: Այսպես, օրինակ, Հունգարիայում, Սլովենիայում, Էստոնիայում, Լատվիայում, Ուկրաինայում, Մակեդոնիայում, Մոլդովայում ոլորտի կարգավորման, վերահսկողության և պատասխանատվության ենթարկելու լիազորությունները բաշխված են տարբեր սուբյեկտների միջև, որոնցից առանձնացվում են հիմնական դերակատարում ունեցող սուբյեկտները[196]: Մասնավորապես, օրինակ, Ուկրաինայում և Մակեդոնիայում Արդարադատության նախարարությունը ՍԿ-ների որակավորման և պատասխանատվության ենթարկելու իրավասությունները իրականացնում է 4 ԻԿԿ-ների հետ համատեղ, որոնք ներկայացված են լինում կարգապահական հանձնաժողովում: Էստոնիայում Արդարադատության նախարարությունը Դատական կարգադրիչների և հավատարմագրային կառավարիչների պալատի հետ համատեղ ունի կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավասություններ:

---

194 Տե՛ս Несостоятельность (банкротство): Учебный курс. В 2 т. / Под. ред. д.ю.н., проф. **С.А. Карелиной.** Т. 1. – М.: Статут, 2019, էջ 822:

195 Տե՛ս ASSESSMENT OF INSOLVENCY OFFICE HOLDERS Review of the profession in the EBRD region (հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.ebrd.com/cs/Satellite?c=Content&cid=1395277239633&pagename=EBRD%2FContent%2FDownloadDocument):

196 Տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.ebrd.com/cs/Satellite?c=Content&cid=1395277239633&pagename=EBRD%2FContent%2FDownloadDocument:

Մեծ Բրիտանիայում ՍԿ-ների որակավորմամբ զբաղվում է 5 մասնագիտական մարմին[197], ինչպիսիք են, օրինակ, Ուելսի դիպլոմավորված հաշվապահների միությունը և Անվճարունակության ծառայությունը, որը գործում է Գործարարության, էներգետիկայի եւ արդյունաբերական ռազմավարության նախարարության կազմում[198]: Վերջիններս կարող են կարգապահական վարույթներ հարուցել իրենց կողմից որակավորված կառավարիչների նկատմամբ:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ առկա չէ ՍԿ-ների գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողության համընդհանուր տարածում ունեցող մոդել և յուրաքանչյուր երկրում դրա ծավալը, ինչպես նաև վերահսկողություն իրականացնող մարմինների շրջանակը պայմանավորված է տվյալ երկրի իրավական համակարգի առանձնահատկություններով:

197 Տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.gov.uk/government/publications/disciplinary-sanctions-against-insolvency-practitioners/common-sanctions-guidance:

198 Տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://en.wikipedia.org/wiki/Insolvency_Service:

§2. Մնանկության կառավարիչների գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների և վերահսկողության շրջանակը

Մինչև Օրենքի փոփոխությունները, ՍԿ գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողության լիազորությամբ օժտված էր դատարանը և ԻԿԿ-ն: Մյուս կողմից, սակայն, հստակեցված չէր հնարավոր խախտման առնչությամբ դատարանի և ԻԿԿ լիազորությունների մրցակցության հարցը:

Բացի այդ, վիճակագրական տվյալները, ինչպես նշված է իրականացված բարեփոխումների հիմնավորումներում, ցույց էին տալիս, որ ԻԿԿ գործունեության ընթացքում հարուցվել էր ընդամենը 23 կարգապահական վարույթ, որից միայն 7 վարույթ է եզրափակվել կարգապահական տույժի կիրառմամբ: Միևնույն ժամանակ, ՀՀ ԱՆ-ն նույն ժամանակահատվածում ստանում էր անհամեմատ ավելի մեծ թվով դիմում բողոքներ, որոնց, բնականաբար, լիազորությունների բացակայության պայմաններում չէր կարողանում ընթացք տալ[199]:

Դա էր պատճառը, որ իրականացված բարեփոխումների ուղղություններից մեկը հասցեագրված էր հենց ՍԿ գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների շրջանակի և նրանց լիազորությունների վերանայմանը: Արդյունքում ներկայումս ՍԿ գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողություն է իրականացնում երեք մարմին՝

[199] Տե՛ս Օրենքի փոփոխությունների ընդունման հիմնավորումը (հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.e-draft.am/projects/1510/justification):

դատարանը, ՀՀ ԱՆ և ԻԿԿ[200]:

Ի տարբերություն մյուս մարմինների՝ դատարանի կողմից իրականացվող վերահսկողությունն ուղղված է կոնկրետ սնանկության վարույթի ընթացքում կառավարչի գործունեության օրինականության երաշխավորմանը՝ դրանով իսկ նպաստելով սնանկության վարույթի արդյունավետության ապահովմանը:

Դատարանի կողմից իրականացվող վերահսկողությունը դրսևորվում է տարբեր ձևերով, որոնց թվին են դասվում ՍԿ կողմից դատարանի առջև հաշվետվողականությունը, առանձին գործողությունները դատարանի հաստատմանը ներկայացնելը, ՍԿ լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև կառավարչի գործողությունների .անգործության. վիճարկման հետ կապված բողոքների քննությունը:

ՍԿ նկատմամբ վերահսկողություն իրականացնող հաջորդ մարմինը ՀՀ ԱՆ-ն է, որը հանդիսանում է սնանկության ոլորտի քաղաքականությունը մշակող և իրականացնող պետական կառավարման համակարգի մարմինը: Ըստ այդմ, այս ոլորտի հաջողության ու անհաջողության հասցեատերը ևս ՀՀ ԱՆ-ն է:

Օրենքը սահմանում է ՀՀ ԱՆ կողմից իրականացվող վերահսկողության շրջանակները: Մասնավորապես, Օրենքի 27.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ ԱՆ-ն վերահսկողություն է իրականացնում ՍԿ կողմից Օրենքի և այլ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ: Միաժամանակ, Օրենքը կարգավորում է նաև ՍԿ նկատմամբ իրականացվող վերահսկողության ձևերը, որոնք հանգում են հետևյալին.

---

[200] Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասը կառավարչի գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավունք վերապահում է պարտատերերի խորհրդին, իսկ դրա ձևավորված չլինելու դեպքում՝ պարտատերերի ժողովին: Այդուհանդերձ, նման վերահսկողությունը այլ մարմինների գործունեությամբ եզրափակվելու, այսինքն՝ այսպիսի վերահսկողության արդյունքների կառավարչի համար անմիջապես պարտադիրություն չունենալու փաստով պարտատերերի խորհուրդը և ժողովը չի դիտարկվել վերահսկողություն իրականացնող մարմինների շարքում:

- ՍԿ կողմից իր գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվության ներկայացում[201],
- Կարգապահական պատասխանատվության կիրառումը[202]:

ՍԿ գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող երրորդ մարմինը, ինչպես նշվեց, ԻԿԿ-ն է, որի կողմից իրականացվող վերահսկողությունը սահմանափակվում է ՍԿ վարքագծի մասնագիտական կանոնների խախտման համար կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառմամբ:

Միաժամանակ, հարկ է նշել, որ, չնայած մի քանի մարմինների առկայությանը, օրենսդրությունը դատարանի կողմից իրականացվող վերահսկողությանը տվել է առաջնահերթ նշանակություն: Խոսքն այն մասին է, որ դեռևս չավարտված սնանկության գործին առնչվող հնարավոր խախտումների դեպքում համապատասխան լիազորությամբ օժտված է միայն դատարանը, իսկ մյուս մարմինները կարող են միայն վերաբերելի նյութերն ուղարկել դատարան: Բացի այդ, եթե որևէ հարցի դատարանը տվել է գնահատական, անկախ նրանից՝ դա դիտարկել է խախտում, թե ոչ, ապա հետագայում այդ հարցը այլ մարմինների վերահսկողության շրջանակներում չի կարող կրկին քննարկման առարկա դառնալ:

Այսպիսով, Հայաստանում ներդրված է ՍԿ գործունեության օրինականության նկատմամբ մի քանի մարմինների կողմից վերահսկողության իրականացման համակարգ, որի շրջանակում առկա է իրավասությունների հստակ տարանջատում: Ընդ որում,

---

201 Հաշվետվության ձևը և ներկայացման կարգը սահմանվել է Նախարարի 12.03.2020թ. թիվ 103-Ն հրամանով:

202 ՎԶԵԲ-ի կողմից ուսումնասիրված 27 երկրներից 24-ում կարգավորող մարմինները կարող են կիրառել կարգապահական պատասխանատվության այնպիսի միջոցներ, ինչպիսիք են նախազգուշացումը, գործունեության թույլտվությունը կասեցնելը կամ դադարեցնելը:

դրանցից յուրաքանչյուրն ունի կարևոր նշանակություն սնանկության համակարգի արդյունավետ գործունեության և շարունակական զարգացման համար:

ԳԼՈՒԽ 23. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

§1. Սնանկության կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման դրական նախադրյալները

ՍԿ նկատմամբ կարգապահական վարույթի հարուցումը օրենսդիրը պայմանավորել է որոշակի նախադրյալների առկայությամբ կամ բացակայությամբ: Ըստ այդմ, այն նախադրյալները, որոնց առկայությունը անհրաժեշտ է կարգապահական վարույթի հարուցման համար, պայմանականորեն կարող են կոչվել դրական, իսկ մյուս խումբ նախադրյալները, որոնց առկայությունը բացառում է կարգապահական վարույթի հարուցումը, բացասական:

Դրական նախադրյալների շարքին առաջին հերթին կարելի է դասել կարգապահական վարույթի հարուցման հիմքերը: Այսպես, Օրենքի 27.2-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ ՍԿ նկատմամբ կարգապահական պատասխանատվության կիրառման և, հետևաբար, կարգապահական վարույթի հարուցման հիմքերն են.

1. իր լիազորություններն իրականացնելիս օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների ակնհայտ խախտում թույլ տալը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ,
2. կառավարիչների մասնագիտական վարքագծի կանոնները խախտելը:

Առաջին հիմքով ՍԿ նկատմամբ կարգապահական վարույթ կարող է հարուցել և պատասխանատվություն կիրառել Նախարարը, իսկ երկրորդ հիմքով՝ սնանկության կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությունը:

Միաժամանակ, հարկ է նշել, որ Օրենքը առանձին դրույթներով բացահայտել է «օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների ակնհայտ խախտում», «դիտավորություն» և «կոպիտ անփութություն» հասկացությունների բովանդակությունը: Մասնավորապես, Օրենքի իմաստով.

1. ակնհայտ է ՍԿ կողմից իր գործունեությունն իրականացնելիս օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների այն խախտումը, որի առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով,
2. խախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե ՍԿ-ն գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը,
3. խախտումը համարվում է կոպիտ անփութությամբ կատարված, եթե ՍԿ-ն չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում կարող էր և պարտավոր էր դա անել:

Անդրադառնալով կարգապահական վարույթի հարուցման առիթներին՝ հարկ է նշել, որ կարգապահական վարույթ հարուցելու համար անհրաժեշտ է նաև, որ առկա լինի Օրենքով սահմանված առիթներից առնվազն մեկը: Օրենքի 27.3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այդպիսիք են.

1. վարույթ հարուցող անձանց կողմից կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող խախտման հայտնաբերումը,
2. սնանկության կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության դիմումը,

3. անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմնի, պաշտոնատար անձի հաղորդումը:

Ըստ այդմ՝ առաջին դեպքում խոսք է գնում ՀՀ ԱՆ կամ ԻԿԿ կողմից իրենց որևէ լիազորության իրականացման ընթացքում արձանագրված առերևույթ խախտման մասին:

Երկրորդ դեպքում ԻԿԿ կողմից հայտնաբերված այնպիսի խախտման մասին է, որի առնչությամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասությունը վերապահված է բացառապես Նախարարին, այսինքն՝ երբ առկա է ՍԿ կողմից իր լիազորություններն իրականացնելիս դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների ակնհայտ խախտում: Ընդ որում, նման իրավիճակում Նախարարին դիմելը կրում է պարտադիր բնույթ, իսկ այդ դիմումին, համաձայն Օրենքի 27.4-րդ հոդվածի 2-րդ մասի, պետք է կցվեն վարույթ հարուցելու հիմքերին վերաբերող համապատասխան նյութերը:

Կարգապահական վարույթ հարուցելու երրորդ խումբը ներառում է անձի, պետական, տեղական ինքնակառավարման մարմնի, պաշտոնատար անձի հաղորդումները, որոնք կարող են ներկայացվել թե՛ ՀՀ ԱՆ, թե՛ ԻԿԿ՝ կախված կարգապահական պատասխանատվության հիմքից: Ընդ որում, անանուն հաղորդումները ենթակա չեն քննարկման:

§2. Մնանկության կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման բացասական նախադրյալները

ՍԿ համար որոշակիություն ապահովելու, ինչպես նաև նրա իրավունքների արդյունավետ պաշտպանություն երաշխավորելու նպատակով օրենսդիրը սահմանել է վաղեմության ժամկետ, որի լրանալը բացառում է կարգապահական վարույթի հարուցումը: Մասնավորապես.

- օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի խախտման դեպքում վարույթ չի կարող հարուցվել, եթե ենթադրյալ խախտման պահից անցել է երկու տարի՝ անկախ նրանից, թե վարույթ հարուցող մարմինը երբ է իմացել դրա մասին,
- եթե խախտումը տեղի է ունեցել դատական գործի ընթացքում, ապա վարույթ չի կարող հարուցվել, եթե սնանկության գործն ավարտվելու պահից անցել է երկու տարի,
- վարքագծի կանոնների խախտման դեպքում վարույթ չի կարող հարուցել, եթե ենթադրյալ խախտման պահից անցել է մեկ տարի:

Հիշատակված ժամկետների լրանալը կրում է անդառնալի բնույթ և առկա չէ այն վերականգնելու որևէ հնարավորություն: Ընդ որում, այս ժամկետների խախտմամբ հարուցված վարույթը ենթակա է կարճման, եթե ՍԿ-ն տվել է այդ հիմքով վարույթը կարճելու համաձայնություն:

Միաժամանակ, Օրենքը, անկախ վաղեմության ժամկետների պահպանված լինելու հանգամանքից, նախատեսել է որոշակի հիմքեր, որոնց բացառում են կարգապահական վարույթ հարուցելու հնարավորությունը, իսկ այդպիսին հարուցված լինելու դեպքում վարույթը ենթակա է կարճման: Այսպես, նման իրավիճակ առաջանում է, եթե,

1. բացակայում են կարգապահական խախտման հիմքերը և հատկանիշները,
2. դադարեցվել է ՍԿ որակավորումը,
3. սնանկության գործը դեռևս ավարտված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է ՍԿ մասնագիտական վարքագծի կանոնների խախտում կամ երբ կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվել են,
4. դատարանը սնանկության գործի շրջանակում, անդրադառնալով կարգապահական պատասխանատվության կիրառման հիմք հանդիսացող հանգամանքին, հաստատել է դրա առկայությունը կամ բացակայությունը,
5. առկա է նույն անձի դեմ նույն հիմքով հարուցված կարգապահական վարույթ կամ կարգապահական վարույթ չհարուցելու, կարճելու կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում, բացառությամբ այն դեպքերի, երբ սնանկության գործն ավարտված չլինելու պատճառով կարգապահական վարույթ չի հարուցվել, կամ հարուցված վարույթը կարճվել է,
6. մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում կայացնելը ՍԿ-ն վերացրել է կարգապահական վարույթ հարուցելու հիմք հանդիսացած հանգամանքները:

Վկայակոչված հիմքերի առկայությունը պետք է պատշաճ գնահատման առարկա դառնա վարույթ հարուցող մարմնի կողմից, իսկ ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդման հիման վրա կարգապահական վարույթ չհարուցելու դեպքում վարույթ հարուցող մարմինն իր պատասխանում պետք է հիմնավորի վարույթ չհարուցելու հիմքերը: Ընդ որում, այն բոլոր դեպքերում, երբ կարգապահական վարույթը չի հարուցվում ընթացիկ սնանկության գործի հիմքով, ապա վարույթ հարուցող մարմինը վարույթ հարուցելու

հիմքերին վերաբերող համապատասխան նյութերը պետք է փոխանցի դատարան կառավարչի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հարցը:

Հարկ է նկատել նաև, որ վարույթի հարուցումը բացառող հիմքը կարող է ազդեցություն ունենալ միայն վարույթ հարուցող կոնկրետ մարմնի համար: Մասնավորապես, ընթացիկ դատական գործի ընթացքում թույլ տրված ՍԿ վարքագծի կանոնների խախտման դեպքում ոչ թե ընդհանրապես բացառվում է կարգապահական վարույթի հարուցումը, այլ համապատասխան առիթը Նախարարի քննարկման ներքո լինելու պարագայում համապատասխան նյութերի հետ միասին ենթակա է փոխանցման ԻԿԿ-ին և նրա կողմից սահմանված կարգով քննարկմանը:

§ 3. Մնանկության կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցումը

ՍԿ նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման առիթի և առերևույթ հիմքի առկայության, ինչպես նաև վարույթի հարուցումը բացառող հանգամանքների բացակայության դեպքում վարույթ հարուցող մարմինը պարտավոր է հարուցել համապատասխան վարույթ: Ընդ որում.

1. ՍԿ կողմից իր լիազորություններն իրականացնելիս օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների ակնհայտ խախտում թույլ տալու հիմքով Նախարարը կարող է կարգապահական վարույթ հարուցել ենթադրյալ խախտման մասին իրեն հայտնի դառնալուց հետո մեկ տարվա ժամկետում, իսկ եթե ենթադրյալ խախտումը հայտնաբերվել է մինչև սնանկության գործի ավարտը, ապա սնանկության գործն ավարտվելու պահից մեկ տարվա ընթացքում,
2. ՍԿ կողմից մասնագիտական վարքագծի կանոնները խախտելու հիմքով ԻԿԿ-ն կարող է կարգապահական վարույթ հարուցել ենթադրյալ խախտման մասին վարույթ հարուցող մարմնին հայտնի դառնալուց հետո՝ եռամսյա ժամկետում:

Կարգապահական վարույթի հարուցումը իրականացվում է վարույթ հարուցող մարմնի ակտով, մասնավորապես՝ Նախարարի հրամանով և ԻԿԿ կարգապահական հանձնաժողովի որոշմամբ, որում պետք է նշվի վարույթ հարուցելու առիթը և հստակ նկարագրվի ՍԿ-ին վերագրվող առերևույթ խախտումը: Միաժամանակ, թեև Օրենքը չի սահմանում կարգապահական վարույթ հարուցելու մասին ակտը ՍԿ-ին ուղարկելու մասին պահանջ, նման անհրաժեշտությունը ակնհայտ է և գործնականում պետք է ապահովվի:

Պետք է նշել նաև, որ ԻԿԿ կողմից ՍԿ նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման դեպքում վարույթի հարուցման մասին պետք է տեղեկացվի ՀՀ ԱՆ-ն, ինչը ենթադրում է, որ նման տեղեկացմանը պետք է կցվի կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը: Այս կերպ ապահովվում է նաև այն դեպքերի հետադարձ կապը, երբ ՀՀ ԱՆ-ն վարույթ հարուցելու հիմքերին վերաբերող համապատասխան նյութերը փոխանցում է ԻԿԿ-ին:

§4. Մնանկության կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացումը

Մնանկության նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի իրականացման առավելագույն ժամկետը երեք ամիսն է, որը ենթակա է հաշվարկման կարգապահական վարույթ հարուցելու համապատասխան ակտի ընդունման օրվանից: Բացառիկ դեպքերում կարգապահական վարույթի ժամկետը կարգապահական վարույթ հարուցած մարմնի որոշմամբ կարող է երկարաձգվել ոչ ավելի, քան երեք ամսով, իսկ փորձաքննություն նշանակվելու դեպքում՝ փորձաքննության կատարման համար անհրաժեշտ ժամկետով:

Կարգապահական վարույթի ընթացքում ՍԿ-ն ունի որոշակի իրավունքներ: Մասնավորապես, Օրենքի 27.3-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մինչև կարգապահական վարույթի ավարտը կառավարիչը, որի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել, իրավունք ունի ծանոթանալու վարույթի նյութերին, ներկայացնելու բացատրություններ, հարուցելու միջնորդություն՝ լրացուցիչ ուսումնասիրություններ կատարելու համար:

Միաժամանակ, օրենսդիրը սահմանել է վարույթ հարուցող մարմնի պահանջով անհրաժեշտ նյութեր ներկայացնելու ՍԿ պարտականությունը, որը ենթակա է կատարման մեկ շաբաթվա ընթացքում, իսկ ՍԿ համապատասխան միջնորդության դեպքում այդ ժամկետը կարող է երկարաձգվել մինչև մեկ շաբաթով:

Ակնհայտ է, որ, մի կողմից, այս պահանջը ուղղված է կարգապահական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ իրականացմանը, իսկ, մյուս կողմից, այն բոլոր դեպքերում, երբ համապատասխան նյութերը գտնվում են միայն ՍԿ տիրապետության ներքո, այս պահանջի չկատարումը ենթակա է գնահատման ի վնաս ՍԿ:

Բացի հիշյալ կարգավորումներից, Օրենքը չի սահմանում կարգապահական վարույթի իրականացման վերաբերյալ այլ դրույթներ: Այս հանգամանքը ենթադրում է օրենսդրության հետագա որոշակի կատարելագործման անհրաժեշտություն, քանի որ, ի տարբերություն ԻԿԿ-ի, որը իր կողմից ընդունվող իրավական ակտերում կարող է որոշակի կարգավորումներ ունենալ, ՀՀ ԱՆ պարագայում այդպիսի հնարավորությունը բացակայում է[203]:

[203] Տե՛ս «Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» ԻԿԿ ընդհանուր ժողովի «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի» կարգը (հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://snank.am/page/2163):

§5. Մնանկության կառավարչի նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառումը

ՍԿ նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի իրականացման արդյունքում վերագրվող խախտման փաստը հաստատված համարվելու դեպքում վարույթ հարուցած ՍԿ նկատմամբ կարող է կիրառվել հետևյալ կարգապահական տույժերից մեկը.

1. նախազգուշացում,
2. նկատողություն,
3. խիստ նկատողություն,
4. որակավորման դադարեցում:

Կախված այն հանգամանքից, թե որ մարմինն է հարուցել կարգապահական վարույթ, օրենսդիրը տարբերակում է կիրառման ենթակա տույժերի շրջանակը: Մասնավորապես, Նախարարը կարող է կիրառել բոլոր չորս տույժերի տեսակները՝ նախազգուշացում, նկատողություն, խիստ նկատողություն և որակավորման դադարեցում, իսկ ԻԿԿ-ն կարող է կիրառել միայն նախազգուշացում կամ նկատողություն:

Կարգապահական տույժի տեսակի ընտրությունը գտնվում է վարույթ հարուցած մարմնի հայեցողության տիրույթում, սակայն այս հայեցողությունը չունի բացարձակ բնույթ և, ինչպես մյուս դեպքերում, սահմանափակված է համաչափության սկզբունքով՝ հիմք ընդունելով խախտման հետևանքները, կառավարչի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը և կառավարչին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Միակ դեպքը, երբ օրենսդիրը սահմանել է կոնկրետ տույժի տեսակի կիրառելության պարտադիր պայմանները, վերաբերում է ՍԿ որակավորման դադարեցմանը: Մասնավորապես, այն՝ որպես ամենախիստ տույժի տեսակ, կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ ՍԿ որպես տույժ ունի երկու նկատողություն կամ մեկ խիստ նկատողություն և թույլ է տվել նոր կարգապահական խախտում:

Թե ՍԿ որակավորման դադարեցման, թե տույժի այլ տեսակի ընտրության դեպքում նախկինում կիրառված տույժերը կարող են ունենալ ազդեցություն, եթե չի լրացել դրանց «մարման ժամկետները», քանի որ դրանցից հետո ՍԿ համարվում է տույժ չունեցող: Մասնավորապես՝ կառավարիչը համարվում է կարգապահական տույժ չունեցող.

1. նախազգուշացում կիրառվելուց հետո երեք ամսվա ընթացքում կարգապահական պատասխանատվության չենթարկվելու դեպքում,
2. նկատողություն կիրառվելուց հետո վեց ամսվա ընթացքում կարգապահական պատասխանատվության չենթարկվելու դեպքում,
3. խիստ նկատողություն կիրառվելուց հետո մեկ տարվա ընթացքում կարգապահական պատասխանատվության չենթարկվելու դեպքում:

ՍԿ-ին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումն ուղարկվում է ՍԿ-ին այն կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, և նրա կողմից կարող է բողոքարկվել դատարան՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

ՍԿ-ին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը պետք է ուղարկվի նաև վարույթ հարուցող մյուս մարմնին: Ասվածը պայմանավորված է ոչ միայն ԻԿԿ համար Օրենքի 27.3-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված պահանջով, այլև հետագա կարգապահական խախտումների դեպքում

կիրառվելիք տույժերի համաչափության սկզբունքի երաշխավորման անհրաժեշտությունից:

Բացի նշյալը, Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասը պարտավորեցնում է ԻԿԿ-ին հեռացնել ՍԿ-ին կազմակերպությունից, եթե նրա նկատմամբ վերջին մեկ տարվա ընթացքում երկու անգամ որպես կարգապահական տույժի տեսակ կիրառվել է խիստ նկատողություն: Հետևաբար, առանց ՀՀ ԱՆ-ից ստացված համապատասխան հիմքերի, այս լիազորության իրականացումը հնարավոր չէ:

ՄԱՍ X. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹԻՆ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 24. ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ԺՈՂՈՎԸ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴԸ

§ 1. Պարտատերերի ժողովի և խորհրդի կարգավիճակը և իրավասությունները

Պարտատերերի ժողովը և խորհուրդը ձևավորվում են սնանկության վարույթում պարտատերերի շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով: Հաշվի առնելով, որ սնանկության գործընթացն ինքնին պարտապանի եւ նրա պարտատերերի միջև տնտեսական կոնֆլիկտի լուծման գործընթաց է, պարտապանի հետագա իրավական ճակատագրի վերաբերյալ պարտատերերի հավաքական կարծիքի ձևավորումը էական նշանակություն ունի պարտապանի սնանկության ողջ գործընթացի համար, իսկ պարտատերերի հավաքական կարծիքի ձևավորման գործընթացը կարող է տեղի ունենալ հենց պարտատերերի ժողովի ընթացքում[204]:

[204] Տե՛ս Несостоятельность (банкротство): Учебный курс. В 2 т. / Под ред. д.ю.н., проф. **С.А. Карелиной.** Т. 1. – М.: Статут, 2019, էջ 318:

Պարտատերերի ժողովը սնանկության վարույթի շրջանակներում ձևավորվող առանցքային դերակատարություն ունեցող մարմին է: Նախ, քանի որ ՍԿ՝ օրենքով սահմանված գործառույթները այս կամ այն կերպ առնչվում են պարտատերերի շահերին, Օրենքը պարտատերերի ժողովին տվել է ՍԿ գործողությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հնարավորություն: Բացի այդ, ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում ֆինանսական առողջացման ծրագրին հավանություն տալը և ծրագրի իրականացման ժամկետի երկարաձգման մասին դատարանին առաջարկություն ներկայացնելը, պարտատերերի խորհրդի կազմի հաստատումը և խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, իր կանոնակարգի ընդունումը, պարտապանի կողմից երրորդ անձանց կատարված փոխանցումների և գույքի օտարման դեպքերում կառավարչի կողմից դատարան դիմելուց ձեռնպահ մնալու մասին որոշման ընդունումը, Նախարարի 12.03.2020թ. «Սնանկության գործով կառավարչի կողմից մասնագիտացված կազմակերպությունների կամ մասնագետների եվ այլ աշխատակիցների պարտադիր ներգրավման դեպքերը սահմանելու մասին» թիվ 105-Ն հրամանով[205] սահմանված չափանիշներին համապատասխանող պարտապանի դեպքում մասնագիտացված կազմակերպությունների կամ մասնագետների և այլ աշխատակիցների ներգրավման վերաբերյալ որոշման կայացումը[206], ինչպես նաև օրենքով ժողովի բացառիկ իրավասությանը վերապահված այլ որոշումների ընդունումը:

---

[205] Ուժի մեջ է մտել 15.04.2020թ.: Տե՛ս ՀՀԳՏ 2020.03.20/10(678) Հոդ.68:

[206] Այս դեպքում Օրենքում և Նախարարի կողմից սահմանված հրամանում առկա է որոշակի անորոշություն՝ արդյոք կառավարիչը պետք է ներգրավի մասնագետ այն դեպքում, երբ առկա է հրամանով սահմանված դեպքը, սակայն ժողովը մասնագետ ներգրավելու վերաբերյալ որոշում չի կայացնում: Կարծում ենք, որ նմանատիպ անհարթություններն ու անորոշությունները իրենց լուծումը կգտնեն Օրենքի հետագա բարեփոխումներում:

Վերոնշյալից բացի, եթե որևէ վարույթի շրջանակներում պարտատերերի խորհուրդ չի ստեղծվում, ապա օրենքով խորհրդի իրավասությանը վերապահված բոլոր հարցերի վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքը պատկանում է պարտատերերի ժողովին:

Թեև Օրենքում ուղղակի կանոնակարգում առկա չէ, այդուհանդերձ, կարծում ենք, որ սնանկության վարույթում առաջացող բոլոր հարցերը, որոնք որևէ կերպ առնչվում են վարույթի մասնակիցների շահերին, և դրանց լուծումը Օրենքով ուղղակի սահմանված չէ, կարող են քննարկվել պարտատերերի ժողովում:

Իր հերթին, պարտատերերի ժողովի անցկացմանն ուղղված ծախսերի օպտիմալացման նպատակով կարող է ստեղծվել պարտատերերի խորհուրդ, որը ներկայացնում է պարտատերերի շահերը և վերահսկողություն է իրականացնում կառավարչի գործողությունների նկատմամբ[207]:

Պարտատերերի խորհրդի ստեղծման անհրաժեշտությունը կարող է առկա լինել ոչ բոլոր դեպքերում, սակայն այն կարող է առկա լինել պարտատերերի բազմաթվության պարագայում, երբ պարտատերերը ունեն շատ տարբեր շահեր կամ որտեղ տվյալ գործի առանձնահատկություններից բխում է, որ խորհուրդ ստեղծելուս մոտեցումը ցանկալի է կամ անհրաժեշտ: Ամեն դեպքում, պարտատերերի խորհուրդը պետք է կարողանա գործել անկախ, որպեսզի ապահովի պարտատերերի շահերի արդար եւ անկողմնակալ ներկայացումը[208]:

Օրենքը տասը և ավելի պարտատեր ունեցող սնանկության վարույթների դեպքում պարտատերերի ժողովին հնարավորություն է տալիս կառավարչի գործողությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով ստեղծել պարտատերերի խորհուրդ:

---

[207] Տե՛ս Несостоятельность (банкротство): Учебный курс. В 2 т. / Под ред. д.ю.н., проф. **С.А. Карелиной.** Т. 1. – М.: Статут, 2019, էջ 326:

[208] Տե՛ս Legislative Guide On Insolvency Law, United Nations Commission On International Trade Law, § 99, էջ 197:

Խորհրդի ստեղծումը պարտատերերի ժողովի բացառիկ իրավունքն է: Եթե սնանկության վարույթում պարտատերերի թիվը տասից պակաս է կամ ժողովը չի օգտվում խորհուրդ ստեղծելու իր իրավունքից կամ ցանկացած այլ պատճառով խորհուրդ չի ստեղծվում, ՍԿ գործողությունների նկատմամբ վերահսկողական գործառույթն իրականացնում է պարտատերերի ժողովը:

Պարտատերերի խորհուրդն իր վերահսկողական գործառույթն իրականացնելու նպատակով իրավունք ունի կառավարչից պահանջելու տեղեկություններ պարտապանի ֆինանսական վիճակի և սնանկության վարույթի մասին, բողոքարկելու կառավարչի գործողությունները: Համապատասխան հիմքերի առկայության դեպքում խորհուրդն իրավասու է դատարան ներկայացնել միջնորդություն՝ կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ:

Բացի վերահսկողական գործառույթից, պարտատերերի խորհրդին վերապահված է նաև որոշ հարցերի վերաբերյալ որոշում կայացնելու իրավունք: Այսպես, խորհուրդ ձևավորված լինելու դեպքում պարտապանի գործունեությունը մասնակի կամ ամբողջությամբ վերսկսելու, գույքի վաճառքի ծրագիրը հաստատելու և գույքն ուղղակի գործարքով վաճառելու վերաբերյալ որոշումների կայացման իրավասությունը պատկանում է խորհրդին:

Ամեն դեպքում, պարտատերերի խորհրդի իրավասությունները և գործառույթների իրականացումը չպետք է խախտեն սնանկության գործընթացին պարտատերերի՝ իրենց մասնակցությունն ունենալու իրավունքը [209]:

[209] Ibid., § 110, էջ 200:

§ 2. Պարտատերերի ժողովի հրավիրումը և խորհրդի ձևավորումը

Օրենքի ընդհանուր վերլուծությունից բխում է, որ պարտատերերի ժողովը իր իրավասությունները ստանձնում է պարտատերերի առաջին ժողովի կայացման՝ սահմանված կարգով պարտատերերի միջև ձայների բաշխման պահից: Հետևաբար այս հարցի առնչությամբ կարևոր նշանակություն ունի առաջին ժողովի հրավիրումն ու կազմակերպումը:

Պարտատերերի առաջին ժողովը հրավիրվում է դատարանի որոշմամբ սահմանված օրը, ժամին և վայրում:

Հարկ է նկատել, որ Օրենքի փոփոխություններով փոփոխվել են պարտատերերի առաջին ժողով նշանակելու ժամկետները: Մասնավորապես, մինչև փոփոխությունը Օրենքի 19-րդ հոդվածը սահմանում էր, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատարանը անհապաղ նշանակում է պարտատերերի առաջին ժողովի անցկացման ժամանակը և վայրը, իսկ ժողովը նշանակվում էր http://www.azdarar.am հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ հրապարակման օրվանից ոչ ուշ, քան 80 օրվա և ոչ շուտ, քան 50 օրվա ընթացքում:

Օրենքի փոփոխություններով դատարանը պարտատերերի առաջին ժողովի անցկացման ժամանակը և վայրը նշանակում է պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշմամբ, այլ ոչ թե սնանկ ճանաչելու մասին վճռով: Նման փոփոխությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ երբ դատարանը այդքան վաղ փուլում նշանակում էր ժողովի անցկացման վայրը և ժամանակը, գործնականում լինում էին դեպքեր, երբ ժողովի անցկացման նշանակված օրը դեռևս պահանջների վերջնական ցուցակը հաստատված չէր լինում և արդյունքում ժողովը անհարկի հետաձգվում էր: Այսինքն՝ ամեն դեպքում, քանի որ պարտատերերի

առաջին ժողովի անցկացումը ուղղակիորեն կապված է հաստատված պահանջներով պարտատերերի առկայության հետ, նոր փոփոխություններով ժողովի նշանակումը պայմանավորվել է պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշմամբ:

Ըստ այդմ՝ ժողովի ձայների 100 տոկոսը պատկանում է առաջին ժողովին ներկայացած պարտատերերին, իսկ բաշխումը կատարվում է ժողովին ներկայացած պարտատերերի հաստատված պահանջների հանրագումարի մեջ յուրաքանչյուր պարտատիրոջ հաստատված պահանջի տեսակարար կշռին համապատասխան: Ընդ որում, եթե պարտատիրոջ պահանջն առարկվել է մասնակի, ապա առաջին ժողովին մասնակցելով վերջինս ստանում է իր պահանջի չառարկված մասին համապատասխան ձայնի իրավունք, իսկ եթե առկա է մեկ պարտատեր, ապա ժողովի իրավասությանը վերաբերող հարցերով որոշումները կայացնում է այդ պարտատերը:

Առաջին ժողովին չմասնակցած՝ պարտատերերի ցուցակում ընդգրկված ամենախոշոր պահանջ ունեցող պարտատերը հաջորդ ժողովներին ներկայանալու դեպքում, առաջին ժողովում ձայնի իրավունք ստացած պարտատերերի պահանջների և իր պահանջի հանրագումարում իր պահանջի համամասնության չափով ստանում է ձայնի իրավունք: Պարտատերն իր ձայնի իրավունքը պահպանում է միայն չբավարարված պահանջի մասով, այսինքն՝ եթե վարույթի ընթացքում ժողովում ձայնի իրավունք ստացած պարտատիրոջ պահանջը բավարարվում է, ապա բավարարված պահանջի մասով վերջինս զրկվում է ձայնի իրավունքից:

Առաջին ժողովից հետո մյուս ժողովները հրավիրում է ՍԿ-ն՝ իր նախաձեռնությամբ, կամ 5 և ավելի տոկոս ձայն ունեցող պարտատիրոջ (պարտատերերի) պահանջով: Այս ժողովների անցկացման օրը, ժամը և վայրը որոշում է ՍԿ-ն:

Պարտատերերի բոլոր ժողովները նախագահում է կառավարիչը, բացառությամբ այն դեպքերի, երբ ժողով է հրավիրվում կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ

դատարանին միջնորդություն ներկայացնելու հարցով: Այս դեպքում ժողովը նախագահում է ժողովին ներկա, ձայնի իրավունք ունեցող ամենախոշոր պարտատերը:

Պարտատիրոջ նախաձեռնությամբ ժողովը հրավիրվում է ժողով անցկացնելու պահանջն ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում, ընդ որում, ժողովի կազմակերպման համար անհրաժեշտ ծախսերը մեկշաբաթյա ժամկետում փոխհատուցվում են պահանջ ներկայացրած պարտատիրոջ կողմից՝ կառավարչի կազմված նախահաշվի հիման վրա: Պահանջ ներկայացրած պարտատերը պահանջում պետք է նշի ժողովի օրակարգում առաջարկվող հարցերը:

Ժողովի անցկացման վայրի և ժամանակի մասին ժողովին ներկա գտնվելու իրավունք ունեցող պարտատերերին և պարտապանին կառավարիչը պետք է ծանուցի պաշտաճ կարգով: Ծանուցումն ուղարկվում է կիրառելի ցանկացած եղանակով, որով հնարավոր կլինի ապացուցել հասցեատիրոջ կողմից այն ստանալու փաստը:

Օրենսդիրը սահմանել է որոշ դեպքեր, երբ ծանուցումն ուղարկելու փոխարեն այն կարող է հրապարակվել http://www.azdarar.am հասցեում գտնվող հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Այսպես, եթե ժողովին մասնակցելու իրավունք ունեցող պարտատերերի թիվը 10-ից ավելին է կամ բացակայում է ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձի ծանուցումն ապահովելու համար անհրաժեշտ տեղեկությունները, ապա ծանուցումն այս մեթոդով իրականացնելու դեպքում համարվում է պատշաճ: Այն կիրառելի է նաև բոլոր այն դեպքերում, երբ պետք է ծանուցվեն ժողովին ներկա գտնվելու իրավունք ունեցող (խորհրդակցական ձայնի իրավունք ունեցող) պարտատերերը:

Օրենսդիրը ծանուցման համատեքստում պարտատերերի առաջին ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձանց շարքում առանձնացրել է այն պարտատերերին, որոնց առջև պարտապանը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար: Այս խմբի պարտատերերը պետք է

ծանուցվեն կիրառելի ցանկացած եղանակով, որով հնարավոր կլինի ապացուցել հասցեատիրոջ կողմից այն ստանալու փաստը: Ծանուցման ժամկետների առումով նույնպես առկա են որոշակի սահմանափակումներ. ժողովին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք պետք է ծանուցվեն ոչ ուշ, քան ժողովի հրավիրման օրվանից 3 օր առաջ, ծանուցման հրապարակման դեպքում՝ հայտարարությունը պետք է հրապարակվի ժողովի հրավիրման օրվանից 5 օր առաջ:

Ժողովի մասին ծանուցումը, այլ տեղեկություններից բացի, պետք է պարունակի տեղեկություններ պարտապանի մասին, ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամանակը և վայրը, ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը, ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին ծանոթանալու կարգը, ժողովի մասնակիցների գրանցման կարգը[210]:

Ժողովի հրավիրման առումով ուշագրավ է Օրենքի փոփոխություններով ներդրված նորամուծությունը: Այսպես, ժողովը կարող է անցկացվել նաև հեռակա կարգով՝ տեսակապի կամ էլեկտրոնային այլ միջոցների օգտագործմամբ: Նշված դեպքում ժողովի արձանագրությունը և դրանց կից ներկայացվող փաստաթղթերը կարող են կազմվել և ներկայացվել էլեկտրոնային տարբերակով, իսկ ժողովի մասնակիցների կողմից ստորագրման ենթակա փաստաթղթերը ներկայացվում են էլեկտրոնային ստորագրության առկայությամբ, այլ փաստաթղթերը՝ սկանավորված տարբերակով:

Ինչ վերաբերում է խորհրդի ձևավորմանը, ապա այն ձևավորվում է պարտատերերի առաջին ժողովում: Խորհրդի կազմում ընդգրկվում են առավել խոշոր հինգ չապահովված պահանջներ ունեցող

[210] Օրենքը սահմանում է, որ ժողովի մասին ծանուցումը պետք է պարունակի նաև Օրենքի 33-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված հետևանքների մասին պարզաբանում, սակայն այդ կարգավորումը վրիպակի արդյունք է, քանի որ Օրենքի 33-րդ հոդվածը 10-րդ մաս չունի:

պարտատերերը՝ հաստատված պահանջների մեծությանը համապատասխան, անկախ ժողովում քվեարկության իրավունք ունենալու հանգամանքից: Խորհրդի կազմում ընդգրկվելու ցանկություն ունեցող չապահովված պարտատերերի քանակը հինգից պակաս լինելու դեպքում հաջորդ առավել խոշոր չապահովված պահանջ ունեցող պարտատերերն ընդգրկվում են խորհրդի կազմում:

§ 3. Պարտատերերի ժողովի և խորհրդի որոշումների ընդունումը

Պարտատերերի ժողովի կողմից որոշումների ընդունման հարցը քննարկելիս նախևառաջ կարևոր նշանակություն ունի ժողովի իրավազորության՝ քվորումի հարցը: Պարտատերերի առաջին ժողովի անցկացման վայրի և ժամանակի մասին պատշաճ ծանուցման դեպքում ժողովն իրավազոր է՝ անկախ դրանում ներկայացված պարտատերերի ձայների քանակից, իսկ հետագա ժողովներն իրավազոր են, եթե դրանց մասնակցում են քվեարկության իրավունք տվող ձայների պարզ մեծամասնություն ունեցող պարտատերերը:

Հասկանալի է, որ այն դեպքերում, երբ սնանկության գործով առկա է մեկ պարտատեր, ապա ժողովի իրավասությանը վերաբերող հարցերով որոշումները կայացնում է այդ պարտատերը:

Պարտատերերի ժողովի իրավազորության ապահովման առումով էական է այն հարցը, թե պարտատերերից յուրաքանչյուրը որքան ձայն ունի: Դա է պատճառը, որ պարտատերերի առաջին ժողովում նախ պետք է իրականացվի պարտատերերի միջև ձայների բաշխումը, որից հետո միայն պարտատերերը ստանում են քվեարկելու իրավունք:

Հաջորդ հարցը, որը պետք է քննարկվի ժողովի կողմից, ժողովի կանոնակարգի հաստատումն է, քանի որ, Օրենքի համաձայն, քվեարկությունների անցկացման և կազմակերպման կարգը որոշվում է ժողովի կանոնակարգով:

Քվեարկությունների կազմակերպման նպատակով Օրենքը սահմանել է քվեաթերթիկին ներկայացվող պահանջները: Վերջինս պետք է պարունակի սնանկության գործի համարը, պարտապանի անվանումը, ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամանակը և վայրը, քվեարկության դրվող յուրաքանչյուր հարցի ձևակերպումը և հարցերի քննարկման հերթականությունը, քվեարկության դրված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ

քվեարկության տարբերակները՝ «կողմ», «դեմ», ցուցում այն մասին, որ քվեաթերթիկը պետք է ստորագրի պարտատերը և քվեաթերթիկը լրացնելու կարգի պարզաբանումը:

Որոշումների ընդունման համար անհրաժեշտ ձայների քանակի առումով Օրենքը սահմանում է, որ ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին ներկայացած, քվեարկության ձայնի իրավունք ունեցող պարտատերերի ձայների պարզ մեծամասնությամբ:

Օրենքը նաև հնարավորություն է տալիս ՍԿ-ին, պարտատերերին ու պարտապանին եռօրյա ժամկետում բողոքարկելու ժողովի որոշումները սնանկության գործը վարող դատարանին:

Բողոքը դատարանի կողմից քննվում է մեկշաբաթյա ժամկետում և կարող է բավարարվել միայն այն դեպքում, երբ խախտվել են օրենքով կամ իրավական այլ ակտերով սահմանված դիմողի իրավունքները: Սույն հարցի կարգավորման ժամանակ օրենսդիրը դատարանին հնարավորություն է տվել ուժի մեջ թողնելու ժողովի որոշումը, եթե բողոքաբեր պարտատիրոջ քվեարկության մասնակցելը չէր կարող ազդել քվեարկության արդյունքների վրա, և թույլ տրված խախտումներն էական չեն:

Օրենքի պահանջով ժողովի նիստերն արձանագրվում են: Ժողովի արձանագրությունն ստորագրում է կառավարիչը, և դրա մեկ օրինակը ժողովի անցկացման հաջորդ օրը ներկայացվում է դատարան: Օրենքը սահմանում է նաև ժողովի արձանագրությանը կցվող փաստաթղթերի ցանկը՝

ա

ժողովի անցկացման օրվա դրությամբ պարտատերերի պահանջների գրանցամատյանը (միայն առաջին ժողովի արձանագրության),

բ

ժողովի մասնակիցների գրանցման թերթիկները,

գ

քվեաթերթիկները,

դ

ժողովի մասնակիցների լիազորագրերը կամ լիազորությունները հավաստող այլ փաստաթղթեր,

ե

ժողովի մասնակիցների կողմից ժողովի քննարկմանը ներկայացված փաստաթղթերը,

զ

ժողովի անցկացման վայրի և ժամանակի մասին պարտատերերի պատշաճ ծանուցումը հավաստող ապացույցները,

է

այլ փաստաթղթեր:

Պարտատերերի խորհրդի դեպքում, ի տարբերություն պարտատերերի ժողովի, որտեղ պարտատերն ունի իր պարտավորության չափին համապատասխան ձայնի իրավունք, խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն, և խորհրդի որոշումն ընդունված է համարվում, եթե դրա օգտին քվեարկել է խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

Խորհրդի նիստերը հրավիրում և նախագահում է կառավարիչը: Խորհրդի նիստերի հրավիրման կարգը օրենքով սահմանված չէ, այդուհանդերձ ենթադրվում է, որ այդ հարաբերությունների հետ կապված պետք է առաջնորդվել պարտատերերի ժողովի վերաբերյալ Օրենքի կանոնակարգումներով:

Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպելու և որոշումներ ընդունելու նպատակով հաստատում է կանոնակարգ, և իր իրավասությանը պատկանող հարցերի վերաբերյալ կայացնում է որոշումներ, որոնք ստորագրվում են խորհրդի անդամների կողմից՝ նշելով այդ որոշումներից յուրաքանչյուրին կողմ կամ դեմ լինելու մասին: Առարկության առկայության դեպքում խորհրդի անդամը պետք է կատարի այդ մասին գրառում և կցի իր առարկությունները:

Կառավարիչը, պարտապանը և պարտատերերը ունեն խորհրդի որոշումները եռօրյա ժամկետում սնանկության գործը վարող դատարանին բողոքարկելու իրավունք՝ պահանջելով դրանք ճանաչել անվավեր:

Բողոքը քննվում է եռօրյա ժամկետում և դատարանն իրավունք ունի դրանք անվավեր ճանաչել, եթե խախտվել են օրենքով կամ իրավական այլ ակտերով սահմանված դիմողի իրավունքները: Այս դեպքում նույնպես գործում է պարտատերերի ժողովի բողոքարկման ժամանակ սահմանված կանոնը՝ եթե քվեարկության մասնակցելը չէր կարող ազդել քվեարկության արդյունքների վրա, և թույլ տված խախտումն էական չէ, դատարանը խորհրդի որոշումը կարող է թողնվել անփոփոխ:

ՄԱՍ XI. ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԳԼՈՒԽ 25. Անդրսահմանային սնանկության իրավունքի ներպետական և միջազգային կարգավորումները

§ 1. Ներպետական իրավունքի մոտեցումը

Փոխադարձության սկզբունքի բարդությունը նրանում է, որ Հայաստանի սնանկության մասին օրենսդրությունը օգտագործում է այլ մեխանիզմ իրավազորություն սահմանելու համար (հիմնված կազմակերպության բնույթի և նրա կազմավորման, ռեզիդենտության կամ ներկայության վրա) ի տարբերություն այն միջազգային դրույթների, որոնք կարգավորում են անդրսահմանային սնանկության իրավունքը, ներառյալ Մոդելային օրենքը, որի հիման վրա է ձևավորված նաև 2015թ. Եվրոպական սնանկության կանոնակարգի

եվրոպական շրջանակը (փոփոխված)[211]: Այս երկու փաստաթղթերն էլ վերաբերում են «կենսական շահերի կենտրոնի»[212] հայեցակարգին, որը կախված չէ կազմակերպության ձևավորման կամ գրանցման իրավասությունից, այլ նրանից, թե որտեղ է հիմնականում իրականացվում բիզնես գործունեությունը:

Ի տարբերություն վերոնշյալի, Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է պետական մարմինների և ֆինանսական կազմակերպությունների օգտին որոշակի բացառություններ[213]: Օրենքը վերաբերում է ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձի, որը կարող է պարտապան լինել սնանկության վարույթում: Օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասում նշվում է, որ օրենքը, ընդհանուր առմամբ, կարող է սահմանել սնանկության վարույթի կանոններ այս կամ այլ կազմակերպությունների համար: Այնուամենայնիվ, 2-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Օրենքը տարածվում է նաև օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող պարտապանների վրա: Սա կարող է նաև փոխադարձության խնդիր ստեղծել այլ պետությունների համար, որոնց սնանկության միջազգային շրջանակը ձևավորվել է UNCITRAL-ի կամ Եվրոպական Միության տեքստերի հիման վրա, ներառյալ Արևմտյան Եվրոպայի շատ երկրներ, ինչպիսիք են, օրինակ՝ Իսպանիան և Գերմանիան:

---

211 Տե՛ս Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2015թ. մայիսի 20-ի սնանկության վարույթի մասին կանոնակարգ (ԵՄ) 2015/848:

212 «Հիմնական շահերի կենտրոն» հասկացությունը վերցված է Եվրոպական միության 1995թ. կոնվենցիայից (նաև 2015թ. Եվրոպական սնանկության կանոնակարգ) և ներկայացնում է փոխզիջում քաղաքացիական իրավունքի «իրական նստավայր» հայեցակարգի (siège réel) և ընդհանուր իրավունքի՝ պարտապանի մասնակցությամբ վարույթը կարգավորող բնակության կամ հիմնադրման պետության իրավական կանխավարկածի միջև:

213 Նշված սուբյեկտներից մեծ մասի սնանկության վարույթը կարգավորվում է «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների եվ ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով:

Խնդիր է հանդիսանում նաև բացակայող պարտապանների առկայությունը, որոնց հարցը կարգավորվում է Օրենքի 103-րդ հոդվածով: Հոդվածը սահմանում է, որ դատարանը կարող է իր նախաձեռնությամբ (suo sponte) փնտրել պարտապանին, ղեկավարությանը (գործադիր մարմնին), ինչպես նաև նրա փաստաթղթերը (ներառյալ հաշվապահական հաշվառումը և այլն), ինչպես նաև պարտապանի կամ պարտապանի ղեկավարության գտնվելու վայրը կամ բնակության վայրը, երբ այն անհնար է բացահայտել ձեռնարկատիրական գործունեության դադարեցումից հետո (հոդված 103, մաս 1-ին): Վերջին հայտնի հասցեին ծանուցումը Օրենքի 103-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն համարվում է բավարար սնանկության վարույթ սկսելու համար: Պատասխանի բացակայությունը 9 (ինը) օրվա ընթացքում բավարար է, որպեսզի դատավորը ևս 3 (երեք) օր լրանալուց հետո պարտապանին սնանկ ճանաչելու մասին որոշում կայացնի: Հաշվի առնելով, որ իրավասության պահանջները կիրառվում են այդպիսի պարտապանների նկատմամբ, կարող է նաև խնդիր առաջանալ, երբ պարտապանները գտնվում են այն երկրներում, որոնք օգտագործում են Հայաստանի օրենսդրությունից տարբերվող կարգավորումներ՝ իրավասությունը սահմանելու համար: Նման դեպքերում փոխադարձության պահանջները, որոնք կարող են պնդել այս երկրները, չեն կարող բավարարվել Հայաստանի օրենսդրության մեջ նկարագրված չափազանց լայն իրավասության շրջանակում:

§2. Մոտեցումը միջազգային իրավունքում

Նկատի ունենալով Հայաստանում գործող ներպետական կանոնների և այլ երկրներում կիրառվող կանոնների միջև հնարավոր հակասությունը, ուշադրություն է դարձվում միջազգային փաստաթղթերին, որոնք կարող են օգտագործվել անդրսահմանային սնանկության դեպքում: Դրանցից գլխավորը Մոդելային օրենքն է, որը կարող է օգտակար լինել՝ հաշվի առնելով, որ շատ երկրներ, որոնք տեքստը ներառել են իրենց ներքին իրավական համակարգերում, դա արել են «բաց» ռեժիմի հիման վրա՝ այդպիսով հնարավորություն տալով այդ երկրներին օգնության համար հարցումներ ստանալ[214]:

Մոդելային օրենք

Մոդելային օրենքն ընդունվել է UNCITRAL-ի կողմից 1997թ. մայիսին[215]: Չնայած այն մշակվել է անգլերենով, բոլոր վեց լեզվով տարբերակները համարվում են հավասարապես պաշտոնական: Տեքստը չի օգտագործում ընդհանուր իրավունքին կամ քաղաքացիական իրավունքին ծանոթ օրենսդրական լեզու, ինչը, ըստ էության, փոխզիջում է տարբեր օրենսդրական ավանդույթների միջև: Այն, սակայն, ուղեկցվում է ուժի մեջ մտնելու ուղեցույցով, որը պատրաստվել է օրենսդրական նախագծեր մշակողներին մոդելային օրենքը տեղական պայմաններին հարմարեցնելու հարցում աջակցելու համար[216]: Մոդելային օրենքը հաստատվել է Միավորված

---

214 Ընդունած երկրների ամբողջական ցանկը կարելի է տեսնել հետևյալ հասցեով՝ https://uncitral.un.org/en/texts/insolvency/modellaw/cross-border_insolvency/status:

215 Տե՛ս (1997) 36 Միջազգային իրավական նյութեր 1386; Տեքստը հասանելի է նաև հետևյալ հասցեով՝ https://uncitral.un.org/en/texts/insolvency/modellaw/cross-border_insolvency:

216 Տեքստը հասանելի է հետևյալ հասցեով՝ https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/1997-model-law-insol-2013-guide-enactment-e.pdf:

ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից 1997թ. դեկտեմբերին, որն անդամ պետություններին առաջարկել է վերանայել սնանկության մասին իրենց օրենսդրությունը և քննարկել Մոդելային օրենքի ընդունումը[217]:

Ծանոթություն Մոդելային օրենքին

Մոդելային օրենքը համեմատաբար հակիրճ փաստաթուղթ է, այն բաղկացած է ընդամենը 32 հոդվածներից[218]: Այն կարելի է բաժանել 4 հիմնական ոլորտների: Դրանք ներառում են մոդելային օրենքի շրջանակը, օտարերկրյա սնանկության վարույթների ներկայացուցիչների հասանելիության կանոնները, ներառյալ օտարերկրյա պարտատերերի նկատմամբ կանոնները և օտարերկրյա սնանկության վարույթների ճանաչման հետևանքները: Ի վերջո, և ամենակարևորը, կան համագործակցության և մի քանի իրավասություններում նույն պարտապանի նկատմամբ միաժամանակյա վարույթների համակարգման կանոններ: Տեքստին նախորդում է նախաբան, որը սահմանում է մոդելային օրենքի նպատակը, ներառյալ դատարանների միջև համագործակցությունը, առևտրի և ներդրումների ավելի հստակ իրավական որոշակիությունը, բոլոր պարտատերերի և պարտապանի շահերի պաշտպանությունը, անվճարունակության պայմաններում ակտիվների պաշտպանությունն ու առավելագույնի հասցնելը և ֆինանսապես խնդրահարույց բիզնեսներին օժանդակելու դյուրինությունը՝ այդպիսով պաշտպանելով ներդրումները և պահպանելով աշխատավայրերը[219]:

---

[217] Տե՛ս N 52/158 որոշում, որը հասանելի է հետևյալ հասցեով՝ https://undocs.org/pdf?symbol=en/A/RES/52/158:

[218] Սահմանափակ ատյաններում նախագծերի այլընտրանքային ձևակերպումներով:

[219] Տե՛ս Ron Harmer, "UNCITRAL Model Law on Cross-Border Insolvency" (1997) 6 International Insolvency Review 145, 148 (որտեղ նա պնդում է, որ սա նպատակների կարևոր հայտարարություն է):

1. Ընդհանուր դրույթներ[220]

Օրենքի գործողության շրջանակը արտացոլող ընդհանուր դրույթները պարունակում են մի շարք առանցքային սահմանումներ: Իրավասությունը տրամադրվում է սնանկության հարցերով օգնության խնդրանքների դեպքում, անկախ նրանից՝ այդ հարցումները բխում են ներքին, թե օտարերկրյա դատարանից[221]: Այն տարածվում է միևնույն պարտապանի մասնակցությամբ միաժամանակ տեղի ունեցող վարույթների վրա, ներքին վարույթներում օտարերկրյա պարտատիրոջ և այլ շահագրգիռ անձանց վրա[222]: Ընդգրկված սնանկության տեսակների միակ իրական որակավորումն այն է, որ վարույթը պետք է կրի կոլեկտիվ բնույթ՝ այդպիսով բացառելով մեկ պարտատիրոջ կողմից ապահովումների իրացումը: Ավելին, պարտապանի ակտիվների կառավարումը, ի վերջո, պետք է ենթարկվի դատական հսկողության կամ վերահսկողության, թեև վարույթի սկիզբը կարող է լինել դատական կամ վարչական ակտով: Նշվում է, որ սահմանումները կառուցված են այնպես, որ ներառեն «պարտապանի տիրապետման տակ» բնույթի վարույթը[223]:

Առողջացման և լուծարման գործընթացները կանոնակարգված են այնպես, ինչպես միջանկյալ վարույթները, որոնք հաճախ հանդիպում են ընդհանուր իրավունքի երկրներում: Քանի որ համագործակցությունը պայմանավորված չէ պարտապանի սնանկության կոնկրետ բացահայտմամբ, այլ ներպետական օրենսդրության համաձայն սնանկության վարույթի ընդհանուր շրջանակում ընթացակարգի տեսակի ներառմամբ, նախքան սնանկությունը առաջացած ֆի-

---

220 Տե՛ս Գլուխ I, հոդվածներ 1-8, Մոդելային օրենք (այս բաժնում գլուխներին և գոդվածներին հղումները վերաբերում են Մոդելային օրենքին):

221 Ibid., հոդված 1(1)(a)-(b):

222 Ibid., հոդված 1(1)(c)-(d):

223 Ibid., հոդված 2. Ոչ բոլոր սնանկության ընթացակարգերն են պահանջում, որ ղեկավարության լիազորությունները կասեցվեն: Ֆրանսիայում արագացված վարույթում սովորական է, որ պարտապանը շարունակի կառավարել՝ կառավարչի հսկողության ներքո:

նանսական դժվարությունները նույնպես ներառված են: Մոդելային օրենքում հնարավորություն է տրվում բացառել սնանկության հատուկ տեսակները, ինչպիսիք են բանկերի և ապահովագրական ընկերությունների, որոնք հաճախ ենթակա են սնանկության հատուկ ռեժիմի[224]: Այս տեսակի սնանկության համար անհրաժեշտ կլինի մշակել առանձին կարգավորում, թեև Մոդելային օրենքը կարող է օգտագործվել որպես ուղեցույց: Որոշ երկրներ, օրինակ՝ Միացյալ Նահանգները, նույնպես ցանկացել են բացառել «սպառողների» սնանկությունը, որը միջազգային տարր կարող է ունենալ շատ հազվադեպ դեպքերում: Մոդելային օրենքը մշակվել է այնպես, որ կիրառվի ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց նկատմամբ, այդպիսով ընդգրկելով ինկորպորատիվ մարմինների, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի և ընկերությունների սնանկությունը, թեև տարբերություն չի դրվում հասարակական և առևտրային կազմակերպությունների միջև, որը հաճախ օգտագործվում է քաղաքացիական իրավունքում:

Հայկական օրենսդրության նկատմամբ իր կիրառման ժամանակ ուղեցույցը կարող է վերցվել Re Agrokor DD-ի[225] գործից, որը վերաբերում է անգլիական դատարանների կողմից Խորվաթիայում նոր ներդրված օրենսդրության գնահատմանը[226]: Հիմնական խնդիրն այն էր, թե արդյոք օրենքը համատեղելի է Մոդելային օրենքի սահմանմանը, այդպիսով իրավասու լինելով դիմելու այդ տեքստով նախատեսված պաշտպանության միջոցներին: Դատարանը համաձայնեց, որ Խորվաթիայի օրենքն ըստ անհրաժեշտության, բավականին մանրամասն էր և մտնում էր օրենքի շրջանակի, նպատակի և դրույթների մեջ: Այս դեպքը ցույց է տալիս օտարերկրյա օրենքի էության վերլուծության բարդությունը՝ Մոդելային օրենքի համաձայն

---

224 Ibid., հոդված 1(2):

225 Տե՛ս Re Agrokor DD [2017] EWHC 2791 (Ch) (9 Նոյեմբեր 2017): Հասանելի է BAILII կայքի միջոցով՝ http://www.bailii.org:

226 Տե՛ս «Համակարգային նշանակություն ունեցող ընկերություններում արտահերթ կառավարման կարգի մասին» 2017թ. ապրիլի 6-ի հատուկ օրենք:

ճանաչման դիմումի նպատակների համար: Այն նաև ցույց է տալիս այն խնդիրները, որոնք իրավական համակարգը կարող է հանդիպել օտարերկրյա օրենսդրությունը գնահատելիս: Գործը հետագայում քննարկում է, թե արդյոք leges speciales-ը (հատուկ օրենքները), որոնք ընդունվել են որոշակի ֆինանսական և տնտեսական ճգնաժամերին արձագանքելու համար, կարող են պատշաճ կերպով յուրացվել սնանկության ներքին կարգավորումների կողմից՝ միջազգային ճանաչման և կիրարկման ռեժիմների նպատակներով: Սա կարող է խնդիր լինել, հատկապես, եթե օրենքը արտացոլում է այնպիսի հատկանիշներ, որոնք կարող են հարմար լինել նման ռիսկերի դեմ պայքարելու համար, բայց որոնք կարող են խաթարել սնանկության մասին օրենքի ընդհանուր սկզբունքները, ինչպիսիք են pari passu-ն: Այնուամենայնիվ, այս գործի և նմանատիպ որոշումների լույսի ներքո, հավանական է, որ Օրենքը կարող է ներառել այնպիսի դրույթներ, որոնք կարող են ճանաչվել Մոդելային օրենքը կիրառող իրավասության օրենքով:

Ընդհանուր դրույթները լրացվում են ներպետական դատարանի կողմից տրված սահմանումներով, որն իրավասու է որոշում կայացնել Մոդելային օրենքի հետ կապված հարցերով[227]: Մոդելային օրենքը նշում է, որ չի միջամտում ներպետական իրավասության որևէ պարտավորությանը, որը բխում է որևէ այլ պայմանագրից կամ համաձայնագրից, և այն չի խանգարում պետություններին հրաժարվել Մոդելային օրենքի համաձայն որոշակի միջոցներ ձեռնարկելուց, որտեղ դա կհակասի հանրային շահերին[228]: Մոդելային օրենքի դրույթները չեն բացառի որևէ լրացուցիչ օգնություն, որը դատարանը կարող է առաջարկել անդրսահմանային սնանկության համատեքստում, և դատարանները խրախուսվում են մեկնաբանելու Մոդելային օրենքը՝ հաշվի առնելով դրա միջազգային բնույթը և դրա ընդունման նպատակը[229]:

---

227 Հոդվածներ 4-5, Մոդելային օրենք:

228 Ibid., հոդվածներ 3-6:

229 Ibid., հոդվածներ 7-8:

2. Օտարերկրյա պարտատերերի և ներկայացուցիչների հասանելիությունը[230]

Մոդելային օրենքը օտարերկրյա սնանկության ներկայացուցչին իրավունք է տալիս անմիջականորեն մուտք գործել ներքին դատարաններ, ինչը հաճախ անհրաժեշտ միջոց է սնանկության վարույթների համակարգմանը հասնելու համար[231]: Օտարերկրյա ներկայացուցիչը պաշտպանված է ներքին իրավասությանը ենթակա լինելուց բոլոր այլ հարցերով[232]: Օտարերկրյա ներկայացուցչին իրավունք է տրվում սնանկության վարույթ հարուցելու ընդունող իրավասությունում, երբ բավարարված են անհրաժեշտ նախապայմանները, օրինակ՝ միջնորդություն ներկայացնելու համար[233]: Սնանկության ներպետական գործող վարույթներին մասնակցելու նմանատիպ իրավունք ևս տրված է[234]:

Մոդելային օրենքը նախատեսում է, որ օտարերկրյա պարտատերերին պետք է վերաբերվեն նույն կերպ, ինչ տեղական պարտատերերին, և նրանց տալիս է նույն իրավունքները՝ սկսելու և մասնակցելու սնանկության ներքին գործերին[235]: Այս իրավունքները ենթակա են մեկ կարևոր պայմանի, մասնավորապես՝ ներպետական իրավասությունը կարող է նախատեսել, որ առաջնահերթությունների և պահանջների դասակարգման վերաբերյալ կիրառվեն տեղական կանոնները: Այնուամենայնիվ, բացահայտ խտրականության դեմ երաշխիք է տրամադրվում այն առումով, որ ներքին իրավասությունը պետք է հստակեցնի, որ օտարերկրյա պարտատերերին չի տրվի ավելի ցածր դասակարգում, քան ընդհանուր ոչ արտոնյալ պահանջները, քանի դեռ համանման դիրքում գտնվող տեղական

230 Ibid., Գլուխ II, Հոդվածներ 9-14:

231 Ibid., հոդված 9:

232 Ibid., հոդված 10:

233 Ibid., հոդված 11:

234 Ibid., հոդված 12:

235 Ibid., հոդված 13(1):

պարտատերերը նման վերաբերմունքի չեն արժանանում: Մոդելային օրենքը նաև թույլ է տալիս ներքին իրավասությանը հնարավորություն տալ օտարերկրյա եկամուտների պահանջները սնանկության ցանկացած ներքին վարույթում թույլատրելու համար[236]: Մոդելային օրենքը նաև վերացնում է որոշ թերություններ, որոնց օտարերկրյա պարտատերերը հանդիպում էին, մասնավորապես՝ պահանջելով նրանց ծանուցում տրամադրել ցանկացած իրավիճակում, երբ տեղական պարտատերերը ևս ծանուցվում են: Ծանուցումը կարող է տրվել անհատապես կամ ցանկացած եղանակով, որը դատարանը կհամարի բավարար, և կներառի տեղեկատվություն այն մասին, թե երբ պետք է ներկայացվեն անհրաժեշտ ապացույցները, ինչ ձևով, և այլն[237]:

3. Օտարերկրյա վարույթների ճանաչում և օգնություն[238]

Վճիռների ճանաչման և կատարման վերաբերյալ քաղաքացիական և ընդհանուր իրավունքի մոտեցումների էական տարբերությունը բխում է օտարերկրյա վճռի վերաբերմունքից: Քաղաքացիական իրավունքը exéquatur[239] գործընթացի միջոցով ընդունում է օտարերկրյա վճիռը՝ փաստացի դրան տալով նույն կարգավիճակը, ինչ ներպետական վճիռը: Ընդհանուր իրավունքը չի ընդունում օտարերկրյա վճիռը, այլ պարտադրում է օտարերկրյա ներկայացուցիչների կողմից արված օգնության խնդրանքները՝ համաձայնության սկզբունքի համաձայն: Ինչ մեթոդ էլ որ կիրառվի, պարզ է, որ ճանաչման և կատարման գործընթացը բազմաթիվ իրավասություններում բախվում է մի շարք դատավարական և նյութական իրավունքի խոչընդոտների, ինչը հանգեցնում է ձգձգումների և ծախսերի: Մոդելային օրենքը գտնում է, որ ճանաչումը

236 Ibid., հոդված 13(2):

237 Ibid., հոդված 14:

238 Ibid., Գլուխ III, հոդվածներ 15-23:

239 Լատիներենից՝ “թող կատարվի”:

համագործակցության բանալին է և այն դարձնում է կարևոր ընթացակարգային քայլ՝ օտարերկրյա ներկայացուցչի համար հետևողական ազդեցություններով և իրավունքներով:

Մոդելային օրենքի դրույթները կոչված են արագացնելու ճանաչման գործընթացը՝ կառավարման ծախսերը խնայելու նպատակով: Օտարերկրյա դատարանի վճռի վավերացված պատճենը կամ ցանկացած ապացույց, որը ներպետական դատարանը համարում է ընդունելի, միակ փաստաթուղթն է, որն անհրաժեշտ է ճանաչման դիմումի համար, որը ենթակա է թարգմանության ցանկացած տեղական պահանջի համաձայն, և նույն պարտապանի վերաբերյալ բոլոր հայտնի դատավարությունները նույնականացնող հայտարարության պատրաստման համար[240]: Ներպետական դատարանն իրավունք ունի ենթադրելու, որ փաստաթղթերը իսկական են, և որ վկայականները դրանցում պարունակվող ցանկացած պնդումների վերջնական ապացույցն են: Այսպիսով, ճանաչումը, եթե որևէ շահագրգիռ կողմ չի վիճարկում, վերածվում է պարզ ընթացակարգի, որը գրեթե ամբողջությամբ հիմնվում է փաստաթղթերի ներկայացման վրա[241]:

Մոդելային օրենքը պահանջում է վարույթի ճանաչում պահանջը ներկայացնելուց հետո առաջին իսկ հնարավորության դեպքում[242]: Այս վարույթները մոդելային օրենքում դասակարգվում են երկու տեսակի՝ «հիմնական» և «ոչ հիմնական»: «Հիմնական» վարույթը 2-րդ հոդվածում սահմանվում է որպես վարույթ, որը տեղի է ունենում այն երկրում, որտեղ պարտապանը ունի «իր կենսական շահերի կենտրոնը»[243]: Մոդելային օրենքը առաջ է քաշում այն ենթադրությունը, որ ընկերության հիմնադրման վայրը նրա հիմնական շահերի

240 Հոդված 15, Մոդելային օրենք:

241 Ibid., հոդված 16(1)-(2):

242 Ibid., հոդված 17(1)-(3):

243 Տե՛ս վերևում, 3:

կենտրոնն է, եթե հակառակը ապացուցված չէ[244]: «Ոչ հիմնական» վարույթը համարվում է վարույթ ցանկացած այլ երկրում, պայմանով, որ պարտապանը առնվազն ներկայացուցչություն ունի այդ երկրում: Սա ընկալվում է որպես մի վայր, որտեղ պարտապանը օգտագործում է մարդկային ջանքերը, ապրանքները կամ ծառայությունները տնտեսական գործունեություն իրականացնելու համար «ոչ անցողիկ» եղանակով[245]: Օտարերկրյա ներկայացուցիչը պարտավոր է դատարանին տեղեկացնել օտարերկրյա վարույթի կարգավիճակի կամ ներկայացուցչի նշանակման ցանկացած փոփոխության մասին, ինչպես նաև այն դեպքերում, երբ հայտնի է դառնում հետագա օտարերկրյա վարույթի առկայության մասին[246]: Դատարանը նախկինի պես պահպանում է էական հայեցողական իրավասությունը՝ փոփոխելու կամ դադարեցնելու ճանաչումը, եթե ապացուցվի, որ ճանաչման հիմքերն ամբողջությամբ կամ մասնակի բացակայում են կամ դադարել են գոյություն ունենալ[247]:

Մոդելային օրենքը նաև թույլ է տալիս օտարերկրյա ներկայացուցչի կողմից միջանկյալ միջոցներ հայցել, քանի դեռ ճանաչման դիմումը լուծված չէ, և երբ օգնությունը հրատապ անհրաժեշտ է պարտապանի ակտիվները կամ պարտատերերի շահերը պաշտպանելու համար[248]: Դատարանի կողմից պահանջվող ցանկացած ծանուցում պետք է պահպանվի: Դատարանը կարող է մերժել միայն այն դեպքում, եթե հայցվող օգնությունը կխանգարի հիմնական դատավարության

---

244 Հոդված 16(3), Մոդելային օրենք:

245 «Հիմնադրման» հասկացությունը բխում է նաև Եվրոպական միության տեքստերից և ընդունված է, որ պահանջում է որոշակի մշտականություն պարտապանի գործունեության մեջ ցանկացած երկրում, որպեսզի այնտեղի դատարանները պատշաճ կերպով իրականացնեն իրավազորությունը: Սա տարբերվում է իրավազորությունից, որը հիմնված է պարտապանի կամ ակտիվների անցողիկ ներկայության վրա:

246 Հոդված 18, Մոդելային օրենք:

247 Ibid., հոդված 17(4):

248 Ibid., հոդված 19(1)-(2):

շահերին, որոնք տեղի են ունենում այլ վայրում[249]: Ենթադրաբար դա կկիրառվի այն դեպքում, երբ ճանաչման են ձգտում ինչպես հիմնական, այնպես էլ ոչ հիմնական դատավարության մի շարք օտարերկրյա ներկայացուցիչներ: Միջանկյալ միջոցն ինքնաբերաբար դադարեցվում է դիմումի լսումների ժամանակ, եթե չերկարաձգվի դատարանի կողմից[250]:

Վարույթը որպես օտարերկրյա հիմնական վարույթ ճանաչելն առաջացնում է որոշակի պարտադիր հետևանքներ, ներառյալ հայցը կասեցնելը կամ արդեն իսկ կայացված վճռի կատարումը: Սահմանափակվում են նաև պարտապանի ակտիվների նկատմամբ տոկոսների փոխանցումները[251]: Օտարերկրյա հիմնական վարույթի ճանաչումը ենթակա է ցանկացած սահմանափակման, որը կկիրառվի ներպետական օրենսդրության համաձայն և չի ազդում նույն պարտապանի մասնակցությամբ տեղական վարույթի կամ դատավարության սկզբի վրա, եթե անհրաժեշտ է պարտապանի դեմ պահանջը պահպանելու համար[252]:

Մոդելային օրենքի համաձայն լրացուցիչ երաշխիքներ են տրամադրվում ինչպես հիմնական, այնպես էլ ոչ հիմնական դատավարության օտարերկրյա ներկայացուցիչներին, ներառյալ հայցերի կասեցումը կամ վճիռների կատարումը և պարտապանի ակտիվների հետ կապված գործարքների սառեցումը այնքանով, որքանով որ հայցվող օգնությունը դեռևս չի տրվել 20-րդ հոդվածի համաձայն: Այլ արտոնությունները ներառում են ակտիվները օտարերկրյա ներկայացուցչին հանձնելը, տեղեկատվություն ստա-նալը և ապացույցների ընդունումը, ինչպես թույլատրվում է տեղական կանոններով՝ օտարերկրյա դատավարության նպա-տակներով: Մեկ կարևոր տարբերակում է արվում հիմնական և ոչ

249 Ibid., հոդված 19(4):

250 Ibid., հոդված 19(3):

251 Ibid., հոդված 20 (1):

252 Ibid., հոդված 20(2)-(4):

հիմնական դատավարության ներկայացուցիչների միջև, քանի որ վերջիններս կարող են օգտվել 20-րդ հոդվածով նախատեսված արտոնություններից միայն այն ակտիվների նկատմամբ, որոնք ներպետական դատարանը գտնում է, որ դրանք պատկանում են ոչ հիմնական դատավարության շրջանակին[253]: Նույն հոդվածով նախատեսված միջանկյալ միջոցները և ազատումները նույնպես ենթակա են պատշաճ քննարկման ներպետական դատարանի կողմից՝ պարտապանի, պարտատերերի կամ որևէ շահագրգիռ կողմերի շահերը պաշտպանելու անհրաժեշտության վերաբերյալ[254]: Ճանաչումը նաև օտարերկրյա ներկայացուցչին իրավունք է տալիս նախաձեռնելու խուսափելու գործողություններ, թեև այն դեպքում, երբ ճանաչումը վերաբերում է ոչ հիմնական վարույթին, իրավունքը սահմանափակվում է միայն այդ վարույթին առնչվող ակտիվների վրա[255]: Նմանատիպ իրավունք է տրվում միջամտել ցանկացած վարույթին, որի կողմ է պարտապանը[256]:

4. Համագործակցություն և համակարգում[257]

Մոդելային օրենքի առավել հեռանկարային մասը՝ IV գլուխը հիմնված է դատարանների և ներկայացուցիչների միջև համագործակցության գաղափարի վրա: Ներքին դատարաններն իրավասու են անմիջականորեն շփվելու օտարերկրյա դատարանների և ներկայացուցիչների հետ և հնարավորինս համագործակցել[258]: Ներքին սնանկության անձնակազմը նույնպես իրավասու է համագործակցել օտարերկրյա դատարանների և

253 Ibid., հոդված 21:

254 Ibid., հոդված 22:

255 Ibid., հոդված 23:

256 Ibid., հոդված 24:

257 Ibid., Գլուխ IV, Հոդվածներ 25-27; Գլուխ V, Հոդվածներ 28-32.

258 Ibid., հոդված 25:

ներկայացուցիչների հետ[259]: Համագործակցությունը կարող է տեղի ունենալ մի շարք ձևերով, որոնք ներկայացված են Մոդելային օրենքի ոչ ամբողջական ցանկում, որը պետությունները խրախուսվում են ավելացնել: Թվարկված համագործակցության տեսակները ներառում են դատարանի ցուցումով անձնակազմի նշանակումը, պարտապանի ունեցվածքի մասին տեղեկատվության փոխանցումը, պարտապանի ակտիվների նկատմամբ վերահսկողության համակարգումը կամ պարտապանի հետ կապված վարույթը[260]: Նշվում է, որ այս դրույթները հրամայական են, քանի որ համագործակցությունը դիտվում է որպես Մոդելային օրենքի պատշաճ օգտագործման հիմք, և դատարաններից պահանջվում է հնարավորինս օգտագործել համագործակցության մեթոդներ: Սա կարող է լինել ամենաօգտակարը Մոդելային օրենքի դրույթներից, չնայած համագործակցության փորձ չունեցող որոշ երկրների հաստատություններին ի սկզբանե դժվար կլինի հարմարվել համագործակցության գրեթե պարտադիր մեխանիզմին:

Սնանկության վարույթների արդյունավետ կառավարումն ապահովելու մյուս առանցքը բազմաթիվ վարույթների համակարգումն է: Սա, հավանաբար, ամենահաճախ հանդիպող սցենարն է անդրսահմանային սնանկության իրավիճակներում: Մոդելային օրենքը մոտենում է խնդրին՝ փորձելով խթանել համակարգումը, այդպիսով նվազեցնելով մրցակցող շահերի միջև հակամարտությունը: Այն դեպքում, երբ ճանաչվում է օտարերկրյա հիմնական վարույթ, թեև սա ենթադրություն է առաջացնում, որ պարտապանը անվճարունակ է, և հետևաբար, կարող է սկսվել ներպետական վարույթ, ներպետական վարույթի ազդեցությունը կսահմանափակվի իրավասության շրջանակներում առկա ակտիվներով, ինչպես նաև այդ իրավասության հետ կապված ակտիվներով[261]: Այնուամենայնիվ, օտարերկրյա վարույթներին արդեն տրված արտոնությունները կվերանայվեն՝ ապահովելու համար, որ չհակասի ներքին

259 Ibid., հոդված 26:

260 Ibid., հոդված 27:

261 Ibid., հոդվածներ 28, 31:

դատավարությունների կարիքներին: Նմանապես, արտոնությունը, որը տրվում է այն դեպքում, երբ օտարերկրյա վարույթի ճանաչումը, լինի դա հիմնական կամ ոչ հիմնական տեսակի, և որտեղ արդեն առկա են ներպետական վարույթներ, նույնպես պետք է հետևողական լինեն[262]: Մրցակցող օտարերկրյա վարույթների հարցը նույնպես լուծվում է ներքին դատարանի հետ, որը պահանջվում է ապահովելու հետևողականություն և համակարգում[263]: Այս հետևողականությունը ձեռք է բերվում նաև «hotchpot» կանոնի ներդրմամբ, որը թույլ չի տալիս օտարերկրյա վարույթներում արդեն բաշխումներ ստացած պարտատերերին ստանալ հերթական բաշխում այնքան ժամանակ, քանի դեռ համադրելի պարտատերերը չեն ունենա համարժեք բաշխում ներպետական վարույթներում[264]:

Որպես ամփոփում՝ օգտակար կլինեն հայաստանյան դատարաններից ուղարկվող դիմումներն այլ իրավասությունների դատարաններ, որոնք կարող են ընդգրկվել Մոդելային օրենքի շրջանակներում: Մոդելային օրենքի ընդունման հարցը Հայաստանում, ինչպես առաջարկվել է որոշ միջազգային կազմակերպությունների կողմից, պետք է հնարավորություն տա մյուս դատարաններին օգտվելու փոխադարձ առավելություններից, ինչը կբարձրացնի Հայաստանի հեղինակությունը դատական համագործակցության հարցում:

Մոդելային օրենք 2018

UNCITRAL-ի 1997 թվականի մոդելային օրենքի շրջանակը լրացնող երկրորդ տեքստն է Մոդելային օրենք 2018-ը[265], որը

---

262 Ibid., հոդված 29:

263 Ibid., հոդված 30:

264 Ibid., հոդված 32:

265 Տե՛ս Recommendation C1, “Key Objectives and Policies”, World Bank Principles for Effective Insolvency and Creditor/Debtor Regimes, հասանելի հետևյալ հասցեով՝ http://documents.worldbank.org/curated/en/518861467086038847/pdf/106399-WP-REVISED-PUBLIC-ICR-Principle-Final-Hyperlinks-revised-Latest.pdf:

կենտրոնանում է անվճարունակության գործընթացում կայացված վճիռների վրա և ինչպես դրանք կարող են ճանաչվել և կիրառվել այլ պետություններում: Տեքստը հիմնված է անուղղակի փոխադարձության վրա և նախատեսված է նախկին մոդելային օրենքի հետ մեկտեղ օգտագործելու համար: Այն խուսափում է էկզեկվատուրայի բարդ ընթացակարգից կամ օժանդակ հրամանի կայացման միջոցով ընդունման անհրաժեշտությունից, որը կարող է վտանգել սկզբնական վճռի վերաքննումը և դրա համապատասխանությունը մասնավոր միջազգային իրավունքում օգտագործվող սկզբունքների կանոնին: Դրանցից մի քանիսը մատնանշում են սկզբնական վճռի օրինաչափությունը՝ արդյոք այդ վճիռը դատավճիռ է և (կամ) կայացվել է դատարանի կողմից, որտեղից բողոք չկա, արդյոք վճիռը կայացվել է ելքի սկզբունքի համաձայն և չի խախտում մարդու իրավունքների, բնական արդարության կամ հասարակական կարգի պահանջները:

Մոդելային օրենք 2018-ի հիմքում ընկած հիմնավորումն այն անհրաժեշտությունն է, որը բացահայտվել է ավելի վաղ Մոդելային օրենքում և դրա 7-րդ և 21-րդ հոդվածների բացթողումները: Հաագայի կոնվենցիայի ճանաչման և կիրարկման շրջանակից բացառումը[266], ինչպես նաև ամբողջ աշխարհում ճանաչման և կիրարկման համար ներպետական տարբերակվող շրջանակների առկայությունը նպաստել է 2014-2018թթ. նախագծի առաջխաղացմանը, որը հանգեցրել է Մոդելային օրենք 2018-ին: Որպես այդպիսին, դրա շրջանակը նախատեսված է ներառելու ցանկացած վճիռ, որի հետևանքը էականորեն կապված է սնանկության վարույթի հետ (օրինակների ոչ սպառիչ ցանկով, որը տրված է ուղեկցող Ուղեցույցում): Այնուամենայնիվ, Մոդելային օրենք 2018-ը լրացնում է 1997 թվականի Մոդելային օրենքը (ինչպես ընդգծված է դրա նախաբանում) և չի բացառում ճանաչման և կիրառման այլ շրջանակների օգտագործումը, որոնք կարող են հասանելի լինել:

[266] Տե՛ս Քաղաքացիական և առևտրային գործերով օտարերկրյա վճիռների ճանաչման և կատարման մասին 1971թ. փետրվարի 1-ի Կոնվենցիայի հոդված 1(5):

Մոդելային օրենք 2018-ը օգտագործում է նմանատիպ տերմինաբանություն՝ սնանկության վարույթ (ներառյալ 2-րդ հոդվածի պահանջները, որոնք վերաբերում են սնանկության վարույթներին իր շրջանակում ներառելու համար), սնանկության ներկայացուցիչ, վճիռ և այլն: Նրանում նկատվում է միջազգայնացման և նույնատիպ կարգավորման այնպիսի ուղերձներ, որոնք առկա էին նաև 1997թ. Մոդելային օրենքում և այլ նմանատիպ փաստաթղթերում:

Մոդելային օրենք 2018-ը սահմանում է 1997 թվականի Մոդելային օրենքի նման պայմաններով ճանաչման և կատարման համար դիմելու ընթացակարգը, ներառյալ ժամանակավոր արտոնությունների առկայությունը, որը գրեթե նույնական է իր նախորդին: Վճռի ճանաչումը կարող է ուղղակիորեն պահանջվել 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն դիմումի միջոցով, կամ որպես հայցի պաշտպանության մաս կամ որպես դատարանի կողմից արդեն իսկ տրված մեկ այլ հարցի հետ կապված: Տեքստը անդրադառնում է ճանաչումից և կատարումից հրաժարվելու հիմքերին: Ի լրումն 7-րդ հոդվածում պարունակվող սովորական հանրային շահերի բացառության և 11-րդ հոդվածով ճանաչման հետ կապված մարտահրավերների առկայության, 14-րդ հոդվածը սահմանում է ճանաչումը և կիրարկումը մերժելու քաղաքականության համապարփակ պատճառները, ներառյալ իրավասության հիմքի բացակայությունը, ոչ համարժեք ծանուցումը, անհամապատասխանությունը, որոնք սովորաբար հանդիպում են միջազգային մասնավոր իրավունքում: Այնուամենայնիվ, տեքստը նաև անդրադառնում է սնանկության հատուկ պատճառներին՝ ավելացնելով շահերի ոչ պատշաճ պաշտպանությունը, միջամտությունը անհետաձգելի վարույթին (օրինակ՝ կասեցումը), ինչպես նաև այն դեպքերին, երբ սնանկության վարույթը ճանաչելի չէ:

Ինչպես նշվեց վերևում, Հայաստանի դատարաններից դիմումները այլ իրավասությունների դատարաններ, որոնք նույնպես կարող են ընկնել Մոդելային օրենք 2018-ի շրջանակներում, շատ օգտակար կլինեն, թեև ներկայումս հայտնի է, որ մի քանի պետություններ գտնվում են դրա ընդունման քննարկման փուլում: Միջազգային

կազմակերպությունների առաջարկություններին[267] համահունչ, եթե Հայաստանը դիտարկի այս Մոդելային օրենքը նախկին տեքստի հետ մեկտեղ ընդունելու մասին, դա պետք է հնարավորություն տա այլ դատարանների կողմից օգտվելու փոխադարձ առավելություններից, որոնք էլ ավելի կբարձրացնեն Հայաստանի հեղինակությունը դատական համագործակցության տեսանկյունից:

[267] Տե՛ս Սկզբունք 15, «Անդրսահմանային սնանկություն», ՎԶԵԲ-ի Արդյունավետ սնանկության համակարգի հիմնական սկզբունքները 2021, հասանելի է հետևյալ հասցեով՝ https://www.ebrd.com/legal-reform/ebrd-insolvency-core-principles.pdf:

§3. Այլ միջազգային չափանիշներ

Հայաստանի սնանկության իրավունքի ոլորտին աջակցելու նպատակով այլ միջազգային չափանիշներ ևս պետք է դիտարկվեն, ներառյալ միջազգային ասպեկտները: ՎԶԵԲ-ի 2021թ. Սնանկության արդյունավետ համակարգի հիմնական սկզբունքներում[268] թիվ 15 սկզբունքն ընդգծում է, որ ժամանակակից բիզնեսների անդրազգային բնույթի պատճառով սնանկության արդյունավետ համակարգը պետք է նպաստի անդրսահմանային սնանկության սահուն վարմանը և լուծմանը: ՎԶԵԲ-ի 2021թ. սնանկության գրասենյակի տնօրինողների սկզբունքները[269] և iii) Համաշխարհային բանկի սկզբունքները արդյունավետ սնանկության և պարտատերերի/պարտապանների ռեժիմների համար (վերանայված 2016թ.)[270], մասնավորապես վերջին սկզբունք՝ C15-ը, որն անդրադառնում է «Միջազգային նկատառումներին», հետագա տեքստեր են, որոնցից կարելի է ոգեշնչվել[271]: Համաձայն G15 սկզբունքի՝

> *«Սնանկության գործով վարույթը կարող է ունենալ միջազգային ասպեկտներ, և երկրի իրավական համակարգը պետք է սահմանի հստակ կանոններ՝ կապված իրավազորության, օտարերկրյա վճիռների ճանաչման, տարբեր երկրների դատարանների միջև համագործակցության և իրավունքի ընտրության հետ: Անդրսահմանային հարցերի արդյունավետ լուծման հիմնական գործոնները սովորաբար ներառում են՝ օտարերկրյա սնանկության վարույթի ճանաչումից*

268 Տե՛ս նախորդը:

269 Հասանելի է՝ https://www.ebrd.com/legal-reform/insolvency/ioh_principles.pdf:

270 Տե՛ս վերը նշված 56-րդ նշումը:

271 Տե՛ս Սկզբունք G17 «Միջազգային ձեռնարկությունների խմբերի սնանկությունը»:

հետո տրամադրվող արտոնություն, օտարերկրյա սնանկության ներկայացուցիչների՝ դատարաններ և այլ համապատասխան մարմիններ հասանելիություն, դատարանների և սնանկության ներկայացուցիչների՝ սնանկության միջազգային վարույթներում համագործակցություն, օտարերկրյա և ներքին պարտատերերի միջև խտրականության բացառումը»:

ՄԱՍ XII. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ[272]

№	Գործի համարը և ամսաթիվը	Օրենքի վերաբերելի հոդվածը	ՍԴ արտահայտած դիրքորոշման հակիրճ նկարագիրը
1	Թիվ ՍԴՈ-735 25.02.2008 թ. որոշում	Օրենքի 3-րդ հոդված	ՍԴ-ն անդրադարձել է սնանկության հիմք հանդիսացող անվճարունակության հատկանիշներին և վճարային պարտավորության վերաբերյալ նյութաիրավական վեճի առկայության պայմաններում սնանկ ճանաչելու հնարավորության իրավական հարցին:
2	Թիվ ՍԴՈ-954 12.04.2011 թ. որոշում	Օրենքի 19-րդ հոդված	ՍԴ-ն անդրադարձել է պարտապանի կանոնադրական կապիտալում մասնակիցների իրավունքների և պարտականությունների ծավալին և կանոնադրական կապիտալում մասնակցությամբ պայմանավորված լիազորությունների շրջանակին վերաբերող խնդիրների:
3	Թիվ ՍԴՈ-932 11.01.2011 թ. որոշում	Օրենքի 20-րդ հոդված	ՍԴ-ն անդրադարձել է «սնանկության գործ» հասկացության սահմանադրաիրավական բովանդակության պարզաբանմանը, սնանկության գործի բաղադրատարր հանդիսացող առանձին վարույթների բնույթին և առանձնահատկություններին՝ այդ թվում բողոքարկմանը:
4	Թիվ ՍԴՈ-1610 23.09.2021 թ. որոշում	Օրենքի 20.1-ին հոդված	ՍԴ-ն անդրադարձել է սնանկության գործով առանձին պահանջների քննության կասեցման իրավական հիմքերին և դատավարական կարգին, սնանկության վարույթն ամբողջությամբ կամ պահանջի բավարարմանն ուղղված գործողությունները կասեցնելու իրավական մեխանիզմների բացակայության խնդրին:

[272] 2021թ. հոկտեմբերի 29-ի դրությամբ:

5	Թիվ ՍԴՈ-1572 26.01.2021 թ. որոշում	Օրենքի 29-րդ հոդված	ՍԴ-ն անդրադարձել է սնանկության գործով կառավարչի լիազորություններին, մասնավորապես՝ կառավարչի և պարտապանի կողմից դատարան դիմելու իրավասության հարաբերակցության խնդրին:
6	Թիվ ՍԴՈ-1542 26.05.2020 թ. որոշում	Օրենքի 47-րդ հոդված	ՍԴ-ն անդրադարձել է սնանկության գործերով պարտապանի գույքի տնօրինման վերաբերյալ օրենսդրական կարգավորումներին՝ պայմանավորված պարտապանի դատական պաշտպանության իրավունքի սահմանափակման և իրավական անորոշության հարցերով:
7	Թիվ ՍԴՈ-1340 31.01.2017 թ. որոշում	Օրենքի 54-րդ հոդված	ՍԴ-ն անդրադարձել է սնանկության գործերով կառավարչի կողմից սեփականության իրավունքի սահմանափակման միջամտության հնարավորությանը՝ դիտարկելով այն նաև սեփականության իրավունքի սահմանափակման հիմնավորվածության տեսանկյունից:
8	Թիվ ՍԴՈ-1609 14.09.2021 թ. որոշում	Օրենքի 80-րդ հոդված	ՍԴ-ն անդրադարձել է սնանկության գործի շրջանակներում միջանկյալ բաշխման ծրագրի դեմ մասնակի առարկության պայմաններում չառարկված մասով միջանկյալ բաշխման ծրագիրը դատարանի կողմից հաստատելու իրավասություն չնախատեսելու դեպքում իրավական որոշակիության սկզբունքի, իսկ իրավակիրառ պրակտիկայում վերոնշյալ խնդրին տրված մեկնաբանության պայմաններում անձի սեփականության, ինչպես նաև դատական պաշտպանության իրավունքների խախտման հարցերին:
9	Թիվ ՍԴՈ-998 22.11.2011 թ. որոշում	Օրենքի 82-րդ հոդված	ՍԴ-ն անդրադարձել է բաժնետիրական ընկերության հիմնադիր (մասնակից, բաժնետեր, անդամ կամ գործընկեր) հանդիսացող անձանց՝ ընկերության հետ պարտավորական իրավահարաբերությունների մեջ գտնվելու հանգամանքին և դրա վրա հիմնված՝ մինչև լուծարման գործընթացի ավարտը պահանջներ ներկայացնելու իրավունքի հնարավորության խնդրին, ինչպես նաև այդպիսի պահանջների իրավական բնույթների տարբերակման հարցին:

10	Թիվ ՍԴՈ-1189 27.01.2015 թ. որոշում	Օրենքի 90-րդ հոդված	ՍԴ-ն անդրադարձել է ավարտված սնանկության գործի շրջանակներում չներկայացված պահանջներով պարտավորություններից ազատման բովանդակության բացահայտմանը՝ այդ թվում օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված պահանջներ չներկայացրելու դեպքերին, և հարկային պարտավորությունների կատարման առումով բացառությունների նախատեսման հնարավորությանը:

2. ՎԴ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ [273]

№	Գործի համարը և ամսաթիվը	Օրենքի վերաբերելի հոդվածը	ՎԴ արտահայտած դիրքորոշման հակիրճ նկարագիրը
1	Թիվ ԵԿԴ/0023/04/17 սնանկության գործով 05.06.2020 թ. որոշում	Օրենքի 1-ին հոդված	ՎԴ-ն անդրադարձել է այն իրավական խնդրին, թե ինչ կարգով է ենթակա ձևակերպման և հաստատման պետական մարմնի կողմից տրված լիազորագիրը՝ վերահաստատելով և զարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:
2	Թիվ ՍՆԴ/0104/04/19 սնանկության գործով 15.05.2020 թ. որոշում	Օրենքի 1-ին հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկության վարույթում կայացվող միջանկյալ դատական ակտերի բողոքարկման և սնանկության վարույթի ընթացքում տարբեր գործողությունների կատարման համար սահմանված ժամկետները հաշվարկելու առանձնահատկություններին, մասնավորապես՝ մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ Օրենքով նախատեսված տարբեր գործողությունների կատարման համար սահմանված ժամկետները հաշվարկելու կարգին, ինչպես նաև այն հարցադրմանը, թե որ իրավական ակտն է ենթակա կիրառման սնանկության վարույթում կայացվող միջանկյալ դատական ակտերի բողոքարկման ժամկետները հաշվարկելիս:
3	Թիվ ԵՇԴ/0021/04/12 սնանկության գործով 15.05.2020 թ. որոշում	Օրենքի 1-ին հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկության վարույթում լիազորագրի տրման վավերապայմանների և դատական ներկայացուցչության առանձնահատկություններին:
4	Թիվ ԵԱՔԴ/0370/04/16 սնանկության գործով 05.05.2020 թ. որոշում	Օրենքի 1-ին հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկության վարույթում լիազորագրի պատշաճ ձևակերպված լինելու հարցին՝ վերահաստատելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները:
5	Թիվ ԵՇԴ/0095/04/16 սնանկության գործով 27.02.2020 թ. որոշում	Օրենքի 1-ին հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկության վարույթում լիազորագրի պատշաճ ձևակերպված լինելու հարցին և դատարանում ներկայացուցչության իրականացման իրավակարգավորումներին՝ վերահաստատելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները:

[273] 2021թ. հոկտեմբերի 29-ի դրությամբ:

6	Թիվ ԵԴ/0807/04/18 սնանկության գործով 29.06.2020 թ. որոշում	Օրենքի 1-ին հոդված	ՎԴ-ն անդրադարձել է քաղաքացիական դատավարությունում դատական ակտը կողմին հանձնելու առանձնահատկություններին, անդրադառնալով նաև այն հարցին, թե արդյո՞ք դատարանի եզրափակիչ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելն ու վերականգնելը կարող է պայմանավորվել այդ դատական ակտը դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով հրապարակվելու հանգամանքով, առանց հաշվի առնելու, թե արդյոք բողոքարկվող դատական ակտն օրենքով սահմանված կարգով ուղարկվել է հասցեատիրոջը:
7	Թիվ ԿԴ1/0151/04/17 սնանկության գործով 16.12.2020 թ. որոշում	Օրենքի 3-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է նախադատելության կիրառելիության որոշ հարցերի, ինչպես նաև պահանջի իրավունքի զիջման դեպքում իրավասուբյեկտության պատշաճության հարցին:
8	Թիվ ԵԱՔԴ/0125/04/17 սնանկության գործով 12.03.2020 թ. որոշում	Օրենքի 3-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է վճարային պարտավորության վերաբերյալ նյութաիրավական վեճի առկայության պայմաններում սնանկ ճանաչելու հնարավորության իրավական հարցին:
9	Թիվ ԵԱՔԴ/0076/04/17 սնանկության գործով 27.12.2019 թ. որոշում	Օրենքի 3-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է անվիճելի պարտավորության հիմքերին՝ պատասխանելով այն հարցադրմանը, թե արդյո՞ք պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիմքում որպես անվիճելի վճարային պարտավորություն կարող է դրվել օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունն այն դեպքում, երբ իրավասու պետական մարմինը նշված գումարները պարտապանից բռնագանձելու վերաբերյալ որոշումը չի դարձել անբողոքարկելի:
10	Թիվ ԼԴ4/0022/04/18 սնանկության գործով 26.12.2019 թ. որոշում	Օրենքի 3-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է կամավոր սնանկության վարույթում պարտապանի կողմից ներկայացված ապացույցների գնահատման առանձնահատկություններին, այդ թվում՝ անդրադառնալով հետևյալ հարցադրումներին. 1. արդյո՞ք կամավոր սնանկության վարույթում պարտատեր-վարկային կազմակերպության կողմից տրված հաճախորդի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքը կարող է բավարար գնահատվել պարտավորության բնույթը պարզելու համար,

			2. արդյո՞ք դատական տեղեկատվական համակարգից արտատպված վճռի օրինակը կարող է որակվել պարտավորության առկայությունը և դրա չափը հիմնավորող թույլատրելի ապացույց:
11	Թիվ ԵՇԴ/0017/04/15 սնանկության գործով 18.12.2019 թ. որոշում	Օրենքի 3-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է կատարողական վարույթն ավարտելու դեպքում պարտապանին սնանկ ճանաչելու առանձնահատկություններին, մասնավորապես այն հարցին, արդյո՞ք պարտապանը կարող է սնանկ ճանաչվել պարտատիրոջ դիմումի հիման վրա այն դեպքում, երբ պարտատիրոջ օգտին կայացված դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթով հարուցված կատարողական վարույթն ավարտվել է պարտապանի գտնվելու վայրը պարզելու անհնարինության հիմքով այն պարագայում, երբ հարկադիր կատարողը և (կամ) պահանջատերն ձեռնարկել են օրենքով թույլատրելի բոլոր հնարավոր միջոցները:
12	Թիվ ԵԱՔԴ/0062/04/11 սնանկության գործով 21.12.2018 թ. որոշում	Օրենքի 3-րդ հոդված	ՎԴ-ն կրկին անդրադարձել է կազմակերպության կողմից տրվող լիազորագրի ձևակերպման և հաստատման կարգին:
13	Թիվ ԵՄԴ/0013/04/17 սնանկության գործով 07.12.2018 թ. որոշում	Օրենքի 3-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիմքում օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունը որպես անվիճելի պարտավորություն վկայակոչելու առանձնահատկություններին:
14	Թիվ ԵԱՔԴ/0210/04/17 սնանկության գործով 06.12.2018 թ. որոշում	Օրենքի 3-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիմքում օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունը՝ որպես անվիճելի պարտավորություն վկայակոչելու առանձնահատկություններին՝ միաժամանակ անդրադառնալով հետևյալ իրավական հարցադրումներին. 1. օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորության կամ դրա մի մասի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայության պայմաններում պարտապանին սնանկ ճանաչելու հիմքում պետք է դրվի անմիջականորեն օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտականությունից բխող պահանջը, թե՞ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը,

			2. արդյոք պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիմքում որպես անվիճելի վճարային պարտավորություն կարող է դրվել օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունն այն դեպքում, երբ իրավասու պետական մարմինը նշված գումարները պարտապանից բռնագանձելու վերաբերյալ օրենքով նախատեսված որոշում չի կայացրել և նշված որոշումը չի դարձել անբողոքարկելի:
15	Թիվ ԵՇԴ/0133/04/14 քաղաքացիական գործով 31.08.2018 թ. որոշում	Օրենքի 3-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկության դիմումի և սնանկ ճանաչելու վճռի հիմքում դրված դատական ակտը բեկանվելու պայմաններում պարտապանի հետագա սնանկության առանձնահատկություններին և սնանկ ճանաչելու վճիռը հետագայում բեկանվելու պայմաններում սնանկության վարույթում կայացված դատական ակտերի, մասնավորապես՝ պահանջների վերջնական ցուցակը հաստատելու որոշման հետագա իրավական գործողության հարցին:
16	Թիվ ԵՇԴ/0078/04/17 քաղաքացիական գործով 07.04.2018 թ. որոշում	Օրենքի 3-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է հետևյալ իրավական հարցադրումներին. 1. արդյոք սնանկության ԺԿ-ն ունի պարտապանին սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին վճիռը բողոքարկելու իրավունք, 2. արդյոք առաջանում է սնանկության ԺԿ վարձատրության հարց այն դեպքերում, երբ սնանկության հիմքերի վերանալու պայմաններում կայացվել է սնանկության դիմումը մերժելու մասին վճիռ:
17	Թիվ ԵԿԴ/0062/04/16 քաղաքացիական գործով 27.12.2017 թ. որոշում	Օրենքի 3-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է այլ քաղաքացիական գործով ցանկացած հիմքով նյութահիրավական վեճի առկայությամբ սնանկության գործով պարտավորության անվիճելիությունը և ըստ այդմ՝ պարտապանին սնանկ ճանաչելու բացառման հնարավորությանը:
18	Թիվ ԿԴ2/0078/04/14 քաղաքացիական գործով 02.12.2016 թ. որոշում	Օրենքի 3-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է պարտապանին հարկադրաբար սնանկ ճանաչելու առանձնահատկություններին, մասնավորապես այն դեպքերին, երբ վճարային պարտավորության անվիճելիությունը հիմնավորվում է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից:

19	Թիվ ԼԴ/0039/04/14 քաղաքացիական գործով 22.07.2016 թ. որոշում	Օրենքի 3-րդ հոդված	ՎԴ-ն իրավական դիրքորոշում է արտահայտել պարբերական վճարումների բռնագանձման վերաբերյալ դատական ակտով պարտապան հանդիսացող անձի մոտ անվիճելի վճարային պարտավորության առկայությունը հաստատված համարելու և պարբերական վճարումների բռնագանձման վերաբերյալ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու իրավական կառուցակարգի վերաբերյալ:
20	Թիվ ՏԴ1/0011/04/12 քաղաքացիական գործով 24.05.2013 թ. որոշում	Օրենքի 3-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է հարկադրված սնանկության դիմումի հիման վրա պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճռի դեմ այլ պարտատիրոջ կողմից՝ որպես գործին մասնակից չդարձված անձ վերաքննիչ բողոք բերելու խնդրին:
21	Թիվ ԵՇԴ/0009/04/12 քաղաքացիական գործով 05.04.2013 թ. որոշում	Օրենքի 3-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկ ճանաչելու պայման հանդիսացող վճարային պարտավորության անվիճելիության հատկանիշի մեկնաբանմանը:
22	Թիվ ԵԿԴ/0060/04/10 քաղաքացիական գործով 27.12.2011 թ. որոշում	Օրենքի 3-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկության գործերով պայմանագրային պարտավորություններին՝ որպես վճարային պարտավորությունների հիմքի, և սնանկության վարույթում դրանց հետ կապված վեճերի լուծման կարգին:
23	Թիվ ԵԿԴ/0074/04/09 քաղաքացիական գործով 01.04.2011 թ. որոշում	Օրենքի 3-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է վճարային պարտավորության վերաբերյալ նյութաիրավական վեճի առկայության պայմաններում սնանկ ճանաչելու հնարավորության իրավական հարցին և վճարային պարտավորության անվիճելիության հատկանիշի մեկնաբանմանը:
24	Թիվ ԵԱՔԴ/0018/04/10 քաղաքացիական գործով 01.04.2011 թ. որոշում	Օրենքի 3-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկ ճանաչելու պայման հանդիսացող վճարային պարտավորության անվիճելիության հատկանիշի մեկնաբանմանը, ինչպես նաև սնանկ ճանաչելու վճիռը պարտապանի կողմից բողոքարկելու իրավունքի ապահովման և դատական ակտի վերանայման հնարավորության խնդրին:
25	Թիվ ԵԿԴ/0137/04/13 քաղաքացիական գործով 18.07.2014 թ. որոշում	Օրենքի 3-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկ ճանաչելու պայման հանդիսացող վճարային պարտավորության անվիճելիության հատկանիշի մեկնաբանմանը:

26	Թիվ ԵՇԴ/0062/04/13 քաղաքացիական գործով 30.04.2015 թ. որոշում	Օրենքի 3-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկ ճանաչելու պայման հանդիսացող վճարային պարտավորության անվիճելիության հատկանիշի մեկնաբանմանը, ինչպես նաև սնանկության վերաբերյալ դիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջներին:
27	Թիվ ԵԿԴ/0090/04/15 քաղաքացիական գործով 07.04.2017 թ. որոշում	Օրենքի 3-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկ ճանաչելու պայման հանդիսացող վճարային պարտավորության անվիճելիության հատկանիշի մեկնաբանմանը:
28	Թիվ ԵԱԴԴ/1345/02/14 քաղաքացիական գործով 06.03.2020 թ. որոշում	Օրենքի 4-րդ հոդված	ՎԴ-ն, վերլուծելով սնանկության գործերով ենթակայության վերաբերյալ իրավակարգավորումները, անդրադարձել է արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում շահագրգիռ անձի՝ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ ներկայացված հայցի քննության ենթակայության հարցին այն դեպքում, երբ արգելանքի տակ գտնվող գույքը ներառված է սնանկության գործով պարտապանի գույքային զանգվածում:
29	Թիվ ԵԱՔԴ/0254/02/16 քաղաքացիական գործով 27.12.2017 թ. որոշում	Օրենքի 4-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է պարտատերերի պահանջների բավարարման սառեցման (մորատորիումի) ընթացքում սնանկ ճանաչված պարտապանի՝ պարտապան հանդիսացող անձի կողմից սնանկ ճանաչված պարտապանի պարտատիրոջը դրամական կամ այլ բավարարում տալու հնարավորության հարցին:
30	Թիվ ԵԿԴ/3928/02/16 քաղաքացիական գործով 04.11.2019 թ. որոշում	Օրենքի 4-րդ հոդված	ՎԴ-ն իրավական դիրքորոշում է արտահայտել սնանկ ճանաչված պարտապանի գույքի վերաբերյալ վեճերի ենթակայության մասին՝ անդրադառնալով սնանկության վարույթի առկայության պայմաններում գրավի առարկան հավասարարժեք գույքով փոխարինելու պահանջը առանձին քաղաքացիական գործի շրջանակներում քննելու խնդրին:
31	Թիվ ՇԴ/0743/02/12 քաղաքացիական գործով 18.07.2014 թ. որոշում	Օրենքի 6-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է պարտատիրոջ՝ ՀՀ կամ համայնքի, դատարան դիմելու պարտականության համատեքստում անդրադարձել է տնտեսվարող սուբյեկտին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելու միջոցով պետության գույքային շահերի պաշտպանության և կանխամտածված սնանկության հետևանքով պետությանը պատճառված վնասի հատուցման իրավահարաբերությունների առանձնահատկություններին:

32	Թիվ ԵՇԴ/0062/04/13 քաղաքացիական գործով 30.04.2015 թ. որոշում	Օրենքի 11-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկ ճանաչելու պայման հանդիսացող վճարային պարտավորության անվիճելիության հատկանիշի մեկնաբանմանը, ինչպես նաև սնանկության վերաբերյալ դիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջներին:
33	Թիվ ԵԿԴ/0238/04/17 սնանկության գործով 09.11.2020 թ. որոշում	Օրենքի 17-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկության գործի վարույթը կարճելու, ինչպես նաև սնանկության դիմումը մերժելու դեպքում սնանկության ԺԿ վարձատրության հարցին:
34	Թիվ ՍՆԴ/1324/04/19 սնանկության գործով 18.09.2020 թ. որոշում	Օրենքի 17-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք սնանկության ԺԿ վարձատրության չափը որոշելու համար պարտապանի եկամուտների վերաբերյալ ապացույցների բացակայությունը կամ դրանց անբավարարությունը կարող է հիմք հանդիսանալ սնանկության ԺԿ վարձատրությունը վճարելու պարտականությունից պարտապանին ազատելու համար, եթե սնանկության դիմումը մերժվել է այն հիմքով, որ դիմումը դատարան ներկայացվելուց հետո պարտքի լրիվ կամ մասնակի մարման հետևանքով պարտապանը դադարել է անվճարունակ լինելուց:
35	Թիվ ԵԱՔԴ/0199/04/15 քաղաքացիական գործով 27.12.2017 թ. որոշում	Օրենքի 17-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է հարկադրված սնանկության դիմումի հիման վրա հարուցված վարույթի մասին պարտապանի պատշաճ ծանուցման հարցին:
36	Թիվ ԵԷԴ/0053/04/14 քաղաքացիական գործով 07.04.2017 թ. որոշում	Օրենքի 17-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է հարկադրված սնանկության դիմումի հիման վրա հարուցված վարույթի մասին պարտապանի պատշաճ ծանուցման հարցին, ինչպես նաև վերջինիս պատշաճ չծանուցելու դեպքում՝ կողմերի իրավահավասարության և մրցակցության դատավարական սկզբունքների խախտման իրավական խնդրին:
37	Թիվ ԱՎԴ/0060/04/12 քաղաքացիական գործով 08.05.2014 թ. որոշում	Օրենքի 17.1-րդ հոդված	ՎԴ-ն իրավական դիրքորոշում է արտահայտել սնանկության գործով կայացված վճիռների ուժի մեջ մտնելու և դրանց բողոքարկման կարգի վերաբերյալ՝ անդրադառնալով նաև դրամական պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար հաշվարկման, վճարման կամ գանձման ենթակա տոկոսների և տուժանքների հաշվարկումն ու գանձումը կասեցվելու կարգին ու ժամկետներին:

38	Թիվ ԵՇԴ/0023/04/13 քաղաքացիական գործով 08.05.2014 թ. որոշում	Օրենքի 19-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է պարտապանին սնանկ ճանաչելու գործի վարույթի կարճման հնարավորության այն դեպքում, երբ նախկինում նույն պարտապանի դեմ սնանկ ճանաչելու պահանջի մասին դիմումը մերժվել է:
39	Թիվ ՇԴ/0016/04/18 սնանկության գործով 31.07.2019 թ. որոշում	Օրենքի 20-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է կամավոր սնանկության դիմումի հիման վրա հարուցված գործով կայացված եզրափակիչ դատական ակտը պարտատիրոջ կողմից բողոքարկելու իրավական հնարավորության հարցին:
40	Թիվ ԵԱՔԴ/0041/04/17 սնանկության գործով 07.06.2019 թ. որոշում	Օրենքի 20-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկության ԺԿ վարձատրության հարցին այն դեպքերում (բողոքարկում), երբ սնանկության հիմքերի վերանալու պայմաններում կայացվել է սնանկության դիմումը մերժելու մասին դատական ակտ:
41	Թիվ ՍԴ2/0037/04/16 սնանկության գործով 19.02.2019 թ. որոշում	Օրենքի 20-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է այն հարցին, թե 09.02.2018 թվականին ընդունված ՔԴՕ ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունելության հարցը լուծելիս կարող են արդյոք կիրառվել 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՔԴՕ նորմերը:
42	Թիվ ԵԿԴ/0011/04/13 քաղաքացիական գործով 17.07.2015 թ. որոշում	Օրենքի 20-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է բողոք բերելու համար սահմանված կարգին, այդ թվում՝ դատական ակտը կողմին ուղարկելու և բողոքը սահմանված ժամկետի բացթողնմամբ ներկայացնելու վերաբերյալ իրավակարգավորումներին:
43	Թիվ ԱՐԴ/0017/04/16 սնանկության գործով 21.07.2020 թ. որոշում	Օրենքի 20-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկության գործով պարտապանի պարտավորության կատարման ապահովման համար գրավադրած գույքի սեփականատիրոջ կողմից սնանկության վճիռը բողոքարկելու իրավական հնարավորության հարցին:
44	Թիվ ԿԴ1/0261/04/16 քաղաքացիական գործով 01.06.2018 թ. որոշում	Օրենքի 20.1-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է անձին սնանկ ճանաչելու մասին օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված հանգամանքները պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելիս պահանջների անվիճելիության համար հիմք հանդիսանալու հնարավորությանը:

45	Թիվ ԿԴ/0261/04/16 քաղաքացիական գործով 01.06.2018 թ. որոշում	Օրենքի 20.1-րդ հոդված	ՎԴ-ն իրավական դիրքորոշում է արտահայտել սնանկության գործի քննության ընթացքում առանձին պարտատիրոջ (պարտատերերի) մասով կայացված սնանկության գործի վարույթը կասեցնելը մերժելու մասին որոշման բողոքարկման հնարավորության վերաբերյալ, միաժամանակ անդրադառնալով նաև առանձին պարտատերերի պահանջների մասով սնանկության գործի վարույթի կասեցման վերաբերյալ իրավակարգավորումներին:
46	Թիվ ԵԿԴ/1126/02/17 քաղաքացիական գործով 16.03.2020 թ. որոշում	Օրենքի 29-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկության գործով կառավարչի մասնակցությամբ գործերով դատական ծախսերի (պետական տուրք) բաշխման իրավական հարցին:
47	Թիվ ԵԿԴ/0298/02/16 քաղաքացիական գործով 30.07.2018 թ. որոշում	Օրենքի 29-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է պարտապանի կողմից իր հետ փոխկապակցված անձանց կատարած անհատույց փոխանցումները որպես պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու մտադրությամբ կատարված ակնհայտորեն վկայող փոխանցումներ գնահատելու խնդրին, ինչպես նաև սնանկության գործով կառավարչի մասնակցությամբ գործերով դատական ծախսերի (պետական տուրք) բաշխման իրավական հարցին:
48	Թիվ ԵԿԴ/0598/02/16 քաղաքացիական գործով 27.12.2017 թ. որոշում	Օրենքի 29-րդ հոդված	ՎԴ-ն կրկին անդրադարձել է պարտապանի կողմից իր հետ փոխկապակցված անձանց կատարած անհատույց փոխանցումները որպես պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու մտադրությամբ կատարված ակնհայտորեն վկայող փոխանցումներ գնահատելու խնդրին և սնանկության գործով կառավարչի մասնակցությամբ գործերով դատական ծախսերի (պետական տուրք) բաշխման իրավական հարցին:
49	Թիվ ԵԿԴ/0282/02/12 քաղաքացիական գործով 29.11.2013 թ. որոշում	Օրենքի 29-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է պարտապանի մասնակցությամբ դատավարություններում սնանկության ԺԿ ներգրավման իրավական խնդրին:
50	Թիվ ԵԱԴԴ/0100/04/17 սնանկության գործով 25.02.2020 թ. որոշում	Օրենքի 30-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է այն հարցադրմանը, արդյո՞ք Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված «պահանջների բավարարման չափ» արտահայտությունը վերաբերում է ՍԿ վարձատրությունը որոշելու պահի դրությամբ արդեն իսկ սնանկության գործով իրականացված պահանջների բավարարման չափին, թե յուրաքանչյուր միջանկյալ բաշխման ծրագրով իրականացված բավարարման չափին:

51	Թիվ ԵՄԴ/0033/04/17 քաղաքացիական գործով 07.04.2018 թ. որոշում	Օրենքի 30-րդ հոդված	ՎԴ-ն իրավական դիրքորոշում է արտահայտել սնանկության գործով կառավարչի կողմից հաստատված և պարտատերերի կողմից ընդունված միջանկյալ բաշխման ծրագրով կառավարչի վարձատրությունը հաշվարկելիս հիմք ընդունվող գործոնների վերաբերյալ:
52	Թիվ ԵԿԴ/0078/04/15 քաղաքացիական գործով 20.07.2017 թ. որոշում	Օրենքի 39-րդ հոդված	ՎԴ-ն իրավական դիրքորոշում է արտահայտել սնանկության վարույթում ապահովված պարտատիրոջ կողմից մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցելու դեպքում այդ կապակցությամբ որոշում կայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:
53	Թիվ ԵԿԴ/5306/02/14 քաղաքացիական գործով 13.01.2016 թ. որոշում	Օրենքի 39-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է պարտապանի նկատմամբ սնանկության վարույթի առկայության պայմաններում գրավով ապահովված պարտատիրոջ կողմից մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցելու դեպքում վերջինիս կողմից իր պահանջների բավարարման համար գրավադրված գույքի վրա դատական կարգով բռնագանձում տարածելու հնարավորության հարցին:
54	Թիվ ԵԿԴ/1873/02/14 քաղաքացիական գործով 28.12.2015 թ. որոշում	Օրենքի 39-րդ հոդված	ՎԴ-ն կրկին անդրադարձել է պարտապանի նկատմամբ սնանկության վարույթի առկայության պայմաններում գրավով ապահովված պարտատիրոջ կողմից մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցելու դեպքում վերջինիս կողմից իր պահանջների բավարարման համար գրավադրված գույքի վրա դատական կարգով բռնագանձում տարածելու հնարավորության հարցին:
55	Թիվ ԵԿԴ/0469/02/14 քաղաքացիական գործով 17.07.2015 թ. որոշում	Օրենքի 39-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է հարցադրմանը, թե արդյո՞ք քաղաքացիական գործի վարույթը երրորդ անձ գրավատուի մասով ևս ենթակա է կարճման Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի հիմքով, եթե պարտատերը մորատորիում չտարածելու վերաբերյալ չի ծանուցել դատարանին, այն դեպքում, երբ գույք հանձնելու հայցապահանջը միաժամանակ ներկայացված է և սնանկ ճանաչված պարտապանին, և նրա պարտավորությունների կատարման ապահովման համար իր գույքը գրավադրած երրորդ անձին:
56	Թիվ ԵԱԴԴ/0199/02/11 քաղաքացիական գործով 17.07.2015 թ. որոշում	Օրենքի 39-րդ հոդված	ՎԴ-ն իրավական դիրքորոշում է արտահայտել գործին մասնակից չդարձված անձանց կողմից բերված բողոքի քննության և լուծման առանձնահատկությունների և մորատորիում տարածելու հնարավորության վերաբերյալ:

57	Թիվ ԵՄԴ/1140/02/12 քաղաքացիական գործով 26.12.2013 թ. որոշում	Օրենքի 39-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է այն հարցադրմանը, արդյոք ամուսիններից մեկի սնանկ ճանաչ-վելուց հետո Օրենսգրքի 201-րդ հոդվածի հիմքով համատեղ սեփականության իրավունքի ճանաչման պահանջ կարող է ներկայացվել դատարան, իսկ ներկայացման դեպքում գործի վարույթը կարող է կարճվել Օրենքի 39-րդ հոդվածի կանոններով:
58	Թիվ 3-1717(ՏԴ) քաղաքացիական գործով 12.12.2007 թ. որոշում	Օրենքի 39-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է պարտատերերի պահանջների բավարարման սառեցման (մորատորիում) գործընթացի առանձնահատ-կություններին:
59	Թիվ 3-1118 (ՏԴ) քաղաքացիական գործով 06.07.2007 թ. որոշում	Օրենքի 39-րդ հոդված	ՎԴ-ն կրկին անդրադարձել է պարտատերերի պահանջների բավարարման սառեցման (մորատորիում) գործընթացի առանձնահատ-կություններին՝ պատասխանելով նաև ան-վճարունակությանը նախորդող ժամանակա-շրջանում հրապարակային սակարկությունների միջոցով վաճառված գույքի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու համար ընկերությանն անվճարունակությունը որպես բավարար հիմք ճանաչելու հնարավորության հարցին:
60	Թիվ ԿԴ1/0082/04/18 սնանկության գործով 10.11.2020 թ. որոշում	Օրենքի 43-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է պարտապան չհան-դիսացող գրավատուի սնանկ ճանաչվելու պարագայում գրավառուի կողմից գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու իրավական հնարավորության հարցին:
61	Թիվ ԵԱԴԴ/0018/04/16 սնանկության գործով 08.05.2020 թ. որոշում	Օրենքի 43-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է «ապահովված իրավուն-քի առարկայի մեկնարկային գին» և «գրավի առարկայի արժեք» հասկացությունների բո-վանդակությանն այն իրավիճակում, երբ պարտատերերի ցուցակում ընդգրկված պար-տատերը միջնորդել է դատարանին որպես սեփականություն իր կամ իր նշած անձի օգտին փոխանցել գրավի առարկան:
62	Թիվ ԵԱՆԴ/0100/04/14 սնանկության գործով 17.01.2020 թ. որոշում	Օրենքի 43-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է պահանջների վերջնա-կան ցուցակում գրանցված՝ գրավով ապա-հովված պահանջի իրավունք ունեցող պարտատիրոջ՝ իր պահանջի կամ դրա մասի չափով դատարանի որոշմամբ որպես սե-փականություն իր կամ իր նշած անձի օգտին գրավի առարկան ստանալու իրավունքի իրացման առանձնահատկություններին:

63	Թիվ ԵԱՔԴ/0462/04/16 սնանկության գործով 27.12.2019 թ. որոշում	Օրենքի 43-րդ հոդված	ՎԴ-ն բացահայտել է «ապահովված իրավունքի առարկայի մեկնարկային գին» և «գրավի առարկայի արժեք» հասկացությունների բովանդակությունն այն իրավիճակում, երբ պարտատերերի ցուցակում ընդգրկված պարտատերը միջնորդել է դատարանին որպես սեփականություն իր կամ իր նշած անձի օգտին փոխանցել գրավի առարկան:
64	Թիվ ԵԱՔԴ/0058/04/16 սնանկության գործով 07.06.2019 թ. որոշում	Օրենքի 43-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմից գույքը հանելու հնարավորությանը, այդ թվում՝ սնանկության վարույթում իրավունքի պետական գրանցում պահանջող գործարքով իրավունքի պետական գրանցման պահանջը չպահպանելու հետևանքներին:
65	Թիվ ԱՎԴ1/0006/04/16 սնանկության գործով 07.06.2019 թ. որոշում	Օրենքի 43-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկության վարույթում գրավատու հանդիսացող երրորդ անձի կողմից իր գույքի վաճառքին վերաբերող գործընթացին մասնակցելու իրական հնարավորության ապահովման հարցին, ինչպես նաև պարտապանին պատկանող գույքի իրացման ընթացակարգային որոշ հարցերի:
66	Թիվ ԵՇԴ/0072/04/17 քաղաքացիական գործով 04.10.2018 թ. որոշում	Օրենքի 43-րդ հոդված	ՎԴ-ն իրավական դիրքորոշում է արտահայտել սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը հաստատելու որոշման դեմ գործին մասնակից չդարձված անձանց կողմից վերաքննիչ բողոք բերելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ, մասնավորապես՝ անդրադառնալով գործին մասնակից չդարձված անձանց, ովքեր ապահովված պարտատիրոջ պահանջն ապահովող գույքի (այդ թվում՝ գրավի առարկա հանդիսացող) սեփականատեր են (այդ թվում՝ գրավատու), պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը բողոքարկելու հնարավորությանը:
67	Թիվ ԵՄԴ/0049/04/15 քաղաքացիական գործով 07.04.2017 թ. որոշում	Օրենքի 43-րդ հոդված	ՎԴ-ն իրավական դիրքորոշում է արտահայտել երաշխավորին սնանկ ճանաչելու իրավական հնարավորության վերաբերյալ՝ անդրադառնալով երաշխավորի պատասխանատվության առանձնահատկություններին, հարկադրված դիմումի հիման վրա պարտապանին սնանկ ճանաչելու պայմաններին և հետևանքներին և հիմնական պարտավորության պարտատիրոջ կողմից այդ պարտավորության կատարումն ապահովող երաշխավորին սնանկ ճանաչելու պահանջ ներկայացնելու հնարավորությանը:

68	Թիվ ԱՐԴ/0068/02/13 քաղաքացիական գործով 17.07.2015 թ. որոշում	Օրենքի 43-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է գրավով ապահովված պարտատիրոջ պահանջների բավարարման առանձնահատկություններին, այդ թվում այն դեպքերին, երբ սնանկ ճանաչված պարտապանի պարտավորությունների ապահովման համար գրավադրվել է երրորդ անձին պատկանող գույք, ինչպես նաև պարտատիրոջ կողմից գրավադրված գույքի վրա բռնագանձում տարածելու՝ արդեն իսկ հարուցված գործի հետագա ճակատագրի հարցին:
69	Թիվ ԵԱՔԴ/0067/04/16 քաղաքացիական գործով 20.07.2017 թ. որոշում	Օրենքի 43-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է հիմնական պարտավորության պարտատիրոջ կողմից այդ պարտավորության կատարումն ապահովող երաշխավորին սնանկ ճանաչելու պահանջ ներկայացնելու հնարավորության հարցին:
70	Թիվ ԵՇԴ/0068/04/16 սնանկության գործով 14.05.2019 թ. որոշում	Օրենքի 39-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկության վարույթի ընթացքում ներկայացված պահանջների հիմնավորվածության և օրինականության սկզբունքի պահպանման կարգին:
71	Թիվ ԵԿԴ/0021/04/12 սնանկության գործով 05.12.2019 թ. որոշում	Օրենքի 46-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկության վարույթում պահանջների հաստատման գործընթացի առանձնահատկություններին:
72	Թիվ ԿԴ/0033/04/13 քաղաքացիական գործով 02.12.2016 թ. որոշում	Օրենքի 46-րդ հոդված	ՎԴ-ն իրավական դիրքորոշում է արտահայտել սնանկության վարույթում ներկայացված պահանջների հիմնավորվածության վերաբերյալ, անդրադառնալով հարցին, թե արդյո՞ք օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայությունը, որով մերժվել է պարտապանից գումար բռնագանձելու հայցապահանջը, կարող է էական նշանակություն ունենալ սնանկության վարույթում ներկայացված նույն պահանջի գրանցման հիմնավորվածությունը պարզելու համար:
73	Թիվ ԿԴ1/1302/02/13 քաղաքացիական գործով 17.07.2015 թ. որոշում	Օրենքի 46-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է պարտավորությունը կամ դրա մի մասը պարտապանի կողմից դատական կարգով վիճարկելու պարագայում սնանկության գործով կայացված «Պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին» որոշմամբ հաստատված հանգամանքները որպես քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքներ, որոնք այլ քաղաքացիական գործ քննելիս ապացուցման կարիք չունեն, դիտարկելու հնարավորության հարցին:

74	Թիվ ԿԴ/0033/04/13 քաղաքացիական գործով 30.04.2015 թ. որոշում	Օրենքի 46-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է պարտապանի՝ սնանկության գործով պարտատերերի պահանջների նախնական ցուցակի դեմ առարկություններ ներկայացնելու իրավունքի իրացման խնդրին:
75	Թիվ ԵՇԴ/0045/04/09 քաղաքացիական գործով 04.03.2011 թ. որոշում	Օրենքի 46-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկության վարույթում պահանջների հաստատման գործընթացի առանձնահատկություններին:
76	Թիվ ՍՆԴ/0725/04/19 սնանկության գործով 08.05.2020 թ. որոշում	Օրենքի 47-րդ հոդված	ՎԴ-ն իրավական դիրքորոշում է արտահայտել պարտավորությանը չմասնակցող երրորդ անձ գրավատուին սնանկ ճանաչելու դեպքում գրավառուի իրավունքների սահմանափակման վերաբերյալ՝ անդրադառնալով սնանկ ճանաչված գրավատուի կողմից գրավադրված գույքի վրա երրորդ անձ պարտապանի կետանցված պարտավորություններով բռնագանձում տարածելու իրավական խնդրին:
77	Թիվ ԿԴ1/0088/04/18 սնանկության գործով 06.04.2020 թ. որոշում	Օրենքի 47-րդ հոդված	ՎԴ-ն կրկին իրավական դիրքորոշում է արտահայտել պարտավորությանը չմասնակցող երրորդ անձ գրավատուին սնանկ ճանաչելու դեպքում գրավառուի իրավունքների սահմանափակման վերաբերյալ՝ անդրադառնալով սնանկ ճանաչված գրավատուի կողմից գրավադրված գույքի վրա երրորդ անձ պարտապանի կետանցված պարտավորություններով բռնագանձում տարածելու իրավական խնդրին:
78	Թիվ ԵԱՔԴ/0231/04/16 քաղաքացիական գործով 23.07.2021 թ. որոշում	Օրենքի 47-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկ ճանաչված պարտապանի կողմից ինքնուրույն իր անունից իր դատավարական իրավունքներն ու պարտականությունները իրացնելու հնարավորության հարցին:
79	Թիվ ԵԿԴ/0298/02/16 քաղաքացիական գործով 30.07.2018 թ. որոշում	Օրենքի 54-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է պարտապանի կողմից իր հետ փոխկապակցված անձանց կատարած անհատույց փոխանցումները որպես պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու մտադրությամբ կատարված ակնհայտորեն վկայող փոխանցումներ գնահատելու խնդրին, ինչպես նաև սնանկության գործով կառավարչի մասնակցությամբ գործերով դատական ծախսերի (պետական տուրք) բաշխման իրավական հարցին:

80	Թիվ ԵԿԴ/0598/02/16 քաղաքացիական գործով 27.12.2017 թ. որոշում	Օրենքի 54-րդ հոդված	ՎԴ-ն կրկին անդրադարձել է պարտապանի կողմից իր հետ փոխկապակցված անձանց կատարած անհատույց փոխանցումները որպես պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու մտադրությամբ կատարված ակնհայտորեն վկայող փոխանցումներ գնահատելու խնդրին և սնանկության գործով կառավարչի մասնակցությամբ գործերով դատական ծախսերի (պետական տուրք) բաշխման իրավական հարցին:
81	Թիվ ԵԱՆԴ/1684/02/15 քաղաքացիական գործով 13.03.2017 թ. որոշում	Օրենքի 54-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է պարտապանի կատարած անհատույց փոխանցումներով սնանկության գործով կառավարչին տրված լիազորությունն իրականացնելու համար գործարքի կեղծ լինելն ապացուցելու անհրաժեշտության, ինչպես նաև ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձի կողմից տվյալ գործի շրջանակներում հակընդդեմ հայց ներկայացնելու հանարավորության հարցերին:
82	Թիվ ԿԴ1/0935/02/14 քաղաքացիական գործով 22.07.2016 թ. որոշում	Օրենքի 54-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է կեղծ գործարքի իրավական բնույթին՝ դիտարկելով այն նաև Օրենքի 54-րդ հոդվածի կարգավորումների համատեքստում:
83	Թիվ ԵԿԴ/1446/02/13 քաղաքացիական գործով 28.12.2015 թ. որոշում	Օրենքի 54-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է բանկի կամ վարկային կազմակերպության ապահովված պահանջների բավարարման համար գույքի հետ կապված գործարքների կատարման արդյունքում փոխանցումների առանձնահատկություններին:
84	Թիվ ԵՔԴ/1165/02/08 քաղաքացիական գործով 19.10.2012 թ. որոշում	Օրենքի 54-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է երրորդ անձանց կատարված փոխանցումները հետ ստանալու կառավարչի իրավունքի առանձնահատկություններին:
84	Թիվ ԵՔԴ/1165/02/08 քաղաքացիական գործով 19.10.2012 թ. որոշում	Օրենքի 54-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է երրորդ անձանց կատարված փոխանցումները հետ ստանալու կառավարչի իրավունքի առանձնահատկություններին:
85	Թիվ ԵԿԴ/2304/02/10 քաղաքացիական գործով 23.03.2012 թ. որոշում	Օրենքի 54-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է երրորդ անձանց կատարված փոխանցումները հետ ստանալու կառավարչի իրավունքի առանձնահատկություններին:

86	Թիվ ԵԿԴ/3660/02/14 քաղաքացիական գործով 14.08.2020 թ. որոշում	Օրենքի 59-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակում վարկատուի կողմից վարկավորումից հրաժարվելու դեպքում սնանկ ճանաչված վարկառուի՝ վարկային պայմանագրով նախատեսված պարտավորությունները վարկատուին կատարել պարտավորեցնելու պահանջի իրավունքի հնարավորության հարցին:
87	Թիվ ԵԷԴ/0057/04/15 սնանկության գործով 27.05.2020 թ. որոշում	Օրենքի 59-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է ֆինանսական առողջացման ծրագրի հաստատման փուլում պարտապանի համար ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված գործողությունների պարտադիրության հարցին:
88	Թիվ ՇԴ/0031/04/13 քաղաքացիական գործով 30.04.2015 թ. որոշում	Օրենքի 62-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկության վարույթի շրջանակներում ֆիզիկական անձի ֆինանսական առողջացման ծրագրի դեմ առարկություն ներկայացնելու ժամկետների խնդրին:
89	Թիվ ԱՐԱԴ/0043/04/13 քաղաքացիական գործով 27.12.2017 թ. որոշում	Օրենքի 69-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է դատարանի կողմից ֆինանսական առողջացման ծրագրի կատարման վերաբերյալ հաշվետվության հաստատումը մերժելու և պարտապանին լուծարելու վերաբերյալ որոշում կայացնելու իրավասությանը այն դեպքում, եթե սնանկության վարույթի մասնակիցները միջնորդել են կասեցնել կամ առանց քննության թողնել ֆինանսական առողջացման ծրագրի կատարման վերաբերյալ սնանկության գործով կառավարչի հաշվետվության քննարկումը:
90	Թիվ ԵԿԴ/1791/02/11 քաղաքացիական գործով 30.04.2015թ. որոշում	Օրենքի 70-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկության գործերով Օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ընդհանուր համատեղ սեփականության իրավական ռեժիմի կիրառման առանձնահատկություններին:
91	Թիվ ԵԱՔԴ/0119/04/17 սնանկության գործով 25.07.2019թ. որոշում	Օրենքի 70-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է պարտապանի մոտ ստուգում կամ ուսումնասիրություն իրականացնելու իրավական կարգավորումներին և պարտապանի մոտ ստուգում կամ ուսումնասիրություն իրականացնելու թույլտվության մասին դեռևս չկատարված որոշման առկայության պայմաններում պարտապանի լուծարման վարույթ սկսելու իրավական հնարավորության հարցին:

92	Թիվ ԵԿԴ/0018/04/10 քաղաքացիական գործով 27.12.2011թ. որոշում	Օրենքի 71-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկության հետեվանքով իրավաբանական անձի լուծարման գործընթացի առանձնահատկություններին:
93	Թիվ ԵՇԴ/0111/04/16 սնանկության գործով 02.08.2019թ. որոշում	Օրենքի 75-րդ հոդված	ՎԴ-ն իրավական դիրքորոշում է արտահայտել սնանկության վարույթում պարտապանի գույքի վաճառքի ծրագիրն առանց պարտատերերի ժողովի կողմից որոշման կայացման դատարանի հաստատմանը ներկայացնելու, ինչպես նաև պարտապանի գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու միջնորդությունը քննարկելու հարցի կապակցությամբ:
94	Թիվ ԵԿԴ/0059/04/16 սնանկության գործով 18.12.2019թ. որոշում	Օրենքի 75-րդ հոդված	ՎԴ-ն իրավական դիրքորոշում է արտահայտել պարտապանին պատկանող գույքի վաճառքն ուղղակի գործարքով իրականացնելու ընթացակարգային որոշ հարցերի վերաբերյալ:
95	Թիվ ԵԱՔԴ/0009/04/16 սնանկության գործով 07.12.2018թ. որոշում	Օրենքի 75-րդ հոդված	ՎԴ-ն իրավական դիրքորոշում է արտահայտել սնանկության գործով կառավարչի կողմից աճուրդի արդյունքները վիճարկելու իրավունք ունենալու վերաբերյալ, ինչպես նաև անդրադարձել է սնանկության գործով աճուրդին մասնակցելու լիազորություն տալու կապակցությամբ փաստաբանին տրված լիազորագիրը նաև որպես դատական ներկայացուցչություն իրականացնելու լիազորագիր մեկնաբանվելու հնարավորության հարցին:
96	Թիվ ԱՎԴ/0006/04/16 սնանկության գործով 07.06.2019թ. որոշում	Օրենքի 76-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է պարտապանին պատկանող գույքի իրացման ընթացակարգային որոշ հարցերի, ինչպես նաև սնանկության վարույթում գրավատու հանդիսացող երրորդ անձի կողմից իր գույքի վաճառքին վերաբերող գործընթացին մասնակցելու իրական հնարավորության ապահովման հարցին:
97	Թիվ ԵԿԴ/0217/04/16 սնանկության գործով 10.01.2019թ. որոշում	Օրենքի 80-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է պարտապանի գույքի իրացումից ստացված միջոցները բաշխելու հարցին, մասնավորապես՝ սնանկության գործով միջանկյալ բաշխման ծրագրով կառավարչի վարձատրության հաշվարկման առանձնահատկություններին:
98	Թիվ ԵԿԴ/0623/04/16 սնանկության գործով 05.11.2020թ. որոշում	Օրենքի 80-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկության գործով գրանցված պարտատերերի կողմից վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու իրավունքի իրացման ապահովման խնդրին՝ պարտապանի գույքի իրացումից ստացված միջոցները բաշխելու գործընթացի շրջանակներում:

99	Թիվ ԵԿԴ/0126/04/15 սնանկության գործով 17.04.2019թ. որոշում	Օրենքի 80-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է այն հարցին, թե արդյո՞ք սնանկության գործով կառավարիչը պարտապանի գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցներից գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերի վճարումը, կառավարչի վարձատրությունը և ապահովված պարտատիրոջ պահանջները չբավարարելու պայմաններում իրավասու է այդ միջոցներն ուղղելու այլ վճարների կատարմանը:
100	Թիվ ԱՐԱԴ/0010/04/15 սնանկության գործով 25.03.2019թ. որոշում	Օրենքի 80-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է այն հարցին, թե արդյո՞ք սնանկության գործով կառավարիչը պարտապանի գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցներից գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերի վճարումը, կառավարչի վարձատրությունը և ապահովված պարտատիրոջ պահանջները չբավարարելու պայմաններում իրավասու է այդ միջոցներն ուղղելու այլ վճարների կատարմանը:
101	Թիվ ԵՄԴ/0047/04/15 քաղաքացիական գործով 15.11.2018թ. որոշում	Օրենքի 80-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկության գործով միջանկյալ բաշխման ծրագրով կառավարչի վարձատրության հաշվարկման առանձնահատկություններին:
102	Թիվ ԳԴ/0017/04/15 սնանկության գործով 08.07.2020թ. որոշում	Օրենքի 82-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկության դիմումի համար նախատեսված պետական տուրքի մասով պահանջի բավարարման հերթի և գրանցված պահանջի փոփոխության հնարավորության առանձնահատկություններին:
103	Թիվ ԵԿԴ/0103/04/11 քաղաքացիական գործով 05.04.2013թ. որոշում	Օրենքի 82-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկության գործով չապահովված պահանջների բավարարման հերթականության առանձնահատկություններին:
104	Թիվ ԵՄԴ/0006/04/10 քաղաքացիական գործով 19.10.2012թ. որոշում	Օրենքի 82-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկության գործով չապահովված պահանջների բավարարման հերթականության առանձնահատկություններին:
105	Թիվ ԵԱՆԴ/0003/04/09 քաղաքացիական գործով 27.05.2011թ. որոշում	Օրենքի 82-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է սնանկության գործով չապահովված պահանջների բավարարման հերթականության առանձնահատկություններին:

106	Թիվ ՍնԴ/1735/04/19 քաղաքացիական գործով 11.06.2021թ. որոշում	Օրենքի 82-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է «դատական ծախսեր» հասկացությունը մեկնաբանմանը:
107	Թիվ ԵԿԴ/0090/04/13 սնանկության գործով 13.07.2021թ. որոշում	Օրենքի 87-րդ հոդված	ՎԴ-ն անդրադարձել է գրավի առարկայի նկատմամբ մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցած ապահովված պարտատիրոջ կողմից գրավի առարկան դեռևս չիրացված լինելու պայմաններում սնանկության գործի վարույթն ավարտելու հնարավորության հարցին:
108	Թիվ ԱՎԴ/0060/04/17 սնանկության գործով 05.06.2020թ. որոշում	Օրենքի 96-րդ հոդված	ՎԴ-ն իրավական դիրքորոշում է արտահայտել պարտապանին պատկանող բռնագանձման ոչ ենթակա գույքի առանձնահատկությունների վերաբերյալ:

ԿԱՄԱՎՈՐ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ

1. Դիմում ներկայացնող անձ՝

☐ ֆիզիկական անձ

☐ իրավաբանական անձ

2. Դիմումի և կից փաստաթղթերի լեզու՝

☐ հայերեն

☐ այլ լեզվով՝ հայերեն պատշաճ թարգմանությամբ

3.1. Ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) դիմումի մեջ պարտադիր նշվող տվյալներ՝

☐ դատարանի անվանում

☐ դիմումատուի անուն[274],

☐ դիմումատուի պետական հաշվառման համար (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում)

☐ դիմումատուի հաշվառման վայրի հասցե

☐ դիմումատուի ծանուցման հասցե (եթե տարբերվում է հաշվառման վայրի հասցեից)

☐ դիմումատուի անձը հաստատող փաստաթղթի տվյալներ

☐ պարտավորության չափ, պարտքի, վնասների, տուժանքի (տուգանքի, տույժի) չափեր՝ համապատասխան հաշվարկներով

---

[274] Ներառում է անունը, ազգանունը, իսկ ՀՀ քաղաքացիների դեպքում՝ նաև հայրանունը:

☐ փաստեր պարտավորությունների գոյության և դրանք մարելու հնարավորության բացակայության վերաբերյալ

☐ առաջարկ՝ ժամանակավոր կառավարչի թեկնածության կամ համաձայնություն՝ ընտրությունը դատարանին թողնելու վերաբերյալ

☐ դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկ

3.2. Իրավաբանական անձի դիմումի մեջ պարտադիր նշվող տվյալներ՝

☐ դատարանի անվանում

☐ դիմումատուի անվանում

☐ դիմումատուի գտնվելու վայրի հասցե

☐ դիմումատուի ծանուցման հասցե (եթե տարբերվում է գտնվելու վայրի հասցեից)

☐ դիմումատուի պետական գրանցման համար

☐ ներկայացուցչի անուն[275], պաշտոնատար անձի դեպքում՝ նաև պաշտոն

☐ ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի տվյալներ

☐ ներկայացուցչի ծանուցման հասցե

☐ պարտավորության չափ, պարտքի, վնասների, տուժանքի (տուգանքի, տույժի) չափեր՝ համապատասխան հաշվարկներով

☐ փաստեր պարտավորությունների գոյության և դրանք մարելու հնարավորության բացակայության վերաբերյալ

☐ առաջարկ՝ ժամանակավոր կառավարչի թեկնածության կամ համաձայնություն՝ ընտրությունը դատարանին թողնելու վերաբերյալ

☐ դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկ

---

[275] Ներառում է անունը, ազգանունը, իսկ ՀՀ քաղաքացիների դեպքում՝ նաև հայրանունը:

4. Դիմումի մեջ նշվող ոչ պարտադիր տվյալներ՝

- ☐ կիրառման ենթակա իրավական նորմեր
- ☐ ապացույցներ, որոնք հաստատում են դիմումի հիմքում դրված փաստերը
- ☐ միջնորդություններ
- ☐ այլ տեղեկություններ, որոնք նշանակություն ունեն դիմումի քննության և սնանկության հարցի լուծման համար
- ☐ էլեկտրոնային հաղորդակցության միջոցների վերաբերյալ տեղեկություններ

5.1. Ֆիզիկական անձի դիմումին կցվող փաստաթղթեր՝

- ☐ դիմումատուի անձը հաստատող փաստաթղթի պատճեն
- ☐ ժամանակավոր կառավարչի թեկնածության առաջարկ ներկայացնելու դեպքում՝ այդ թեկնածուի գրավոր համաձայնությունը՝ որպես ժամանակավոր կառավարչի թեկնածու հանդես գալու վերաբերյալ
- ☐ դիմումատուին սեփականության իրավունքով պատկանող գույքի ցանկ՝ համաձայն վերջին գույքագրման արդյունքների (առկայության դեպքում)
- ☐ դիմումատուի պարտատերերի և պարտապանների (այդ թվում՝ այն քաղաքացիների, որոնց առջև պարտապանը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին և առողջությանը վնաս պատճառելու համար) ցուցակ, նրանց անուններ (անվանումներ), բնակության (գտնվելու) վայր և առանձին պարտավորությունների, ներառյալ՝ արտահաշվեկշռային պարտավորությունների բնույթ և չափ[276]
- ☐ հայտարարություն՝ ֆինանսական առողջացման մտադրության մասին
- ☐ ֆինանսական առողջացման ծրագիր (առկայության դեպքում)

---

[276] Նշված տեղեկությունները պետք է ներառեն նաև այն պարտավորությունները, որոնց ժամկետը չի լրացել, ինչպես նաև պարտապանի տված երաշխիքները և ստանձնած այլ պարտավորությունները:

- ☐ տեղեկություններ (ապացույցներ) այլ գույքային իրավունքների մասին
- ☐ ապացույցներ դիմումի և կից փաստաթղթերի պատճենները բոլոր պարտատերերին ուղարկելու մասին
- ☐ հիմնավորում փաստաթղթերի ներկայացման անհնարինության վերաբերյալ

5.2. Իրավաբանական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) դիմումին կցվող փաստաթղթեր՝

- ☐ դիմումը ներկայացնելու օրվան նախորդող 30 օրից ոչ ավելի վաղեմություն ունեցող պետական գրանցման տվյալներ
- ☐ ժամանակավոր կառավարչի թեկնածության առաջարկ ներկայացնելու դեպքում՝ այդ թեկնածուի գրավոր համաձայնությունը՝ որպես ժամանակավոր կառավարչի թեկնածու հանդես գալու վերաբերյալ
- ☐ դիմումատուին սեփականության իրավունքով պատկանող գույքի ցանկ՝ համաձայն վերջին գույքագրման արդյունքների (առկայության դեպքում), ներառյալ՝ կապիտալ և ֆինանսական ներդրումներ, հիմնական և շրջանառու միջոցներ, ինչպես նաև ոչ նյութական ակտիվներ և նշված կազմին չպատկանող այլ միջոցներ, գույքի բացակայության դեպքում՝ համապատասխան ապացույցներ
- ☐ դիմումատուի պարտատերերի և պարտապանների (այդ թվում՝ այն քաղաքացիների, որոնց առջև պարտապանը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին և առողջությանը վնաս պատճառելու համար) ցուցակ, նրանց անուններ (անվանումներ), բնակության (գտնվելու) վայր և առանձին պարտավորությունների, ներառյալ՝ արտահաշվեկշռային պարտավորությունների բնույթ և չափ[277]

[277] Նշված տեղեկությունները պետք է ներառեն նաև այն պարտավորությունները, որոնց ժամկետը չի լրացել, ինչպես նաև պարտապանի տված երաշխիքները և ստանձնած այլ պարտավորությունները:

- ☐ հայտարարություն՝ ֆինանսական առողջացման մտադրության մասին
- ☐ ֆինանսական առողջացման ծրագիր (առկայության դեպքում)
- ☐ դիմումատուի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններ
- ☐ մասնակիցների (լիակատար ընկերների) անուններ (անվանումներ), բնակության (գտնվելու) վայր և պետական գրանցման տվյալներ՝ տնտեսական ընկերակցության դեպքում
- ☐ տեղեկություններ (ապացույցներ) այլ գույքային իրավունքների մասին
- ☐ ապացույցներ դիմումի և կից փաստաթղթերի պատճենները բոլոր պարտատերերին ուղարկելու մասին
- ☐ հիմնավորում փաստաթղթերի ներկայացման անհնարինության վերաբերյալ

6. Փաստաթղթերի ձևը՝

- ☐ բնօրինակ
- ☐ պատշաճ վավերացված պատճեն
- ☐ հիմնավորում բնօրինակները կամ պատշաճ վավերացված պատճենը ներկայացնելու անհնարինության վերաբերյալ

7. Դիմումը՝

- ☐ ստորագրված է դիմումատուի կողմից
- ☐ ստորագրված է ներկայացուցչի կողմից
- ☐ ստորագրված չէ

8. Ներկայացուցչի լիազորությունը հավաստող փաստաթուղթը և անձը հաստատող փաստաթղթի պատճենը՝

- ☐ կցված է
- ☐ կցված չէ
- ☐ անհրաժեշտ չէ

ՀԱՎԵԼՎԱԾ 2.

ՀԱՐԿԱԴՐՎԱԾ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ

1. Դիմում ներկայացրած պարտատերերի քանակ

- ☐ մեկ
- ☐ մեկից ավելի՝ համատեղ

2. Դիմում ներկայացնող անձ՝

- ☐ ֆիզիկական անձ
- ☐ իրավաբանական անձ
- ☐ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին

3. Դիմումի և կից փաստաթղթերի լեզու՝

- ☐ հայերեն
- ☐ այլ լեզվով՝ հայերեն պատշաճ թարգմանությամբ

4.1. Ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) դիմումի մեջ պարտադիր նշվող տվյալներ՝

- ☐ դատարանի անվանում
- ☐ դիմումատուի անուն[278]
- ☐ դիմումատուի հաշվառման համար (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում)

---

[278] Ներառում է անունը, ազգանունը, իսկ ՀՀ քաղաքացիների դեպքում՝ նաև հայրանունը:

- ☐ դիմումատուի հաշվառման վայրի հասցե
- ☐ դիմումատուի ծանուցման հասցե (եթե տարբերվում է հաշվառման վայրի հասցեից)
- ☐ դիմումատուի անձը հաստատող փաստաթղթի տվյալներ
- ☐ պարտապանի անուն (անվանում), հաշվառման (գտնվելու) վայրի հասցե,
- ☐ պարտապանի բնակվելու վայրի հասցե (հաշվառման վայր չունենալու դեպքում)
- ☐ փաստեր, որոնց վրա հիմնվում է պահանջը
- ☐ դրամական պահանջի չափ, պարտքի, վնասների, տուժանքի (տուգանքի, տույժի) չափեր՝ համապատասխան հաշվարկներով
- ☐ պարտավորության կամ դրա մասի (մասերի) կատարման ժամկետ
- ☐ առաջարկ՝ ժամանակավոր կառավարչի թեկնածության կամ համաձայնություն՝ ընտրությունը դատարանին թողնելու վերաբերյալ
- ☐ դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկ

4.2. Իրավաբանական անձի դիմումի մեջ պարտադիր նշվող տվյալներ՝

- ☐ դիմումատուի անվանում
- ☐ դիմումատուի գտնվելու վայրի հասցե
- ☐ դիմումատուի ծանուցման հասցե (եթե տարբերվում է
- ☐ գտնվելու վայրի հասցեից)
- ☐ դիմումատուի անձի պետական գրանցման համար
- ☐ ներկայացուցչի անուն[279], պաշտոնատար անձի դեպքում՝ նաև պաշտոն

[279] Ներառում է անունը, ազգանունը, իսկ ՀՀ քաղաքացիների դեպքում՝ նաև հայրանունը:

- ☐ ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի տվյալներ
- ☐ ներկայացուցչի ծանուցման հասցե
- ☐ պարտապանի անուն (անվանում), հաշվառման (գտնվելու) վայրի հասցե,
- ☐ պարտապանի բնակվելու վայրի հասցե (հաշվառման վայր չունենալու դեպքում)
- ☐ փաստեր, որոնց վրա հիմնվում է պահանջը
- ☐ դրամական պահանջի չափ, պարտքի, վնասների, տուժանքի (տուգանքի, տույժի) չափեր՝ համապատասխան հաշվարկներով
- ☐ պարտավորության կամ դրա մասի (մասերի) կատարման ժամկետ
- ☐ առաջարկ՝ ժամանակավոր կառավարչի թեկնածության կամ համաձայնություն՝ ընտրությունը դատարանին թողնելու վերաբերյալ
- ☐ դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկ

5. Դիմումի մեջ նշվող ոչ պարտադիր տվյալներ՝

- ☐ կիրառման ենթակա իրավական նորմեր
- ☐ ապացույցներ, որոնք հաստատում են դիմումի հիմքում դրված փաստերը
- ☐ միջնորդություններ
- ☐ այլ տեղեկություններ, որոնք նշանակություն ունեն դիմումի քննության և սնանկության հարցի լուծման համար
- ☐ էլեկտրոնային հաղորդակցության միջոցների վերաբերյալ տեղեկություններ

6.1. Ֆիզիկական անձի դիմումին կցվող փաստաթղթեր՝

- ☐ դիմումատուի անձը հաստատող փաստաթղթի պատճեն
- ☐ ժամանակավոր կառավարչի թեկնածության առաջարկ ներկայացնելու դեպքում՝ այդ թեկնածուի գրավոր համաձայնությունը՝ որպես ժամանակավոր կառավարչի թեկնածու հանդես գալու վերաբերյալ
- ☐ դիմումի օրինակ և դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի պատճեններ՝ պարտապանների թվին համապատասխան
- ☐ միջնորդություն՝ դիմումը նաև որպես պահանջ դիտարկելու վերաբերյալ (ցանկության դեպքում) և
- ☐ դիմումը համապատասխանում է նաև «Սնանկության մասին» օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջներին
- ☐ կցված է դիմումի և կից փաստաթղթերի ևս երկու օրինակ

6.2. Իրավաբանական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) դիմումին կցվող փաստաթղթեր՝

- ☐ դիմումը ներկայացնելու օրվան նախորդող 30 օրից ոչ ավելի վաղեմություն ունեցող պետական գրանցման տվյալներ
- ☐ ժամանակավոր կառավարչի թեկնածության առաջարկ ներկայացնելու դեպքում՝ այդ թեկնածուի գրավոր համաձայնությունը՝ որպես ժամանակավոր կառավարչի թեկնածու հանդես գալու վերաբերյալ
- ☐ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող պարտապանի ներկայացրած վերջին հարկային հաշվարկները (եթե դիմումատուն Պետական եկամուտների կոմիտեն է)
- ☐ դիմումի օրինակ և դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի պատճեններ՝ պարտապանների թվին համապատասխան
- ☐ միջնորդություն՝ դիմումը նաև որպես պահանջ դիտարկելու վերաբերյալ (ցանկության դեպքում) և

☐ դիմումը համապատասխանում է նաև «Սնանկության մասին» օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջներին

☐ կցված է դիմումի և կից փաստաթղթերի ևս երկու օրինակ

7. Փաստաթղթերի ձևը՝

☐ բնօրինակ

☐ պատշաճ վավերացված պատճեն

☐ հիմնավորում բնօրինակները կամ պատշաճ վավերացված պատճենը ներկայացնելու անհնարինության վերաբերյալ

8. Դիմումը՝

☐ ստորագրված է դիմումատուի կողմից

☐ ստորագրված է ներկայացուցչի կողմից

☐ ստորագրված չէ

9. Ներկայացուցչի լիազորությունը հավաստող փաստաթուղթը և անձը հաստատող փաստաթղթի պատճենը՝

☐ կցված է

☐ կցված չէ

☐ անհրաժեշտ չէ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ԹԻՎ _____

Աճուրդի անցկացման օրը, ժամը և վայրը – _____ 20 թ., ժ ___ / ___, ք.Երևան, Արշակունյաց 5 (311 լսարան)

Աճուրդի ձևը - բաց դասական (գնի ավելացման) եղանակով

Աճուրդի կազմակերպիչ – թիվ _____ սնանկության գործով պարտապան _____-ի սնանկության գործով կառավարիչ _____, /որակավորման վկայականի համար՝ _____, հաշվառման համար՝ _____, հասցե՝ _____

Աճուրդի հաղթող - _____ /անձը հաստատող փաստաթուղթ՝ _____, հասցե՝ _____

1. Աճուրդի կազմակերպիչը և աճուրդի հաղթողը ստորագրում են սույն արձանագրությունն այն մասին, որ աճուրդի հաղթողը ստորև նշված լոտ(եր)ի համար առաջարկել է ամենաբարձր գինը՝ լոտի գնման գինը և հաղթել է այդ լոտ(եր)ի աճուրդում.

Լոտի նկարագիրը՝

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Լոտի վաճառքի գինը՝

_____

_____

2. Աճուրդի հաղթողը հաստատում է, որ նախքան աճուրդը հնարավորություն է ունեցել ծանոթանալ աճուրդի կանոնակարգին և աճուրդի անցկացման պայմաններին (դրանց էլետրոնային տարբերակի հասցեն տեղադրված է աճուրդի մասին հայտարարությունում), ունի անհրաժեշտ և բավարար տեղեկատվություն գույքի վերաբերյալ, ունեցել է անհրաժեշտ և բավարար հնարավորություն գույքն ուսումնասիրելու համար, կառավարիչը մինչև աճուրդը սկսելը տվել է անհրաժեշտ և բավարար տեղեկատվություն աճուրդի կանոնակարգի և պայմանների վերաբերյալ, աճուրդի կազմակերպման և անցկացման, ինչպես նաև սույն արձանագրությունում նշված լոտ(եր)ի որևէ (ցանկացած) բնութագրիչի հետ կապված որևէ առարկություն չունի:

3. Աճուրդի հաղթողը պարտավորվում է սույն արձանագրությունն ստորագրելու օրվանից 10 (տասը) օրվա ընթացքում աճուրդի հայտարարության մեջ նշված բանկային հաշվեհամարին (սնանկության հատուկ դրամային հաշվին) վճարել լոտ(եր)ի գնման գնի և մուծված նախավճարի տարբերությունը:

4. Կետ 3-ում նշված ժամկետում մնացած գումարը չմուծվելու դեպքում նախավճարը չի վերադարձվում և մնում է անվճարունակության հատուկ հաշվում, իսկ տվյալ լոտի մասով աճուրդը համարվում է չկայացած:

5. Կառավարիչը պարտավորվում է գույքի նկատմամբ կիրառված արգելանքներն ու սահմանափակումները (առկայության դեպքում) վերացվելուց և աճուրդի հաղթողի կողմից գնման գինն ամբողջությամբ մուծելուց և առուվաճառքի պայմանագիր կնքելու համար բոլոր խոչընդոտները վերանալուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում աճուրդում հաղթողի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:

Ծանոթություն. սույն արձանագրությունը կազմված է երեք օրինակից, երկու օրինակ մնում է աճուրդի կազմակերպչի, իսկ մեկ օրինակ՝ աճուրդի հաղթողի մոտ:

Աճուրդի կազմակերպիչ	Աճուրդի հաղթող
_____	_____
_____	_____

ԳՐԱՆՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ

ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ԱՌԱՋԻՆ / ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ

Պարտապան՝ _____

Ժողովի անցկացման վայրը՝ _____

Ժողովի անցկացման ամսաթիվը և ժամը՝ _____

Ժողովին մասնակցելու համար գրանցվել են.

1. _____
2. _____
3. _____
4. _____

Սնանկության գործով կառավարիչ՝

_____

ԱՆՁՆԱԳԻՐ
ԹԻՎ _____ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻ

Պարտապան՝ _____

Անձը հաստատող փաստաթուղթ՝ _____

ՀՎՀՀ, պետական գրանցման համար՝ _____

Հեռախոսահամար՝ _____

Հասցե՝ _____

Սնանկության հատուկ հաշիվ՝ _____,
բացված՝ _____ /_____ 20___թ.

Այլ՝ _____
_____
_____
_____

Գործ թիվ _____,
դատավոր _____

Սնանկ. մասին վճիռ _____ /_____ 20___թ. հայտարարություն _____ /_____ 20___թ, /www.azdarar.am.՝ _____ /

Առաջին ծանուցում պարտապանին (ՊՊ) _____ /_____ 20___թ.

Հարցումներ գույքի հայտնաբերման համար

	ՊՊ ……/…… 20…թ.	**Ամուսին ……/…… 20…թ.**	**Այլ նշումներ**
	Գույք առկա է/ առկա չէ	Գույք առկա է/ առկա չէ	
Կադաստրի կոմիտե			
ՃՈ			
ՀՀ էկոնոմ. նախ.			
ՀՀ ՊԵԿ			
ՀՀ ՏԿԵՆ			
ՀՀ արտ.իրավ. նախ.			
ՀՀ ԱՆ /ՔԿԱԳ/			

Պահանջների գրանցում

ՊՏ	Պահանջի չափ	Հերթ	Այլ նշումներ	3-րդ անձ գրավատու

Նախնական ցուցակ _____ /_____ 20___թ., www.azdarar.am.՝ _____,
Վերջնական ցուցակ _____ /_____ 20___թ.,

Պարտատերի 1-ին ժողով ____ /____ 20___թ.,

Ֆինանսական առողջացման ծրագիր

Լուծարման միջնորդություն ____ /____ 20___թ.,
դատարանի որոշում ____/____20___թ., www.azdarar.am.՝ _____,
թերթ ____ /____ 20___թ.

ՊԵԿ լիազոր՝ ____ /____ 20___թ.,

Գույքագրում ____ /____ 20___թ.,

ՊՊ հայտ. ____ /____ 20___թ., **ՊՊ տրամադրած փաստաթղթեր**

Ֆին. վիճակի վերլուծություն ____ /____ 20___թ.,

Հետախուզման միջնորդություն ____ /____ 20___թ., տնօրեն (...), գույք (...), դրամ (...), այլ ակտիվներ (...), հաշվ. և այլ փաստ. (...)

Երաշխավորներ

Հայց (երաշխավոր)

Գրավատուներ

Հայցեր «Սնանկության մասին» օրենքի 54-րդ հոդվածով

Այլ հայցեր

ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱԿՏ

թիվ _____ սնանկության գործով

_____ 20___թ.

Ես, _____ սնանկության գործով կառավարիչ _____-ս, գույքագրում իրականացնելու նպատակով ծանուցում եմ ուղարկել պարտապանին, պարտատերերին, գրավատուներին, _____ 20___թ. այցելել եմ ծանուցման մեջ նշված հասցե և արձանագրում եմ հետևյալը.

Գույքագրմանը ներկայացել են՝

1. _____
_____
_____
_____
_____

2. _____
_____
_____
_____
_____

Գույքագրման արդյունքները

Սնանկության գործով կառավարիչ	Գույքագրման մասնակիցներ՝
	1.
	2.

_____-ին

Հասցե՝ _____

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՊԱՐՏԱՊԱՆԻՆ

Սնանկության վարույթում իր իրավունքների և պարտականությունների վերաբերյալ

Թիվ _____ գործով ՀՀ սնանկության դատարանի կողմից _____20 թ. կայացված վճռով՝ _____ (այսուհետ՝ պարտապան) ճանաչվել է սնանկ: Նույն դատարանի որոշմամբ _____ նշանակվել է վերջինիս սնանկության գործով կառավարիչ:

Սույնով պարտապանը ծանուցվում է այն մասին, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքը պարտապանի /նրա ղեկավարի/ համար սահմանում է լրացուցիչ իրավունքներ և պարտականություններ, պարտականությունների չպահպանման դեպքում վերջինս կարող է ենթարկվել պատասխանատվության:

Ստորև ներկայացվում է օրենքով սահմանված իրավունքների և պարտականությունների միայն մի մասը, իսկ ամբողջին կարող եք ծանոթանալ «Սնանկության մասին» ՀՀ օրենքում:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանն իրավունք ունի մինչև պարտատերերի առաջին ժողովի օրը /որը կնշանակվի պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշմամբ / ***ներկայացնել ֆինանսական առողջացման ծրագիր***:

Հայտնում եմ, որ պարտապանի վերաբերյալ բավարար տեղեկություններ ստանալու և ֆինանսական առողջացման ողջամիտ հնարավորության առկայության դեպքում ֆինանսական առողջացման ծրագիր կարող է ներկայացվել նաև սնանկության գործով կառավարչի կողմից:

Ես, որպես սնանկության գործով կառավարիչ պատրաստակամ եմ պարտապանի կողմից մանրամասն տեղեկատվություն ստանալուց հետո գնահատել առկա հնարավորությունները, դրանց բավարար լինելու դեպքում ձեռնարկել ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացմանն ուղղված գործողություններ:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելուց հետո պարտապանը գործում է կառավարչի համաձայնությամբ և նրա հսկողության ներքո: ***Արգելվում է*** պարտապանի գույքը տնօրինելու կամ պարտապանի համար գույքային պարտավորություն առաջացնող ցանկացած գործողություն կատարել առանց կառավարչի թույլտվության:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի համաձայն՝ պարտապանը /նրա ղեկավարը/ պարտավոր է կառավարչին տրամադրել պարտապանի գործունեության և միջոցների վերաբերյալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և հավաստի տեղեկությունները, այդ թվում՝ պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդած երեք տարվա ընթացքում պարտապանի գույքի օտարման կամ ակտիվների այլ ձևով նվազեցման մասին: Համագործակցելու պարտականությունը պարտապանի ղեկավարը, ինչպես նաև նյութական պատասխանատու անձինք կրում են մինչև սնանկության գործի ավարտը: Նշված պահանջը չկատարելու դեպքում համապատասխան անձինք պատասխանատվություն են կրում օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54.1-րդ հոդվածը սահմանում է, որ

1. Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից ***20 օրվա ընթացքում*** պարտապանը պարտավոր է իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքի և գույքային իրավունքների, այդ թվում՝ պահանջի իրավունքի, կազմի, քանակի և գտնվելու վայրի մասին հայտարարագիր ներկայացնել կառավարչին: Պարտապանը պարտավոր է հայտարարագրում տեղեկություններ ներկայացնել նաև իր դեբիտորական պարտավորությունների, դատական ակտի, ժառանգության վկայագրի կամ այլ իրավահաստատող փաստաթղթի հիման վրա պարտապանի անունով գրանցման կամ

հաշվառման ենթակա, սակայն չգրանցված (չհաշվառված) գույքի և գույքային իրավունքների, ինչպես նաև սույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործարքների մասին:

2. Պարտապանի կողմից ներկայացվող՝ գույքի և գույքային իրավունքների կազմի, քանակի ու գտնվելու վայրի մասին հայտարարագրում տվյալներ թաքցնելը կամ խեղաթյուրելը կամ հայտարարագիր ներկայացնելուց չարամտորեն խուսափելն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

3. Գույքի և գույքային իրավունքների կազմի, քանակի ու գտնվելու վայրի մասին հայտարարագրի ձևը և ներկայացման կարգը սահմանվում է Նախարարի 12.03.2020թ. թիվ 102-Ն հրամանով:

Ես՝ որպես սնանկության գործով կառավարիչ, պարտավոր եմ կազմակերպել գույքագրում, վերլուծել պարտապանի ֆինանսական վիճակը, սնանկության պատճառները, որոշել սնանկության վարույթում իրականացվելիք գործողությունների շրջանակը, անհրաժեշտության դեպքում ներկայացնել հայցադիմումներ՝ պարտապանի խախտված իրավունքները վերականգնելու համար, ինչպես նաև իրականացնել օրենքով նախատեսված այլ գործառույթներ, որոնց համար անհրաժեշտ են նաև վերը նշված փաստաթղթերը և տեղեկությունները:

ՀՀ քրեական օրենսգրքի 192-րդ հոդվածի համաձայն՝ սնանկության վարույթում գույքը կամ գույքային իրավունքները, գույքի, նրա չափի մասին տեղեկությունները, գույքի գտնվելու վայրի կամ այլ տեղեկություններ թաքցնելը, պարտապանի կողմից «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ՍԿ-ին հայտարարագիր ներկայացնելուց չարամտորեն խուսափելը, ներկայացվող հայտարարագրում տվյալներ խեղաթյուրելը, գույքագրմանը խոչընդոտելը, գույքն առանց օրինական հիմքի ուրիշի տիրապետմանը հանձնելը, գույքը ոչնչացնելը կամ ակնհայտ անշահավետ պայմաններով օտարելը, ինչպես նաև պարտապանի տնտեսական գործունեությունն արտացոլող հաշվապահական և այլ փաստաթղթեր թաքցնելը, ոչնչացնելը, կեղծելը առաջացնում է քրեական պատասխանատվություն:

Սնանկության գործընթացն օրենքին համապատասխան իրականացնելու, պարտապանի հայտարարագիրը և վերոնշյալ փաստաթղթերն ու տեղեկություններն ինձ փոխանցելու նպատակով խնդրում եմ ձևաթղթի վրա նշված կապի միջոցներով կապ հաստատել ինձ հետ:

Անցանկալի հետևանքներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է նաև հնարավորինս շուտ կառավարչին տրամադրել տեղեկություններ շուտ փչացող ապրանքների առկայության մասին, այն վիճելի հարաբերությունների և պահանջների մասին, որոնց հայցային վաղեմության ժամկետը մոտ է ավարտին, արագ լուծում պահանջող բոլոր այն հարցերի մասին, որոնց լուծում չտալը կհանգեցնի վնասների կամ այլ խնդիրների:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքը իրավունքներ և պարտականություններ է սահմանել նաև այն անձանց համար, որոնք պարտապանի պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով տվել են երաշխիքներ, երաշխավորություններ, գրավադրել են իրենց գույքը: Առաջարկում եմ նմանատիպ իրավիճակի առկայության դեպքում սնանկության գործընթացի մասին տեղեկացնել նաև նշված անձանց՝ առաջարկելով իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկություն ստանալու նպատակով դիմել սնանկության գործով կառավարչին:

Սնանկության վարույթում պարտապանին ուղղված գրություններն առավել արագ ստանալու և լրացուցիչ վարչական ծախսեր չհիրականացնելու նկատառումով կարող եք կառավարչին տրամադրել էլեկտրոնային փոստի հասցե, որով կկատարվի փաստաթղթաշրջանառությունը:

Կառավարիչ՝

Օրենքով սահմանված
ժամկետում

չի առարկվել
Դատավոր

_____
«_____» _____ 20 թ.

Հաստատում եմ
Սնանկության գործով կառավարիչ

_____
«_____» _____ 20 թ.

Միջանկյալ բաշխման ծրագիր

թիվ _____ գործով պարտապան _____ -ի
սնանկության հատուկ հաշվին առկա գումարների

Սույն ծրագրով բաշխման ենթակա գումարը գոյացել է _____
_____

N	Բաշխման ուղղությունը	Ծանոթագրություններ	Գումարի չափը /դրամ/	Այլ նշումներ
Ա. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «ա» հերթ, այդ թվում՝				
1	Կառավարչի վարձատրություն	Հիմք՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի հոդված 30		
2	Գրասենյակային /վարչական/ ծախսեր /2,1-2,12 կետերի հանրագումար/, այդ թվում՝		0,0	
		անդորրագրերի քանակը		

2,2	Հարցումներ		0,0	
2,3	Փոստային ծառայություն		0,0	
2,4	Գրասենյակային ծախսեր		0,0	
2,5	Տրանսպորտային ծախսեր		0,0	
2,6	Սնանկության հատուկ հաշիվ		0,0	
2,7	Սնանկության վարույթում փորձագետի կամ այլ մասնագետի ծառայության արժեք, այդ թվում՝			
	Գույքի գնահատում		0,0	
	Փաստաբանական ծառայություն		0,0	
	Այլ՝		0,0	
2,8	Աշխատողների աշխատավարձ, այդ թվում՝			
			0,0	
2,9	Աշխատավարձից հարկեր, պարտադիր վճարներ, դրոշմանիշային վճար, այդ թվում՝			
			0,0	
2,10	Այլ ծախսեր, այդ թվում՝		0,0	
2,10	Ապագա /պլանավորված/ ծախսեր, այդ թվում՝		0,0	
	Ընդամենը «Ա» հերթով /կետ 1-ի և կետ 2-ի հանրագումար/		0,0	

Ընդամենը «Ա» հերթով /կետ 1-ի և կետ 2-ի հանրագումար/		0,0	
Բ. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «բ» հերթ, այդ թվում՝			
Առկա չէ		0	
Գ. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «գ» հերթ, այդ թվում՝			
Առկա չէ		0	
Դ. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «դ» հերթ, այդ թվում՝			
Առկա չէ		0	
Ե. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «ե» հերթ, այդ թվում՝			
Առկա չէ		0	
Զ. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «զ» հերթ, այդ թվում՝			
Առկա չէ		0	
Է. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» հերթ, այդ թվում՝			
Առկա չէ		0	
Ը. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «ը» հերթ, այդ թվում՝			
Առկա չէ		0	

Թ. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «թ» հերթ, այդ թվում՝				
	Առկա չէ		0	
Ժ. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի հերթ, այդ թվում՝				
	Առկա չէ			
Ի. Այլ, այդ թվում՝				
	Առկա չէ		0	
Ընդամենը բաշխման ենթակա գումար /«Բ»-«Ի» կետերի հանրագումար/			0,0	
ԸՆԴԱՄԵՆԸ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԲԱՇԽՎՈՂ ԳՈՒՄԱՐ /ԱՄԲՈՂՋԸ՝ «Ա»-«Ի» կետերի հանրագումար/			0,0	

ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՁԵՎԱՆՄՈՒԾ

Կառավարիչը, ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասով ժողովի քննարկմանը ներկայացվեց ժողովի կանոնակարգի նախագիծը, առաջարկեց կարծիքներ հայտնել կանոնակարգի նախագծի վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում փոփոխել այն և ներկայացնել ժողովի հաստատմանը: Կանոնակարգի առաջարկվող տեքստը. «Պարտապանի պարտատերերի ժողովները կազմակերպվում և հրավիրվում են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, ժողովի օրակարգում ընդգրկված հարցը ներկայացնում է ժողովը նախապատրաստողը, ժողովի մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի իր դիրքորոշումը հայտնել քննարկվող հարցի վերաբերյալ: Եթե քննարկվող հարցի վերաբերյալ ժողովը պետք է կազմակերպի քվեարկություն, ապա քննարկումներն ավարտելուց հետո ժողովի կազմակերպիչը քվեարկելու ձայնի իրավունք ունեցող ժողովի մասնակիցներին տրամադրում է քվեաթերթիկ, որը կազմվում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածին համապատասխան: Քվեարկողը քվեաթերթիկի վրա կատարում է քվեարկությունը, ստորագրում է քվեաթերթիկը և այն վերադարձնում է ժողովի կազմակերպչին: Ժողովն արձանագրվում է այն կազմակերպվող անձի կողմից: Արձանագրությունում պարտադիր ներառվում են պարտապանի անունը /անվանումը/, ժողովի անցկացման օրը, ամիսը տարին, վայրը /հասցեն/, ժողովին ներկա անձանց կարգավիճակը և անուն-ազգանունները, ժողովի ժամանակ ներկայացված գրավոր փաստաթղթերի հակիրճ նկարագիրը և այն ներկայացնողի անուն-ազգանունը, օրակարգում ընդգրկված ինչպես նաև օրակարգում չընդգրկված, սակայն ժողովում քննարկված հարցերը, դրանց վերաբերյալ քննարկումների հակիրճ նկարագիրը, եթե քննարկվող հարցի վերաբերյալ ժողովը պետք է կազմակերպի քվեարկություն, ապա քվեարկության արդյունքները և ժողովի կողմից կայացված որոշումը: Ժողովի մասնակցի պահանջով արձանագրությունում պարտադիր լրացվում են քննարկումների ժամանակ իր և/կամ ժողովի այլ մասնակցի արտահայտած դիրքորոշումը: Ժողովի մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի ժողովին ներկա անձանց տեղեկացնել և ձայնագրել և/կամ տեսաձայնագրել ժողովի ընթացքը»:

Ժողովի մասնակիցները իրենց կարծիքները հայտնեցին կանոնակարգի առաջարկվող տեքստի վերաբերյալ: Քննարկումներն ավարտելուց հետո ժողովի քվեարկությանը դրվեց ժողովի կանոնակարգին հավանություն տալու հարցը:

Ժողովը միաձայն որոշեց հաստատել ժողովի կանոնակարգը՝ կառավարչի կողմից ներկայացված խմբագրությամբ և պարտատերերի ժողովներում քննարկումները կազմակերպել այդ կանոնակարգին համապատասխան:

“…”-ի պարտատերերի պահանջների ցուցակ

N	Պարտատեր (հայցվոր)	Պահանջի հիմքերը	Փոխարժեք	Գրանցման ամսաթիվ	Ներկայացված պահանջներ			Ֆինանսահսկողի դիտողություններ	Պահանջի բավարարում			Մեկնաբանություններ
					Պահանջ է ներկայացվել	Ընդունվել է	Հերթ		Բավարարում	Մոռացում	Հերթ	
1.												
2.												
3.												
4.												

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հաշվետու ժամանակահատված՝ ___ -___ թ.

Անուն, ազգանուն, հայրանուն

Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ

Որակավորման վկայականի համար

Անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համար, ՀՎՀՀ

Հեռախոսահամար

Էլեկտրոնային փոստի հասցե

Գործունեության հասցե

Լրացվել է «_____» _____ 20___

Ստորագրություն _____

	Քանակ	Գործի համար	Ծանոթություն
1. Հաշվետու ժամանակահատվածում վարվող գործեր			
2. Հաշվետու ժամանակահատվածում ավարտված գործեր			
3. Հաշվետու ժամանակահատվածում ավարտված գործերով հաստատված պահանջների ընդհանուր չափը և պահանջների բավարարման աստիճանը՝ տոկոսային արտահայտությամբ			
4. Սնանկության գործեր, որոնցով կառավարչի կողմից ներկայացվել են ֆինանսական առողջացման ծրագրեր			
5. Սնանկության գործեր, որոնցով պարտապանի (կամ պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայահավաք) կապիտալի առնվազն 1/3-ին տիրապետող անձի) կողմից ներկայացվել են ֆինանսական առողջացման ծրագրեր			
6. Սնանկության գործեր, որոնցով պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայահավաք) կապիտալի առնվազն 1/3-ին տիրապետող անձի կողմից ներկայացվել են ֆինանսական առողջացման ծրագրեր			
7. Սնանկության գործեր, որոնցով պարտատիրոջ (պարտատերերի) կողմից ներկայացվել են ֆինանսական առողջացման ծրագրեր			
8. Սնանկության գործեր, որոնցով ավարտվել են ֆինանսական առողջացման ծրագրերը պարտապանի լուծարմամբ (պարտավորությունների կատարումից ազատելով)			

9. Սնանկության գործեր, որոնցով ներգրավվել են մասնագիտական կազմակերպություններ, մասնագետներ			
10. Սնանկության գործեր, որոնցով պարտապանի ֆինանսական վերլուծությամբ կառավարչի կողմից բացահայտվել են կեղծ սնանկության հատկանիշներ			
11. Սնանկության գործեր, որոնցով պարտապանի ֆինանսական վերլուծությամբ կառավարչի կողմից բացահայտվել են կանխամտածված սնանկության հատկանիշներ			
12. Լուծարման վարույթում գտնվող գործեր			
13. Լուծարման վարույթում գտնվող գործեր, որոնցով պարտապանի գործունեությունը վերսկսված է			
13. Լուծարման վարույթում գտնվող գործեր, որոնցով պարտապանի գործունեությունը վերսկսված է			
14. Վարույթի ավարտից հետո հաշվառումից հանված անհատ ձեռնարկատերեր կամ լուծարված իրավաբանական անձինք			
15. Սնանկության գործերով անցկացված աճուրդներ			
16. Հաշվետու ժամանակահատվածում կառավարչի գործողության և անգործության վերաբերյալ դիմում-բողոքներ			
17. Սնանկության գործընթացում պարտապանի գործունեության վերսկսման և շարունակման դեպքեր			

18. Լիազորությունների վաղաժամկետ դադարման դեպքեր			
19. Ստացված վարձատրության չափը (ներառյալ հարկերը) յուրաքանչյուր գործով			
	Քանակ, այլ		Ծանոթություն
20. Կարգապահական տույժերի քանակը, այդ թվում՝			
20.1. նախազգուշացում			
20.2. նկատողություն			
20.3. խիստ նկատողություն			
21. Աշխատողների ընդհանուր քանակը			
22. Աշխատողներին վճարված վարձատրությունը			
23. Գործունեության հասցեները			
24. Միջանկյալ բաշխման ծրագրին համաձայն կառավարչին վճարված վարչակառավարչական ծախսերի ընդհանուր (ներառյալ հարկերը) չափը՝ դրամային արտահայտությամբ			

Սնանկության գործով կառավարչի անուն, ազգանուն Ստորագրություն

ՊԱՐՏԱՊԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Թիվ _____ սնանկության գործով

պարտապան _____-ի

ֆինանսական վիճակի վերլուծություն.

I. Ընդհանուր տեղեկություններ

1. _____ դատարանի (այսուհետ՝ դատարան) կողմից թիվ _____սնանկության գործով _____ թ. կայացված վճռի համաձայն պարտապան _____ (այսուհետ՝ պարտապան) (նշվում են պարտապանի տվյալները՝ անուն-ազգանուն (անվանում), ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման համար, հարկ վճարողի հաշվառման համար, հասցե) ճանաչվել է սնանկ (նշվում է սնանկության տեսակը՝ հարկադրված, թե կամավոր):

2. Դատարանի _____ թ. որոշմամբ պարտապանի սնանկության գործով կառավարիչ է նշանակվել _____-ը:
(օր/ամիս/տարի)

3. Պարտապանի սնանկության մասին հայտարարությունը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվել է _____թ., հայտարարության հղումը՝ _____:
(օր/ամիս/տարի)

Ֆինանսական վիճակի վերլուծությունը ներկայացնելու ժամկետը երկարաձգվել է դատարանի կողմից _____ ժամկետով (չի երկարաձգվել):

4. Սույն ֆինանսական վիճակի վերլուծությունն իրականացնելու օրվա դրությամբ պարտապանի նկատմամբ պահանջ ներկայացվել է հետևյալ անձանց կողմից.

   1) _____

   2) _____

   (Սույն մասում տեղեկությունները ներկայացվում են այնքանով, որքանով առկա են վերլուծություն իրականացնելու պահին: Պահանջները ներկայացվում են խմբավորված՝ շարադրվում են հաստատված պահանջները, այնուհետ՝ չհաստատվածները, պահանջները խմբավորվում են նաև՝ հիմք ընդունելով դրանց ապահովված կամ չապահովված լինելը, բացի այդ նշվում է պահանջի հիմքը: Յուրաքանչյուր պահանջի մասով նշվում են տեղեկություններ պահանջ ներկայացնողի, պահանջի չափի, հերթի, բողոքարկված լինել-չլինելու, բողոքարկված լինելու դեպքում՝ բողոքարկման ընթացքի արդյունքների, պահանջի հաստատված լինել-չլինելու հանգամանքների վերաբերյալ)

5. Սնանկության վարույթում պարտապանի, նրա ակտիվների, գույքի, պարտավորությունների, գործարքների, պայմանագրերի և այլնի վերաբերյալ առկա է հետևյալ տեղեկատվությունը, որը հիմք է հանդիսացել սույն ֆինանսական վիճակի վերլուծությունն իրականացնելու համար.

   (Սույն մասում շարադրվում են պարտապանի, նրա ակտիվների, պարտավորությունների, գործարքների, պայմանագրերի և այլնի վերաբերյալ տեղեկություն ստանալու նպատակով սնանկության գործով կառավարչի կողմից ձեռնարկված գործողությունները, դրանց արդյունքում ստացված տեղեկությունները, պարտապանի կողմից ներկայացված տեղեկությունները, այլ աղբյուրներից ստացված տեղեկությունները՝

նշելով աղբյուրը, ընդ որում, անկախ ձեռքբերման աղբյուրից, տեղեկությունները շարադրվում են խմբավորված ձևով (ակտիվներ, գույք, պարտավորություններ, գործարքներ, պայմանագրեր և այլն)

II. Վերլուծություն

6. Սնանկության պատճառները

(Սույն մասում շարադրվում են այն հանգամանքները, որոնք, կառավարչի եզրահանգմամբ, հանգեցրել են պարտապանի սնանկության)

7. Դատական ծախսերի փոխհատուցման համար պարտապանի միջոցների բավարար լինելը

(Սույն մասում շարադրվում են վերլուծությունները, որոնց հիման վրա եզրահանգում է կատարվել դատական ծախսերի փոխհատուցման հնարավորության վերաբերյալ, ինչպես նաև, արվում են եզրահանգումներ դատական ծախսերի փոխհատուցման հնարավորության վերաբերյալ)

8. Կառավարչի վարձատրության համար պարտապանի միջոցների բավարար լինելը

(Սույն մասում շարադրվում են վերլուծությունները, որոնց հիման վրա եզրահանգում է կատարվել կառավարչի վարձատրության համար պարտապանի միջոցների բավարար լինելու հնարավորության վերաբերյալ, ինչպես նաև, արվում են եզրահանգումներ կառավարչի վարձատրության համար պարտապանի միջոցների բավարար լինելու հնարավորության վերաբերյալ)

9. Պարտապանի դեբիտորական պարտավորությունները

(Սույն մասում շարադրվում է պարտապանի դեբիտորական պարտավորությունների ընդհանուր նկարագիրը՝ դեբիտորների թիվը, պարտքի չափը, պարտքի առաջացման հիմքերը, պատճառները, հայցային վաղեմության ժամկետն անցած լինելու հանգամանքը, դրա պատճառը և այլն, դեբիտորական պարտավորությունների հավաքագրման ուղղությամբ

իրականացվելիք գործողությունները, վերլուծություններ և եզրահանգում՝ դրանց հավաքագրման հնարավորությունների վերաբերյալ)

10. «Սնանկության մասին» օրենքի 49-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ պարտապանի՝ կենսական նշանակություն ունեցող ապրանքների և ծառայությունների մատուցմանն ուղղված պայմանագրերը

    (Սույն մասում շարադրվում են պարտապանի՝ կենսական նշանակություն ունեցող ապրանքների և ծառայությունների մատուցմանն ուղղված պայմանագրերի նկարագիրը, դրանցից յուրաքանչյուրի մասով՝ հիմնավորում պարտապանի համար կենսական նշանակություն ունենալու հանգամանքի վերաբերյալ, եզրահանգում՝ դրանք հաստատելու նպատակով դատարան ներկայացնելու անհրաժեշտության և հնարավորության մասին՝ նշելով հաստատվելու դեպքում այդ պայմանագրերով սահմանված վճարումների կատարման աղբյուրները և կարգը)

11. Սնանկության մասին» օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված գործարքները (երրորդ անձանց կատարված փոխանցումների և գույքի օտարումների վերաբերյալ գործարքներ)

    (Սույն մասում շարադրվում են պարտապանի կողմից իրականացված՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով սահմանված գործարքների նկարագիրը, յուրաքանչյուր գործարքի մասով վերլուծություններ դատարան դիմելու համար իրականացվելիք գործողությունների, ինչպես նաև դատական պրակտիկայի հաշվառմամբ՝ ակնկալվող հնարավոր դատական ակտի մասին)

12. Դատարանում պարտապանի մասնակցությամբ գույքային (դրամական) բնույթի պահանջներով հարուցված և քննվող քաղաքացիական գործեր

    (Սույն մասում շարադրվում են պարտապանի մասնակցությամբ, այդ թվում՝ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի իմաստով Սնանկության դատարանին ենթակա գույքային (դրամական) բնույթի պահանջներով

հարուցված և քննվող քաղաքացիական գործերի առկայության վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև այդ գործերի շրջանակներում վիճելի իրավահարաբերությունների նկարագիրը, վերլուծություններ դրանց լուծման ուղղությունների և հնարավորությունների վերաբերյալ)

III. Եզրակացություն

13. Կեղծ կամ կանխամտածված սնանկության հատկանիշների առկայությունը

(Սույն մասում կատարվում են վերլուծություններ և եզրահանգում՝ կեղծ կամ կանխամտածված սնանկության հատկանիշների առկայության կամ բացակայության վերաբերյալ, առկայության դեպքում՝ իրականացվելիք գործողությունները)

14. Պարտապանի վճարունակության վերականգնման հնարավորությունները

(Սույն մասում շարադրվում են պարտապանի, պարտատերերի կամ կառավարչի կողմից ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու մտադրության մասին, վերլուծություններ, որոնց հիման վրա եզրահանգում է կատարվել պարտապանի վճարունակության վերականգնման հնարավորության վերաբերյալ, ինչպես նաև, որպես եզրահանգում՝ նշվում է պարտապանի վճարունակության վերականգնման և սնանկության վարույթը ֆինանսական առողջացմամբ ավարտելու հնարավորության վերաբերյալ)

15. Այլ վերլուծություններ և եզրահանգումներ

(Սույն մասը լրացվում է ըստ անհրաժեշտության՝ ֆինանսական վիճակի վերլուծությունն իրականացնողի հայեցողությամբ՝ նրա գնահատմամբ ուշադրության արժանի այլ հանգամանքների և տեղեկությունների ներկայացման համար: Լրացուցիչ հարցերի առկայության դեպքում ներկայացվում են համապատասխան վերլուծություններ, եզրահանգումներ և դրանց արդյունքում իրականացման ենթակա գործողությունները)

16. Տեղեկություններ ֆինանսական վիճակի վերլուծությունն իրականացնողի վերաբերյալ

(Սույն մասում նշվում են ֆինանսական վիճակի վերլուծությունն իրականացնողի տվյալները: Եթե այն իրականացրել է կառավարիչը, ապա նշվում է կառավարչի անունը, ազգանունը, իսկ եթե իրականացվել է այլ անձի կողմից, ապա նշվում են տեղեկություններ այդ անձի, նրա մասնագիտացման վերաբերյալ, հասցեն և կոնտակտային տվյալները, կառավարչի հետ կնքված՝ ծառայությունների մատուցման պայմանագրի վավերապայմանները (պայմանագրի պատճենը կցվում է վերլուծությանը): Եթե ֆինանսական վիճակի վերլուծությունը իրականացվել է այլ անձի կողմից, ապա կառավարիչը ևս ստորագրում է վերլուծության ներքո:)

Կազմվել է _____

(օր/ամիս/տարի)

Բաղկացած է _____ թերթից

(տառերով և թվերով)

Ֆինանսական վիճակի վերլուծությանը կցվում են՝

(վերլուծությանը կցվում են անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք հիմք են հանդիսացել վերլուծությունն իրականացնելու համար, ինչպես նաև վերլուծությունը այլ անձի կողմից իրականացվելու դեպքում՝ այդ անձի հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի պատճենը)

1) _____

2) _____

Ֆինանսական վիճակի վերլուծությունն իրականացնող՝

Սնանկության գործով կառավարիչ՝

ՊԱՐՏԱՊԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ԿԱՌԱՎԱՐՉԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ՝ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԻ, ՔԱՆԱԿԻ ԵՎ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՀՀ սնանկության դատարանում հարուցված թիվ _____ սնանկության գործի շրջանակում, ղեկավարվելով «Սնանկության մասին» օրենքի 54.1-րդ հոդվածով, պարտապան՝

_____

ֆիզիկական անձի անուն, ազգանուն, հայրանուն

_____

բնակության հասցե, էլեկտրոնային փոստի հասցե (առկայության դեպքում), բջջ. հեռախոսի համար, անձնագրի սերիա և համար (նույնականացման քարտի համար), սոցիալական քարտի համար/ հանրային ծառայությունների համարանիշ (առկայության դեպքում)

_____

իրավաբանական անձի անվանում, ՀՎՀՀ և պետական գրանցման համար, գտնվելու վայրի հասցե, էլեկտրոնային փոստի հասցե / հայտարարագիր տվողի (իրավաբանական անձի ներկայացուցչի) անուն, ազգանուն, պաշտոն

ներկայացնում է սույն հայտարարագիրը սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի և գույքային իրավունքների, այդ թվում՝ պահանջի իրավունքի, կազմի, քանակի և գտնվելու վայրի, դեբիտորական պարտավորությունների, դատական ակտի,

ժառանգության վկայագրի կամ այլ իրավահաստատող փաստաթղթի հիման վրա պարտապանի անունով գրանցման կամ հաշվառման ենթակա, սակայն չգրանցված (չհաշվառված) գույքի և գույքային իրավունքների, ինչպես նաև «Սնանկության մասին» օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործարքների մասին:

Առդիր՝ « » թերթ: «_____» _____ 20 թ.

Պարտապան՝

_____

/անուն, ազգանուն, հայրանուն (իրավաբանական անձի անվանում, ներկայացուցչի անուն, ազգանուն), ստորագրություն/

ՏՎՅԱԼՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ

NN h/h	Գտնվելու վայրը (հասցեն)	Տեսակը, նշանակությունը (բնակելի, հասարակական արտադրական, այլ)	Գույքի նկատմամբ իրավունքը (սեփականություն, ընդհանուր սեփականություն), ծանրաբեռնվածությունը (գրավ, վարձակալություն, սերվիտուտ, այլ)	Մակերեսը (քմ, հա)
1				
2				

2. ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՏՐԱՆՍՊՈՐՏ

NN h/h	Անվանումը, մակնիշը և հաշվառման համարանիշը	Թողարկման տարեթիվը	Գույքի նկատմամբ իրավունքը (սեփականություն, ընդհանուր սեփականություն), ծանրաբեռնվածությունը (գրավ, վարձակալություն, սերվիտուտ, այլ)	Ծանոթություն
1				
2				

3. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ, ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ, ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐ

NN h/h	Արժեթղթեր թողարկողը (տրամադրողը)	Տեսակը	Անվանական արժեքը (գումարը)	Ծանոթություն
1				
2				

4. ԲԱԺՆԵՄԱՍԵՐ ԵՎ ԱՅԼ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

NN h/h	Կազմակերպության անվանումը	Տեսակը	Արժեքը	Ծանոթություն
1				
2				

5. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐ ԵՎ ՀՆԱՈՁ ԻՐԵՐ

NN h/h	Մշակութային արժեքի անվանումը	Ստեղծման ժամանակաշրջանը	Գտնվելու վայրը	Քանակը	Ծանոթություն
1					
2					

6. ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂ ԵՎ ՊԵՐՃԱՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐ

NN h/h	Գտնվելու վայրը	Գույքի տեսակը	Քանակը և քաշը	Ծանոթություն
1				
2				

7. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

NN h/h	Արժույթ	Գումարի չափը	Ծանոթություն
1			
2			

8. ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

NN h/h	Տեսակը	Քանակը	Ծանոթություն
1			
2			

9. ԳՅՈՒՂՄԹԵՐՔ

NN h/h	Անվանումը	Քաշը (տոննա, կգ)	Ծանոթություն
1			
2			

10. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ, ՆՊԱՍՏՆԵՐ, ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ, ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

NN h/h	Տեսակը	Գումարի չափը	Ծանոթություն
1			
2			

11. ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՅԼ ԳՈՒՅՔ

NN h/h	Գույքի գտնվելու վայրը	Գույքի տեսակը	Քանակը	Ծանոթություն
1				
2				

12. ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔ

NN h/h	Պահանջի իրավունքի տեսակը	Պահանջը հիմնավորող փաստաթուղթ	Պարտավոր անձի անուն, ազգանուն, բնակության կամ հաշվառման վայրը	Ծանոթություն
1				
2				

13. ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

NN h/h	Տեսակը	Պարտավորության չափը	Մարման ժամկետը	Ծանոթություն
1				
2				

14. ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ, ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ԿԱՄ ԱՅԼ ԻՐԱՎԱՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՊԱՐՏԱՊԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՆԹԱԿԱ, ՍԱԿԱՅՆ ՉԳՐԱՆՑՎԱԾ (ՉՀԱՇՎԱՌՎԱԾ) ԳՈՒՅՔ ԵՎ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

NN h/h	Գտնվելու վայրը	Գույքի, գույքային իրավունքի տեսակը	Իրավահաստատող փաստաթղթի տեսակը և տվյալները
1			
2			

15. «ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 54-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

NN h/h	Գործարքի տեսակը, առարկան	Գործարքի կատարման ժամանակա-հատվածը	Գործարքի կողմը	Գործարքի առարկայի իրացման արժեքի և շուկայական արժեքի տարբերությունը (առկայության դեպքում)	Ծանոթութ-յուն
1					
2					

1. Պարտապանի կողմից ներկայացվող՝ գույքի և գույքային իրավունքների կազմի, քանակի ու գտնվելու վայրի մասին հայտարարագրում տվյալներ թաքցնելը կամ խեղաթյուրելը կամ հայտարարագիր ներկայացնելուց չարամտորեն խուսափելն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

Պարտապան՝

_____

/անուն, ազգանուն, հայրանուն (իրավաբանական անձի անվանում, ներկայացուցչի անուն, ազգանուն), ստորագրություն/

«_____» _____ 20 թ.

ԳՈՒՅՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԾՐԱԳԻՐ (ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՀԱՄԱՐ)

Պարտապանի անունը	
Սնանկության գործի համար	
Սնանկության որոշման ամսաթիվը	
Կառավարչի տվյալները և հասցեն	
Գույքագրման ամսաթիվը	
Գույքագրման վայրը	

Ակտիվների ցանկ՝ հակիրճ նկարագրությամբ	Հաշվարկային արժեքը __.__.____թ. ամսաթվի դրությամբ	Գնահատված արժեքը
	Արժույթ	Արժույթ
Ապահովման ենթակա ակտիվներ		
Համատեղ սեփականության ենթակա ակտիվներ		

Ֆինանսավորման/ վարձույթի գնման ենթակա ակտիվներ		
Ապահովման կամ համասեփականության ենթակա ակտիվներ		
Ակտիվների ցանկ՝ հակիրճ նկարագրությամբ	Հաշվարկային արժեքը __.__.____թ. ամսաթվի դրությամբ	Գնահատված իրացման արժեքը (գնահատում)
	Արժույթ	Արժույթ
Անշարժ գույք ամբողջական մանրամասները՝ առաջարկվող վաճառքի եղանակը՝		

Բաժնետոմսեր ամբողջական մանրամասները՝ առաջարկվող վաճառքի եղանակը՝		
Գործարան և մեքենաներ		
Գործիքներ և սարքավորումներ		
Գյուղատնտեսական պաշար		

Աճող մշակաբույսեր		
Այլ արժեթղթեր		
Դեբիտորական պարտքեր		
Ընթացքի մեջ գտնվող աշխատանք (կամ երրորդ անձանց մատուցվող ծառայություններ, որոնց համար դեռ վճարված չէ)		
Վարկեր		
Շարժիչային տրանսպորտային միջոցներ, ավտոմեքենաներ		
Մտավոր սեփականություն		

Հաճախորդների պայմանագրեր / կանխավճարային պատվերների գիրք / բիզնեսի վաճառք որպես շարունակական գործունեություն		

Կառավարիչ՝ _____

ստորագրություն *ամսաթիվ*

Պարտապան՝ _____

ստորագրություն *ամսաթիվ*

Պարտապանի ներկայացուցիչ՝ _____

ստորագրություն *ամսաթիվ*

ԱՃՈՒՐԴԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սնանկության գործի համարը	
Պարտապանի անունը	
Կառավարչի անունը և կոնտակտային տվյալները	
Աճուրդի օրը և ժամը	
Աճուրդի վայրը	
Աճուրդի լոտ(ներ)ի մանրամասները	
Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ	

Աճուրդի լոտ(ներ)ի մանրամասները	
Աճուրդին մասնակցելու հայտ ներկայացնելու կարգը և վայրը (հասցեն), իսկ աճուրդի մասնակից չհամարվող անձանց համար՝ ծանուցում աճուրդին ներկա գտնվելու մասին.	
աճուրդի ձևը, աճուրդի անցկացման և հաղթողին որոշելու կարգը.	
հաղթող մասնակցի կողմից վճարման պայմանները.	
լոտի ուսումնասիրության ժամանակը, վայրը և կարգը.	

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Աճուրդին մասնակցելու հայտ

Աճուրդին մասնակցել ցանկացողները աճուրդի հայտարարությամբ սահմանված ժամկետում, սակայն աճուրդից ոչ ուշ, քան երեք օր առաջ աճուրդին մասնակցելու հայտ (այսուհետ՝ Հայտ) ներկայացնում են դատարան՝ աճուրդին մասնակցելու հայտը գրասենյակի միջոցով կառավարչին փոխանցելու համար: Գրասենյակում հայտը գրանցելիս դրա վրա նշվում է գրանցման օրվա և ժամի մասին:

ԱՃՈՒՐԴԻ ՀԱՅՏԻ ՁԵՎ (ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

Սնանկության գործի համարը	
Պարտապանի անունը	
Կառավարչի անունը	
Աճուրդի օրը և ժամը	
Հայտատուի անունը	
Հայտատուի հասցեն	
Հայտատուի կոնտակտային տվյալները	
Հայտատուի ներկայացուցչի կոնտակտային տվյալները	
Դիմումին կից փաստաթղթերի ցանկ.	
Լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով դեպոզիտի վճարումը հաստատող անդորրագիրը, որը վճարվել է սնանկության հատուկ հաշվին.	Դեպոզիտի չափը. Վճարման ամսաթիվը

Աճուրդի մասնակցության վճարը լոտի մեկնարկային գնի 1%-ի չափով (բայց նվազագույն աշխատավարձի 200-ապատիկի չափով) հաստատող անդորրագիր, որը վճարվել է սնանկության հատուկ հաշվին.	Դեպոզիտի չափը. Վճարման ամսաթիվը
Եթե Հայտատուն գործում է օրինական ներկայացուցչի միջոցով. - Լիազորագիրը	
Եթե հայտատուն իրավաբանական անձ է. - Պետական գրանցումը հավաստող փաստաթուղթ - իրավաբանական անձի ներկայացուցչի անձը հաստատող փաստա-թուղթ	
Եթե հայտատուն անհատ ձեռնարկատեր չէ. - Անձը հաստատող փաստաթղթի պատճենը	
Եթե հայտատուն անհատ ձեռնարկատեր է. - Անձը հաստատող փաստաթուղթ	
Հասցեն, որին պետք է ներկայացվի աճուրդի հայտի ձևը	

Աճուրդի հայտի ձևը ներկայացնելու ամսաթիվը	
Աճուրդի հայտի գրանցման ամսաթիվը և ժամը	

ԱՃՈՒՐԴԻ ՀԱՅՏԻ ՁԵՎ՝ ԱՃՈՒՐԴԻՆ ՉՄԱՍՆԱԿՑՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Սնանկության գործի թիվը	
Պարտապանի անունը	
Կառավարչի անունը	
Աճուրդի օրը և ժամը	
Հայտատուի անունը	
Հայտատուի հասցեն	
Հայտատուի կոնտակտային տվյալները	

Տրամադրված անձը հաստատող փաստաթուղթ	
Մուտքավճարը (չգերազանցի նվազագույն աշխատավարձի 10-ապատիկը) [բացառությամբ արդարադատության նախարարության ներկայացուցիչների]	
Ներկայացման ամսաթվի ձևը	
Գրանցման ամսաթվի ձևը	

ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ)

BANKRUPTCY PROCEDURE IN THE REPUBLIC OF ARMENIA (SCIENTIFIC AND PRACTICAL HANDBOOK)

ПРОИЗВОДСТВО ПО ДЕЛАМ О БАНКРОТСТВЕ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ (НАУЧНО-ПРАКТИЧЕСКОЕ ПОСОБИЕ)

Հանձնվել է հրատարակության 09.09.2022թ.:
Չափսը 60x84 1/16:
Ծավալը՝ 29 տպ. մամուլ:

Արդարադատության ակադեմիայի հրատարակչություն
Ք. Երևան, 0054, Փիրումյանների փող. 9
www.justiceacademy.am